

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ — Հաւատարիմ մնանք մեր խորհրդանիշներուն	1
--	---

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ

ՆՈՐ ՏԱՐՈՒՄԱՆ ՊԱՏԳԱՄ — Համահայկական Նոր ռազմավարութեամբ եւ ամուր յանձնառութեամբ դիմաւորենք Նոր տարին	4
Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄ — Բեթղեհեմը հրաւեր՝ դառնալու Զրիստոսին	7
2024 ՀՈՉԱԿԱԳԻՐ — 2024 Մարդուժի պատրաստութեան տարի	10
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՆԴԱԿՆԵՐ	22

ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՎԱԴԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ — Մեկնութիւն Մատթեոս Աւետարանի (4.1-3)	26
--	----

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԵՅԾԵԱՆ — Սուրբ Հոգիին պտուղները կամ արդիւնքները	32
---	----

ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

ՍՈՒՐԵՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ — 90-ամեայ հունձքը Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքին	39
--	----

ՅՕԴՈՒՄԾ

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԵՉԵԱՆ — Աստուած մոմ մըն ալ մարեց	43
--	----

ԱՐԽԻՄԱՅԻՆ

ՓՐՈՖ. ԱՐԱ ՍԱՅԵՂ — «Լեհահայ Գաւազանակիր Միանձնուհիներ»	45
---	----

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ


ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ԶԵՅԵԱՆ — Աստուածիմաստութիւն	59
---	----

ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ԾԵՐՆԵՉԵԱՆ — Մարդուժի պատրաստութեան կեդրոն՝ դպրեվանքը	68
---	----

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ	71
--------------------------	----

ՀՈՎՈՒՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ	
* * * — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս պետության հրաւերով մեկնեցաւ Քաթար	73
* * * — Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս Արաբական Միացեալ Էմիրութիւններու հայոց թեմէն ներս	78
ՏՕՆԱԿԱՆ	102
ՀԱՅ ԴԱՏ	110
ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ	112
ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ	115
ՀԱՐՑԱԶՐՈՅՑ	121
ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ	127
ԴՊՐԵՎԱՆՔ	129
ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ	134
«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ	137
Հ.Ե.Յ.Ո.Մ.	140
ՄԱՅԱԳՐՈՒԹԻՒՆ	
* * * — Վերջին Յրաժեշտ Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեանի	143
ԼՈՒԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԵՆ	147
ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՉ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒ ԿՈՂՄԷ	154



ՊԱՇՏՏՈՒՆԿԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ
ՄԵՐ ՏԵՄԻ ԿՐԹՅՈՒՆՆԵՐԸ

ՂԳ. ՏԱՐԻ 2024

ՅՈՒՆՈՒՄԱՐ - ՓԵՏՐՈՒՄԱՐ

ԹԻՒ 1-2

ՓՈԽԱՆ ԽՄԲԱԳՐԱԿԱՆԻ

ՀԱՄԱՐՈՒՄ ՄՆԱԿ ՄԵՐ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐՈՒՄՆԵՐԸ*

Ազգ մը կը կորսնցնէ իր ինքնաճանաչումը, երբ չունի իր կեանքին իրայատուկ դիմագիծ եւ գերագոյն տուող խորհրդանիշներ:

Ազգ մը կ'անհետանայ պատմութեան գիշերին մէջ, երբ իր դիմաց չունի իր կեանքի ճամբան լուսաւորող խորհրդանիշներ:

Ազգ մը կը մաշի, երբ իր կեանքին մէջ չունի իր արժեքները մարմնացնող խորհրդանիշներ:

Ազգ մը կը թաղուի պատմութեան փոշիին տակ, երբ հաւատարիմ չէ պատմութեան թատերաբեմին վրայ զինք կանգուն պահող իր խորհրդանիշներուն:

Երկար դարերու մէջ արմատ նետած վկայութիւններ ու ճշմարտութիւններ են այս խորհրմաստ հաստատումները:

*

* *

* Սոյն գրութիւնը խտացումն է այն մտածումներուն, զորս Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը արտայայտեց իր պատգամի ընթացքին՝ Ս. Վարդանանց տօնին առիթով Վեհարանի դահլիճին մէջ, 8 Փետրուար 2024-ին:

Խորհրդանիշները ազգի մը ինքնութիւնը կը կազմաւորեն եւ անոր գոյութեան հիմքերը կ'ամրացնեն:

Խորհրդանիշները ազգ մը վեր կը պահեն ժամանակի ընկլուզող հոսանքներէն ու զայն կը վերածեն ճառագայթող ներկայութեան՝ բոլոր ժամանակներուն մէջ:

Խորհրդանիշները ազգի մը իտեալներուն ու ձգտումներուն խոյանք կու տան եւ անոր առջեւ կը բանան վերանորոգ յոյսի ու պայքարի ճամբան:

Խորհրդանիշները ազգի մը սրտի տրոփումներուն, հոգիի ճենճերումներուն, ներքին տագնապներուն, հաւատքի պոռթկումներուն ու ամուր վճռակամութեան հարազատ արտայայտութիւններն են:

Խորհրդանիշները անցեալը կ'ապրեցնեն ներկային մէջ ու ներկան կը բանան ապագային:

Խորհրդանիշները յուշ են ու յիշեցում, պատգամ են ու մարտահրաւեր: Հոն են խտացած ազգի մը ոգին, ինքնութիւնը, էութիւնը, հաւատքն ու տեսլականը:

*

* *

Այսօր, հազար ափսոս, Հայաստանի թէ Սփիւռքի մէջ, մեր ազգին խորհրդանիշները սկսած են հեռանալ հայ կեանքէն:

Այսօր, ապագային մօտեցումներ սկսած են Հայ կեանքէն վանել խորհրդանիշներ, որոնք մեր ազգին ու հայրենիքին պատմութիւնը կերտած են, Հայ մարդու ստեղծագործ ոգիին թռիչք տուած են, Հայու կեանքը հաւատքով թրծած են եւ անոր կամքը կռանած՝ պատմութեան ահաւոր փոթորիկներուն մէջ:

Այսօր, ստուերի մէջ սկսած են մնալ դէմքեր ու դէպքեր, որոնք դարեր շարունակ դարձած են ուղենիշ Հայ կեանքին:

Այսօր, սկսած են ժանգ կապել արժէքներ ու անանդութիւններ, որոնք Հայ մարդուն մէջ ճշմարիտ քրիստոնեան ու վաւերական Հայը կազմաւորած են:

Այսօր, այլասերման վտանգին ենթակայ են մեր խորհրդանիշները, որոնք դարձած են ամրակոռ սիւները մեր գոյութեան, զօրեղ դարբնոցները ազգաշինութեան ու ամուր վահանները ինքնապաշտպանութեան:

*

* *

Ղեւնդ Երեց եւ Վարդան Մամիկոնեան խորհրդանիշ են՝ մեր ազգին սրբազան արժէքներուն, վեհ իտեալներուն ու գերագոյն ձգտումներուն:

Խորհրդանիշ են՝ կրօնի ու հայրենիքի անքակտելի միութեան:

Խորհրդանիշ են՝ քրիստոնէութեան հայացման ու հայութեան քրիստոնէացման:

Խորհրդանիշ են՝ հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու անվթար պահպանման:

Խորհրդանիշ են՝ ազգին ու հայրենիքին համար արիւն թափելու գիտակից նահատակութեան:

Խորհրդանիշ են՝ ազգն ու հայրենիքը ամէն բանէ վեր դասելու ամուր յանձնառութեան:

Խորհրդանիշ են՝ ճշմարիտ Հայ հոգեւորականի եւ հարազատ Հայ մարդու տիպարին:

Խորհրդանիշ են՝ տազնապահար ժամանակներուն ազգին ամուր միասնականութեան:

Խորհրդանիշ են՝ քրիստոնէութեան ու հայութեան խոր ակունքներէն ժայթքող հաւատքի քաջութեան:

Ղեւնդ Երեց ու Վարդան Մամիկոնեան կը պատկանին բոլոր ժամանակներուն:

Անոնք կենդանի ներկայութիւն դարձած են կեանքին ու գործին մէջ անոնց, որոնք հաւատքի զօրութեամբ ու անմնացորդ նուիրումով պատմութիւն կերտած են, հայրենիք պաշտպանած ու ազգ անմահացուցած:

Անոնք կենդանի ներկայութիւն դարձած են կեանքին ու գործին մէջ անոնց, որոնք ապրած, ստեղծագործած, տազնապած, պայքարած ու նահատակուած են «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»:

Չհեռանալք մեր պատմութեան բոլոր ժամանակներու Ղեւնդ Երեցներէն ու Վարդան Մամիկոնեաններէն:

Չհեռացնէք զանոնք մեր կեանքէն, որպէսզի մեր կեանքը չդառնայ անգոյն, անդիմագիծ, անիմաստ ու աննպատակ:

Հաւատարիմ մնալք մեր ազգին ու հայրենիքին սրբազան խորհրդանիշներուն:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԳԱՄՆԵՐ



**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՄԲ
ԵՒ ԱՄՈՒՐ ՅԱՆՉՆԱՌՈՒԹԵԱՄԲ
ԴԻՄԱԲՈՐԵՆՔ ՆՈՐ ՏԱՐԻՆ***

Շուտով 2023 տարին կը դառնայ անցեալ ու մեր կեանքի հորիզոնին դիմաց կը բացուի Նոր Տարին: Արդարեւ, ահաւոր յուսահատութեամբ ու խոր յուսախաբութեամբ լեցուն եղաւ անցնող տարին մեր ազգի կեանքին մէջ: Կ'ապրինք անսախատեսելի վտանգներով լեցուն ժամանակներու մէջ: Կը խարխափենք անորոշութեան մէջ: Մեր պատմութեան անցեալի ու ներկայի դառն փորձառութիւնը յստակօրէն ցոյց կու տայ, որ հարկ է վստահիլ մեր սեփական ոյժին ու գործել՝ մղուած ազգին ու հայրենիքին գերագոյն ու ընդհանրական շահերէն: Հետեւաբար, առաւել քան երբեք, այսօր հրամայական կարիքը ունինք ներկայ անորոշ կացութենէն մեզ դուրս բերող ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՆՈՐ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ, եւ առաջին հերթին՝ Արցախի գծով:

Բռնագրաւուեցաւ Արցախը Ազրայէճանի կողմէ, եւ աւելի քան հարիւր հազար արցախցիներ ենթարկուեցան բռնագաղթի: Աշխարհը լուռ մնաց: Լուռ մնացին նաեւ Արցախի անվտանգութեան երաշխաւոր երկիրները: Սակայն մենք պետք չէ լուռ մնանք: Արցախի էջը փակուած չէ մեզի համար: Պետք է ազգովին պայքարինք՝ միջազգային օրէնքին համաձայն երաշխաւորելով Արցախի հայութեան վերադարձը, միջազգային հովանիին ներքեւ ապահովելով Արցախի հայութեան ինքնորոշման իրաւունքը, ինչպէս նաեւ ազատ արձակումը Արցախի ձերբակալուած պետա-

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին՝ խօսուած 1 Յունուար 2024-ին, Նոր Տարուան առիթով, Վեհաբանի Դահլիճէն ներս:

կան պատասխանատուներուն: Այս նպատակի իրագործման համար անհրաժեշտ է համահայկական մաշտապով լծուիլ աշխատանքի՝ հայ թե՛ օտար մասնագետներէ բաղկացած յատուկ յանձնախումբի մը ճամբով:

Կ'ողջունենք Արցախի Հանրապետութեան լուծարման հրամանագրի չեղեալ նկատումը: Միաժամանակ հրամայական կը նկատենք, որ Արցախի պետական կառոյցները շարունակեն գոյատեւել եւ մանաւանդ Արցախի ժողովուրդը չդառնայ Սփիւռք, այլ՝ համախումբ ու կազմակերպ ներկայութիւն Հայաստանի մէջ: Արդարեւ, նման կարելոր քայլեր՝ Արցախի պայքարին պիտի տան իրաւական հիմք՝ գայն դարձնելով նաեւ գոյութեանական խնդիր:

Նոր ռազմավարութիւն պէտք է մշակէ Հայաստանի իշխանութիւնը: Անհրաժեշտ է, որ Հայաստանը սոսկ գիշումներ կատարելու կացութենէն դուրս գայ: Իրապաշտութիւն չի նշանակեր համակերպում: Հայաստանը պէտք չէ վճարէ տարածաշրջանէն ներս համապարփակ խաղաղութեան հաստատման գինը: Նշեալ եւ յարակից այլ խնդիրներու մասին յաճախակի առիթներով մեր տեսակետները յստակ ու հետեւողական կերպով պարզած ենք՝ շեշտելով, որ Հայաստանի իշխանութիւնը պէտք է նկատի առնէ թե՛ հայրենի ժողովուրդին եւ թե՛ Սփիւռքին տեսակետները՝ երկրին համար ճշդորոշիչ կարելորութիւն ներկայացնող խնդիրներու նկատմամբ:

Կորսնցուցիւք Արցախը, հայրենիքի այս կարելոր հողատարածքը: Չգո'յ՛շ...կրնանք կորսնցնել նոր տարածքներ նա՛եւ Հայաստանէն: Աշխարհաքաղաքական պայմաններու հոլովոյթը եւ տարածաշրջանի ոյժերու յարակցութիւնը ճի'շդ ըմբռնենք: Քաջ գիտնալով, որ ո'չ մօտաւոր եւ ոչ ալ հեռաւոր մեր բարեկամները կրնան օգնութեան հասնիլ մեզի, հարկ է որ Հայաստանի քաղաքական արեւելումը ըլլայ հաւասարակշռուած Արեւելքի եւ Արեւմուտքի միջեւ, հեռու մնալով միակողմանի ու գրգռիչ քայլերէ, որոնք կրնան Հայաստանը վերածել հզօր պետութիւններու մրցակցութեան դաշտի:

Նոր ռազմավարութիւն պէտք է մշակէ նա՛եւ Սփիւռքը: Յաջորդական պատերազմներու պարտութենէն, Արցախի բռնագրաւումէն եւ ներկայ իշխանութեան կողմէ առնուած ռազմա-քաղաքական քայլերէն յուսախաբ դարձած Սփիւռքը իրաւունք չունի լուռ մնալու՝ աննախատեսելի վտանգներով լեցուն ներկայ անորոշ կացութեան դիմաց: Ոչ ալ Հայաստանը իրաւունք ունի անտեսելու Սփիւռքը իր լայն կարելիութիւններով: Սփիւռքը ռազմավարական գործընկեր է Հայաստանին: Հետեւաբար, ան չի կրնար սոսկ հակազդողի դերին մէջ ըլլալ: Ըսելիքի կողքին, Սփիւռքը նաեւ ու մա՛նաւանդ ընելի՛ք ունի՝ համահայկական մտածողութիւն մշակելով, սփիւռքեան կառոյցներու միջեւ համագործակցութիւն ստեղծելով, իր փորձագետները գործի մղելով եւ իր փորձառութիւնն ու միջազգային կապերը լայնօրէն օգտագործելով:

Սիրելի՛ ժողովուրդ, մաշած գովազդներով, կրկնուող լոզունգներով, եւ սպառած օրակարգերով չենք կրնար այլեւս մեր կեանքը շարունակել: Պահ մը դիտենք մեր շուրջը: Մեր ազգն ու հայրենիքը պահող արժեքներու համակարգը սկսած է խախտիլ եւ արժեզափերը՝ շրջուիլ: Ապագայինին դիմաց ազգայինը սկսած է նահանջել: Հայաստան եւ Սփիւռք սկսած են իրարմէ հեռանալ: Մեր համայնական կեանքէն ներս ճեղքերը սկսած են խորանալ, եւ զիրար արհամարհելու ու անտեսելու ապակա-նիչ մշակոյթ մը սկսած է իր տիրապետութիւնը հաստատել հայ կեանքէն ներս:

Անդրադառնանք այլեւս, որ փաստօրէն անդունդի եզրին ենք եւ առանձին: Հետեւաբար՝ վե՛ր, վե՛ր բարձրանանք պղպջակային հարցերէ եւ անիրատես սպասումներէ ու միակողմանի դատումներէ. թող մեր քննարկումները ըլլան խորքային ու նպատակասլաց, հայրենաշէն ու ազգակերտ: Այսօր մեր ազգին առաջնահերթ եւ անյետաձգելի օրակարգը Հայաստանի պետութեան փրկութիւնն է, որուն շուրջ պետք է համախմբուին Հայաստանի ու Սփիւռքի բոլոր ոյժերը անխտի՛ր: Ա՛յս կը պահանջուի մեր ղեկավարներէն, հոգեւորականներէն ու մտաւորականներէն. այլ խօսքով՝ մեր բոլորե՛ն:

Իրատեսութենէ ու հեռատեսութենէ բխող յիշեալ մտածումները, շեշտաւորումներն ու մտահոգութիւնները մեզ պետք է մղեն արթնութեան, զգաստութեան ու պատասխանատուութեան: Մեր պատմութեան ներկայ ճգնաժամային հանգրուանին, ազգն ու հայրենիքը անմիջական անհրաժեշտութիւնը ունին ազգային գաղափարախօսութեամբ թրծուած ու նոր ռազմավարութեամբ ու մարտավարութեամբ հունաւորուած համահայկական օրակարգի, ինչպէս նաեւ զայն կեանքի կոչելու յանձնառութիւնը ունեցող եւ մեր ազգին բեւեռացուած զաւակները համախմբող իմաստուն ու հեռատես ղեկավարներու: Այլ ճամբայ չկայ մեր կեանքին դիմաց:

Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ հինը քանդելու ու նորը շինելու եւ ապականած արժեքներու համակարգը փոխարինելու՝ մարդը մարդայնացնող արժեքներով: Ա՛յս է պատգամը Նոր Տարուան. ա՛յս է խորհուրդը Աստուածայայտնութեան:

Նոր Տարին մեր ազգին համար պետք է դառնայ վերանորոգ յոյսով, հաւատքով ու վճռակամութեամբ ապագային նայելու ու մեր ազգին ու հայրենիքին պայծառ ապագան կերտելու հրաւեր: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր երկնային շնորհքներով ու բարիքներով ծաղկեցնէ մեր ազգին կեանքը՝ ի Հայաստան եւ ի Սփիւռս աշխարհի, եւ պահէ ու պահպանէ մեր հայրենիքը երեւելի եւ աներեւոյթ չարերէ ու չարիքներէ:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**



ԲԵԹՂԵՀԵՄԸ ՀՐԱԲԷՐ՝ ԴԱՌՆԱԼՈՒՒ ՔՐԻՍՏՈՍԻՆ՝

Աստուածաշունչին համաձայն, Ադամն ու Եւան մեղանչեցին, որով-
հետեւ անհնազանդ գտնուեցան Աստուծոյ պատուերին, դաւաճանեցին
իրենց կոչումին, եղծեցին իրենց աստուածային պատկերը եւ աքսորուե-
ցան դրախտէն: Մարդուն դրախտէն արտաքսումը, որոշ իմաստով, պայ-
մանաւորեց աստուածային յայտնութեան շեշտաւորումը եւ ուղղութիւ-
նը: Այլ խօսքով, հակառակ մարդու մեղանչումին, Աստուած չհեռացաւ
մարդէն: Աստուծոյ յայտնութեան աղբիւրը, Աստուածաշունչը կը պար-
զէ, թէ զանազան դեպքերու ու անձերու ճամբով Աստուած յիշեցուց
մարդուն իր իւրայատուկ կոչումը եւ կոչ ուղղեց վերադառնալու իր Արա-
րիչին՝ վերականգնելով իր Աստուածատուր շնորհներն ու արժանիքնե-
րը: Սակայն, մարդը մնաց խրած մեղքի տիղմին մէջ:

Աստուած, յաւիտենական սիրոյ աղբիւրը, չէր կրնար լքել իր մեղքին
գերին դարձած մարդը: Ինչպէս Աւետարանիչը կը վկայէ, Աստուած այն-
քան սիրեց մարդը, որ իր Միածին Որդին զրկեց աշխարհ, որպէսզի
մեղաւոր մարդը վերադարձնէ իր երկնաւոր Հօր (Յհ 3.16):

Քրիստոս՝ երկրորդ Ադամը (Ա.Կր 15.45) մարդացաւ, որպէսզի ազա-
տագրէ մարդը՝ առաջին Ադամի գործած մեղքին տիրապետութենէն ու
վերականգնէ զայն Աստուծոյ պատկերին համաձայն: Քրիստոս ըսաւ՝
Ե՛ս եմ կեանքը, որպէսզի մարդը ապրի Քրիստոսի արիւնով մաքրագոր-
ծուած կեանք մը: Քրիստոս ըսաւ՝ Ե՛ս եմ ճշմարտութիւնը, որպէսզի
մարդը կարենայ իր կեանքին դիմաց Քրիստոսը նկատել իրա՛ւ ճշմար-
տութիւնը: Քրիստոս ըսաւ՝ Ե՛ս եմ ճամբան, որպէսզի մարդը կարենայ
աշխարհի ճամբաներուն մէջէն ընտրել Քրիստոս-ճամբան:

* Սոյն գրութիւնը խտացումն է Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի պատգամին՝ խօսուած
6 Յունուար 2024-ին, Քրիստոսի հրաշափառ Ս. Ծննդեան տօնին առիթով, Անթիլիասի Ս.
Գրիգոր Լուսաւորիչ Սայր Տաճարին մէջ:

Քրիստոս Աստուծոյ էջքն է մարդուն, որպէսզի կարենայ մարդը բարձրացնել առ Աստուած: Քրիստոս Աստուծոյ մօտեցումն է մարդուն, որպէսզի կարենայ մարդը մօտեցնել Աստուծոյ: Քրիստոսի ծնունդով Աստուած մարդուն հետ եղաւ մարդուն փրկութեան համար: Աւետարանը Քրիստոսը կը բնութագրէ որպէս Էմմանուէլ, որ կը նշանակէ *«Աստուած մեզի հետ»* (Մտ 1.23): Քրիստոսի մարդեղացումով մարդը վերամարդացաւ իր աստուածաստեղծ եութեամբ ու կոչումով: Ինչպէս Առաքեալը կ'ըսէ, առաջին Ադամով մահ եկաւ աշխարհ, իսկ երկրորդ Ադամով՝ կեանք (Հռ 5.18): Քրիստոսի խաչով մահը նուաճուեցաւ: Քրիստոսի յարութեամբ խորտակուեցաւ մարդուն թագաւորութիւնը ու հաստատուեցաւ Աստուծոյ թագաւորութիւնը: Աստուծոյ Որդւոյն Ծնունդը, ծնունդն է նոր մարդուն:

Արդ, Բեթղեհեմը հրաւեր է ուղղուած մարդուն, հեռանալու առաջին Ադամէն ու դառնալու երկրորդ Ադամին՝ Քրիստոսին: Իր երկրաւոր առաքելութեան աւարտին, Քրիստոս աշակերտներուն ըսաւ՝ *«միշտ ձեզի հետ պիտի ըլլամ, մինչեւ աշխարհի վախճանը»* (Մտ 28.20):

Սիրելի՛ հայրորդիներ,

Քրիստոս միշտ մեզի հետ է. արդեօք մենք Քրիստոսին հե՞տ ենք...: Մտածենք այս մասին: Յաճախ մեր առօրեայ զբաղումներն ու մտահոգութիւնները, մեր հաճոյքն ու հանգիստը առիթ չեն տար, որ Քրիստոսի հետ ըլլանք: Մեր կեանքը տիրապետուած է այնպիսի կենցաղակերպերով ու գործելակերպերով եւ այնպիսի երեւոյթներով ու առաջնահերթութիւններով, որոնք յաճախ մեզ հեռու կը պահեն Քրիստոսէ: Մեր մեղաւոր անձերու փրկութեան համար աշխարհ եկած Քրիստոս կը մօտենայ մեզի, եթէ մենք պատրաստ ըլլանք մօտենալու իրեն. կը խօսի մեզի հետ, եթէ մենք պատրաստ ըլլանք լսելու զինք. ցոյց կու տայ մեզի կեանքի ճշմարիտ ճամբան, եթէ մենք պատրաստ ըլլանք քալելու այդ ճամբէն:

Բեթղեհեմը հրաւեր է վերանորոգ հաւատքով դառնալու Քրիստոսի: Այլ խօսքով, խաւարէն՝ լոյսի, չարէն՝ բարիի, մահէն՝ կեանքի:

Քրիստոսի դառնալ կ'ենթադրէ խոստովանիլ մեր մեղքերը ու ապաշխարել:

Քրիստոսի դառնալ կը նշանակէ Քրիստոսը դաւանիլ մեր միակ ապաւենն ու փրկիչը, մեր կեանքին իմաստն ու նպատակը:

Քրիստոսի դառնալ կը նշանակէ սիրել մեր նմանը եւ հոգածու ըլլալ հիւանդին ու կարիքաւորին:

Արդարեւ, Քրիստոսի դառնալով պիտի անդրադառնանք, որ առանց Քրիստոսի պայծառակերպիչ ներկայութեան՝ դատարկ է ու անիմաստ մեր ապրած կեանքը, մեր կերտած փառքն ու մեր դիզած հարստութիւնը: Քրիստոսի դառնալով պիտի անդրադառնանք, թէ ինչ կը նշա-

նակէ Աստուծոյ պատկերին համաձայն ստեղծուած մարդ ըլլալ՝ աստուածատուր շնորհներով ու պարտաւորութիւններով:

Քրիստոսի դառնալով պիտի մաքրուին մեր սրտերը, պիտի բերկրին մեր հոգիները ու պիտի լուսաւորուի մեր կեանքի ճամբան:

Առանց Քրիստոսի վերանորոգ ներկայութեան անզօր է մարդը:

Դառնա՛նք Քրիստոսին մեր ցաւին ու ուրախութեան մէջ:

Դառնա՛նք Քրիստոսին մեր կեանքը շրջապատող անորոշութեան, տագնապներուն ու յուսահատութեան մէջ:

Դառնա՛նք Քրիստոսին այն հաստատ հաւատքով, որ մեղաւոր, հիւանդ, տագնապահար, լքուած ու անտէր մարդուն հետ ըլլալու համար աշխարհ եկած Քրիստոս մեզի կը սպասէ՝ մեզի հետ ըլլալու ու մեր կեանքին առաջնորդը, ապաւենը ու փրկիչը դառնալու:

*

* *

Նոր Տարուան եւ Աստուածայայտնութեան տօներուն առիթով, եղբայրական սիրով կ'ողջունենք Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը, մաղթելով քաջառողջութիւն եւ աստուածահաճոյ ծառայութիւններով լեցուն երկար գահակալութիւն: Քրիստոնէական սիրով կ'ողջունենք Երուսաղէմի Հայոց Պատրիարք՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արք. Մանուկեանը եւ Կ. Պոլսոյ Հայոց Պատրիարք՝ Նորին Ամենապատուութիւն Տ. Սահակ Արք. Մաշալեանը, մաղթելով արդիւնաշատ ծառայութիւն մեր սուրբ եկեղեցւոյ ու ժողովուրդին:

Հայրական սիրով եւ Հայրապետական օրհնութեամբ կ'ողջունենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան թեմերու առաջնորդները, հոգեւորական դասն ու ազգային իշխանութիւնները, հայ կեանքէն ներս գործող բոլոր միութիւններն ու կազմակերպութիւնները, ինչպէս նաեւ մեր ժողովուրդի սիրելի գաւակները, աղօթելով, որ միշտ մնան Քրիստոսի ճամբուն հաւատարիմ ուղեւորները:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ



2024

ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան
Թեմակալ Առաջնորդներուն,
հոգեւոր դասուն,
Ազգային Իշխանութեանց, եւ
մեր ժողովուրդի գաւակներուն

2024 տարուան սեմին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն հայրական սիրով, հայրապետական օրհնութեամբ եւ ազգային վառ ապրումներով կ'ողջունենք մեր ժողովուրդի սիրելի գաւակները: Կ'ողջունենք յատկապէս մեր Թեմակալ Առաջնորդ Սրբազանները, Ազգային Իշխանութիւնները, հայ կեանքէն ներս գործող կազմակերպութիւնները ու միութիւնները, ինչպէս նաեւ համայնքային, կրթական, բարեսիրական, մշակութային, ընկերային ու մարզական կառույցները, եւ բոլորին կը մաղթենք խորանոր իրագործումներով հարուստ տարի մը: Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Իր Որդւոյն մարդեղութեամբ ու յայտնութեամբ բացուող Նոր Տարին մեր ժողովուրդին համար դառնայ երկնային բարիքներով ու շնորհքներով լեցուն տարի մը:

*

* *

Ինչպէս ծանօթ է մեր ժողովուրդի գաւակներուն, 2003-էն սկսեալ, տարիներէն իւրաքանչիւրը ձօնած ենք մեր հաւաքական կեանքին առընչուած դէպքի մը, երեւոյթի մը, արժեքի մը կամ մտահոգութեան մը: Տըւ-

եալ նիւթի ծիրէն ներս անհրաժեշտ վերլուծումը եւ շեշտաւորումները կատարած ենք, եւ ապա Մեր հայրական թելադրութիւնները փոխանցած մեր ժողովուրդին: Յաճախ կարելիութեամբ անդրադարձած ենք, թէ եկեղեցին իր եութեամբ ու կոչումով դէպի ժողովուրդ ուղղուած առաքելութիւն է: Արդարեւ, Քրիստոսի ուսուցումները տեսական ու պարագայական չէին. անոնք անմիջական աղերս ունէին ժողովուրդի կեանքին հետ: Այսօր եւս, եկեղեցին կոչուած է իր հոգեւոր հօտը հրաւիրելու, որ հոգեւոր խորհրդածութիւններու ու հաւաքական քննարկումներու ճամբով անդրադառնայ իր կեանքին հետ սերտ առնչութիւն ունեցող մտահոգութիւններուն ու մարտահրաւերներուն: Միաժամանակ եկեղեցւոյ առաքելութիւնն է անհրաժեշտ ցուցմունքները կատարել՝ ի խնդիր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու առաւել կենսաւորման: Այս նպատակը կը հետապնդեն Մեր հայրապետական Հռչակագրերը: Գոհունակութեամբ կ'ուզենք յայտնել, որ ցարդ հրապարակուած հռչակագրերը մեր հաւաքական կեանքէն ներս առիթ հանդիսացած են լայն քննարկումներու, եւ իրենց պարզած մտահոգութիւններուն ու կատարած թելադրութիւններուն լոյսին տակ, մեր ժողովուրդի զաւակները մղած վերաքննութեան ու վերարժեւորման ենթարկելու իրենց անհատական թէ համայնական կեանքը:

Ինչպէս գիտեք, 2022 եւ 2023 տարիները նուիրած էինք Սփիւռքին՝ 2022-ը յայտարարելով ընդհանրապէս **Սփիւռքի Տարի**, իսկ 2023-ը՝ **Սփիւռքի Տարի - Ինքնաքննութենէ վերակազմակերպում**: Պատահական չէր յաջորդական երկու տարիներուն Սփիւռքը լուսարձակի տակ բերելու Մեր որոշումը: Սփիւռքը իր կազմաւորման ու ծաւալման հոլովոյթը ունի, եւ միշտ ենթակայ է եղած արտաքին ազդակներու ու շրջապատի պայմաններու ազդեցութեան: Այսօր Սփիւռքը լուրջ մարտահրաւերներու դիմաց կը գտնուի: Նկատի ունենալով համաշխարհային մշակոյթի թափանցումը հայ կեանքէն ներս, ազգային արժէքներու նահանջը, հայ լեզուի աղաւաղումը եւ այլ հրատապ խնդիրներ, այսօր Սփիւռքին վերարժեւորումը եւ վերակազմակերպումը դարձած է անյետաձգելի հրանպաստան:

Սփիւռքին նուիրուած երկու հռչակագրերուն մէջ, Սփիւռքին պարզած ներկայ կացութեան գծով 2022-ին հետեւեալ հաստատումը կատարեցինք.- *«Սփիւռքը հայօրէն արագ մաշումի ընթացքի մէջ է. մեր կառոյցները սկսած են կորսնցնել իրենց այժմեականութիւնը, եւ հետեւաբար, անհրաժեշտ է Սփիւռքի վերակենսաւորումը՝ մեր կեանքը շրջապատող ներկայ պայմաններուն ու իրականութիւններուն լոյսին տակ»*: Իսկ 2023-ին, անդրադառնալով Սփիւռքի կառոյցներուն, հետեւեալ յիշեցումը կատարեցինք.- *«Սփիւռքը ունի մշակութային, հոգեւոր, տնտեսական, մասնագիտական, յարաբերական թէ փորձառական հսկայ նե-*

րուժ: Սակայն, տեղ մը՝ համակերպումը ու տեղայնացումը, այլ տեղ՝ անտարբերությունը ու անտեսումը սկսած են հայ կեանքէն հեռացնել իր սեփական ներուժը: Փաստօրէն, Սփիւռքը չէ կրցած իր ներուժին տեր դառնալ եւ զայն ճիշդ ու ամբողջական կերպով օգտագործել: Սփիւռքի ներուժին կազմակերպումը ու օգտագործումը անհրաժեշտութիւն է: Նման հսկայ ծրագիր կ'ենթադրէ հաւաքական ու հետեւողական աշխատանք»:

Յիշեալ երկու հռչակագրերուն մէջ, պարզելէ յետոյ Սփիւռքի համայնքներուն ու կառոյցներուն դիմագրաւած մարտահրաւերները, շեշտեցինք, թէ հայ կեանքի բոլոր բնագաւառներէն ներս **մարդուժի պակասը** փաստօրէն սկսած է իր ներկայութիւնը զգալի դարձնել: Այլ խօսքով, բոլոր գաղութներէն ներս մասնագետ, փորձառու ու յանձնառու մարդոց թիւը սկսած է հետզհետէ նուազիլ: Սա խորապէս մտահոգիչ երեւոյթ մըն է՝ թէ՛ համասփիւռքեան տարողութեամբ եւ թէ՛ իր անսխառտեսելի հետեւանքներով: Արդարեւ, մեր կառոյցները կենսաւորողը, մեր համայնքները ծաղկեցնողը, Սփիւռքը որպէս հայակերդոն գոյութիւն ամրապնդողը, անոր ազգային ինքնութիւնը պահողը եւ որակ ու ուղղութիւն տուողը իր մարդուժն է՝ հոգեմտաւոր պատրաստութիւն, մասնագիտական կազմաւորում ու ամբողջական նուիրում ունեցող մարդուժը: Ա՛յս խոր համոզումէն մեկնելով 2024 տարին կը հռչակենք՝

ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ

*

* *

Աստուածաշունչը կը յիշեցնէ, թէ Աստուած տիեզերքի ստեղծագործութեան վեցերորդ օրը մարդը ստեղծեց (Շն 1.26-27, 2.7): Մարդու ստեղծագործութիւնը, յարաբերաբար տիեզերքի միւս արարածներուն, տարբեր էր ո՛չ միայն իր ժամանակով ու եղանակով, այլ նաեւ իր նպատակով: Աստուածաշունչը կը վկայէ, թէ ,Աստուծոյ պատկերէին համաձայն ստեղծուած մարդը կոչուած էր ըլլալու ստեղծագործութեան ինձամողը, զայն պաշտպանողը ու հարստացնողը (Շն 1.28-30). այլ խօսքով՝ Աստուծոյ «գործակից»ը (Ա.Կր 3.9-17): Ի՛նչ սրբազան կոչում...: Բայց մարդը դաւաճանեց իր աստուածատուր կոչումին, իրեն տրուած առանձնաշնորհումը չարաշահեց, զայն օգտագործելով իր հաճոյքին ու փառքին համար եւ իր անհաւատարմութեան հետեւանքով վտարուեցաւ դրախտէն (Շն 3):

Սակայն, Աստուած միշտ մնաց հոգածու մեղանչած մարդուն նկատմամբ: Աստուած իր Միածին Որդին աշխարհի ղրկեց, որպէսզի իրմէ հե-

ռացած մարդը մօտեցնէ իր Երկնաւոր Զօր: Աստուծոյ Որդին մարդացաւ, եւ նոյնիսկ իր արիւնը թափեց, որպէսզի վերականգնէ մարդը իր աստուածային պատկերին եւ աստուածատուր առաքելութեան մէջ: Այս է Աստուածաշունչի, աստուածային յայտնութեան նպատակն ու պատգամը: Աստուածաշունչը յատուկ կարեւորութեամբ կը շեշտէ մարդուն իւրայատուկ տեղը ու եզակի դերը աստուածային յայտնութեան ու ծրագրին մէջ: Արդարեւ, զանազան առակներու, դէպքերու եւ ուսուցումներու ճամբով, Աստուածաշունչին մէջ կը տեսնենք մարդուն, նոյնիսկ մեղաւոր մարդուն նկատմամբ Աստուծոյ ցուցաբերած հայրական սէրն ու հոգածութիւնը. այսպէս օրինակ, երբ հովիւը 99 ոչխարները կը ձգէ մէկ ոչխարի փնտռողքը կատարելու (Մտ 18.11-14), երբ հայրը իր անառակ որդին գրկաբաց կ'ընդունի (Ղկ 15.11-32): Աստուածաշունչը կ'ընդգծէ, թէ մարդը, այր թէ կին, արժէք է Աստուծոյ համար: Սակայն մարդուն արժէքը սոսկ իր ֆիզիքական գոյութեան մէջ չի կայանար, այլ՝ Աստուծոյ նկատմամբ իր ունեցած հաւատարմութեան ու հնազանդութեան մէջ:

Բոլոր կրօնները ու քաղաքակրթութիւնները յատուկ ուշադրութեան արժանացուցած են մարդը, որպէս մտածող, գործող, կառավարող եւ իր ստեղծագործ ոգիով ընկերութեան կեանքը զարգացնող եւ անոր իմաստ ու ուղղութիւն տուող իրականութիւն: Հին փիլիսոփաներուն, հոգեբաններուն ու ընկերաբաններուն կողմէ մարդը լուրջ վերլուծումի նիւթ դարձած է եւ կը շարունակէ դառնալ մասնաւորաբար արհեստագիտութեամբ տիրապետուած ներկայ աշխարհին մէջ: Ազգերու պատմութիւնը կը պարզէ, թէ բոլոր իրագործումներուն, գիւտերուն ու զարգացումներուն ետին կը գտնուի մարդը: Ահա թէ որքա՛ն առանցքային է մարդուն դերը տիեզերքին ու ընկերութեան կեանքին մէջ: Երկիրներ, համայնքներ, ընկերութիւններ, կազմակերպութիւններ կը զարգանան, կը յառաջդիմեն ու կը հզօրանան ո՛չ միայն իրենց ունեցած նիւթական հարստութեամբ, քաղաքական կամ զինուորական առաւելութիւններով ու ներուժով, այլ՝ զանոնք հնարող, զարգացնող, կառավարող ու պաշտպանող մարդուժով:

*

* *

Նշեցինք, ու դարձեա՛լ կը շեշտենք, թէ հայ կեանքէն ներս մարդուժի պակաս կայ: Դժբախտաբար, մեր թերութիւնները, բացթողումները, տկարութիւնները տեսնելու եւ ընդունելու քաջութիւնը եւ իմաստութիւնը յաճախ կը պակսին մեզի: Հակամետ ենք ամէն բան վարդագոյն տեսնելու, սխալը ծածկելու եւ կամ սխալին պատճառը այլ տեղ փընտ-

ռելու: Կրօնական բարոյագիտութիւնը, ինչպէս ընդհանրապէս ժողովրդային իմաստութիւնը կը յուշէ, թէ սխալը ընդունիլը յաջողութեան կէտ ճամբան է: Ընդհանուր ակնարկ մը մեր գաղութներու, համայնքներու, կազմակերպութիւններու ու կառոյցներու կեանքին վրայ, յստակօրէն ցոյց կու տայ, թէ մարդուժի պակասը հետզհետէ աւելի կը խորանայ ու կը ծաւալի, եւ անոր այլազան ու բազմազան բացասական հետեւանքները կը դառնան ակներեւ: Անընդունելի է այս մտահոգիչ կացութեան դիմաց անտարբեր մնալ: Համասփիւռքեան այս յոյժ կարեւոր կարիքը դարձանելու հաւաքական աշխատանքին մէջ բոլորս ալ ընելիք ու տալիք ունինք: Քաջ պէտք է գիտնանք, որ առանց մարդուժի մեր կեանքը պիտի կորսնցնէ իր որակը, պիտի ճահճանայ ու գունաթափի եւ մեր գոյութեան արմատները պիտի տկարանան: Մարդուժի պատրաստութիւնը անյետաձգելի առաջնահերթութիւն է:

Ինչո՞ւ մարդուժի պակաս կայ Սփիւռքի կեանքէն ներս. ի՞նչ են ատոր պատճառները: Անհրաժեշտ է նման հարցադրումներ կատարել եւ առարկայական մօտեցումով փորձել պատասխաններ գտնել: Մարդուժի իմաստով այսօր հայ կեանքը հետեւեալ պատկերը կը պարզէ. – առաջին, մեր ունեցած ներկայ մարդուժը ընդհանրապէս չի համապատասխաներ ներկայ ժամանակներու կարիքներուն ու պահանջներուն: Երկրորդ, մեր մարդուժին կարեւոր մէկ մասը փաստօրէն կամ հայ կեանքի լուսանցքին վրայ կը գտնուի, եւ կամ հեռու է հայ կեանքէն:

*

* *

ՆԵՐԿԱՅ ՄԱՐԴՈՒԺԻՆ ՆԵՐԱՌՈՒՄԸ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ ՆԵՐՍ

Մարդուժի վերակազմակերպման ու հզօրացման առաջին կարեւոր քայլը պէտք է ըլլայ՝ հայ կեանքի մայր էջէն հեռու գտնուող **մեր մարդուժը ներգրաւել հայ կեանքէն ներս:**

Պահ մը դիտենք մեր շուրջը: Ծի՛շո՞ է, մասնագէտներ ունինք զանազան մարզերէն ներս, սակայն անոնցմէ շատեր հեռու են մեր կեանքէն: Չարգացած երիտասարդներ ունինք, սակայն շատեր մասնակից չեն մեր կառոյցներու գործունեութեան: Նուիրեալ ուսուցիչ-ուսուցչուհիներ ունինք, սակայն շատեր կը գործեն ոչ-հայկական կրթական կառոյցներէն ներս: Ինչ-ինչ պատճառներով եւ զանազան բնագաւառներէն ներս հայ կեանքէն հեռու մնացած մարդուժին թուարկումը կարելի է շարունակել...: Այս տխուր իրականութենէն մեկնած, անհրաժեշտ է հարց տալ, թէ ինչո՞ւ մեր մարդուժին մէկ կարեւոր մասը հեռացած է մեր հա-

մայնական կեանքէն: Հարցադրումները մեզ պետք է մղեն ախտաճանաչումի, եւ ախտաճանաչումը՝ սրբագրումի: Բոլոր պարագաներուն, մեր մօտեցումը պետք է ըլլայ իրատես, ո՛չ զգացական. գործնական, ո՛չ տեսական. տեղական, ո՛չ ընդհանրական: Հարկ է նկատի ունենալ Սփիւռքի զանազան շրջաններուն դիմագրաւած աշխարհաքաղաքական պայմանները եւ անոնց հետեւանքով յաճախ տեղի ունեցած ներքին տեղաշարժերը, տնտեսական պատճառներով որոշ գաղութներու տկարացումը եւ այլ գաղութներու ծաւալումը, համայնքներու նկարագրի փոփոխութիւնը, շրջապատային պայմաններու տարբերութիւնը, եւլն.: Տակաւ շարունակուող այս բոլոր զարգացումները հարկ է արժեւորել հայ կեանքէն ներս իր ներկայութիւնը հաստատած համաշխարհային մշակոյթի լոյսին տակ: Բնականաբար, յիշեալ երեւոյթները իրենց բացասական անդրադարձը ունեցած են որոշ թիւով մարդուժի թե՛ հայ կեանքէն հեռացման եւ թե՛ գաղութ մը այլ գաղութ տեղափոխման վրայ:

Վերոյիշեալ արտաքին ազդակներուն կողքին, նաեւ ներքին եւ անձնական պատճառներ ոմանց մղած են հեռու մնալու մեր հաւաքական կեանքէն: Այսպէս, համայնքային ղեկավարութեան ցուցաբերած երբեմն անտարբեր մօտեցումները եւ երբեմն միակողմանի դիրքորոշումները գաղութը յուզող հարցերուն նկատմամբ, կառոյցներու կեանքէն ներս երեւան եկող մրցակցութիւնները, հին եւ նոր սերունդներու անյարիր մտածելակերպերը, մարդուժին ճիշդ եւ արժանի գնահատանքը կատարելու պակասը, ինչպէս նաեւ աւելի լայն հորիզոններու բացուելու եւ աւելի բարձր նիւթական եկամուտ ապահովելու ցանկութիւնները, եւայլն:

Այս մտահոգիչ երեւոյթին դիմաց, չենք ուզեր այսպանել ո՛չ հեռու մնացողները եւ ո՛չ ալ անոնց հեռու մնալուն պատճառ հանդիսացած կառոյցները կամ պատասխանատուները: Կ'ուզենք բարձրագոյն աստիճանի կարեւորութեամբ շեշտել, թե՛ աւելի քան երբեք հրամայական է, որ զանազան պատճառներով հայ կեանքէն հեռու գտնուող մեր մարդուժը մօտենայ հայ կեանքին, մասնակից դառնայ մեր հաւաքական արումներուն, մաքառումներուն, ծրագիրներուն ու աշխատանքներուն: Այս հաստատ կամեցողութիւնը ու գիտակից յանձնառութիւնը կը սպասենք հեռու մնացողներէն: Միաժամանակ՝ կը սպասենք, որ պատասխանատու մարմիններ լայն կարելիութիւններ ստեղծեն մեր մարդուժին ու յատկապէս երիտասարդ ուժերուն, զանոնք ներգրաւելով մեր կառոյցներէն եւ ընդհանրապէս հայ կեանքէն ներս: Մեզի համար սիրելի եւ յարգելի է մեր մարդուժը: Հետեւաբար, ընդունելի չէ, որ մեր մարդուժը կազմող անձինք ուրիշներուն դմները թակեն, ուրիշներուն ծառայեն, իրենց մասնագիտութիւնը ու փորձառութիւնը ի սպաս դնեն ուրիշներու յաջողութեան: Մեզի համար առաջնահերթը, հիմնականը, մնայունը մեր ազգն է, մեր հայրենիքն է, մեր գաղութներն են:

*
* *

ՆՈՐ ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Մարդու լի կազմակերպման ու հզորացման երկրորդ կարեւոր քայլը պետք է ըլլայ **նոր մարդու լի պատրաստութիւնը**: Սա դիւրին ու հեզասահ եւ անմիջական կերպով իրագործելի ծրագիր մը չէ: Հարկ է ըլլալ իրապաշտ: Մարդու լի պատրաստութիւնը կ'ենթադրէ երկարաշունչ գործընթաց, ամբողջական նուիրում, լուրջ կազմակերպութիւն, հետեւողական աշխատանք եւ նաեւ՝ նիւթական լայն ներդրում: Նայեցէ՛ք ձեր շրջապատին: Պետութիւններ, կրօններ, կազմակերպութիւններ, կառոյցներ հսկայ աշխատանք կը տանին ու մեծ ներդրում կը կատարեն, նիւթական թէ այլապէս, մարդու լի պատրաստութեան ի խնդիր: Արդարեւ, առանց գիտակից, մասնագետ ու նուիրեալ մարդուն, մեր ունեցածը՝ նիւթականէն սկսեալ մինչեւ հոգեւոր, կրթականէն սկսեալ մինչեւ քաղաքական, ո՛չ մէկ արժէք կը ներկայացնէ: Մա՛րդն է որ անոր արժէք, իմաստ, որակ, ուղղութիւն ու նպատակ կու տայ:

Արդ, ժամանակը հասած է, որ այս գիտակցութենէն ու համոզումէն մեկնած, Սփիւռքի մէջ մեր ուշադրութեան սլաքը կեդրոնացնենք մարդու լի պատրաստութեան վրայ, մեր ունեցած ներուժին եւ կարելիութիւններուն ամբողջական օգտագործումով: Մարդու լի պատրաստութիւն կը նշանակէ հայ մարդը հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներով շահախել, մեր ազգին անցեալի ու ներկայի յատկանշական դէպքերուն, դէմքերուն ու մարտահրաւերներուն ծանօթացնել, ներկայ աշխարհին մասնագիտութիւններուն մէջ խորանալու կարելիութիւն ընծայել, այս բոլորէն վեր ու այս բոլորը իմաստաւորող՝ մեր ժողովուրդին ամբողջական նուիրումով ծառայելու ոգին ներարկել, հայ կեանքին բերելու իր գործօն մասնակցութիւնը:

Ինչպէ՞ս կարելի է Սփիւռքը կազմակերպ մօտեցումով ու վերանորոգ թափով մղել մարդու լի պատրաստութեան: Հարկ է ի միտի ունենալ, թէ մարդու լի պատրաստութիւնը սոսկ տուեալ կառոյցի մը աշխատանքը չէ, այլ հաւաքական աշխատանք է ու հետեւողական գործընթաց՝ զանազան հանգրուաններէ ընթացող ու նախաձեռնութիւններ ներառող: Ամփոփ գիծերով կ'ուզենք յիշել այն կառոյցները ու միջոցները, որոնք կարեւոր նպաստ կրնան բերել մարդու լի պատրաստութեան առաքելութեան.-

1) Մարդու լի պատրաստութեան հիմնական ու մնայուն խարիսխը **ԸՆՏԱՆԻՔՆ Է**: Հայ մարդու կազմաւորման ամուր հիմքը կը դրուի ըն-

տանիքեն ներս: Մեր ծնողներեն շատ բան կը սորվիք լսելով ու տեսնելով: Մեր ծնողներեն միայն մեր ազգին առնչուած գիտելիքներ չենք ստանար, այլ նաեւ ու մանաւանդ գիտակից ու հպարտ հայ ըլլալու ոգին եւ անսակարկ կերպով մեր ազգին, հայրենիքին ու եկեղեցւոյ ծառայելու նուիրումը: Արդ, անհրաժեշտ է, որ հայ ընտանիքը վերաշէշտէ մարդուժի գծով իր եզակի դերակատարութիւնը: Այս յոյժ կարեւոր առաքելութիւնը վերանորոգ նուիրումով կատարելու համար հայ ընտանիքը կոչուած է հեռու մնալ այնպիսի երեւոյթներէ, որոնք կրնան աղարտել իր բարոյական մթնոլորտը ու հայադրոշմ նկարագիրը եւ նսեմացնել վեհ կոչումը:

2) Մարդուժի պատրաստութեան երկրորդ վայրը ԵԿԵՂԵՑԻՆ է: Եկեղեցին մեր հոգեւոր, բարոյական ու ազգային արժէքներու պահպանման հնոցն է ու կենսաւորման աղբիւրը: Մեր ազգի մեծերեն շատեր եկեղեցւոյ կեանքին ու վկայութեան հետ իրենց անձը շաղախած են եւ ազգին ու հայրենիքին ծառայելու նախանձախնդրութիւնը ու յանձնառութիւնը եկեղեցիէն ստացած: Չանազան նախաձեռնութիւններու ճամբով (կիրակնօրեայ վարժարան, Սուրբ Գրոց սերտողութիւն, ժողովրդային լսարաններ, քրիստոնէական դաստիարակութիւն, ելլն.) անհրաժեշտ է որ մեր եկեղեցին իր հոգեւոր առաքելութեան ու ազգային ծառայութեան առընթեր, նաեւ զարկ տայ յատկապէս իր ուսուցողական ու դաստիարակչական աշխատանքներուն:

3) Մեր Սուրբ Աթոռի ԴՊՐԵՎԱՆՔԻՆ նպատակը կը շարունակէ մնալ հոգեմտաւոր արժէքներով թրծուած եւ ազգին ու եկեղեցւոյ ծառայելու կոչումը ունեցող հոգեւորականներու, ուսուցիչներու ու մտաւորականներու կազմաւորումը: Այս ուղղութեամբ անցնող տասնեակներուն հսկայ աշխատանք է կատարած Դպրեվանքը: Արդարեւ, Դպրեվանքէն անցած եւ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ մեր ազգային կեանքի հոգեւոր, կրթական ու մշակութային բնագաւառներէն ներս կարեւոր ներդրում բերող մեծ թիւով անձերու ներկայութիւնը՝ պերճախօս վկայութիւն մըն է Դպրեվանքին վիճակուած եզակի առաքելութեան:

4) ՀԱՅ ԴՊՐՈՑԸ, բնականաբար, մարդուժի պատրաստութեան կարեւոր կառոյցներէն մէկն է: Ներկայ ժամանակներուն, դժբախտաբար մեր ծնողներուն մօտ սկսած է որոշ անտարբերութիւն մը ի յայտ գալ հայ դպրոցին նկատմամբ: Պետական քննութիւններուն իր ձեռք ձգած յաջողութիւններով, իր ջամբած հայեցի դաստիարակութեամբ ու հայակերտ մթնոլորտով հայ դպրոցը մեծապէս կը նպաստէ մարդուժի պատ-

րաստութեան: Հետեւաբար, անհրաժեշտ է վերաշեշտել հայ դպրոցին մարդակերտումի առաքելութիւնը՝ զօրավիգ կանգնելով անոր նպաստող ծրագիրներուն:

5) Հայ կեանքէն ներս գործող ԲՈԼՈՐ ԿԱՌՈՅՑՆԵՐԸ՝ կուսակցական, բարեսիրական, մշակութային, մարզական, ընկերային, եւլն. իրենց կարգին մարդուժի պատրաստութեան իւրայատուկ դպրոցներ են: Արդարեւ, ազգային ու մշակութային արժէքներով լեցուն իրենց ներքին մթնոլորտը, ինչպէս նաեւ մեր համայնքներու կարիքներուն ծառայելու իրենց կամաւոր աշխատանքը այլապէս կը նպաստէ մարդուժի պատրաստութեան: Ունինք ազգայիններ, որոնք զանազան պատճառներով հայ դպրոց չեն յաճախած, սակայն մաս կազմելով համայնքային կազմակերպութիւններու, հայ կեանքի մասին լայն ծանօթութիւն ձեռք ձգած են եւ իրենց մէջ արմատ նետած է ազգին ծառայելու ոգին:

6) ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՔՆԵՐԸ մարդուժի կազմաւորման մէջ էական դեր ունին: Այսօր, փաստօրէն, Սփիւռքի մէջ միակ կազմակերպուած Հայագիտական Կեդրոնը Կաթողիկոսարանէն ներս կը գործէ: Հարկ է նաեւ յիշել Հալէպի Քարէն Եփփէ ճեմարանին ու Հայկազեան Համալսարանին հայագիտական դասընթացքները: Կաթողիկոսարանի Հայագիտական Կեդրոնը վերջին 15 տարիներուն ինքնակազմաւորման հանգրուաններէ անցնելէ յետոյ, այսօր իր դասանիւթերու այլազանութեամբ եւ Հայաստանէն ու Սփիւռքէն հրաւիրուած փորձառու ուսուցիչներու ներկայութեամբ, կը գործէ առաւել կազմակերպ ու ինքնավստահ կերպով:

7) Կաթողիկոսարանէն ներս գործող ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԸ, նպատակ ունենալով մանկավարժական նոր մեթոտներով ուսուցիչներու վերաորակաւորումը, յատուկ կարեւորութիւն կը ներկայացնէ այս մարզէն ներս: Աւելի քան 35 տարիներու իր գործունեութիւնը եւ մասնաւորաբար պետական քննութիւններուն մէջ ձեռք ձգած յաջողութիւնները ցոյց կու տան, թէ մանկավարժական կազմաւորման ծիրէն ներս իր տարած աշխատանքը կը մնայ առանցքային:

8) Մարդուժի պատրաստութեան վերոյիշեալ համայնքային կառոյցներէն անդին, ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՈՒՍՈՒՄԸ կը նկատենք էական, ինչպէս նաեւ ամբողջացուցիչ մասը մարդուժի պատրաստութեան: Ներկայ աշխարհը մասնագիտութեան աշխարհ է: Ընկերութեան կեանքի բոլոր մարզերէն ներս հարցերուն, երեւոյթներուն, տագնապներուն ու ծրագիրներուն նկատմամբ սիրողական մօտեցում փաստօրէն այլեւս տեղ

չունի: Որքան ալ նուիրումը ու պատրաստակամութիւնը անհրաժեշտ նկատուին, նոյնքան անհրաժեշտ է մասնագիտութիւնը: Ներկայ ժամանակներուն համալսարանական բարձրագոյն ուսման կեդրոնները ու կարելիութիւնները բազմապատկուած են: Ճարտարագիտութեան ընձեռած լայն միջոցներու լոյսին տակ, համալսարանական ուսումը եղած է աւելի դիրահաս եթէ ոչ նիւթական, գէթ ժամանակի ու աշխատանքի իմաստով: Հարկ է որ մեր ուսումնաստէնչ երիտասարդ-երիտասարդուհիները առաւելագոյն չափով օգտուին համալսարանական բարձրագոյն ու մասնագիտական ուսման ընձեռած բարիքներէն:

Բնականաբար, տարբեր պայմաններու մէջ ապրելով, սպասելի չէ որ նոր սերունդը մարդուժի կազմաւորման նշուած հանգրուաններէն անցնի: Ինքնուսումը եւս կարելիութիւն կու տայ եւ իր կարելոր ներդրումը կրնայ ունենալ մարդու կազմաւորման մէջ: Բոլոր պարագաներուն, հրամայական է, որ հոգեւոր, բարոյական ու ազգային արժեքներով շահախուած եւ մասնագիտական ուսումով զինուած հայ երիտասարդ-երիտասարդուհին ինքզինք արժեւորէ հայ կեանքէն ներս՝ իր ուսումը ծառայութեան ճամբով ի սպաս դնելով մեր ազգին զարգացման ու հզօրացման: Սփիւռքը անյետաձգելի կարիքը ունի մարդուժի. հետեւաբար, մարդուժի պատրաստութիւնը Սփիւռքին համար պետք է դառնայ առաջնահերթութիւն:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԹԵԼԱԴՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մարդուժի պատրաստութեան գծով Մեր պարզած մտահոգութիւններուն, մատնանշած կարելիութիւններուն ու կատարած ընդգծումներուն լոյսին տակ, կ'ուզենք հետեւեալ գործնական թելադրութիւնները կատարել.–

1) Հակառակ Սփիւռքի դժուար պայմաններուն ու սահմանափակ միջոցներուն, մարդուժի պատրաստութեան գծով հսկայ աշխատանք է կատարուած: Մեր բարձր գնահատանքը կը յայտնենք մարդակերտումի ու հայակերտումի սրբազան առաքելութեան լծուած բոլոր նուիրեալներուն: Ժամանակը հասած է, որ գաղութներէն ներս մարդուժի պատրաստութեան նուիրուած մեր կառոյցներուն գործունեութիւնը ըլլայ աւելի ներդաշնակ, համադրուած ու համապատասխան ներկայ իրականութիւններուն եւ սպասումներուն: Այս ուղղութեամբ անհրաժեշտ է, որ ծրագրաւորումի յատուկ աշխատանք կատարուի կառոյցներու պատասխանատուներուն մասնակցութեամբ՝ կրկնութիւններէ ու բացթողումներէ խուսափելու համար:

2) Գաղութներեն ներս մարդուժի համախմբումը կը նկատենք անյետաձգելի անհրաժեշտութիւն: Համախմբումը կարելի է կատարել երկու հանգրուաններով: Առաջին հանգրուանին կը մասնակցի գաղութեն ներս գործող մարդուժը եւ երկրորդ հանգրուանին՝ նաեւ գաղութեն հեռու մնացած մարդուժը:

3) Բոլոր պարագաներուն համախմբումները անհրաժեշտ է որ կազմակերպուին յստակ օրակարգի մը հիման վրայ: Հարկ է լսել ներկաներուն տեսակետները, մտահոգութիւնները ու առաջարկները, եւ ապա միասնաբար գաղութին հզօրացման առնչուած ընդհանուր ուղեգիծ մը ճշդել՝ առաջնահերթութիւններու յստակեցումով ու աշխատանքի բաժանումով:

4) Հարկ է յատուկ կարեւորութիւն ընծայել երիտասարդ-երիտասարդուհիներու մասնակցութեան՝ ներառելով յատկապէս համալսարանականներն ու համալսարանաւարտները:

5) Անհրաժեշտ է որոշ առիթներով եւ նոյնիսկ հանգրուանային կերպով գաղութին մարդուժը համախմբող հաւաքներ կազմակերպել՝ քըննարկելու թե՛ գաղութին հետ աղերս ունեցող ընդհանուր ծրագիրներ եւ թե՛ համասփիւռքեան ու համագգային մտահոգութիւններ ու մարտահրաւերներ:

6) Գաղութի մը մարդուժին ամբողջական ցանկագրումը կը նկատենք խիստ անհրաժեշտ: Աշխատանք մը, որ ներառէ հիմնական տեղեկութիւններ, որպէսզի կարելի ըլլայ գայն փոխանակել այլ գաղութներու հետ, համասփիւռքեան տարողութեամբ մարդուժի ամբողջական պատկերը ունենալու համար:

7) Թելադրելի է, որ յիշեալ յոյժ կարեւոր աշխատանքներուն իրենց գործօն մասնակցութիւնը բերեն թեմական, կուսակցական, կրթական, երիտասարդական, մշակութային, բարեսիրական եւ այլ կառոյցներու գործադիր մարմինները:

8) Ինչպէս յայտնեցինք, մարդուժի պատրաստութիւնը նաեւ կը պահանջէ նիւթական յանձնառութիւն: Համայնական այս ճիգին մէջ մեր ունեւոր ազգայինները պարտաւոր պետք է զգան այս ուղղութեամբ կարեւոր ներդրում կատարելու, հիմնադրամներու հաստատումով կամ տարեկան նպաստներու յատկացումով՝ ընդհանրապէս մարդու պատրաստութեան լծուած ծրագիրներուն եւ մասնաւորաբար այն կառոյցներուն, որոնք կը ծառայեն նոյն նպատակին համար:

9) Մեր թեմերը ու կառույցները իրենց գործունեության օրակարգին վրայ կարելուր տեղ պետք է յատկացնեն մարդու ժի պատրաստության հետ աղերս ունեցող նախաձեռնություններուն ու աշխատանքներուն:

Սփիւռքի վերակազմակերպման ու վերակենսաւորման աշխատանքները յղացողը, ծրագրողը եւ գործադրողը մեր մարդու ժը պիտի ըլլայ: Արդ, որքա՛ն էական է մարդու ժը մեզի համար եւ հետեւաբար՝ որքա՛ն հրամայական եւ անյետաձգելի մարդու ժի պատրաստութիւնը:

Այս մտածումներով ու սպասումով, հայրական ջերմ սիրով կ'ողջունենք ձեզ, եւ կը վստահեցնենք, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ պատրաստ է զօրակից ու գործնապէս մասնակից դառնալու մարդու ժի պատրաստության նուիրական առաքելութեան:

Հայրապետական օրհնութեամբ,

Աղօթարար՝



**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

1 Յունուար, 2024
Անթիլիաս, Լիբանան



ԿՈՆԴԱԿՆԵՐ



ՎԵՐԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՅԱՐԴ ՀՐԱՊԱՐԱԿԱԾ ԿՈՆԴԱԿՆԵՐՈՒՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԳԻՐԵՐՈՒՆ ՀԱՄԱՔԱԾՈՆ*

ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տիար Յովհաննէս Պարտազճեանին,
«Ս. Մեսրոպ Մաշտոց»ի շքանշան ստանալու առթիւ)

Խոր գոհունակութեամբ կարդացինք Քուէյթի եւ Շրջակայից թեմի Ազգային Վարչութեան վկայութիւնը՝ աւելի քան վեց տասնամեակներ շարունակ Քուէյթի հայութեան կեանքէն ներս Ձեր ունեցած նուիրեալ ծառայութեան մասին, յատկապէս հայ եկեղեցւոյ ծիսական ու կրօնական դաստիարակութեան մարզերէն ներս:

Կը գնահատենք մեր հոգեւոր արժէքներուն նկատմամբ Ձեր ցուցաբերած սէրը, եւ մանաւանդ՝ հոգեւոր երգեցողութեան կալուածէն ներս Ձեր քաղած փորձառութիւնն ու մեր եկեղեցւոյ աւանդութիւնները նորահաս սերունդին փոխանցելու Ձեր նախանձախնդրութիւնը: Արդարեւ, պատանի տարիքին Հալէպի մէջ դպրաց դասի անդամակցութեամբ սկիզբ առած Ձեր եկեղեցանուէր ծառայութեան դաշտը դուք գիտցաք ընդարձակել՝ նախ գործօն դերակատարութիւն ունենալով Քուէյթի Կիրակնօրեայ վարժարանի հիմնադրութեան ու գործունէութեան մէջ, եւ ապա դառնալով անդամ Սրբոց Վարդանանց եկեղեցւոյ թաղական խորհուրդին, ջանալով միշտ օգտակար հանդիսանալ եկեղեցւոյ ծառայութեան նուիրուած երիտասարդ տարրերուն:

* Յունուար 2010-ի թիւով սկսանք հրատարակել Ս. Աթոռոյս Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսի Կոնդակներու հաւաքածոն, սկսեալ 1995 թուականէն: Սոյն շարքը շարունակութիւնն է ընդհանուր հաւաքածոյին: *ԽՄԸ*:

Առ ի գնահատանք հայ եկեղեցւոյ պայծառութեան ի սպաս երկար տարիներու Ձեր անխոնջ աշխատանքին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան

Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ՇՔԱՆՇԱՆ

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի եւ Ձեր հարազատներուն շնորհէ քաջառողջ եւ երկար տարիներ՝ աստուածային բարիքներով լեցուն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ**

*Տուաւ Կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դռուն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 30-ն Նոյեմբերի, 2013 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԸ.
Ընդ համարաւ ՇՅԻԷ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Շահան Եպս. Սարգիսեանին, Արքութեան տիտղոս
ստանալուն առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ, ինչպէս նաեւ Ձեր թեմի հոգեւորական դասը, Ազգ. Իշխանութիւնն ու Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած Բերիոյ թեմի մեր ժողովուրդի զաւակները:

Մօտէն հետեւած ենք վերջին շուրջ տասը տարիներու Ձեր գործունէութեան, որպէս Առաջնորդ Բերիոյ թեմին: Արդարեւ, դուք ամբողջական նուիրումով լծուեցաք Ձեզի վստահուած առաքելութեան թեմի ազգային-եկեղեցական, կրթական-մշակութային ու ընկերային մարզերէն ներս: Դժբախտաբար, վերջին շուրջ երեք տարիներուն երկրէն ներս տիրող կացութիւնը պղտորեց Բերիոյ թեմի մեր սիրելի զաւակներուն անդորր կեանքը: Ոմանք ստիպուեցան լքել իրենց տուններն ու գործատեղիները ու հեռանալ երկրէն, իսկ ուրիշներ տակաւին կ'արպարին տագնապի թոհուրհոք: Այս բոլորին մէջ, սակայն, Ազգ. Առաջնորդարանը, Ձեր գլխաւորութեամբ թեմի ժողովականութեան եւ ազգային կազմակերպութիւններու գործակցութեամբ, շարունակեց, եւ տակաւին կը շարունակէ, տէր կանգնիլ իրեն վստահուած հօտին, եւ ի գին

ամեն զոհողության հասնիլ տագնապահար մեր զուակներու կարիքներուն՝ նիւթական թէ բարոյական օժանդակութիւններու մատակարարումով:

Առ ի գնահատանք Ձեր ունեցած նուիրեալ ու նախանձախնդիր ծառայութիւններուն՝ ընդհանրապէս որպէս միաբան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ու յատկապէս որպէս Առաջնորդ Բերիոյ թեմին, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք **ԱՐՔՈՒԹԵԱՆ** պատիւ եւ տիտղոս:

Վստահ ենք, որ Ձեզի տրուած այս տիտղոսը նոր մղում մը պիտի հանդիսանայ առաւել վճռակամութեամբ ու նորոգեալ խանդով շարունակելու Ձեր առաքելութիւնը մեր սուրբ եկեղեցոյ անդաստանէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջութիւն եւ Իր հովանին անպակաս ընէ Ձեր, Ձեր գործակիցներուն եւ Ձեր հոգեւոր խնամքին ենթակայ մեր սիրելի զուակներուն վրայէն:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ կոնդակա ի Կաթողիկոսարանիս
Ի դռուն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 11-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ ՇՅԻԹ.*



ԳԻՐ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆՔԻ

(Տ. Խորէն Եպս. Տողրամաճեանին,
Արքութեան տիտղոս ստանալու առթիւ)

Հայրապետական օրհնութեամբ եւ հայրական ջերմ սիրով կ'ողջունենք Ձեզ, Ձեր թեմի հոգեւորական դասը, Ազգ. Իշխանութիւնն ու Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած Յունաստանի թեմի մեր ժողովուրդի զուակները:

Սօսէն հետեւած ենք վերջին շուրջ տասը տարիներու Ձեր գործունէութեան, որպէս Առաջնորդ Յունաստանի թեմին: Քաջատեղեակ ենք այն դժուարութիւններուն, զորս կը դիմագրաւէ Ձեր թեմը, յատկապէս՝ վերջին քանի մը տարիներուն երկրէն ներս տիրող տնտեսական տագնապին հետեւանքով: Այդուհանդերձ, սակայն, Ձեր գլխաւորութեամբ թեմի Ազգ. Իշխանութիւնը իր

գերագոյն ճիգն ու կարելին կը կատարէ թեմական ու համայնքային կառոյցներու կարիքներուն օգտակար ըլլալու համար:

Արդ, առ ի գնահատութիւն անցնող տարիներու Ձեր նուիրեալ ծառայութեան, եւ որպէս քաջալերանք Ձեր կեանքին առջեւ բացուող նորանոր ծառայութեանց, այսու Հայրապետական Կոնդակաւ Ձեզի կը շնորհենք **ԱՐՔՈՒԹԵԱՆ** պատիւ եւ տիտղոս:

Վստահ ենք որ Ձեզի տրուած այս տիտղոսը պիտի մղէ Ձեզ վերանորոգ հաւատքով ու նուիրումով կատարելու Ձեզի վստահուած առաքելութիւնը՝ մեր Մուրբ Աթոռի ծառայութեան դաշտէն ներս:

Կ'աղօթենք առ Բարձրեալն Աստուած, որ Ձեզի պարգեւէ քաջառողջութիւն եւ Իր հովանին անպակաս ընէ Ձեր, Ձեր գործակիցներուն եւ Յունաստանի թեմի մեր սիրելի զաւակներուն վրայէն:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ**

*Տուաւ կոնդակս ի Կաթողիկոսարանիս
Ի դռնն Մայր Տաճարիս Սրբոյն Գրիգորի Լուսաւորչին
Որ յԱնթիլիաս, Լիբանան
Ի 11-ն Յունուարի, 2014 թուին Քրիստոսի, եւ
Ի թուին Հայոց ՌՆԿԳ.
Ընդ համարաւ Շ/ՅԻԸ.*



ՄԵԿՆԱԲԱՆԱԿԱՆ

ՄԵԿՆՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍ ԱԲԵՏԱՐԱՆԻ (4.1-3)

«Յեառոյ Յիսուս Սուրբ Հոգիին կողմէ տարուեցաւ անապատ՝ Սատանայէն փորձուելու համար» (Մտ 4.1):

1) Ինչո՞ւ համար աւետարանիչը յատուկ կերպով կը շեշտէ թէ Յիսուս Սատանայէն փորձուելու համար, «Սուրբ Հոգիին կողմէ տարուեցաւ անապատ»: Ղեւտացիս 16-ին մէջ յիշուած քառութեան նոխազը (արու այծ) կը նախապատկերացնէ Քրիստոսը: Ահարոն քահանան իր ձեռքերը պէտք էր նոխազին գլխուն դնէր եւ ժողովուրդին մեղքերը խոստովանէր, որպէսզի բոլորին մեղքերը նոխազին գլխուն վրայ դրուած ըլլային: Անկէ ետք, յարմար մարդու մը ձեռքով նոխազը պէտք էր անապատ տարուէր եւ հոն ազատ արձակուէր (Ղև 21-22 համարներ): Արդ, ինչպէս Ահարոն մարդոց մեղքերը նոխազին գլխուն վրայ դնելէ ետք, զանիկա ուրիշի մը ձեռքով անապատ պէտք էր տանէր, նոյնպէս ալ, մեր երկնաւոր Հայրը, իր Որդիին մկրտութեան ժամանակ մեր մեղքերը անոր վրայ դնելէ ետք՝ զայն ուրիշի մը, այս պարագայիս՝ Սուրբ Հոգիին ձեռքով անապատ տարաւ:

Պատմական այս ակնարկէն զատ, անշուշտ ուրիշ պատճառներ ալ կային, թէ ինչու համար աւետարանիչը կը շեշտէ թէ Սուրբ Հոգին ինք տարաւ Յիսուսը փորձութեան անապատ: Որպէսզի ցոյց տրուի մեզի. –

ա) Թէ մենք առանձին չենք փորձութեանց անապատին մէջ, այլ՝ մեր կողքին է Սուրբ Հոգին:

բ) Թէ Սուրբ Հոգին ինքն է որ յաղթել կու տայ մեզի փորձիչին եւ անոր փորձութեանց:

գ) Թէ պէտք է վստահիլ Սուրբ Հոգիին առաջնորդութեան եւ պաշտպանութեան, երբ կը գտնուինք փորձութեանց անապատին մէջ:

դ) Թէ հաւատացեալ մարդը չի փորձուիր առանց Աստուծոյ թոյլտուութեան: Եթէ Քրիստոս թոյլ չտար՝ Սատանան չէր կրնար մօտենալ իրեն եւ փորձել զինք. նոյնպէս ալ, եթէ ան թոյլ չտայ՝ Սատանան չի կրնար մեզ փորձել. իսկ եթէ թոյլ կու տայ՝ թոյլ կու տայ ո՛չ թէ որպէսզի տանջէ մեզ, այլ՝

որպեսզի մաքրէ մեզ փորձութեանց կրակին միջոցաւ, եւ մեզ մասնակից դարձնելով իր շարժարանքներուն՝ իր փառքին եւս մասնակից դարձնէ (Ա.Պտ 4.12-13; Հո 8.17):

ե) Եւ թէ փորձուած ժամանակ՝ Սուրբ Հոգին ինքն է հաւատացեալին մարգիշը, ուսուցիչը եւ պահապանը:

2) Ե՞րբ Յիսուս Սուրբ Հոգիին կողմէ տարուեցաւ անապատ՝ Սատանայէն փորձուելու համար: Երբ մկրտուեցաւ, վայելեց իր անձին վրայ Սուրբ Հոգիին հանգչումը եւ երբ Հայրը վկայեց իրեն համար՝ «ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Մտ 3.16-17): Այս իրողութենէն մեր քաղելիք կարեւոր դասը այն է, որ մենք կամ մեր մանուկները կրնանք յարձակումի ենթարկուիլ՝ Աստուծոյ կողմէ մկրտութեան ժամանակ մեր ստացած Սուրբ Հոգիի շնորհքին համար, կամ որդեգրութեան պատիւին համար: Խօսինք մեր մանուկներուն մկրտութեան մասին. ինչպէս Յիսուս իր մկրտութենէն անմիջապէս ետք տարուեցաւ փորձութեան անապատ, այնպէս ալ, մեր մանուկներուն պարագային, փորձութիւնները կը սկսին իրենց մկրտութենէն անմիջապէս ետք, երբ Սուրբ Հոգին կը ստանան եւ երբ Աստուած կը վկայէ որ անոնք իր սիրելի զաւակները դարձան: Բայց, Յիսուս իր մկրտութենէն ետք անապատ գնաց՝ հոն յաղթելու համար Չարին, մինչդեռ մեր մանուկները, դժբախտաբար, մկրտութենէն ետք ո՛չ թէ անապատ կը տարուին, այլ խօսքով՝ ո՛չ թէ Չարին դէմ պատերազմելու եւ անոր յաղթելու կ'առաջնորդուին իրենց ծնողներուն կողմէ, այլ ընդհակառակը, կերուխումի համար կը տարուին ճաշարաններ ու պարասրահներ՝ հոն Չարին կողմէ պարտութեան մատնուելու, մկրտութեան ժամանակ իրենց ստացած Սուրբ Հոգիէն դատարկուելու, մկրտութեան պահուն իրենց հագած սպիտակ պատմուճանը մրոտելու, մկրտութեան պահուն իրենց մաքրուած հոգիները բիծերով արատաւորելու. եւ այս բոլորը, անշուշտ, մկրտեալ մանուկին ծնողներուն եւ անմիջական հարազատներուն առաջնորդութեամբ կ'ըլլան, որոնց համար ո՛չ թէ մանուկը, այլ՝ ծնողները իրենք հաշուետու պիտի ըլլան Աստուծոյ:

3) Ինչո՞ւ համար Յիսուս փորձուելու համար՝ անապատ տարուեցաւ եւ ո՛չ թէ այլուր: Անապատը՝ անշրդի, անպտուղ եւ անմարդաբնակ վայր մը կ'ըլլայ, խորհրդանիշ շար ոգիներու բնակութեան (Մտ 12.43; Դկ 11.24): Մեկնողական գրականութեան, ինչպէս նաեւ անապատական հայրերու խօսքերուն մէջ, անապատը կը ներկայացուի Սատանային եւ անոր շար ոգիներուն բնակութեան վայր իբրեւ: Այս առումով, Յիսուս անապատ գնաց՝ պարտութեան մատնելու համար Սատանան իր իսկ դաշտին մէջ: Յովհան Ոսկեբերան կ'ըսէ. «Սատանան գնաց առաջին մարդուն՝ Ադամին մօտ, որպէսզի փորձէր զանկա, բայց քանի չէր կրնար յարձակում գործել Քրիստոսի վրայ, ահա Քրիստոս ինք եկաւ անոր մօտ»: Յիսուս ինքզինք կը ներկայացնէ՝ Սատանային տանը վրայ յարձակող եւ զայն կապող մէկը իբրեւ (Մտ 12.29): Մենք սովորաբար կը

խօսինք Սատանային յարձակումներուն դէմ մենք մեզ պաշտպանելու մասին. ինքնապաշտպանութիւն է որ կ'ուսուցանենք. չենք խօսիր նախայարձակ ըլլալու մասին. կ'երկմտինք Սատանային դէմ յարձակում գործելու մարտահրաւէր ուղղել այլոց, ինչպէս Պօղոս առաքեալ ըրաւ. «Այս բոլորը տարեք՝ մահու սրտով, ... Աստուծոյ զօրութեամբ եւ արդարութեամբ զինուած՝ շարին դէմ յարձակելու եւ ինքզինք պաշտպանելու համար» (Բ.Կր 6.6-7): Առաքեալը միայն մենք մեզ պաշտպանելու մասին չի խօսիր, այլ նաեւ՝ շարին դէմ յարձակելու մասին: Այսօր Քրիստոսի եկեղեցին կարիքը ունի անապատ գացող եւ Չարին դէմ կռուող եկեղեցականներու, հովիւներու եւ առաջնորդներու, որոնք կարող ըլլան կապելու Չարը եւ խափանելու անոր արարքները եկեղեցւոյ կեանքին մէջ: Այսօր Քրիստոսի եկեղեցին կարիքը ունի նաեւ Չարին դէմ մարտնչող հաւատացեալներու:

4) Պէ՛տք էր որ Քրիստոս փորձուէր Սատանային կողմէ: Այո՛: Քրիստոսի փորձութիւնը իր դերը պիտի ունենար մարդուն փրկագործութեան եւ մանաւանդ սրբագործումին մէջ: Ի՞նչ առումով: Քրիստոս իր արիւնով մեզ սրբեց ու փրկեց, բայց մարդուս համար սրբուիլ ու փրկուիլը բաւարար չէ, այլ նաեւ մարդս պէտք է փրկագործուի ու սրբագործուի: Իսկ մարդուս փրկագործումն ու սրբագործումը կեանքի փորձութեանց ընդմէջէն է որ տեղի կ'ունենայ, անշուշտ եթէ համբերութեամբ, աղօթքով ու Սուրբ Հոգիով պատերազմինք փորձութիւններուն դէմ ու յաղթենք անոնց: Քրիստոս պատերազմեցաւ ու յաղթեց, եւ յաղթողի օրինակ թողուց մեզի: Օգոստինոս կ'ըսէ. «Մեր առաջնորդը՝ Քրիստոս, թոյլ տուաւ իր անձին որ փորձուի, որպէսզի իր զաւակներուն ստրկեցնէ թէ ինչպէս պէտք է պատերազմին»: Քանի Քրիստոս «չարշարուելով փորձուեցաւ, կրնայ օգնել փորձութեան մէջ եղողներուն» (Եբր 2.18): Հայր Սրապիոն կ'ըսէ. «Քրիստոս իր անձով օրինակ տուաւ մեզի թէ ինչպէս կրնանք յաղթել, ինչպէս ինք յաղթեց երբ փորձուեցաւ»: Մեծն Գրիգորիոս Պապ կ'ըսէ. «Քրիստոս ոչ միայն իր մահուամբ մեր մահուան յաղթեց, այլ նաեւ իր փորձութիւններով մեր փորձութիւններուն յաղթեց»: Այս իմաստով, Քրիստոսի յաղթանակը փորձութիւններուն ու փորձիչին դէմ՝ նոյնինքն մե՛ր յաղթանակն է անոնց դէմ: Եւ ուստի, Քրիստոս առանձին պիտի չթողու մեզ՝ Սատանային դէմ մեր մղած պատերազմին մէջ: Օգոստինոս կ'ըսէ. «Քրիստոս մեր բարեխօսը ըլլալով՝ կ'օգնէ մեզի որ յաղթող ըլլանք փորձութեան ժամանակ»: Քրիստոս գիտէ որ Սատանային կողմէ մեր դէմ մղուած պատերազմը՝ ի՛ր դէմ մղուած պատերազմ է, իր թագաւորութեանն ու փրկութեանն դէմ մղուած պատերազմ է, ուստի ան մեզ առանձին պիտի չթողու մեր պատերազմին մէջ:

«Քառասուն օր եւ քառասուն գիշեր ծոմապահութեամբ անցնելէ ետք՝ անօթեցաւ» (Մտ 4.2):

1) Յիսուսի անօթենալը իր կամքէն անկախ չէր, ինչպէս կ'ըլլայ մեր պարագային, այլ՝ երբ ինք կամեցաւ, ինչպէս կը վայելէ Աստուծոյ, որպէսզի մարդկային բնութեան հարկադրանքի տակ մտած չնկատուի: Անօթենալը կը հաստատէ անոր մարդկային բնութիւնը, իսկ իր ազատ կամքով անօթենալը՝ ապացոյց մըն է, թէ մարդկային իր բնութեան միացած էր աստուածային իր բնութիւնը (Ներսէս Շնորհալի Հայրապետ):

2) Յիսուս ծոմ պահեց Աստուծոյ խօսքի քարոզութեան սկսելէ առաջ, որպէսզի սորվեցնէր բոլոր քարոզիչներուն ծոմապահութիւն կատարել քարոզելէ առաջ: Ծոմ պահեց, որպէսզի քաւէր մեղքը մեր նախածնողներուն, որոնք չկրցան ծոմ պահել: Ծոմ պահեց, որպէսզի սորվեցնէր մեզի թէ պէտք է ծոմապահութեամբ անցընել քառասնօրեայ պահեցողութեան օրերը (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

3) Յիսուս քառասնօրեայ պահեցողութիւն կատարեց իր առաքելութեան սկսելէ առաջ, սորվեցնելու համար մեզի, թէ աստուածատուր ոեւէ առաքելութեան ձեռնարկելէ առաջ՝ պէտք է պահեցողութեամբ ու աղօթքով պատրաստուիլ: Արդարեւ, Աստուծոյ այգիին մէջ աշխատողը՝ Աստուծոմով նախ ինքզինք պէտք է պատրաստէ: Աստուծոյ կողմէ գործի կանչուած ոեւէ անձ, ծոմապահութեամբ պէտք է սպաննէ իր մէջ մարդկային տկար բնութեան շար պահանջները, որպէսզի կարենայ անթերի կերպով կատարել Աստուծոյ կողմէ իրմէ պահանջուածը:

4) Ինչո՞ւ համար Քրիստոսի ծոմապահութեան օրերը քառասուն էին եւ ոչ թէ աւելի կամ պակաս: Որովհետեւ ինքն էր այն մարգարէն որ Մովսէս մարգարէին նմանութեամբ պիտի գար (Բ.Օր 18.15,18): Արդարեւ, Մովսէս մարգարէն քառասուն օրեր ծոմ պահելէ ետք էր որ տասնաբանեայ պատուիրանները, այլ խօսքով՝ Օրէնքը ստացաւ. իսկ Քրիստոս, քառասուն օրեր ծոմ պահելէ ետք էր որ Շնորհքի դուռը բացուած յայտարարեց (Ղկ 4.18-19):

5) «Անօթեցաւ»: Քրիստոս քառասուն օրերու աւարտին էր որ անօթեցաւ: Եթէ քառասուն օրերու աւարտէն առաջ անօթենար, Քրիստոսամերժները պիտի խորհէին ու ըսէին թէ ան Մովսէսէն ու Եղիայէն աւելի տկար էր, որոնք կրցած էին քառասուն օր ծոմ պահել, իսկ եթէ քառասուն օրէ շատ աւելի ծոմ պահէր՝ պիտի խորհէին որ ան մարդկային բնութիւն չունի, կամ ուրուական է:

«Այն ատեն փորձիչը՝ Սատանան, մօտեցաւ իրեն եւ ըսաւ. "Եթէ Աստուծոյ Որդի ես, ըսէ՛ որ այս քարերը հաց դառնան"» (Մտ 4.3):

1) Սատանան քառասուն օր առաջ լսեց Աստուծոյ վկայութիւնը Յիսուսի մասին. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հանեցայ», ինչպէս նաեւ Յովհաննէս Մկրտիչի վկայութիւնները, իսկ հիմա կը տեսնէր Յիսուսը անօթե-

ցած, ուստի վարանման մէջ ինկաւ, եւ ալ չէր գիտեր թէ ո՛վ էր Յիսուս: Ան իր լսած վկայութիւններուն պատճառով՝ Յիսուսը սովորական մարդ չէր համարեր, բայց միւս կողմէ, չէր համարձակեր զայն Աստուծոյ Որդի ճանչնալ՝ քանի կը տեսնէր զինք անօթեցած: Ուստի փորձեց երկխօսութեան միջոցաւ անոր ինքնութիւնը ճանչնալ: Անոր չըսաւ՝ «Եթէ անօթի ես», որ Յիսուսը նախատելու կերպ մը պիտի ըլլար, այլ ըսաւ՝ «Եթէ Աստուծոյ Որդի ես», որ Յիսուսին կեղծ պատիւ ընծայելու կերպ մըն էր, որպէսզի, կա՛մ Յիսուս իր խնդրանքը կատարէր եւ ինք գիտնար որ ան իսկապէս Աստուած է, եւ կամ, չկարենար իր խնդրանքը կատարել, եւ ինք գիտնար թէ Յիսուս սովորական մարդ էր, եւ թէ իր մասին տրուած վկայութիւնները՝ սուտ էին (Ներսէս Շնորհալի):

2) Քառասուն օր առաջ երբ Յիսուս մկրտուեցաւ, Հայրը իրեն համար վկայեց. «Ատիկա է իմ սիրելի Որդիս, որուն ես հաճեցայ» (Մտ 3,17): Սատանան ինքն ալ լսեց այս վկայութիւնը, կասկածեցաւ եւ կամ հարցումով մը ուզեց կասկած արթնցնել Յիսուսի մէջ իր ինքնութեան վերաբերեալ. «Եթէ Աստուծոյ Որդի ես»: Ան այսօր ալ նոյն ձեւով կը վարուի մեր հետ: Հարցումով մը կամ մեր մտքին մէջ իր սերմանած մէկ մտածումով կը փորձէ կասկած արթնցնել մեր մէջ՝ թէ մենք Աստուծոյ զաւակ ենք, եւ Աստուած՝ մեր հայրը, եւ թէ ան հօր մը նման կը սիրէ մեզ եւ կը գուրգուրայ մեզի:

3) Եթէ Քրիստոս հացի կարիքը ունենար՝ պէտք պիտի չունենար քարերու, որովհետեւ ան ոչինչէ կրնար ստեղծել հացը, ինչպէս ոչինչէ ստեղծեց աշխարհը, բայց ան չեկաւ քարը հացի վերածելու, այլ՝ բարիի հանդէպ քարացած մարդկային հոգիները առաքինութեամբ մաքուր հաց դարձնելու՝ իր աստուածութեան կամքին իբրեւ կերակուր (Ներսէս Շնորհալի):

4) Սատանան գիտէր որ միայն Աստուած կրնար քարը հաց դարձնել: Յիսուս եթէ փորձէր քարը հաց դարձնել, պիտի նշանակէր թէ ան փորձեց աստուածանալ, եւ այդ ձեւով մեղքի մէջ ինկած կ'ըլլար: Սատանան խորհեցաւ, որ եթէ Յիսուս լսէր իր խօսքը եւ քարը հաց դարձնէր՝ մեղքի մէջ ինկած պիտի ըլլար, թէկուզ եթէ բարի խրատ մըն էր որ կու տար իրեն (Մխիթար Վրդ. Սեբաստացի):

5) Չարը խորհեցաւ, որ եթէ Յիսուս Աստուծոյ Որդին էր, պէտք էր զինք առաջնորդէր իր անձին կարիքները՝ իր աստուածային կարողութիւնը օգտագործելով գոհացնել «սխալը», բայց չաջողեցաւ: Սորվինք Յիսուսէն մեր դիրքը շօտագործել մեր անձերուն փառքին համար:

6) Չարը ուզեց որ Տէրը իր առաքելութիւնը սխալ ձեւով սկսէր: Ուզեց Յիսուսի ուշադրութիւնը հրաւիրել նիւթեղէն հացին վրայ, որպէսզի մոռնար Աննիւթեղէն Հացը (իր անձը), որուն բաշխման համար եկած էր աշխարհ, որպէսզի իր անձով ու իր սիրով կշտացնէր մարդիկը: Սատանան ուզեց որ Յիսուս նիւթեղէն քարերը հացի վերածէր, որպէսզի մոռնար մարդոց քարացած սիրտերը՝ կեանքի հացի փոխակերպելու իր առաքելութիւնը: Բոլոր ժամա-

նակներու հովիւներուն հետ նաեւ Սատանան նոյն ձեւով վարուած է: Փորձած է անոնց մէջ սէր ու կապուածութիւն արթնցնել նիւթին ու նիւթականին հանդէպ, որպէսզի մոռցնել տան իրենց՝ իրենց առաքելութիւնը, որ ուրիշ բան չէ եթէ ոչ՝ աւետել ու հռչակել Աննիւթական հացը՝ Քրիստոսը: Ի՛նչ դժբախտութիւն է որ երկնաւոր Հացին մատակարարման կոչումը ունեցող հովիւր, դառնայ ստրուկ հետապնդիչը նիւթական հացին: Ի՛նչ ողբալի բան է Քրիստոսի փրկութիւնը աւետարանելու կոչուած քահանան, իր կեանքով ու խօսքով դառնայ այլոց կորստեան պատճառ:

7) Սատանան մօտեցաւ Յիսուսին ոչ թէ երբ անիկա պահքի մէջ էր, այլ՝ երբ անօթեցաւ (Ներսէս Շնորհալի Հայրապետ): Հոսկէ կը սորվինք, թէ երբ մարդը տկարանայ՝ այն ատեն է որ Սատանան կը մօտենայ իրեն: Միշտ աղօթքի մէջ ըլլանք, որպէսզի մի՛շտ զօրաւոր ըլլանք, եւ որպէսզի երբ Սատանան մեր վրայ յարձակի՝ պարտուած փախչի:

8) «Յուսահատեցաւ Սատանան երբ տեսաւ որ Քրիստոս քառասուն օր ծով պահեց, բայց երբ զինք անօթի տեսաւ՝ վերստին յոյսով լեցուեցաւ, եւ մօտեցաւ իրեն» (Յովհան Ոսկեբերան): Սատանան կրնայ յուսահատիլ երբ տեսնէ թէ անդրդուելի ենք մեր հաւատքի ու աղօթական կեանքին մէջ, բայց կ'ուրախանայ եւ առիթը կ'օգտագործէ երբ տեսնէ կասկածանքի փուշը սողոսկելով մուտք կը գործէ մեր հաւատքի ու աղօթքի դաշտը:

9) Քրիստոս միայն իր քառասնօրեայ պահեցողութեան աւարտին չէր որ փորձուեցաւ, այլ՝ քառասուն օրեր շարունակ, ինչպէս Մարկոս ցոյց կու տայ. «Մկրտութենէն անմիջապէս ետք Հոգին տաքաւ զինք անապատ, ուր անիկա քառասուն օրեր մնաց՝ Սատանայէն փորձուելով: Հոն զազաններուն հետ էր, եւ հրեշտակները իրեն կը սպասատրէին» (Մր 1.12-13): Տիրոջ կրած փորձութիւնները շատ էին, բայց Մատթէոս անոնցմէ միայն երեքը կը յիշէ:

10) Քրիստոս քառասնօրեայ պահեցողութեան ժամանակ մնայուն կերպով փորձուեցաւ Սատանային եւ անոր գազաններուն կողմէ, բայց միւս կողմէ ան նաեւ մնայուն կերպով վայելեց Աստուծոյ հրեշտակներուն սպասարարութիւնը (Մր 1.13): Մենք եւս պահքի ժամանակ կրնանք փորձուիլ Չարին կողմէ, բայց քաջ գիտնանք, որ առանձին չենք, այլ մեզի հետ են Տէրն ու անոր սուրբ հրեշտակները, որոնք պատրաստ են օգնելու եւ զօրակցելու մեզի:

ՎԱՂԻՆԱԿ Ծ. ՎՐԴ. ՄԵԼՈՅԵԱՆ

(Շար. 9)

ՍՈՒՐԲ ԳՐԱՅԻՆ

ՍՈՒՐԲ ՀՈԳԻՒՆ ՊՏՈՒՂԸ ԿԱՄ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ

Գ) *ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ*: Աստուծոյ կողմէ մարդուն տրուած խաղաղութիւնը վեր է մարդկային միտքին հասկացողութենէն (Փլպ 4.7): Աստուածաշունչ Մատեանին մէջ յիշուած խաղաղութիւնը կապուած է ուրախութեան հետ, որովհետեւ անիկա կախեալ չէ արտաքին պայմաններէն եւ կացութիւններէն: «Խաղաղութիւն» բառը յառաջացած է եբրայերէն «շալոմ» բառէն: «Շալոմ»-ը շատ աւելին է քան մարդկային մակարդակով գոյացող խաղաղութիւնը, որ միշտ վտանգուած է: Արդի աստուածաբաններէն Կոռնելիոս Պլանտինգան (Cornelius Plantinga) կը գրէ. «Աստուածաշունչ Մատեանին մէջ շալոմը կը նշանակէ համընդհանուր ծաղկում եւ բերկրանք՝ գործերու հարուստ վիճակ, ուր բնական կարիքները կը բաւարարուին եւ բնատուր պարգեւները արդիւնաւետօրէն կ'օգտագործուին. գործերու վիճակ մը, որ հրեւում կը ներշնչէ, երբ անոր Արարիչը եւ Փրկիչը կը բանայ իր դռները եւ արարածները կ'ողջունէ» (*Իմաստային թարգմանութիւն*, Plantinga Cornelius Jr. *Not The Way It's Supposed to Be*. Eerdmans, Grand Rapids, 1995, page 10)

Մեր մարդկային կեանքը լի է պայքարներով եւ բաժանումներով, որոնք հիմնականին մէջ կը յառաջանան մեղքէն եւ չարէն: Քրիստոնեան զերծ չէ մեղքի ազդեցութենէն աշխարհին մէջ, բայց եւ այնպէս ան կրնայ իր մտահոգութիւնները եւ անհանգստութիւնները Տիրոջ յանձնել՝ աղօթքի ճամբով: Պողոս առաքեալ կ'ըսէ. «Ուե՛լ բան թող չմտահոգէ՛ ձեզ. այլ միշտ ձեր աղօթքներուն եւ աղաչանքներուն մէջ գոհութեամբ Աստուծմէ խնդրեցէ՛ք ինչ բանի որ կարիք կը զգաք, եւ այն ատեն Աստուծոյ խաղաղութիւնը, որ միտքով կարելի չէ հասկնալ, խաղաղ պիտի պահէ ձեր սիրտերն ու միտքերը, որոնք Քրիստոս Յիսուսի միացած են» (Փլպ 4.6-7): *Իսկ Յիսուս կ'ըսէ. «Ինձմով խաղաղութիւն պիտի ունենաք» (Յճ 16.33):*

Մարդ արարածը ճշմարիտ խաղաղութեան կը տիրանայ, երբ թոյլ տայ, որ Ս. Հոգին գործէ իր հոգիին եւ միտքին մէջ: Աշխարհի խաղաղութիւնը ակնթարթի մը մէջ կը բեկանուի, երբ մարդ դժուարութեան հանդիպի: Սակայն Ս. Հոգիին պտուղը նկատուող խաղաղութիւնը աշխարհի տուած խաբու-

սիկ խաղաղութենէն կը տարբերի անով, որ կը մնայ նոյնիսկ այն ժամանակ, երբ մարդը անհանգստութիւններու կը հանդիպի:

Դ) ՀԱՄԲԵՐՈՒԹԻՒՆ: Համբերատարութեան համար օգտագործուած յունարէն բառը՝ *Hupomone* ունի երկու նշանակութիւն. ա) բանի մը արդիւնքին սպասելու հոգեկան հանդարտ վիճակ եւ բ) նեղութիւններու եւ ուրիշներուն նկատմամբ համբերութեան ունակութիւն¹:

Համբերութիւնը Ս. Հոգիին կողմէ մարդուն տրուած առաքինութիւն եւ աստուածային նուէր մըն է: Քրիստոնեան կոչուած է համբերատար ըլլալ, յատկապէս՝ իր շրջապատին նկատմամբ: Վստահաբար շրջապատին մէջ խաղաղութեամբ ապրիլը մարտահրաւէրներ կ'ենթադրէ, սակայն քրիստոնեան այդ բոլորը պէտք է դիմագրաւէ համբերութեամբ եւ ոչ թէ զայրոյթով: Պօղոս առաքեալ իր Կողոսացիներուն ուղղած նամակին մէջ կ'ըսէ. «Իբրեւ Աստուծոյ կողմէ ընտրուած ու սրբուած եւ իր սէրը վայելող մարդիկ՝ զթասիրտ եղիք. եղիք ողորմած, քաղցր, խոնարհ, հեզ եւ համբերատար: Իրարու հանդէպ հանդուրժող եղիք, եւ ներեցիք իրարու՝ երբ մէկը միւսին դէմ տրտունջ մը ունենալ» (Կղ 3.12-13): Հոս դարձեալ նկատելի կը դառնայ, որ սէրն է կեդրոնը համբերութեան, որովհետեւ սէր ունեցողն է որ կրնայ համբերել՝ ինչ կացութեան մէջ ալ ըլլայ:

Համբերութեան առաքինութիւնը եւ ներողամտութեան ոգին ունենալու համար, քրիստոնեան պէտք է նայի Աստուծոյ, որովհետեւ ան համբերատար է իր եւ մարդկութեան նկատմամբ: Մարդիկ կը շարունակեն ամէն օր մեղք գործել, սակայն հակառակ այդ բոլորին, Աստուած կը մօտենայ համբերութեամբ եւ ներողամտութեամբ եւ Աստուած կը սպասէ, որ մարդը նոյն մօտեցումը ունենայ իր նմանին նկատմամբ:

Համբերատարութիւնը կարելոր է նաեւ զանազան փորձութիւններուն եւ գայթակղութիւններուն ընթացքին: Թէեւ անոնք կը ցաւցնեն քրիստոնեային, սակայն ան պէտք է համբերութիւն ցուցաբերէ, հաւատալով, որ այս ցաւերը ժամանակաւոր են եւ իրեն համար պատրաստուած յաւիտենական փառք մը երկինքի մէջ, ուր ո՛չ տառապանք եւ ո՛չ ալ ցաւ գոյութիւն ունին: Այս մասին Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Համբերող եղիք, եղբայրներ, մինչեւ Տիրոջ գալուստը: Տեսիք թէ ինչպէս մշակը համբերութեամբ կը սպասէ, մինչեւ որ աշնան ու զարնան անձրեւները իջնեն եւ հողը իր թանկագին բերքը տայ: Դուք ալ համբերեցիք եւ ամուր պահեցիք ձեր սիրտերը, որովհետեւ Տիրոջ գալուստը մօտ է» (Յկ 5.7-8):

¹ W. E. Vine, *An Expository Dictionary of New Testament Words*, seventeenth impression, Fleming H. Revell company, New Jersey, 1966, page 167-168.

ե) ԱԶՆՈՒՄՆԵՐԻՆ: Ո՞վ է ազնիւ մարդը: Ազնիւ մարդը չտխորտացող մարդըն է: Ազնիւ մարդը իր մտածումներուն եւ վարուելակերպին մէջ համեստ եղող անձն է. այսինքն՝ ուրիշներէն ինքզինք գերիվեր չնկատող եւ մարդիկը իրեն հաւասար նկատող անձն է: Ազնիւ մարդը ծառայասէր մարդն է: Ազնիւ մարդը իր շրջապատին կողմէ սիրուած մարդն է: Եւ որովհետեւ իր շրջապատին մէջ սիրուած անձ է, ան ընդունուած կ'ըլլայ իր անմիջական ընկերութեան կողմէ: Ազնիւ անձը սիրուած եւ ընդունուած ըլլալու կողքին, իր շրջապատին կողմէ պատուուած եւ յարգելի մարդն է:

Ինչո՞ւ քրիստոնեան պէտք է ազնիւ ըլլայ: Քրիստոսի հետեւող յետեւ անձ կոչուած է Քրիստոսի առաքեալը ըլլալու, այսինքն՝ Քրիստոսի բարի լուրը տարածող ըլլալու: Եւ երբ քրիստոնեան ազնիւ կ'ըլլայ, մարդիկ աւելի դիւրութեամբ կը մօտենան իրեն, որպէսզի աստուածային ճշմարտութիւններուն մասին իրենց ունեցած զանազան հարցումներուն մասին լուսաբանութիւններ ստանան: Այլապէս, եթէ քրիստոնեան ազնիւ եւ դիւրահաղորդ չըլլայ, մարդիկ կը խուսափին իրմէ եւ այդպիսով ինք իր կոչումին վնասած կ'ըլլայ:

Աստուածորդին ալ Աստուած ըլլալով, այսինքն՝ ամէնագէտ ըլլալով, ազնուութեամբ մօտեցաւ մարդոց: Ան նստեցաւ, խօսեցաւ եւ արժէք տուաւ հանրութեան կողմէ արժեզրկուած, ատելի եւ ծանր մեղաւոր նկատուող անձերուն հետ՝ ազնուութեան լաւագոյն եւ գերագոյն օրինակը դառնալով: Երբ կարդանք Աւետարանները, անոնց մէջ նոյնիսկ տողի մը չենք հանդիպիր, ուր կը յիշուի, թէ Յիսուս կ'արհամարհէ մարդը եւ կամ յոխորտանքով կը խօսի անոր հետ: Հետեւապէս, Քրիստոնեան, իբրեւ Քրիստոսի մշտական հետեւորդը, պէտք է ընդօրինակէ ու հագուի Քրիստոսի նկարագիրը եւ անոր նման ազնիւ ըլլայ:

Զ) ԲԱՐՈՒԹԻՒՆ: Բարութեան համար յունարէն բնագիրը կը գործածէ chrestotes բառը, որ ունի բարութիւն, ամբողջականութիւն, օգտակարութիւն եւ բարեհաճութիւն իմաստները²:

Բարութիւնը մեր շահերէն դուրս գալով՝ ուրիշին շահերուն բացուիլն է: Բարութիւնը կ'ենթադրէ վրէժխնդիր չըլլալ եւ շարին փոխարէն շարիք չփոխադարձել: Մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս կ'ըսէ. «Սիրեցէ՛ք ձեր թշնամիները եւ բարիք ըրէ՛ք անոնց. փոխ տուէ՛ք անոնց՝ որոնցմէ յոյս չունի՛ք ձեր տուածը ետ առնելու: Եւ այն ատեն անոստ վարձատրութիւն պիտի ունենա՛ք. այն ատեն Բարձրեալ Աստուծոյ որդիները պիտի ըլլա՛ք» (Ղկ 6.35-36): Ուրեմն, բարութիւնը եսասիրութեան հականիշն է: Եսասիրութիւնը կը փնտռէ իրեն համար բարին, մինչ Ս. Հոգիին պարգեւած բարութիւնը կը փնտռէ ուրիշին լաւը, նոյնիսկ

² W. E. Vine, An Expository Dictionary of New Testament Words, seventeenth impression, Fleming H. Revell company, New Jersey, 1966, page 292.

անձնական «վնաս» կրելով (Հմմտ Բ.Կր 6.6-7): Քանի որ Աստուած բարի է մեզի հանդէպ, մենք ալ պէտք է բարի ըլլանք ուրիշներուն հանդէպ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Խրարու հանդէպ քաղցր ու գթած եղէ՛ք (այսինքն բարի եղէ՛ք) եւ ներեցէ՛ք իրարու, ինչպէս Աստուած Քրիստոսի միջոցաւ ներեց մեզի» (Եփ 4.32):

Բարութիւնը նաեւ կը հասկցուի իբրեւ առատաձեռնութիւն. եթէ Աստուած ինծի շատ բան տուած է, ես կրնամ զայն ծառայութեան աղբիւր դարձընել՝ բաժնեկցելով ուրիշին հետ: Եթէ ես հոգամ ուրիշին պէտքերը, Աստուած ալ կը հոգայ իմ պէտքերս (Փլպ 4.19): Բայց այս տալու գործընթացը պէտք է կատարուի բաց սիրտով եւ սիրայօժար կերպով: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Խրաւանջիւրը թող տայ՝ նայած իր ստի յօժարութեան եւ ո՛չ թէ չկամութեամբ կամ պարտաւորուած զգալով. որովհետեւ Աստուած զուարթաւ կերպով նուիրողը կը սիրէ: Եւ Աստուած կրնայ ամէն պարգեւ տալ ձեզի առատօրէն, որպէսզի միշտ ալ ունենա՛ք այնքան՝ որքան պիտի բաւէ՛ր ձեր բոլոր կարիքներուն եւ աւելնա՛ր ամէն տեսակի բարի գործերու յատկացուելու» (Բ.Կր 9.7-8):

է) ՀԱԻԱՏԱՐՄՈՒԹԻՒՆ: Հաւատարմութիւն բառը իր ընդհանրութեան մէջ հաստատուն եւ կառչած մնալն է բանի մը կամ անձի մը: Հաւատարմութիւնը բնաւորութեան գիծ մըն է, որուն անբաժանելիօրէն միացած կ'ըլլայ վստահութիւնը: Իսկ Պօղոս առաքեալի Գաղատացիներուն ուղղած նամակին 5-րդ գլուխին մէջ յիշած հաւատարմութեան յունարէն pistos բառը կը նշանակէ հաւատք կամ հաւատարմութիւն³:

Զարմանալի չէ, որ Աստուածաշունչ մատեանին մէջ հաւատարմութեան մասին գոյացած յիշատակումներուն մեծամասնութիւնը կը վերաբերի Աստուծոյ հաւատարմութեան: Քրիստոնեան կոչուած է հաւատարիմ մնալ անոր (այսինքն Աստուծոյ), որ միշտ հաւատարիմ է իրեն հանդէպ: Քրիստոնեան կոչուած է հաւատարիմ մնալ Աստուծոյ ո՛չ միայն մեծ բաներուն մէջ, այլեւ մանաւանդ փոքր բաներուն մէջ, որովհետեւ մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս մեզի սորվեցուց, թէ ով որ փոքր բանի մէջ հաւատարիմ գտնուի, մեծ բաներու մէջ ալ հաւատարիմ պիտի ըլլայ (Մտ 25.23 եւ Ղկ 19.17): Աստուծոյ հանդէպ հաւատարիմ մնալ կը նշանակէ հաւատարիմ մնալ Աստուծոյ խօսքին, անոր պատուիրաններուն եւ հաւատք ընծայել Քրիստոսի կողմէ մեզի տրուած խոստումներուն: Աստուծոյ նկատմամբ հաւատարիմ մնալով, մենք գործնապէս կը փաստենք, թէ Աստուծոյ հետեւորդներն ենք: Հաւատարմութեան առաքինութիւնը դարձեալ կը բխի սիրոյ առաքինութենէն, որովհետեւ սիրող անձն է, որ կրնայ միայն հաւատարիմ մնալ:

Երբեմն հաւատարմութիւնը շարունակական պայքար կ'ենթադրէ: Այդ կացութեան մէջ քրիստոնեան կրնայ մխիթարուիլ անով, որ Տէրը զինք միշտ

³ W. E. Vine, An Expository Dictionary of New Testament Words, seventeenth impression, Fleming H. Revell company, New Jersey, 1966, page 72.

կը պաշտպանէ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Դուք վստահեցէ՛ք Տիրոջ, որովհետեւ անիկա հաւատարիմ է եւ պիտի զօրացնէ ձեզ եւ հեռու պահէ շարէն» (Բ.Թս 3.3):

Քրիստոնեան անկասկած հաւատարմութեան առաքինութիւնը կ'ունենայ, երբ զայն Աստուծոյ բացի, իր շրջապատին նկատմամբ ալ դրսեւորէ: Նկատելի է, որ Ս. Հոգիին պտուղը միշտ կը դրսեւորուի նախ Աստուծոյ եւ ապա նմանին հանդէպ:

Ը) ՀԵՋՈՒԹԻՒՆ: Պօղոս առաքեալ Գաղատացիներուն ուղղած իր նամակին 5-րդ գլուխին մէջ հեզութեան համար օգագործած է յունարէն *prauetes* բառը, որ կը նշանակէ տրամադրութեան մեղմութիւն⁴:

Հեզութիւն բառը իր ընդհանրութեան մէջ կը վերաբերի ուրիշին բարեկեցութեան, անվտանգութեան եւ ապահովութեան: Անիկա հիմնուած է խոնարհութեան վրայ: Հեզ մարդը սիրալիր եւ մեղմ ձեւով կը մօտենայ ուրիշներուն, հեռու մնալով ամէն տեսակի բռնութենէ եւ կոպիտութենէ:

Մարդիկ յաճախ հեզութիւնը կը նկատեն տկարութեան նշան: Սակայն իրականութեան մէջ հեզութիւնը զօրութեան նշան է, որովհետեւ հեզ մարդը գիտէ կառավարել եւ զսպել իր հակազդեցութիւններն ու արարքները: Մեր Տէրն ու Փրկիչը՝ Յիսուս Քրիստոս հեզութեան գերագոյն եւ լաւագոյն օրինակըն է (Փլպ 2.5-8): Ան է, որ մեզի կը սորվեցնէ հեզութիւնը, որովհետեւ ան էր որ ըսաւ. «Զեր վրայ առի՛ք իմ լուծս եւ ինձմէ՛ ստրկեցէ՛ք, որովհետեւ հեզ եմ եւ սքրտով խոնարհ, եւ դուք ձեր հոգեկան հանգստութիւնը պիտի գտնէ՛ք» (Մտ 11.29):

Քրիստոնեան ունի հեզութեան զէնքը, որուն միջոցաւ կրնայ աշխարհի անկարգութիւններուն եւ եսասիրական վարգազիծին հակադրել: Յակոբոս առաքեալ կ'ըսէ. «Ուր որ նախանձ եւ հակառակասիրութիւն կայ, հոն նաեւ անկարգութիւն եւ ամէն տեսակի շարիփ կայ: Մինչդեռ երկնային իմաստութիւնը ունեցող մարդը նախ մաքուր կ'ըլլայ, ապա նաեւ՝ խաղաղարար, հեզ, բարեացակամ, ողորմած եւ բարի գործերով արդիւնատու, անկողմնակալ եւ անկեղծ» (Յկ 3.16-17):

Քրիստոնեան պարտի հեզ ըլլալ յատկապէս երբ կը պաշտպանէ իր հաւատքը, ինչպէս Պետրոս առաքեալ կ'ըսէ. «Միշտ պատրաստ եղի՛ք հեզութեամբ եւ երկիւղածութեամբ պատասխան տալու բոլոր անոնց՝ որոնք բացատրութիւն կ'ուզեն ձեր ունեցած յոյսին մասին» (Ա.Պտ 3.5-16):

Թ) ԺՈՒԺԿԱԼՈՒԹԻՒՆ: Ժուժկալութեան համար յունարէն բնագիրը օգտագործած է *egkrateia* բառը, որ սեփական մարմինին զգայական ախորժակները եւ ցանկութիւնները Ս. Հոգիին զօրութեամբ կառավարելու ունակութիւնն է:

⁴ W. E. Vine, An Expository Dictionary of New Testament Words, seventeenth impression, Fleming H. Revell company, New Jersey, 1966, page 55.

Ժուժկալուծիւնը դժուար մշակուող պտուղ մըն է: Անիկա կ'ենթադրէ պայքար՝ զսպելու զայրոյթը եւ վերահսկելու ախորժակներուն: Սակայն իրականութեան մէջ անիկա վերահսկողութիւն ունենալն է եսին, յատկապէս ճգնաժամի եւ ճնշման ժամանակ: Անիկա ողջմիտ եւ հաւասարակշռուած մնալն է շրջապատող իրադարձութիւններուն ընթացքին, ինչպէս նաեւ զգօն ու գիտակից, զգուշութեամբ ու շրջահայեացութեամբ գործելն է եւ քաջութիւն ունենալն է՝ մերժելու չարը եւ ընտրելու բարին: Այս բոլորը իրականութիւն կը դառնան, երբ մարդը գործէ ու ապրի Աստուծոյ կամքին համաձայն (Ա.Կր 6.12 եւ Ա.Թս 5.22):

Քրիստոնեան պէտք է ժուժկալ ըլլայ, երբ անարգուի ուրիշին կողմէ կամ բարկանալու պատճառ ունենայ, որովհետեւ Առակաց գիրքը կը սորվեցնէ. «Մեղմ պատասխանը սրամտութիւնը կ'իջեցնէ, բայց խիստ խօսքը բարկութիւնը կը գրգռէ» (Առ 15.1):

Ժուժկալ ըլլալ չափազանց դժուար է, բայց Ս. Հոգին քրիստոնեային գօրութիւն կու տայ, որպէսզի կարենայ իր ցանկութիւններուն դէմ դնել: Ս. Հոգին օգնութեամբ, քրիստոնեան կրնայ սիրով գործել եւ վերահսկողութիւն ունենալ զինք զայթակղեցնող մեղքերուն վրայ: Պօղոս առաքեալ կ'ըսէ. «Աստուած իր Հոգին մեզի տուաւ, որպէսզի մեր վախկոտութիւնը յաղթահարենք եւ զօրանանք, սիրով լեցուինք եւ զգաստ կեանք մը վարենք» (Բ.Տմ 1.7):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ս. Հոգին պտուղը մարդը միայն իր Քրիստոնէութեան լերան գագաթը չի՛ հաներ, այլ իր ընկերային (social) կեանքին մէջ ալ բարձրունքներ կը հանէ: Այն քրիստոնեան, որ կ'ապրի Ս. Հոգին պտուղով, անկասկած սիրով կ'ընդունուի զինք շրջապատող անմիջական ընկերութեան մէջ եւ իր վարքով կըրնայ ուրիշներուն վրայ դրական ազդեցութիւն ունենալ, եւ այդպիսով զինք շրջապատող ընկերութիւնը վերածել առողջ ընկերութեան: Այլ խօսքով՝ կըրնայ ստեղծել ընկերութիւն մը, որ կը գործէ ու կ'ապրի Ս. Հոգին պտուղով, նոյնիսկ առանց գիտակցելու:

Յաճախ կայ հետեւեալ մտածելակերպը. «Եթէ զիս շրջապատող ընկերութիւնը չ'ապրի Ս. Հոգին պտուղով, ինչո՞ւ ես պիտի ապրիմ անով»: Քրիստոնեայ մարդը պէտք է գիտակցի, որ եթէ իր շրջապատին մէջ չկայ սէր, ուրախութիւն, խաղաղութիւն, համբերատարութիւն, ազնուութիւն, բարութիւն, հաւատարմութիւն, հեզութիւն եւ ժուժկալութիւն, ի՛նք պիտի ըլլայ այդ շրջապատին սէրը, ուրախութիւնը, խաղաղութիւնը, համբերատարութիւնը, ազնուութիւնը, բարութիւնը, հաւատարմութիւնը, հեզութիւնը եւ ժուժկալութիւնը, դառնալով Ս. Հոգին պտուղին հայելին աշխարհին մէջ:

Պօղոս առաքեալին ներկայացուցած Ս. Հոգիին պտուղը կարելի է ամփոփել հետեւեալ կերպով. աշխոյժ սէր Աստուծոյ եւ նմանին հանդէպ, ուրախութիւն բոլոր տեսակի մակարդակներուն վրայ եւ կացութիւններու մէջ, շրջապատին մէջ խաղաղութիւն ստեղծելու հզօր նկարագիր, համբերութեան դըրսետորում մարդոց նկատմամբ, հաւատարմութիւն Աստուծոյ եւ մարդոց հանդէպ, հեզութիւն Աստուծոյ բարի կամքը ընդունելու եւ բոլոր մակարդակներու վրայ, ազնուութիւն մարդկային եւ հոգեւոր կեանքի բոլոր հանգրուաններուն ընթացքին եւ ինքզինք հսկողութեան տակ պահելու կարողութիւն՝ ժուժկալութեան ճամբով: Այս բոլորը կը կազմեն քրիստոնեայ մարդուն նկարագիրը, որ կ'իրականանայ Ս. Հոգիին հետ սերտ համագործակցութեամբ եւ անոր անմիջական ներգործութեամբ:

ԱՌԱՔԵԼ ԱԲՂ. ԳԱՏԷՀՃԵԱՆ

(Շար. 2 եւ վերջ)



ՊԱՏՄԱ-ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐԱԿԱՆ

**90-ԱՄԵԱՅ ՀՈՒՆՁՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ
ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԴՊՐԵՎԱՆՔԻՆ**

Տ. ԱՐՏԱԿ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծնած է 22 Յունուար 1931-ին, Պէյրուսի Նոր Ամանոս (Քարանթինա) թաղին մէջ: Աւագանի անունն է Մկրտիչ: Նախնական կրթութիւնը ստացած է թաղին Մեսրոպեան Ազգ. Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1944-ին:

Աւարտելով դպրեվանքի ժառանգաւորացի քառամեայ շրջանը, Սարկաւագ ձեռնադրուած է 20 Յունիս 1948-ին, ձեռամբ դպրեվանքի վերատեսուչ Դերենիկ Եպս. Փօլատեանի:

Ընծայարանի բաժնի աւարտին, Կուսակրօն Եկեղեցական ձեռնադրուած է 24 Յունիս 1951-ին, ձեռամբ Դերենիկ Սրբազանի, եւ վերակոչուած՝ Տ. ԱՐՏԱԿ ԱԲԵՂԱՅ:

Գարեգին Ա. Յովսէփեանց Կաթողիկոսի արտօնութեամբ յաճախած է Պէյրուսի Յիսուսեան Միաբանութեան Համալսարանը եւ հետեւած՝ Ֆրանսերէնի մասնաւոր դասընթացքի, ինչպէս նաեւ Աստուածաբանական ուսմանց:

1952-53, վարած է ՀԱՍԿ ամսագրի վարչական բաժնի տեսչութիւնը եւ Կաթողիկոսարանի տպարանի փոխ տեսչութիւնը: Միաժամանակ 1951-1953 տարեշրջաններուն դասաւանդած է դպրեվանքին մէջ, քրիստոնէական, հայոց պատմութեան, կրօնից պատմութեան եւ Ս. Գրային նիւթեր:

Կաթողիկոսական Տեղապահ Խաղ Արք. Աջապահեանի արտօնութեամբ, 1953-ին ստանձնած է Պէյրուսի Նոր Մարաշ թաղի Ս. Քառասնից Մանկանց Եկեղեցւոյ Պատուակալ Քարոզիչի պաշտօնը, զոր վարած է մինչեւ իր Ֆրանսա մեկնումը, միաժամանակ դասաւանդելով Նոր Մարաշի Ս. Քառասնից Մանկանց Ազգ. Վարժարանին մէջ:

11 Հոկտեմբեր 1953-ին Վարդապետական Գաւազանի իշխանութիւն ստացած է, ձեռամբ Կաթողիկոսական Տեղապահ Խաղ Արք. Աջապահեանի, աւարտաճառ ներկայացնելով «Հայ Յարանուանութեանց ծագումը»:

Արեւմտեան Եւրոպայի Կաթողիկոսական Պատուիրակ Սերովբէ Ծ. Վրդ.

Մանուկեանի խնդրանքով եւ արտօնութեամբ Կաթողիկոսական Տեղապահ Սրբազանին, Արտակ Վարդապետ 11 Ապրիլ 1954-ին մեկնած է Լէոն, եւ իբրեւ հոգեւոր հովիւ ծառայած Լէոն քաղաքին մօտ գտնուող Փօն տը Շերիէի հայաշատ համայնքին: Այս առիթով Տեղապահ Սրբազանը Վարդապետական Լանջախաչ կրելու իրաւունք շնորհած է Հայր Արտակին:

Հոգեւոր հովուութեան պարտաւորութեանց առընթեր, ան ուսանած է Լէոնի Յիսուսեաններու Համալսարանին մէջ՝ հետեւելով Աստուածաբանութեան եւ Հայրաբանութեան դասընթացքներու:

1956-ին Կաթողիկոսական ընտրութեան նախօրեակին, Ս. Աթոռոյս Կաթողիկոսական Տեղապահ Խորէն Արք. Բարոյեանի թելադրանքով, Արտակ Վարդապետ 12 Փետրուար 1956-ին, Փարիզի ճամբով Անթիլիաս վերադարձած է, Վազգէն Ամենայն Հայոց Կաթողիկոսին եւ իրեն ընկերակցող պատուիրակութեան հետ: Զարեհ Ա. Կաթողիկոսի ընտրութեան շրջանին եւ յաջորդող տարիներուն Հայր Արտակ ոգի ի բռին աշխատած է, բանիւ, գրով ու գործով իր լաւագոյն նպաստը բերելու թէ՛ դպրեւանքի գործունէութեան աշխուժացման, թէ՛ ՀԱՍԿ ամսագրի բովանդակութեան հարստացման եւ թէ՛ Կաթողիկոսարանի առաքելութեան լաւագոյնս կատարման ի խնդիր: 1956-1959 թուականներուն ՀԱՍԿ ամսագրի խմբագրութեան մաս կազմած է, իսկ 1959-1960 տարիներուն՝ ստանձնած ՀԱՍԿ-ի խմբագրի պաշտօնը:

17 Հոկտ. 1956-ին Ծայրագոյն Վարդապետութեան իշխանութիւն ստացած է, ձեռամբ Կիպրոսի Հայոց Թեմի Առաջնորդ Ղեւոնդ Արք. Զէպէեանի: Իսկ Եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում՝ 21 Հոկտեմբեր 1956-ին, ձեռամբ Զարեհ Կաթողիկոսի Մեծի Տանն Կիլիկիոյ: Արտակ Եպիսկոպոս վանական կեանքէն ներս ստանձնած է լուսարարապետի, ելեւմտից տեսչութեան եւ Դրան Եպիսկոպոսի պաշտօնները՝ մինչեւ թեմական պաշտօնով Իրան մեկնիլը:

18 Օգոստոս 1959-ին Թեհրանի Հայոց Թեմի Պատգամաւորական Ժողովը Առաջնորդ ընտրած է Արտակ Եպս. Մանուկեանը: Սրբազանը 1 Յունուար 1960-ին ստանձնած է Թեհրանի հոծ հայութեան առաջնորդութիւնը եւ ամբողջ 39 տարի, մինչեւ իր վախճանումը անվհատ եւ աննկուն ջանասիրութեամբ եւ հետեւողական աշխատանքով կատարած է իրեն վստահուած առաջնորդութեան նուիրական ծառայութիւնը: Ան զարկ տուած է եկեղեցաշինութեան եւ դպրոցներու կառուցման աշխատանքներուն եւ Թեհրանի մէջ հիմը դրած հայերէնագիտութեան դասընթացքներու, հայկական վարժարաններուն մէջ պաշտօնավարող եւ հայագիտական նիւթեր դասաւանդող երկսեռ ուսուցիչներու թիւը համալրելու համար: Միաժամանակ Թեհրանի Համալսարանին մէջ, իր իսկ հովանաւորութեամբ հաստատած է հայագիտական ամպիոն, գերլիսանս աստիճանով:

Արտակ Սրբազանի առաջնորդութեան շրջանին Թեհրանի մէջ կառուցուած են հետեւեալ եկեղեցիները.

1964-ին Ս. Սարգիս Եկեղեցին, ապա աւելի նորը՝ 1970-ին: 1968-ին՝ Ս. Թարգմանչաց Եկեղեցին: 1982-ին՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցին: 1974-ին՝ Ազգ. Գերեզմանատան Ս. Ստեփանոս Եկեղեցին: 1985-ին՝ Արարատ մարզականին Ս. Խաչ Մատուռը:

Շինարարական այլ աշխատանքներ.

Քուշէշ Մանկապարտէզը, Նայիրի Դպրոցի Գ. յարկի նորոգութիւնն ու ընդարձակումը, Սահակեան Վարժարանի սրահներու կառուցումն ու ընդարձակումը, Թունեան Դպրոցի հիմնական փոփոխութիւնն ու կառուցումը, շուրջ 24 դասարաններու ընդարձակումը, Յ. Թումանեան Օրիորդաց Միջնակարգ Դպրոցին կառուցումը, Ա. Սողոմոնեան Միջնակարգ Տղայոց Դպրոցի կառուցումը, ընդարձակում Մարիամեան Դպրոցի, կառուցում Վաչէ Յովսէփեան Տարրական Դպրոցին, կառուցում Արաքս Դպրոցին, կառուցում Սուքերեան Դպրոցին, կառուցում Ալեք Մանուկեան Դպրոցին, ընդարձակում Ռոստոմ Դպրոցի եւ կառուցում Ուղեցոյց Դպրոցի, կառուցում Նայիրի Ազգային սրահի, կառուցում Սասուն Մանկապարտէզի, կառուցում Զէյթուն Մանկապարտէզի, կառուցում Արաքսի կամ Սուլթանապատի Ազգ. Դպրոցին:

Սրբազան Հօր գրական վաստակը նաեւ եղած է բերրի: Ան սարկաւագութեան տարիներուն իսկ աշխատակցած է կաթողիկոսարանի ՀԱՍԿ ամսագրին, քերթուածներ եւ գրական էջեր լոյս ընծայելով: Հրատարակած է աւելի քան 25 հատորներ՝ գրական, կրօնական, պատմական եւ բացատրողական բովանդակութեամբ: Ստորեւ կը ներկայացնենք իր երկերուն ցանկը.

- Խօսք ժողովուրդին, 1961:
- Աւետարանի Շունչով, Թեհրան, 1962:
- Հաւատքի Հարցը Արդի Ընկերութեան Մէջ, Թեհրան, 1963:
- Ապրիլ 24, Թեհրան, 1965:
- Աստուածաշունչ Մատեանը, Թեհրան, 1966:
- Լոյս եւ Ստուեր, Պէյրութ, 1971:
- Զուրը Կրօնական Ծիսակատարութեան Մէջ, Թեհրան:
- Վերականգնումի Հարցը Հանրային եւ Մշակութային Կեանքին Մէջ, Թեհրան, 1976:
- Լուսաւոր Ճամբաներ, Թեհրան, 1976:
- Կենցաղագիտական Խորհուրդներ, Նոր Զուղա, 1977:
- Կրօն եւ Մշակոյթ, Թեհրան, 1982:
- Մի Քարի Յուշագրութիւնը, Թեհրան, 1985:
- Յիսուսի Ս. Ծնունդը եւ Մկրտութիւնը, Թեհրան, 1987:
- Ուղեւորութիւն Դէպի Հայաստան, Լոս Անճըլըս:
- Աղօթք, Թեհրան, 1991:
- Բնութեան Չայնը, Մտորումի Շիթեր, Թեհրան, 1990 եւ 1991:
- Արեւ Գիշերուան Մէջ, Պէյրութ, 1973:

- Ճառագայթը Լեոան Վրայ, Թեհրան, 1981:
- Ժամանակի Աքցանին Մէջ, Թեհրան, 1958:
- Աստղալույսի Ոտնահետքին, Լոս Անճըլըս, 1987:
- Բազկատարած, Թեհրան 1990:
- Հայ Եկեղեցու Առանձնայատկութիւնները, Թեհրան, 1983:
- Հայ Եկեղեցու Տօները, Թեհրան, 1966, 1980, 1994:
- Թեհրանի Հայկական Եկեղեցիները, Թեհրան, 1975:
- Շողարձակ, Թեհրան, 1997:
- Հինգ Տաղաւարներ, Կրօնական Դասագիրք, Թեհրան, 1974-1995:
- Յիսուս Ուսուցանում է, Թեհրան, 1998:

Մտքի, սրտի ու հոգիի հսկայ վաստակ մը իր ետին ձգած Արտակ Արք. Մանուկեան, երբ 1999 թ. Հոկտեմբերին հայրենիք՝ Հայաստան գացած էր՝ մասնակցելու համար Հայաստան-Սփիւռք խորհրդաժողովին, անակնկալ անհանգստութեան պատճառով, զինք փոխադրած են հիւանդանոց: Երբ հիւանդանոցի պայմաններուն մէջ առաւել եւս վատթարացած է անոր առողջական վիճակը, զինք Թեհրան փոխադրած են: Ափսո՛ս որ Թեհրանի մէջ եւս չեն կըրցած առաջքն առնել անոր գահավիժող առողջական վիճակին, եւ 15 Հոկտեմբեր 1999-ին աւանդած է իր հոգին:

Թաղմանական կարգն ու Վերջին Օծումը տեղի ունեցած են Թեհրանի Ս. Սարգիս Մայր Եկեղեցույ մէջ: Յոգնախուռն բազմութիւն մը ներկայ գտնուած է աշահամբոյրով իր վերջին յարգանքը ընծայելու բազմավաստակ եւ երկարամեայ Առաջնորդին, որ շուրջ 40 տարի հովուած էր Թեհրանահայութեան հօտը:

Արամ Ա. Կաթողիկոսի ներկայացուցիչ Եփրեմ Արք. Թապագեանի եւ Նոր Զուղայի Առաջնորդ Կորիւն Արք. Պապեանի համանախագահութեամբ եւ մասնակցութեամբ Ատրպատականի Հայոց Առաջնորդ Նշան Մ. Վրդ. Թօփուգեանի եւ քահանայ հայրերու տեղի ունեցած է Թաղմանական կարգն ու Վերջին Օծումը, որուն աւարտին հանգուցեալ Սրբազան Հօր դագաղը զետեղուած է Ս. Սարգիս Եկեղեցույ կից պատրաստուած գերեզմանին մէջ:

ՍՈՒՐԷՆ ԱՐՔ. ԳԱԹԱՐՈՅԵԱՆ

(Շար. 17)

ՅՕԴՈՒԱԾ

ԱՍՏՈՒԱԾ ՄՈՍ ՄԸՆ ԱԼ ՄԱՐԵՑ...*

Երէկ իրիկուն երկու հեռախօսազանգ,- մին Մոնթրէալէն եւ միւսը Պէյրութէն,- գրեթէ միաժամանակ գուժեց միաբանակից աւագ եղբօրս՝ Սուրէն Արք. Գաթարոյեանի վախճանումը:

Վստահ եմ, որ Սուրէն Սրբազանի բարեմասնութիւններն ու վաստակը բազմաթիւ անձերու կողմէ բանաւոր եւ գրաւոր յիշատակութեան պիտի արժանանան երկարօրէն, որովհետեւ ան լուսավառ մոմ մըն էր Հայ եկեղեցիի ծառայութեան տաճարին մէջ եւ շատերու հայ քրիստոնէական կեանքը լուսաւորած էր իր ստանձնած պատասխանատուութիւններու ճանապարհին վրայ:

Հազիւ Սրբազանին յաւիտենական հանգիստի անմիջական ցնցումը թօթափած, խղճի պարտք համարեցի փոխադրուիլ Անթիլիասի Դպրեվանքի 1973-1974 ուսումնական տարեշրջան եւ ներկայացնել փոխ-տեսուչս՝ Հայր Սուրէնը եւ առնչակից դէմքեր ու դէպքեր, այդ օրերու տպաւորութիւններու վերբերումով եւ 50 տարուան կամարումով:

Երբ Լիբանանի քաղաքացիական պատերազմի մութ ամպերը սկսած էին դիզուիլ մայրիներու գեղեցիկ երկիրին երկնակամարին վրայ, 11 տարեկան պատանի, Դպրեվանք ընդունուեցայ: Տեսչական կազմը ունէր շորս անդամ. Արտաւագդ Արք. Թրթոեան՝ Տեսուչ, Սուրէն Վրդ. Գաթարոյեան՝ Փոխ-տեսուչ, Անուշաւան Աբղ. Դանիէլեան՝ Հսկիչ եւ Զարեհ Սրկ. Էքմէքճեան՝ Հսկիչ: Աստիճանէ իւրաքանչիւրը իր նկարագրային գիծերով իրար կ'ամբողջացնէր եւ դպրեվանքիներս կազմաւորելու առաքելութեան մէջ իր ներդրումը կ'ունենար: Արտաւագդ Սրբազան իր խիստ եւ լուռ հովանին կը տարածէր ամենուր ու բոլորիս վրայ. Հայր Սուրէն ընդհանրապէս ընկերային էր եւ անակնկալօրէն պոռթկուն ու բարեբախտաբար շուտ մարող բնաւորութիւն ունէր. Հայր Անուշաւան, իր անունին նման քաղցր, մեր աւագ եղբայրն էր. Տիրացու Զարեհ, տաղանդաւոր ասմունքող, տիրական դարձած էր հայ գրականութեան ու մանաւանդ հայ բանաստեղծութեան սէրը մեր մէջ ներարկելով:

Հայր Սուրէն նոր վերադարձած էր Մոնթրէալի իր հովուական ծառայութենէն եւ միաժամանակ մի քանի պաշտօններ,- Փոխ-տեսուչ, շարականի ուսուցիչ, Դիւանապետ, Լուսարարապետ,- կը վարէր: Ան հանդիսացաւ Կիլիկեան ուխտի այն սակաւաթիւ միաբաններէն, որ Հիւս. Ամերիկայի ծառայա-

* Սոյն յօդուածը հոգելոյս Տ. Սուրէն Արք. Գաթարոյեանի յիշատակին նուիրուած է:

կան առաւել ձեռնտու պայմանները անմիջապէս թողուց եւ Մայրավանք վերադարձաւ, երբ Խորէն Ա. Կաթողիկոս զինք տուն կանչեց: Անշուշտ 1973-ին այս մէկը տակաւին չէի գիտեր. սակայն այսօր, երբ յետադարձ ակնարկ մը կը նետեմ մեր Դպրեվանքին ու միաբանութեան յումպէտս կորսնցուցած մարդու ժին վրայ, կ'անդրադառնամ որ հաւաքականութիւն մը, մանաւանդ հոգեւորագգային ծառայութեան կոչուած միաբանութիւն մը, որքա՛ն կարիքը ունի կարգապահութեան, որ կոչումը կը գգուէ, որդիական հնազանդութիւնը կը մշակէ, ծառայութիւնը կը խթանէ եւ եղբայրական սէրը կը զեղու:

Լիբանանը քարուքանդ դարձուցած պատերազմը ազդեց նաեւ Դպրեվանքին վրայ եւ 1973-1974 կրթական տարեշրջանի նախապատրաստական դասարանի շուրջ քսան սաներէն միայն ես մնացի: Յատկապէս արտագաղթի պատճառաւ, դասընկերներս հեռացան Լիբանանէն եւ Դպրեվանքէն: Դժբախտաբար անոնք միայն յուշի քաղցրութեամբ յամեցող անուններ են այսօր ինծի համար. չեմ գիտեր ո՞ր երկինքի տակ կը գտնուին եւ ի՞նչ կ'ընեն:

Այդ երանելի օրերուն, Հայր Սուրէն ամենէն շատ զիս տպաւորած է իր գերաշխուժ աշխատասիրութեամբ: Բարեբախտաբար միշտ ալ այդպէ՛ս մնացան: Ան ամէն տեղ էր անխափան. Մայր Տաճար՝ ամենօրեայ աղօթական կեանքին մասնակից, Վեհարան՝ գրասենեկային եւ յարաբերական աշխատանքով ծանրաբեռն (այդ օրերուն Վեհարանը միայն երկու պաշտօնեայ եւ երկու ծառայող ունէր), սեղանատուն՝ դպրեվանեցիներու ճաշերուն սեղանակից, Փոխ-տեսուչի գրասենեակ՝ սաներու առօրեայ հարցերով զբաղ, եւ դեռ կարելի է երկարել շարքը՝ ձեռնարկներու ներկայութիւն, ժողովական կեանքի հեւք, այցելուներու հետ հանդիպում, եւ այլն...: Ի մի բան, կը տեսնէի, թէ ան ֆիզիքապէս կը յոգնէր, սակայն գերմարդկային նուիրումով ու իր կոչումին խոր գիտակցութեամբ կը շարունակէր իրեն վստահուած պաշտօնները պարտաճանաչօրէն կատարել՝ դպրեվանեցիներու եւ լաւ օրինակ ծառայելով:

Այսօր, երբ Սուրէն Սրբազանի երկրաւոր կեանքը կ'աւարտի եւ Տիրոջ կամքով գրեթէ 85-ամեայ կեանքին մոմը կը շիջի, կը մաղթեմ որ Քրիստոսի երանական հրաւէրը իրեն համար եւս հնչէ. «Ապրի՛ս, բարի եւ հաւատարի՛մ ծառայ, ... եկուր եւ մասնակից եղիր տիրոջ ուրախութեան» (Մտ 25.21):

Սուրէն Սրբազան միշտ հաւատաց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի նուիրեալ մարդ պատրաստելու եզակի առաքելութեան: Ինք Դպրեվանքի շրջանաւարտներու լաւագո՛յն տիպարներէն էր եւ կը հաւատամ, որ իր կտակն է. «Հայ ծնո՛ղք, եթէ առողջ Հայ եկեղեցի եւ ծաղկուն Հայ մշակոյթ կ'ուզես՝ զաւակդ վստահէ՛ Դպրեվանքին: Այսօրուան դպրեվանեցի մեր վաղուան հաւաքական կեանքին սպասաւորն է: Աստուած այսպէ՛ս միշտ նոր մոմեր պիտի վառէ...»:

ՆԱՐԵԿ ԱՐՔ. ԱԼԵՄԷՉԵԱՆ

ԱՐԽԻՒԱՅԻՆ**ԼԵՀԱՀԱՅ
«ԳԱԲԱԶԱՆԱԿԻՐ ՄԻԱՆՁՆՈՒՀԻՆԵՐ»**

Լեհաստանի Հայ եկեղեցւոյ միանձնուհիներու պատմութիւնը սկսած է ուշ միջնադարէն, եղած է բազմափուլ եւ յատկանշուած է դաւանական բարդ իրադարձութիւններով: Լեհահայ միանձնուհիները ապրած են պատմական Լեհաստանի գլխաւորաբար երեք մենաստաններու՝ Լվովի, Քամինիէց Բոտոլսկի եւ Եազլովիէցի մէջ: Անոնք ընդհանրապէս կոչուած են «Կուսանք» կամ այդ դարաշրջանի լեհահայերու գերիշխող խօսակցական հայատառ ղփշաղերէնով՝ «Դըզլար» եւ կամ հին լեհերէնով ընդհանրացած՝ տեվոթքի, որ կը նշանակէ «Նուիրեալներ»: Մինչեւ Հոռոմի եկեղեցւոյ հետ միութիւնը, լեհահայ միանձնուհիները օգտագործած են կանացի վանականութեան հայկական անցեալի աւանդութեամբ կրօնաշունչ կարգը եւ ընդունուած օրինագիտութիւնները, որոնք նոյնութեամբ ընդօրինակուած էին շնորհիւ լեհահայերու դէպի Երուսաղէմ կատարած բազմաթիւ ուխտագնացութիւններուն: Լեհահայ յիշատակարաններու եւ լեհական աղբիւրներու մէջ իբրեւ Հայ առաքելական եկեղեցւոյ մէջ ձեռնադրեալ սարկաւազուհի, առանձնայատուկ ձեւով յիշատակուած է Քամինիէցէն լեհահայուհի՝ Մարիանա (Մարիա) Պօղոսովնան (1630-1690), որ Երուսաղէմ իր ուխտագնացութեան ընթացքին Կոստանդնուպոլսոյ մէջ սարկաւազուհի ձեռնադրուած էր ազգաշնորհ Փիլիպոս Աղբակեցի Կաթողիկոսի (1633-1655) ձեռամբ, հաւանաբար 1653 թուին: Նոյնպէս իբրեւ միանձնուհի կը յիշատակուի նաեւ Եազլովիէցէն՝ Ռիփսիմէ Սբենտովսքան, որ յաճախ լեհական պատմական աղբիւրներու մէջ Հոռոմի մէջ, նոյնիսկ մինչեւ այսօր Ռիփսիմէ կը կոչուի: Լեհահայ Միանձնուհիներու ամբողջական անուանացանկը եւ ընդհանրապէս լեհահայ միանձնուհիներու հետ առնչուած նիւթերու պատմական ծալքերը, ուսումնասիրութեան խոստումնալից ասպարէզ մը կրնան յուշել, որ բծախնդիր եւ ամբողջական քննարկումի կարիքը ունի: Նկատելի է նաեւ, որ լեհահայ եկեղեցական կեանքի միանձնուհիներու առկայութիւնը զուտ տեղական բնոյթ չունի:

Իսկ պատմականօրէն լեհահայ միանձնուհիներու յաջորդ փուլը կը սկսի

17-րդ դարու քառասունական թուականներէն եւ իր դաւանական խառնակ կառուցող կը շարունակուի մինչեւ նոյն դարու ութսունականները կամ իննսունականները, երբ Լեհաստանի թագաւորութեան մէջ տեղի ունեցաւ դարաւոր Հայ համայնքի բաժանումը Հայ առաքելական Մայր եկեղեցիէն, որ Լեհաստանի մէջ հաստատուած էր 1367 թուին, հաւանութեամբ Քաթիմէժ Գ. Մեծ լեհ թագաւորին, որ արտօնութիւն շնորհած էր Գրիգոր Եպիսկոպոսին Հայ եկեղեցւոյ եպիսկոպոսութիւն մը հիմնելու Լվովի մէջ:

1630 թուականին էր, երբ Յակոբ Թորոսեանի եւ Կատարինէ Աւետիքեանի որդին՝ Լեհահայ Նիկոլը (Նիկողայոս), որ բազմալեզու պատմական մատենագրութեան մէջ հանրածանօթ իբրեւ՝ Նիկոլ Թորոսովիչ ուխտադրուժ ըլլալով ամբողջապէս ենթարկուեցաւ Հռոմին:

Մելքիսեդեկ Ա. Գառնեցի Աթոռակից Կաթողիկոս 28 Փետրուար 1627 թուին, հիմնօրէն խախտելով Հայ առաքելական եկեղեցւոյ ընդունուած աստիճանները, Լվովի դոնփակ եկեղեցւոյ մէջ հակառակ ժողովուրդի բուն ընդդիմութեան, եպիսկոպոսական ձեռնադրութիւն եւ օծում կը կատարէ Հայ առաքելական եկեղեցւոյ հոգեւորականին՝ Լեհահայ 23-ամեայ Նիկոլին, իբրեւ ինքնընտիր Եպիսկոպոս: 24 Հոկտեմբեր 1630 թուին, Նիկոլը ընդմիջտ կը զիջի Հռոմի քահանայապետի գերագահութեան, ընդունելով կաթոլիկ դաւանանքը, իսկ Արքութեան պատիւն ու տիտղոսը կը ստանայ Հռոմէն 1635 թուին: Նիկոլը եկեղեցական եւ դաւանական միութիւն կը կնքէ Հռոմի եկեղեցւոյ աթոռին հետ, դառնալով Հայոց պատմութեան մէջ առաջին Հայ կաթոլիկ հոգեւոր Առաջնորդը: Իր առաջնորդութեան տարածքը կը պարփակէ ո՛չ միայն Լեհաստանի թագաւորութիւնը, այլեւ Լիթուանիոյ, Մոլտավիոյ, Վալախիոյ (Ռումանիոյ) Հայ կաթոլիկ բոլոր թեմերուն պատկանող համայնքները, կը հանդիսանայ Հայ կաթոլիկ առաջին Թեմակալ Առաջնորդը, որ հոգեւոր գահակալութեան ասան իր ափին մէջ կը պահէ 1630 թուականէն մինչեւ իր մահը 1681 թուական:

Անձի մը անսանձ կամայականութեամբ արդէն կը հաստատուի Լեհահայ առաքելական եկեղեցւոյ՝ 263 տարուայ պատմական հաստատութեան կառուցագերծումը, անոր հետ առնչուող հոգեւոր մշակոյթի կասեցումը եւ Հռոմի եկեղեցւոյ հետ միացումը: Հայ եկեղեցւոյ եւ Հռոմէական կաթոլիկ եկեղեցւոյ միութիւնը Լեհահայ համայնքին եզակի ինքնութեան համար խորապէս անկիւնադարձային պահ մըն էր իր ազդեցիկ դերակատարութեամբ:

Այդ ժամանակ Լեհահայ համայնքը կ'ապրէր դաւանափոխութեան բարդ վէճերու իրադարձութիւնները, ներ-գաղութային դաւանական փոթորկոտ պառակտումը, իր ազգային գիտակցութեան եւ ընկերա-բարոյական ամբողջ կառուցի վերածեւաւորումը: Նոյն հաւատքի յարանուանական իրարամերժ երկու հոսանքներու իսկական այլամերժ գոյամարտ մը տեղի կ'ունենար, դժուարին նոր երկունքի մը իրավիճակը: Հակադրութեան կնճռոտ այս գոյա-

պայքարը կը շարունակուի աւելի քան երկար դար մը:

Լեհահայ միանձնուհիներն ալ որպէս բարեպաշտ կանայք, իրենց կեանքը Աստուծոյ եւ քրիստոնէական հաւատքին ընծայած, եւ իրենց նմաններուն ծառայութեան նպատակին նուիրուածներ, բնականաբար պիտի ստիպուէին դիմակայելու պատմական դաւանախառն եւ անասելի այս կնճռոտ շրջանին: Կապրէին վանքերու կամ մենաստաններու մէջ՝ հետեւելով կրօնական որոշ կարգի մը, որ կը գտնուէր դաւանափոխութեան դարաշրջանի մը շեմին: Հիմնականօրէն իրենց ծառայութեան յանձնառութիւնը ժողովուրդի հոգեւոր եւ ընկերային կարիքներու հոգատարութիւնն էր: Լիազօրուած էին ուսուցանելու մանաւանդ իգական սեռի շրջանակներուն մէջ, հասնելու կանանց հոգեւոր խնամքին, կատարելու Ս. Գիրքի սերտողութիւնն ու բացատրութիւնը, դասաւանդելու նաեւ իգական վանական մենաստաններու եւ վանքերու մէջ: Յատկանշական իրականութիւն էր նաեւ անոնց աջակցութիւնը հասուն կամ չափահաս կանանց մկրտութեան խորհուրդի ընթացքին:

Կարելի է հաստատել, որ Լեհաստանի Հայ միանձնուհիներն ալ հանդիպած են խոշընդոտող կարծրատիպերու. լիովին ենթարկուած են տեղւոյն համայնքի աւագներու գերիշխանութեան, պատգամաւորներու եւ երէցներու տիրութեան: Անոնց նկատմամբ պարտադրեալ այդ վերաբերումը շարունակուեցաւ դաւանափոխութեան շրջանին եւս: Նոր թեկնածուներ միանալու պարագային ալ, համայնքի աւագները պէտք է յօժարէին ու իրենց համաձայնութիւնն ու արտօնութիւնը շնորհէին նոր միանձնուհիներուն:

Լեհաստանի թագաւորութեան մէջ գործող Հայ միանձնուհիներու երեք վանքերէն մեծագոյնը՝ Քամիէնէց Բոտոլսկիի Ս. Աստուածածնի Աւետման եկեղեցին էր, իսկ երկրորդը՝ Լվովի Ս. Խաչ եկեղեցւոյ միանձնուհիներունը, եւ երրորդն ու համեստագոյնը՝ Նազլովիէցի եկեղեցին: Բայց 17-րդ դարու երկրորդ կէսէն ետք, թրքական արշաւանքները Լեհահայերու վանքերը ծանր կորուստներու եւ կործանումներու ենթարկեցին: Կործանումէն ետք անոնց վերականուցման մանրամասնութիւններուն քիչ ծանօթ ենք: 1672 թուին թուրքերու կողմէ Քամիէնիէցի գրաւումէն ետք աւելի քան 14 Լեհահայ միանձնուհիներ տեղափոխուեցան՝ ապաստանելով Օսմանեան կայսրութեան խորքերը: Թրքական սպառնալիքը ստիպած էր նաեւ Նազլովիէցի երեք Լեհահայ միանձնուհիներ լքելու քաղաքը եւ ապաստան փնտռելու Լվովի մէջ, միաժամանակ միանալով Լեհահայ մնացած միանձնուհիներուն:

Ճիշդ է, որ Լեհահայ բոլոր միանձնուհիներն ալ ապաստան գտան Լվովի մէջ, Հայ կաթողիկ եկեղեցւոյ առաջնորդութեան հովանիին տակ, մինչ Լեհահայ համայնքի ներքին բուռն տագնապը, Հայ առաքելական եկեղեցիի կազմաքանդումը կը շարունակուէր, բայց Հայ կաթողիկ եպիսկոպոսի իշխանութեան տակ ալ միանձնուհիներու իրավիճակը անկայուն էր, հեղասահ ընթացք չունէր, ընկերային եւ տեղական աւանդութիւններու դիմադրութիւնը

բազմակողմանի էր: Հայ համայնքը հաշտ չէր կուսականաց խմբաւորումի այս գաղափարին հետ, ընկերային կեանքի մէջ տղամարդոց գերակայութեան սկզբունքը ներգործող եւ զօրեղ էր:

Բնական է, որ 17-րդ դարու վերջին տասնամեակին, լեհահայութեան համար Հայ կաթողիկ նոր համայնք մը կը ձեւաւորուէր, սկզբնական ժամանակաշրջանին թերեւս իր գործունէութիւնը որոշ հայկականութիւն մը կը յուշէր, կը շարունակուէր շափաւոր հայկական ոգիով, բայց անվիճելի զիջում մը կար Հայերէն լեզուի, նոյնպէս ալեկոծում մը գոյութիւն ունէր Հայ մշակոյթի ընկալման, տեղական աւանդութիւնները ըմբռնելու եւ ընդունելու, անոնց հետ համակերպելու համոզումին հետ: Համայնքի հոգեմտաւոր կառուցը փոփոխութեան ենթարկուած էր, լեհահայերը աստիճանաբար համարկուեցան կաթողիկ եկեղեցւոյ ծիսական, լեզուական, կենցաղային բարքերու հարկադրանքներու պարունակին մէջ: Գործնականօրէն լեհահայ համայնքի հոգեմտաւոր կառուցը ձեւափոխուած էր լատինական բնօրինակին համաձայն: Ծիշդ է, որ միանձնուհիները աւելի անկախ էին երէցներու գերիշխանութենէն, բայց համայնքը աւելի համարատու էր նոր եւ ձեւափոխուած իրականութեան հետ, իր ամբողջական կառուցի պատկանելիութեամբ:

Զգալի է, որ Հռոմի աթոռին հետ լեհաստանի Հայ եկեղեցւոյ միութիւնը, 17-րդ դարու վերջին տարիներուն բարեփոխութեան ենթարկեց միանձնուհիներու կարգավիճակը, ձեւով մը խթանեց անոնց միացումը: 1680-ական թուականներէն սկսեալ, միանձնուհիները սկսած էին իրենց համախմբումն ու կազմաւորումը:

Միանձնուհիներու խնդրանքին ընդառաջելով, Հռոմի Ալեքսանտր Ը. Պապը 1690 թուին հաստատած էր լեհաստանի մէջ միանձնուհիներու մենաստան մը հիմնելու ծրագիրը, անոնց թոյլ տալով նաեւ մնալ Հայ կաթողիկ ծէսի հովանիին տակ: Համայնքը գործնապէս ստացած էր Հռոմի աթոռին համաձայնութիւնը, հիմնելու համար լեհահայ միանձնուհիներու մենաստանը Պենետիկթեան վանական ուխտի օրինակարգով, պահպանելով նաեւ սեփական կաթողիկ ծէսը: Ուստի, 1690 թուականը կը համարուի լեհահայ միանձնուհիներու հաստատման պաշտօնական տարեթիւր:

1690 թուականէն ետք, Լվովի Հայոց Մայր Տաճարի մէջ տեղի կ'ունենայ միանձնուհիներու նուիրապետական ուխտի կազմաւորումը եւ հոգեւոր կրթութեան պատրաստութիւնը, ուր 26 նոյեմբեր 1691 թուականին կը կատարուի 15 լեհահայուհիներու Պենետիկթեան վանական ուխտի ուխտադրումը: Այդ միանձնուհիներէն ոմանք ապագային պիտի դառնային աբբայուհիներ, ինչպէս Հելենա Ֆորթունաթա Սբենտովաքան (Աստուատուրովիչ կամ Աստուածատուրովիչ):

Այդ ժամանակ միանձնուհիներու կառուցը կը ղեկավարուէր Պենետիկթեան միաբանութեան լատինական ծիսակարգով, այդ կը նշանակէ, որ մենաստանի վարչական եւ տնօրինական իշխանութիւնը վերապահուած էր

լատինական Պենետիկիթեան արքայութեանը: Միանձնուհիներու մենաստանի պատրաստութեան համար այս շրջանին համայնքը օգտուած է նուիրատուներու օգնութենէն, անոնց մէջ էին Լվովի Հայ կաթողիկ Արքեպիսկոպոսներ, մեծահարուստ լեհահայեր, Հայ համայնքի հեղինակաւոր պատգամաւորներ եւ ազնուականութիւնը ներկայացնող Հայ ունեւոր խաւը: Լեհահայ միանձնուհիները ունեցած են նաեւ իրենց սեփական ագարակը, հոն կը գտնուէր Ս. Աստուածածնի հայկական մատուռը:



Միանձնուհիներու վանական համալիրը

Յատկանշական էր միանձնուհիներու աշխոյժ կրթական գործունէութիւնը իգական սեռի երիտասարդութեան շրջանակներուն մէջ, որոնց շնորհիւ լեհահայ միանձնուհիները կառուցած են աղջկանց դպրոցը, եւ 16 Յունուար 1785 թուականէն սկսեալ կառավարած են այդ կրթական համակարգը, զոր կարելի է Լվովի հռչակաւոր եւ հնագոյն դպրոցներէն մէկը համարել: Շատ յաճախ լեհաստանի կրօնա-պատմական գրականութեան մէջ, գնահատանքով կը յիշուի Լեհահայուհիներու Պենետիկիթեան կուսանոցի կրթարանը կամ Լեհահայ Պենետիկիթեան միանձնուհիներու դպրոցը:

Լեհահայ կաթողիկ եկեղեցւոյ երկրորդ Առաջնորդը՝ թոխաթեցի (Թոքաթ) Վարդան Արք. Յունանեանն էր (1644-1715): Վ. Յունանեան Լվով ժամանած էր 1665 թուին, Եպիսկոպոս ձեռնադրուած՝ 1675 թուին, դառնալով Նիկոլի օգնականը¹: Վարդանի առաջնորդութեան շրջանը (1686-1715) հիմնականօրէն յատկանշուած է լատինական ծիսական արարողութիւններու հաստատումով, կաթողիկ դաւանական սկզբունքներու եւ հռոմէադաւան աւանդութիւններու ամրապնդումով, արարողութիւններու, պատարագներու ընթացքին Հայերէնը սահմանափակելու, ծիսական եւ կազմակերպչական լատինամերձ դրսեւորումներով: Վ. Յունանեան մեծ դեր ունեցած է լեհահայ կաթողիկ եկեղեցւոյ խարխսխաւորման եւ անոր կաթողիկացումի կազմակերպչական կառուցի հաստատման մէջ:

Յունանեան Արք.ի աշակցութեամբ, հայկական թաղամասի մէջ միանձնուհիներուն յատկացուած է հողատարածք մը՝ մենաստան մը կառուցելու համար: Միանձնուհիներու մենաստանի շէնքը կառուցուած է 1682 թուականին:

¹ <https://lia.lvivcenter.org/en/objects/ukrainky-10/>

Եկեղեցւոյ երգչախմբային վերնայարկէն դէպի պատկերասրահի անցումը կառուցուած է 1733 թուին: Բայց 1748 թուին միանձնուհիներու մենաստանի շէնքը ենթարկուեցաւ աւերիչ հրդեհի, որուն հետեւանքները կարելի եղաւ յաղթահարել 1749 թուին: Սակայն հայկական թաղամասի յաջորդ քանդիչ հրդեհը տեղի ունեցաւ 1778 թուին, այս անգամ ալ միանձնուհիներու միաբանութեան մենաստանի շէնքը վերակառուցուեցաւ յաջորդ տարի: Անկէ ետք շէնքի մէկ մասը յատկացուեցաւ վանական աղջկանց դպրոցին, որ հանրային դարձաւ եւ սկսաւ բանիլ 1785 թուին: Լեհահայ միանձնուհիներու Պենետիկթեան միաբանութիւնը կը յիշատակուի նաեւ 1767 թուականի լեհական հարկային մատեանին մէջ:

Ի վերջոյ, լեհահայ կաթողիկ եկեղեցւոյ երկրորդ Առաջնորդի՝ Վ. Յունանեանի օրով 1701 թուականի 20 Յունուարին, Սեֆերովիչ եւ Սբենտովսքի հայկական ընտանիքներու հետ առնչակից, Եազլովիցէի քահանայական ընտանիքի մէջ ծնած միանձնուհին՝ Տ. Ներսէս Ներսէսովիչ քահանայի դուստրը եւ Եպիսկոպոս Պոկտանի քոյրը՝ Մարիանա Քսավերա Ներսէսովիչնան (1625–1710) միաձայնութեամբ կ'ընտրուի լեհահայ միանձնուհիներու առաջին հովուապետուհի: Մեծաւորուհիի այս կոչումը ցմահ կը տրուէր²: Առաջին այս Հայ արքայուհին կամ արքամայրը հովուապետած է մինչեւ իր մահը 1710 թուին: Պէտք է յիշել որ, Ներսէսովիչնա արքայուհին եղած է կաթողիկ եկեղեցւոյ հետ միութեան գովաբանող թունդ կողմնակիցներէն եւ դրուատողներէն, Պենետիկթեան միանձնուհիներու իր ուխտը կատարած է 24 Օգոստոս 1683 թուին:



Արքայուհի՝ Մարիանա Քսավերա Ներսէսովիչնա

Լեհահայուհիներու Պենետիկթեան վանական այս հաստատութեան միանձնուհիներու արքայուհիներուն կը տրուէր հետեւեալ լիազօրութիւնները՝ ունենալու եպիսկոպոսական գաւազան ու մատանի իբրեւ նշան՝ վանական եւ հոգեւոր իշխանութեան, իրենց յատուկ հագուստն ու կապուստը թաւշեայ ճերմակ ինքնատիպ գլխակապը, յատուկ սեւ սքեմը, կաշիէ գօտին, եւայլն...: Յաջորդող սիւնակներուն մէջ ներկայացուած դիմանկարներու ընդմէջէն նկատելի է, մանաւանդ հեղինակութեան խորհրդանիշը՝ ձախ ափին մէջ պահած պարուրածեւ մետաղեայ գաւազանը, որ աւելի բարձր է քան արքայուհիներու ուսերը: Իսկ անոնց աջ ձեռքի միջնամատին կրած մեղեսիկ, տպագիտն, շափիւղայ, սուտակ, զմրուխտ եւ

² https://wiki.ormianie.pl/index.php?title=Marianna_Ksawera_Nersesowicz%C3%B3wna

այլ թանկարժեք մատանիներու կողքին ունէին կուրծքի վանական մեծ խաչը, իսկ հոգեւոր հոգածութեան յատկանիշներն էին՝ վարդարանը ձախ ձեռքին, Աստուածաշունչը եւ խաչեալին օրհնուած խաչը:



Լեհահայ «Գաւազանակիր միանձնուհիներ»

Լեհահայուհիներու Պենետիկթեան միանձնուհիներու մենաստանը, Լեհաստանի պատմութեան մէջ իր գործունէութեամբ յիշուող իբրեւ առաջին եւ թերեւս հնագոյն միակ լեհահահայ կաթողիկ եկեղեցւոյ պատկանող միանձնուհիներու մենաստանն է: 1701 թուականէն մինչեւ 1927 թուական, իր 223 տարուայ աւանդոյթով այս մենաստանը ունեցած է 11 լեհահայուհի կամ ծագումով Հայ արքայուհիներ, վերջինը արդէն լեհ էր: Մարիանա Քսավերա Ներսէսովիչնայէն ետք, կարելի է յիշել լեհահայուհի արքայուհիները եւ անոնց հոգեւոր իշխանութեան շրջանը: Հելենա Ֆորթունատա Սքենտովսքա (1710-1751), Մակտալենա Պենետիքթա Մանչուկովիչ (1751-1757),

Ալօյզա Աուկուսթինովիչ (1757-1772), Ռիփսիմէ Մաթիաշեվիչ (1772-1788), Կերդրուտա Քսավերա Գիրգորովիչ (1791-1796), Պարպարա Վերոնիքա Բիրամովիչովնա (1796-1827), Մարիանա Գոլումպա Նատէովնա (1827-1836), Լուտվիքա Քշիշթոֆովիչովնա (1839-1843), Քայեթանա Սարգիսեվիչ (1845-1893), Ալօյզա Եանովիչ (1894-1927), եւ լեհուհի էլէքթա Օրլովսքան (1928-1954)³:

Լվովի մէջ լեհահայուհիներու աւանդութիւններով հիմնուած Պենետիկթեան միանձնուհիներու պատրաստութեան այս հոշակաւոր կրթարանը, մենաստանի այս կառոյցը կը շարունակուի մինչեւ 1945 թուական, երբ Լեհաստանի պատմական արեւելեան սահմանները փոփոխութեան կ'ենթարկուին, փոփոխութեան ենթարկելով նաեւ Լեհաստանի պատմական տարածքները: Մանաւանդ Լվովի լեհահայ կաթողիկ վերջին Թեմակալ Առաջնորդին՝ բարեհամբաւ Եուզէֆ Արք. Թէոտորովիչի (1864-1938) մահէն ետք: Պատմական Լե-

³ http://www.naszaprzyszlosc.pl/files/tom062_03.pdf

հաստանի հարաւ-արեւելեան սահմանամերձ Սթանիսլավով մարզի մայրաքաղաք՝ Լվովը կը դառնայ այսօրուան Ուքրանիոյ հարաւ-արեւմտեան տարածքի մէկ բաժինը (Իվանո-Ֆրանքովսք): Ուստի ինչպէս բոլոր լեհերը, նոյնպէս տեղւոյն լեհահայերն ալ կը լքեն Լվովի եւ յարակից շրջաններու լեհահայ կաթողիկ թեմի բազմաթիւ եկեղեցիները, կալուածները, անոնց մէջ ըլլալով նոյնպէս միանձնուհիները ու կը հեռանան իրենց մենաստանէն, կալուածներէն: Ծանրատաղտուկ թափառումներէ ետք միանձնուհիներու այս հաստատութիւնը, կուսանոցն ու դպրոցը կը փոխադրուի ժամանակակից Լեհաստանի հարաւ-արեւմտեան կողմը գտնուող Վրոցլավ քաղաքին մօտիկ Վոլով գիւղաքաղաքը եւ հոն կը հաստատուի: 1961 թուականէն վերջ միանձնուհիներու այս կառոյցը մինչեւ օրս կը շարունակէ իր առաքելութիւնը՝ Պենետիկթեան միաբանութեան լատինական ծիսակարգով: Լեհահայ միանձնուհիներու հիմնած իւրայատուկ եւ հանգամանալից այս կառոյցը այդ թուականէն ետք յիշատակութենէ կը դադրի իբրեւ «Լեհահայ» անուամբ կոչուելէ:

Պարտք է յիշել, որ լեհ Պրոնիսլավա Վուչչիք Քէօփրիւեանը 1932 թուին Արշակ Զօպանեանի խմբագրութեամբ Փարիզի մէջ հրատարակուող գրական-գեղարուեստական «Անահիտ» Հանդէսին մէջ՝ «Լեհաստանի հայ պատմական յիշատակարաններու ցուցահանդէսը» լայնածաւալ իր յօդուածին մէջ անդրադարձած է արբայուհիներու մասին⁴:

Իսկ Մայիս 2013 թուին լեհահայ Մանուկեվիչներու թոռնուհին Ռոմանա Օպրօցքան «Լեհահայերու Մշակոյթի եւ Ժառանգութեան Հիմնադրամ»ի անունով այցելութիւն մը տուած է Վոլովի միանձնուհիներու հաստատութեան: Հետաքրքրութիւն յայտնած է միանձնուհիներուն մօտ գտնուող լեհահայ մշակութային ժառանգութեան հետ կապուած աւելի լայն տեղեկութիւններ իմանալու նպատակով: Միանձնուհիները գնահատելով այս քայլը, որոշած են իրենց մօտ գտնուող լեհահայ միանձնուհիներու հետ կապ ունեցող նիւթական ժառանգութիւնը, լեհահայ արբայուհիներու աւանդութեան հետ առնչակից դարաւոր ժառանգութիւնը եւ մանաւանդ անոնց դիմանկարները, որոշ նամակագրութիւններ, արխիւներ, աղօթարաններ եւ եկեղեցական իրեր փոխանցելու լեհահայերու հիմնադրամին⁵:

Բայց այդ փոխանցուած նիւթական ժառանգութիւնը, որ բարեբախտաբար միանձնուհիներու շնորհիւ պահպանուած էր մինչեւ մեր օրերը, սկսած կտաւի վրայ իւզաներկով նկարուած արբայուհիներու դիմանկարներէն եւ այլն, կարիք ունէին ֆիզիքական վերանորոգութեան, անոնցմէ թօթափելու համար պատմութեան փճացնող փոշին, փոխադրութեան եւ պահեստի ան-

⁴ «Լեհաստանի հայ պատմական յիշատակարաններու ցուցահանդէսը», https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Anahit_paris/1932-1933/3-6.pdf

⁵ https://ormianie.pl/files/Awedis_2017_31.pdf

յարմար եւ կործանիչ պայմանները: Կը պահանջէին վերականգնումի հսկայական ծախսեր, հմուտ եւ մասնագիտացած գեղարուեստական նորոգումներ, վերականգնողական փոփոխութիւններ, այլ խօսքով գուրգուրոտ ձեռքերու խնամքին: 2017 թուականէն ետք այդ նիւթական ժառանգութիւնը մաս առ մաս հիմնադրամին փոխանցուեցաւ, ձեռք բերելու համար հարկ եղած խնամքն ու հովանաւորութիւնը: Բնական է որ տեղի ունեցան վերականգնողական մասնագիտական նորոգութիւններ, գեղարուեստական աշխատանքներ, յատուկ պիւտճէ մը յատկացուեցաւ⁶:

Այդ դիմանկարները տարածուն բնագաւառ մը բացին պատմական եւ գիտաքննական ուսումնասիրութիւններու, պրպտումներու, ցուցահանդէսներու, հրատարակչական եւ ծանօթագրական ծրագիրներու⁷: Այդ նպատակով տեղի ունեցան լուսաբանական հանդիպումներ, գրուեցան մեկնաբանական յօդուածներ, եղան հարցազրոյցներ, ձայնային եւ ավանդական մամուլի հարդուումներ: Պարտք է յիշել նաեւ, որ Վարշաւայի մէջ լեհահայ միանձնուհիներու դիմանկարներու ցուցահանդէսը տեղի ունեցաւ 13 Մայիս 2021-էն 20 Յունիս 2021 թուին⁸⁻⁹: Իսկ երկրորդ ընդարձակուած ցուցահանդէսը մեծ շուքով տեղի ունեցաւ 12 Օգոստոս 2022 էն 19 Նոյեմբեր 2022 թուին, ուր միանձնուհիներու դիմանկարներու կողքին ցուցադրուեցան յարակից մշակութային նիւթական ժառանգութեան հատընտիրներ, ցուցահանդէսը տեղի ունեցաւ Քրաքովի Եակելոնեան պատմական համալսարանի Collegium Maius թանգարանի հանդիսասրահին մէջ¹⁰⁻¹¹: 2 Դեկտեմբեր 2022 թուականէն սկսեալ արբայուհիներու դիմանկարները մշտական ցուցադրութեան մէջ են Վարշաւայի մէջ լեհահայերու հիմնադրամի յարկին տակ¹²⁻¹³⁻¹⁴⁻¹⁵:

Նախորդ սիւնակներու մէջ ներկայացուած լեհահայ միանձնուհիներու պատմական միտումնաւոր մատենագիտական քաղուածքի յիշուած համագ-

⁶ https://ormianie.pl/files/Awedis_2021_49.pdf

⁷ <https://skarbnica.ormianie.pl/?idw=249>

⁸ <https://maius.uj.edu.pl/documents/11876392/147790683/newsletter-MUJ-nr18-listopad-2022.pdf/afba9cf1-4c5a-485d-87af-0b34a077438d>

⁹ https://ormianie.pl/files/kobiety_z_pastoralami_katalog_wystawy.pdf

¹⁰ <https://dzieje.pl/dziedzictwo-kulturowe/20-maja-wernisaz-wystawy-kobiety-z-pastoralami>

¹¹ <https://archwwa.pl/aktualnosci/kobiety-z-pastoralami-nowa-wystawa-czasowa-w-muzeum-archidiecezji-warszawskiej>

¹² <https://archwwa.pl/aktualnosci/kobiety-z-pastoralami-nowa-wystawa-czasowa-w-muzeum-archidiecezji-warszawskiej>


¹³ <https://www.radiomaryja.pl/informacje/warszawa-20-maja-wernisaz-wystawy-kobiety-z-pastoralami/>

¹⁴ <https://wnet.fm/broadcast/tygodniowy-kalejdoskop-kulturalny-29-05-2021-r/>

¹⁵ <https://archwwa.pl/wp-content/uploads/2021/05/Kobiety-z-pastora%C5%82ami-broszura-1.pdf>

րուծիչները կը ձգտի՝ ընդլայնուած լուսարձակ մը սփռելու, պատմական ծանօթագրական լայնարձակ լուսամուտ մը բանալու, ծանօթացնելու եւ թափանցելու լեհերէն լեզուով «Գաւազանակիր կանայք» վերնագրով հատորի բովանդակութեան եւ անոր խորքի էութեան: Իրականութեան մէջ հատորը արգասիքը եղաւ եւ առիթը ընծայեց լեհահայ միանձնուհիներու մասին գիտապատմական ուսումնասիրութիւններու, գեղարուեստական եւ հրատարակչական աշխատանքներու, ծանօթագրական ծրագիրներու եւ ձեռնարկներու:

Հատորը լոյս տեսաւ Քրաքովի մէջ «Ksiegarnia Akademicka» հրատարակչատունէն թղթակազմ եւ թուայնացած տարբերակներով¹⁶: 2021 եւ 2022 թուի թողարկումներով լոյս տեսած հաստափոր, մեծ չափով գեղեցկատիպ այս հատորը, կը ներառէ նաեւ գունազարդ պատկերագրական հարուստ փաստագրութիւն մը: Իր ծաւալուն 380 էջերու վրայ տարածուած ուսումնասիրութիւններու շնորհիւ կը հանդիսանայ դրուատելի պատմական հնագիտական ընդգրկուն ժողովածու մը: Հատորի ընդհանրապէս պատմողական բովանդակութիւնը լայն տեսադաշտ մը կը բանայ միանձնուհիներու պատմութեան, աբբայուհիներու կենսագրութիւններուն, անոնց ապրած կեանքին ու վարած գործունէութեան: Լոյս կը սփռէ լեհահայերու միջնադարեան շրջանի կենցաղին, ականդրութիւններուն, տիրող համայնքային իրավիճակին: Կը պարունակէ լեհահայերու տոհմական ուշագրաւ յուշագրութիւններ, կ'ընդգրկէ տուեալ ժամանակաշրջանի մանրապատումը, մատենագիտական հաւաքագրումի արգաւանդ աղբիւր մը:



Հատորը ընդարձակ գեղարուեստական եւ արհեստագիտական, վերականգնողական լուսաբանութիւններ կը յայտնէ տեղադրուած աբբայուհիներու դիմանկարներու մասին: Այդ բոլոր լուսաբանական յօդուածները կը ծանօթացնեն լեհահայ միանձնուհիներու պատմական հատուածը, ըմբռնելի կերպով կը միտին գոհացնելու ընթերցողին քիչ ծանօթ պատմա-մշակութային ծալքերու շերտաւորումը: Հատորի յօդուածներու պարզաբանող բովանդակութեան ընդմէջէն մեր ուշագրութեան կը հրաւիրեն, երբեմն կ'իմացնեն, կը մանրամասնեն պատմական որոշ իրողութիւններ, եղելութիւններ:

Գիրքը իր բազմահեղինակ կառուցով լեհ պատմաբաններու կողմէ լեհերէն լեզուով ներկայացուած ուսումնասիրութիւններու ժողովածու մըն է, որ կը պարզաբանէ կվովի լեհահայ Պենետիկթեան միանձնուհիներու պատմագիտական պատկերը, Քրաքովի Եակելոնեան համալսարանի թանգարանի

¹⁶ <https://akademicka.com.pl/index.php?a=2&detale=1&id=66339>

կողմէ իրականացուած արբայուհիներու դիմանկարներու վերականգնողական, գեղագիտական եւ վերակառուցողական աշխատանքներու ընթացքին տեղեկութիւնները: Ժողովածուն լոյս տեսած է Վարշաւայի «Լեհահայերու մշակոյթի եւ ժառանգութեան Հիմնադրամ»ի յանձնառութեամբ եւ Քրաքովի Եակելոնեան դարաւոր համալսարանի «Հայկական մշակոյթի ուսումնասիրութիւններու կեդրոն»ի համագործակցութեամբ, որուն վարիչն ու այս հատորին խմբագիրն է Լեհահայութեան բազմավաստակ գիտաշխատող եւ պատմաբան՝ Փրոֆ. Անտոէյ Ժիէնպան¹⁷:

Միւրճուելով հատորի բովանդակութեան ծալքերուն մէջ, հոն կարելի է կարդալ «Լեհահայերու մշակոյթի եւ ժառանգութեան Հիմնադրամ»ի ներկայ ղեկավարուհի՝ Մարիա Օհանովիչ-Թարաշուքի ներածականը, ապա Ա. Ժիէնպայի եւ Եոաննա Սլավինսքայի համահեղինակութեամբ «Լվովի՝ Լեհահայ Պենետիկթեան միանձնուհիներու հիմնադրին եւ արբայուհիներու կենսագրականներ», ապա Հայկական մշակութային ուսումնասիրութիւններու կեդրոնի գիտաշխատողներու յօդուածները եւ այսպէս՝ Ե. Սլավինսքայի «Լվովի հայ Պենետիկթեան միանձնուհիներու դիմանկարները վանքի պատմութեան հեռանկարով»: Իսկ Թոմաշ Քժիժովսքին ակնարկ մը կը ներկայացնէ այդ դիմանկարները յայտնաբերելու իրողութեան՝ «Լվովէն մինչեւ հարաւային Սիլիզիա, պատերազմի եւ յետ-պատերազմի շրջաններու Լեհահայ Պենետիկթեան միանձնուհիներու ճակատագիրը»: Ա. Ժիէնպան իր լայնածաւալ ուսումնասիրութեամբ կը ներկայացնէ «Սրբուհի Հռիփսիմէի եւ Պենետիկթեան Լեհահայ միանձնուհիները՝ բարեպաշտութեան ազգագրական երեւոյթ մը», իսկ համահեղինակներ՝ Մոնիքա Ակոբսովիչ, Թ. Քժիժովսքի, Մարչին Լուքաշ Մայվսքի, Մարէք Սթաշովսքի եւ Ա. Ժիէնպա ներկայացուցած են «Լեհահայ Պենետիկթեան միանձնուհիները՝ պատմագրական փաստագրութիւններու լոյսին տակ» երկարաշունչ ուսումնասիրութիւնը: Իսկ Եոլանթա Բոլէշ ներկայացուցած է հետաքրքրական՝ «Լվովի հայ Պենետիկթեան միանձնուհիներու դիմանկարներուն վերականգնողական աշխատանքներու արհեստագիտական հետազոտութիւններու իրավիճակը», այդ 11 դիմանկարներու պատմական, մշակութային եւ գեղարուեստական ժառանգութիւնը փրկելու նպատակով տարուած հսկայական վերակառուցողական եւ հանգրուանային աշխատանքը: Տեղ գտած են նոյնիսկ իսկական վիճակի եւ յետ-վերականգնողական աշխատանքներու գունազարդ նկարներով բոլոր մանրամասնութիւնները:

Ծաւալուն հատորին աւելցուած է նաեւ անգլերէն լեզուով մէկ էջնոց ամփոփումը, ինչպէս նաեւ՝ օգտագործուած անձնանուններու հարուստ անուանացանկը եւ մասնակից հեղինակներու հակիրճ կենսագրականները: Բոլոր

¹⁷ Արա Սայեդ, «Լեհաստանի Մէջ Հայկական Մշակոյթի Ուսումնասիրութիւններու Կեդրոն Եւ Հինգ Մարդասէր Սկանտինաւուհիներու Բարեգործութիւնները» <https://aztag32.rssing.com/chan-56539322/article8851.html>.

տեղ գտած յօդուածները հարուստ են մատենագիտական եւ արխիւային աղբիւրներով:

Հասկնալի է, որ մատենագիտական պրպտումները երբեք սպառիչ կամ լիակատար չեն, բայց կարելի է ընդունիլ, որ համահեղինակներով խմբագրուած ժողովածուն, գիտապատմական յօդուածներու այս հատորը կը ներկայացնէ միանձնուհիներու ծաւալուն պատմաքաղ մը, ուսումնասիրուած հում նիւթի ժամանակներն ու լեհահայութեան ընկերային իրավիճակը: Կարելի չէ այս նեղ սիւնակներու մէջ ներկայացնել հատորին ամբողջական պարունակութիւնը, լիակատար եւ էական արժեւորումը, բայց կը բաւականանանք հետեւողի ուշադրութեան յանձնելու որոշ մատնանշումներ, խորհրդածութիւններ եւ խոհեր, հատորի պատմական բովանդակութեան մասին:

Գիրքին վերնագիրը իր թիրախին պիտի ծառայէր, աւելի նշանակալից իսկութիւն մը պիտի հաղորդէր, եթէ «Գաւազանակիր կուսականայք», կամ «Գաւազանակիր միանձնուհիներ» անուանուած ըլլար: Տեղացի ընթերցողին համար աւելի գրաւիչ կամ հրապուրիչ երեւնալու համար երեւի ընտրուած է «կանայք» բառը:

Լեհահայ միանձնուհիներուն իրագործումները՝ կրթական ներդրումն ու հոգեւոր ծառայութիւնը սահմանափակուած չէր միայն Հայ համայնքի սահմաններու մէջ, ունէր համա-լեհական նշանակութիւն: Որով լեհահայուհիներու կողմէ 1785 թուականին հիմնուած աղջկանց դպրոցի պարագային, հատորին մէջ զետեղուած ութսուն տարիներու (1790-1870) աշակերտութեան թիւի աղիւսակին մէջ (հատորի՝ էջ 170), յատկանշական է, որ աշակերտութեան թիւը հասած է 570-ի: Այդ թուականներուն, պատմական Լեհաստանի տարբեր փոքրամասնութիւններու աղջիկներ, նոյնիսկ հեռաւոր շրջաններէն յաճախած են այդ դպրոցը: Ունեցած է նաեւ ուսուցիչներու, դաստիարակներու եւ կրթական մշակներու ձեռնհաս եւ բազմաշերտ կազմ մը:

Հայ բանասէր, մանկավարժ, պատմաբան, ազգագրագէտ, Մխիթարեան միաբանութեան անդամ՝ Հայր Մինաս Բժշկեանց 1820 թուականին այցելած է այդ դպրոցը եւ իր հիացմունքն ու երախտագիտութիւնը գրած է, միանձնուհիներու ձեռնհասութեան, անոնց վանական եւ կրթական բարձր մակարդակի մասին (հատորի՝ էջ 59): Ներբողական նման վկայութիւններ գրուած են նաեւ լեհ մանկավարժներու կողմէ, այդ կառոյցի համա-լեհական դերի նշանակութեան եւ լեհահայուհիներու ուշագրաւ կրթական գործունէութեան մասին:

Նոյնպէս արբայուհիներու կենսագրականներէն կարելի է նկատել թէ ինչպիսի տոհմերու, ընտանիքներու պատկանած են: Հոն տեղ գտած վկայութիւնները ընկերաբանական եւ ազգագրական լայն պատկեր մը կը ներկայացնեն այդ ընտանիքներու մասին, անոնց ունեցած դերին եւ ներդրումին՝ քաղաքական, գիտական, տնտեսական, եկեղեցագիտական եւ կրթական մարզերու մէջ, տեղույն լեհական մշակոյթի կերտման հանգրուաններու ընթացքին: Որպէս օրինակ, կարելի է յիշել Պ. Վ. Բիրամովիչովնան, որ եղած է հան-

րայայտ լեհահայ մանկավարժ, գրող, քարոզիչ, թարգմանիչ, կաթոլիկ եկեղեցույ գործիչ Կժեկոժ Բիրամովիչի քոյրը (հատորի՝ էջ 170), եւ այլն...:

Հետաքրքրական է բազմաէջ հատորին մէջ տեղ գտած մանրամասնութիւններէն Աղբակեցի Կաթողիկոսին եւ Ն. Թորոսովիչի հանդիպման մասին տեղեկութիւնը: Փիլիպպոս Աղբակեցի Կաթողիկոսը կաթոլիկ եկեղեցույ հետ միութեան բուռն ընդդիմադիրներէն էր, մանաւանդ պաշարողներէն էր Պարսկաստանի եւ Օսմանեան կայսրութեան մէջ կաթոլիկ միսիոնարական գործունէութեանց: Այդ պատճառով մշտական նամակագրութեան մէջ էր առաքելադաւան հոսանքին պատկանող լեհահայերու հետ, հետեւող էր դաւանափոխութեան իրավիճակին, դիմադրութեան աջակցողն էր կաթոլիկ եկեղեցույ միութեան հետ: Այդ իսկ պատճառով մեծ հեղինակութիւն կը վայելէր այդ ժամանակաշրջանի լեհահայերու առաքելադաւան հոսանքէն: Հետաքրքրական է, երբ դէպի Երուսաղէմ ճամբորդութեան ընթացքին 1653 թուականին Կոստանդնուպոլիս կը ժամանէ, ուր կը հանդիպի Նիկոլ Թորոսովիչի եւ Երուսաղէմ ուղղուող լեհահայերու պատուիրակութեան հետ: Այս հանդիպման ընթացքին Թորոսովիչը անգամ մը եւս Կաթողիկոսին առերեւոյթ կը հաստատէ առաքելական իր հաւատարմութիւնը (հատորի՝ էջ 209): Այնքան դաստիարակիչ է Հայ կաթոլիկ Թեմակալ Առաջնորդի մը 23 տարի ետք, երբ իր նախորդ հոգեւոր մեծաւորին՝ Կաթողիկոսին կեղծօրէն կը հաւաստիացնէ իր խաբուսիկ պարկեշտութիւնը: Թորոսովիչի հաստատումին վրայ հիմնուելով, վերոյիշեալ լեհահայուհին՝ Պողոսովնան սարկաւազուհի կը ձեռնադրուի Փ. Աղբակեցի Կաթողիկոսէն՝ ստանալով անոր օրհնութիւնները, երկու տարի ետք 1655 թուին Աղբակեցին կը վախճանի:

Կարելի է նկատել, որ լեհահայ միանձնուհիներու մենաստանը երբ իր արքայուհին ընտրած էր 12 Յունուար 1701 թուին, նոյն տարուան 8 Սեպտեմբեր 1701 թուին Մխիթարեան միաբանութեան հիմնադիր՝ Մխիթար Սեբաստացին, իր համախոհներու հետ հիմնած էր Մխիթարեան միաբանութիւնը: Հետաքրքրական է նաեւ, որ Մ. Սեբաստացին ալ ընդունելով Պենետիկթեան ուխտը, միանձնուհիներու նման իր միաբանութիւնը հիմնաւորած էր Պենետիկթեան ուխտի կանոններով եւ օրինակարգով: Ուշագրաւ է, որ նոյն այդ ժամանակաշրջանին Հայ կաթոլիկ եկեղեցին կ'ապրէր իր զարթոնքի եւ ծաղկումի գործուն շրջանը, կը բարգաւաճէր ու կ'ամրանար Եւրոպայի մէջ՝ սկսելով Նիկոլ Թորոսովիչի Հոռմի աթոռին հետ միացումի իր որոշումով, ապա Վարդան Յունանեանի լեհահայ կաթոլիկ եկեղեցույ ծիսական, կազմակերպչական կառուցի հաստատումով եւ Մխիթար Աբբահօր վանական առաքելութեան աննախադէպ երեւոյթով: Այս ձեւով նոր ժամանակներու պատմական շրջանի Հայ մտքի արեւմտեան քաղաքակրթութեան հետ հաղորդակցութիւն մը ստեղծելով եւ սփիւռքահայ իրականութեան մէջ եւրոպականացումի եւ Հայ կաթոլիկութեան նոր անցքեր հռչակելով:

Լեհերէն լեզուով բազմաբովանդակ եւ բազմիմաց այս հատորի հրատա-

րակութեամբ, անհրաժեշտ պատկերացումը ունինք լեհահայ միանձնուհիներու պատմագրութեան: Լեհ հեղինակներն ու խմբագիրը, քաջագիտակ ըլլալով լեհահայութեան դաւանական շրջադարձութեան, զգուշաւոր նրբութեամբ եւ գիտական անկողմնակալութեամբ, զսպուածութեամբ փորձած են ներկայացնել ուսումնասիրուած նիւթի մանաւանդ դաւանափոխութեան՝ կրօնա-բարոյական եւ ընկերային ամբողջական ծալքերը: Գիրքին մէջ տեղ գտած յօդուածները ընդլայնուած ձեւով շօշափած են 17-րդ եւ 18-րդ դարաշրջանէն սկսեալ եւ մինչեւ 20-րդ դար շարունակուող լեհահայ միանձնուհիներու նիւթին հետ կապուած ո՛չ միայն դաւանական դիւրաթեք մանրամասնութիւնները, այլ լեհահայ ազգագրական, տոհմական եւ կենցաղային վերլուծումները: Յատկանշական է արբայուհիներու դիմանկարներուն տրամադրուած պատմա-գեղարուեստական եւ արհեստագիտական, վերականգնողական գործընթացի լուսաբանութիւնները:

21րդ դարու առաջին քառորդին, երբ այս հատորի միջոցաւ կը փորձենք կրկին անգամ վերագիտել, վերստին ընկալել եւ վերարտադրել համասփիւռքեան մեր դարաւոր պատմութեան հնագոյն եւ այնքան իւրայատուկ մէկ միաւորը կազմող՝ լեհահայութեան հետ առնչուած կառոյցի մը իրականութեան մանրանկարը, անշուշտ ընկալելով համայնքի անցեալի բոլոր ծփանքները՝ մերժողական վերիվայրումներով եւ թէ արձանագրուած անցաւոր նուաճումներով, անպայմանօրէն այդ մանրապատումին մէջ անուրանալի եւ յստակ է անոր փոխանցած հիմնական ուղերձը, ո՛չ միայն իբրեւ «լեհահայ» անուանումի տեսանկիւնէն, այլեւ մանաւանդ «Հայ» ըլլալու կիզակէտէն, ուր Հայ տեսակի ներգործութիւնները ակներեւ են:

Կարելի է արձանագրել նաեւ այն իրողութիւնը, որ Լեհաստանի պատմական ժամանակահատուածներու ընթացքին, լեհահայերու իրագործած մշակոյթի պատումը, լեհահայ եկեղեցապատկան կալուածները, կառոյցները, լեհահայերու ընտանեկան տոհմածառերը, եկեղեցական եւ հոգեմտաւոր գրչութեան ժառանգը, ճարտարապետութիւնը, լեհահայ մարդաբանութիւնը, լեհահայերու մասնակցութեան նպաստն ու ծառայութիւնները եւ այդ ծաղկած դարաւոր մշակոյթի ճակատագիրը Լեհաստանի պատմութեան մէջ, որոնք հաստատապէս կը պատկանին ո՛չ միայն լեհահայերու ազգագրութեան, այլեւ ամբողջ քրիստոնէական հոգեւոր մշակոյթի ժառանգութեան կուտակումին:

Անժխտելի են լեհահայ միանձնուհիներու պատմական իրագործումները, որոնք այսօր թաւալգլոր կ'աւազախրին պատմութեան վաղանցիկութեան մէջ, մնալով սփիւռքահայ իրականութեան մէջ յիշարժան յիշատակագրութիւն մը:

ՓՐՈՖ. ԱՐԱ ՍԱՅԵՂ

ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

ԱՍՏՈՒԱԾԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ*
THEOSOPHIA

ԺԻՏԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ
NEGATIVE THEOLOGY

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Ժխտական Աստուածաբանությունը¹ Պլատոնականութենէն² ազդուած ու անկէ յառաջացած մեթոդ կամ հայեցակարգ մըն է, ուր աստուածութեան մը կամ Աստուծոյ մասին մտածելու ու արտայայտուելու պարագային, որոշ սահմանափակումներ կը դրուին եւ բոլոր դրական (Positive) մտածումներն ու յայտարարութիւնները կը քննադատուին ու կը մերժուին եւ միայն ժխտականները (Negative), որպէս ճշմարտութիւններ կ'ընդունուին: Այսուհանդերձ, Քրիստոնէութեան պարագային անսկիզբ ու անվախճան Աստուածը, մահկանացու մարդոց համար, կը մնայ անճանաչելի ու անհասանելի:

Բացատրենք օրինակներով:

Ժխտական Աստուածաբանութեան ոլորտին մէջ, կարելի չէ զԱստուած դրական յատկանիշով մը որակել, ինչպէս օրինակ՝ «Աստուած բարի է» կամ «նոյնիման՝ բարի է»: Դրական որակումի մերժումը, սակայն, չի նշանակեր որ հակառակը ճիշդ է, այսինքն կարելի չէ նաեւ ըսել, որ «Աստուած չար է» կամ «նոյնիման՝ չար է»:

Ժխտական Աստուածաբանութեան համաձայն, սկզբունքօրէն անհնար է Աստուծոյ կամ աստուածայինի մասին դրական մտածումներ ունենալ, կամ

* «Աստուածիմաստութիւն – Theosophia».- Ընդհանուր վերնագիրն է յօդուածաշարքի մը, որ շարունակաբար լոյս պիտի տեսնէ ՀԱՍԿին մէջ: Այս ու յաջորդ թիւով՝ *Ժխտական Աստուածաբանութեան* (Negative Theology) մասին:

¹ **Ժխտական Աստուածաբանութիւն** (կրճատ.՝ Ժ.Ա.)- յուն.՝ theología apophatikê, լատ.՝ theologia negativa, անգլ.՝ Negative Theology, գերմ.՝ Negative Theologie ...

² **Պլատոն** (Plato, յուն.՝ Πλάτων, 427 – 347 մ.թ.ա.)- Յոյն դասական բարոյագէտ-փիլիսոփայ, աշակերտ՝ Սոկրատէսի: Հիմնադիր՝ «Ակադեմիա» դպրոցի, որ տեսած է 9 դար եւ ուսուցիչ՝ Արիստոտելի: Հեղինակ՝ «գաղափարի տեսութիւն» եւ «քաղաքական տեսութիւն» ուղղութեանց: Փիլիսոփայութեան ընդհանուր պատմութեան մեծագոյն դէմքերէն: Իր անունով՝ «Պլատոնականութիւն»: Բարոյագիտութեան առնչուած գլխաւոր երկերն են՝ Politea եւ Kríton: Այլ կարեւոր երկերն են՝ Timaios, Kratylos եւ Parmenides:

դրական արտայայտություններ կատարել, որովհետեւ Աստուծոյ բացարձակ անդրանցականութիւնը (Transcendence) եւ մարդկային բանականութեան սահմանափակ ըլլալը, մեզի թոյլ չեն տար, որ Աստուծոյ մասին ճիշդն ու ճշմարիտը իմանանք: Այս իմաստով, սխալ դրական գաղափարներու վերացումը մեծապէս կ'օժանդակէ մարդու եւ Աստուծոյ յարաբերութեան: Ասոր կողքին, «բարի» եւ «չար» հասկացութիւնները մարդկային ոլորտի գաղափարներ ըլլալով, չեն կրնար կիրառելի դառնալ Աստուծոյ համար:

ժխտական Աստուածաբանութեան համաձայն, մենք կրնանք զԱստուած կամ աստուածայինը որակել միայն ժխտական (բացասական) ձեւերով կամ նոյնինքն դրական արտայայտություններու բացարձակ ժխտումով, ինչպէս օրինակ՝ «Աստուած անսկիզբ ու անվախճան է»:

ժխտական Աստուածաբանութիւնը բնորոշելէ եւ կարգ մը օրինակներով բացատրելէ ետք, այժմ արագ ակնարկներով ու ժամանակագրական կարգով քննարկենք այս նիւթը՝ փիլիսոփայութեան եւ աստուածաբանութեան պատմութեան ընդմէջէն:

ՊԼԱՏՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Արդէն յիշեցինք, որ ժխտական Աստուածաբանութիւն հասկացութիւնը յառաջացած է յոյն դասական փիլիսոփայ **Պլատոնի** (Plato) մօտ:

Պլատոնի «Պետութիւն» (յուն.՝ Politeia) երկի, «Գաղափարներու ուսմունքին» մէջ, նուիրապետական բարձրագոյն տեղը կը տրուի «Բարիի» գաղափարին: Պլատոնի համաձայն, «Բարիի» գաղափարը պատճառն է իմանալի իրերուն ու ճշմարտութեան, հետեւաբար, գոյաբանօրէն ան կը գերադասուի բոլոր միւս գաղափարներու, գիտելիքներու եւ նոյնինքն ճշմարտութեան ու գոյութեան ոլորտներուն մէջ:³

Պլատոն, իր «Տիմաիոս» (յուն.՝ Timaios) երկին մէջ, կը գրէ, որ «շատ դժուար է զԱստուած գտնելը» եւ նոյնիսկ գտնելու պարագային բոլորովին անհնար է անոր մասին արտայայտուիլը կամ յայտարարութիւն կատարելը:⁴

Պլատոն, իր «Կրատիլոս» (յուն.՝ Kratylos) երկին մէջ եւս կը հաստատէ, որ մենք «աստուածներուն մասին ոչինչ գիտենք»:⁵

Իսկ Պլատոնի «Պարմենիդէս» (յուն.՝ Parmenides) երկին մէջ, մեկնակէտը կը դրուի պլատոնական բնագանցութեան (մետաֆիզիկա, Metaphysics), ուր կը նշուի նաեւ «Գերագոյն Գոյի» մը գաղափարը:

Այս նիւթին առնչուած բնագանցութիւնը (մետաֆիզիկա, Metaphysics) շատ կարեւոր դեր ունի, ինչպէս յաճախ պիտի հաստատենք:

³ Պլատոնի «Պետութիւն» (“Politeia”) երկին մէջ, հոն՝ էջ 508a – 509b:

⁴ Պլատոնի «Տիմաիոս» (“Timaios”) երկին մէջ, հոն՝ էջ 28c:

⁵ Պլատոնի «Կրատիլոս» (յուն.՝ “Kratylos”) երկին մէջ, հոն՝ էջ 400d:

ՄԻՋԻՆ–ՊԼԱՏՈՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Միջին-պլատոնական հրեայ աստուածաբան ու փիլիսոփայ **Փիլոն Ալեքսանդրացին**⁶ (յուն․՝ Philôn, Ա. դար) կը փորձէր հրէական աստուածաբանութիւնը եւ յունական պլատոնական փիլիսոփայութիւնը համադրել եւ կը շեշտէր մարդոց համար՝ Աստուծոյ անհասկնալիութիւնը:

Փիլոնի համաձայն, Աստուծոյ որոշ յատկութիւններ կամ յատկանիշեր վերագրելը անթոյլատրելի է, այլ խօսքով, կարելի չէ զԱստուած բնութագրել եւ անոր գոյութեան դրական որակումներ տալ, կարելի չէ նաեւ Աստուծոյ անուն մը տալ: Աստուած կը մնայ մարդոց համար՝ անըմբռնելի եւ հեռաւորութիւն ու անսահման միջոց պահող անհասանելի:

Միջին-պլատոնական յոյն փիլիսոփայ **Ալկինոս**⁷ (յուն․՝ Alkínoos, Բ. դար) կը շեշտէր, որ Աստուած անասելի ու անբացատրելի է: Կարելի չէ զԱստուած «բարի» կոչել, որովհետեւ այն ատեն՝ պէտք է «բարութեան գաղափարին» մասնակից դառնար եւ «Բարին» իրմէ բարձր սկզբունք մը կը դառնար: Կարելի չէ նաեւ Աստուած բանի մը մէկ մասը նկատել կամ մասեր ունեցող ամբողջութիւն մը: Աստուած ո՛չ կը շարժի եւ ոչ ալ կը շարժուի:

Նոյնպէս միջին-պլատոնական, Սուրիոյ մէջ ապրող ու գործող յոյն փիլիսոփայ **Նումենիոս Ապամայեցի**⁸ (յուն․՝ Numênios ho ex Apameias, Բ. դար) կը բռնէ ժխտման ճանապարհը եւ Պլատոնի գերագոյն սկզբունքը կամ գաղափարը, որ «Բարին» է, կը կոչէ լոկ ժխտական արտայայտութիւններով, որպէս «անասելի» ու «աննկարագրելի»:

Նումենիոսի համաձայն կան 2 աստուածութիւններ կամ աստուածներ.-

⁶ **Փիլոն Ալեքսանդրացի** (յուն․՝ Philôn, մօտ. 20 մ.թ.ա. – 50 թ.)- Ծագումով հրեայ, հելլենիստական շրջանի նշանաւոր փիլիսոփայ եւ Յուդայական կրօնի աստուածաբան: Ապրած է եգիպտական Ալեքսանդրիոյ մէջ եւ գործած Ալեքսանդրիոյ դպրոցին մէջ: Մեծ ազդեցութիւն ունեցած է հետագայ Քրիստոնէութեան եւ Նոր-Պլատոնական փիլիսոփայական ուղղութեան վրայ: Հեղինակ է բազմաթիւ գրութիւններու:

⁷ **Ալկինոս** (յուն․՝ Alkínoos, Բ. դար).- Յոյն փիլիսոփայ, ներկայացուցիչ Միջին-Պլատոնականութեան, եւ որու ծննդեան եւ մահուան ճշգրիտ թուականները անյայտ են: Իր գլխաւոր երկը կը կոչուի «Ղիդասկալիկոս» (յուն․՝ “Didaskalikós”), որ 3 հիմնական բաժիններով դասագիրք մըն է Պլատոնի փիլիսոփայութեան նուիրում.- 1) *Տրամասութիւն* (դիալեկտիկա = յուն․՝ dialektiké), 2) *Տեսական փիլիսոփայութիւն* (Theoreticals) եւ 3) *Գործնական փիլիսոփայութիւն* (Practicals), որ բարոյագիտութիւնն է (Ethics):

Պէտք չէ շփոթել նոյն անունը (Alkínoos) կրող յունական առասպելական հերոսին, որ Հիպպոկոնի (Hippokoon) 12 որդիներէն մէկն էր:

⁸ **Նումենիոս Ապամայեցի** (յուն․՝ Numênios ho ex Apameias, Բ. դար).- Յոյն փիլիսոփայ, ներկայացուցիչ Միջին-Պլատոնականութեան, եւ որու ծննդեան եւ մահուան ճշգրիտ թուականները անյայտ են: Ապրած եւ գործած է իր ծննդավայր սուրիական Ապամիոյ մէջ: Նումենիոսի մեզի ծանօթ 7 երկերը կորսուած կը նկատուին, անոնցմէ մնացած են միայն այլոց կողմէ մէջբերուած հատուածներ:

1) Գերագոյն աստուածը՝ Պլատոնի «Բարին» է, որ կը ներկայանայ լոկ որպէս գոյ, նիւթէն շատ հեռու, առանց որեւէ ներգործութեան, պարզ ու անշարժ, անասելի ու աննկարագրելի:

2) Երկրորդը, ստեղծագործ-արարիչ աստուածը՝ Պլատոնի «Դեմիուրգոսն» է (յուն.՝ Dēmiourgós), որ ենթակայ է «Բարիին» եւ անկէ մաս մըն է: Յիշուած է Պլատոնի «Տիմաիոս» (յուն.՝ “Timaios”) երկին մէջ եւ ան է, որ ստեղծած է աշխարհը ու յատկապէս նիւթը (յուն.՝ hylê, լատ.՝ materia), որ շար է:

ՆՈՐ-ՊԼԱՏՈՆԱԿԱՆ ՈՒԹԻՒՆ

Նոր-Պլատոնական յոյն փիլիսոփայ Պլոտինոս⁹ (յուն.՝ Plôtinos, 205 – 270 թ.), որ հիմնադիրը կը նկատուի փիլիսոփայական Նոր-Պլատոնականութեան, հետեւելով Պլատոնի գերագոյն գաղափարի, «Բարիի» օրինակին, կը հիմնէ նոր նուիրապետական կարգ մը, որու բարձրագոյն տեղը կու տայ Առաջնամիակին (յուն.՝ τὸ ἕν = to hen, անգլ.՝ The One, գերմ.՝ Das Eine կամ Ur-Eine), որ մարդկային բոլոր պատկերացումները գերազանցող, անստեղծը, անսկիզբն ու անվախճանը, անբացատրելին ու անասելին (յուն.՝ ἀρρήτον) է, ինչպէս նաեւ՝ բոլոր գոյերու հիմքն ու պատճառը: Առաջնամիակը պարզ միակն է եւ ոչ բազումը, որ բարդ է:

Պլոտինոսի համաձայն, Առաջնամիակը ո՛չ լաւն ու բարին է եւ ոչ վատն ու չարը, այլ անոնցմէ շատ վեր, հակադրութիւններ չունեցող ու բնազանցական (մետաֆիզիկա = Metaphysics) երեւոյթ մը, որու մասին մարդկային բանականութիւնը ընդհանրապէս ո՛չ մէկ ստոյգ ու դրական յայտարարութիւն կրնայ ընել, ուրեմն՝ Առաջնամիակը կը մնայ անբացատրելին, անճանաչելին, անասելին, անսկիզբն ու անվախճանը:

Եթէ Պլոտինոս Առաջնամիակին մասին կարգ մը յայտարարութիւններ կ'ընէ, իր օգտագործած հասկացութիւնները, սակայն, փոխաբերական իմաստ ունին եւ նախատեսուած են ցոյց տալու, որ Առաջնամիակի մասին կարելի չէ բանաւոր արտայայտուիլ:

Աւելի ուշ, նոր-պլատոնական յոյն փիլիսոփայ Պրոկլոս¹⁰ (յուն.՝ Proklos, 410 – 485 թ.), առաջինն էր, որ կ'օգտագործէր Ժիստական Աստուածաբա-

⁹ Պլոտինոս (Plotinus, յուն.՝ Plôtinos, 204 – 270 թ.)- Յոյն նշանաւոր փիլիսոփայ: Աշակերտ՝ Ամոնիոս Սակասի (յուն.՝ Ammonios Sakkas, 175 – 242 թ.), որ հիմնադիրն էր եգիպտական Ալեքսանդրիոյ դպրոցին: Պլոտինոս Նոր-Պլատոնականութիւն (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան հիմնադիրը կը նկատուի:

¹⁰ Պրոկլոս (Proclus, յուն.՝ Πρόκλος, 410 – 485 թ.)-

Յոյն փիլիսոփայ: Ուսանած է նախ եգիպտական Ալեքսանդրիոյ ապա Աթէնքի մէջ, ուր երկար ատեն եղած է Պլատոնի հիմնած «Ակադեմիա» դպրոցի տեսուչը: Նոր-Պլատոնականութիւն (Neo-Platonism) փիլիսոփայական ուղղութեան ներկայացուցիչ եւ շարժումը Աթէնք փոխադրողը:

նութիւն բառակապակցութիւնը, համատեղելով երկու արդէն գոյութիւն ունեցող եզրոյթներ՝ «Ժխտում»ն (յուն.՝ *apóphasis*) ու «աստուածաբանութիւն»ը (յուն.՝ *theología*):

Պրոպիոսի համաձայն, բոլոր դրական (Positive) արտայայտութիւնները կը նախատեսուին, արդէն ձեւաւորուած իր մը որոշ յատկանիշերով լրացնելու ու ամբողջացնելու: Ծիշող այս պատճառով ալ, դրական արտայայտութիւնները չեն կրնար անձեւ Առաջնամիակին վրայ բան մը աւելցնել: Ասոր կողքին, պէտք է աւելցնել, որ բոլոր ժխտական արտայայտութիւնները Առաջնամիակը աւելի կը բարձրացնեն:

ՀԱՅՐԱԲԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Հնադարեան Հայրաբանական շրջանի եկեղեցւոյ հայրերը մեծապէս ազդուած էին ընդհանրապէս Պլատոնականութենէն եւ մասնաւորաբար Նոր-Պլատոնականութենէն: Ինչպէս Նոր-Պլատոնականութեան Առաջնամիակը եւ Պլատոնականութեան Գերագոյն Բարին, իրենց բացարձակ անդրանցականութեամբ (Transcendence) անասելի ու անբացատրելի էին ու անոնց մասին կարելի չէր դրական արտայայտութիւններ ունենալ, նոյն պատկերացումը ունէին նաեւ եկեղեցւոյ հայրերը՝ քրիստոնէական Աստուծոյ համար եւ կ'օգտագործէին ժխտական Աստուածաբանութիւն հասկացութիւնը:

Եկեղեցւոյ հայրերուն համար, որպէս հիմք կը ծառայէին աստուածաշունչեան կարգ մը հատուածները, ուր օրինակ՝ քրիստոնէական ճշմարիտ Աստուածը կը ներկայացուի, որպէս «անծանօթ Աստուած»¹¹ կամ կը շեշտուին «Աստուծոյ «եզակիութիւնը»¹² եւ «Աստուծոյ անդրանցականութիւնը»¹³:

Եկեղեցւոյ հայրերուն համաձայն, թէեւ Աստուծոյ գոյութիւնը ճանաչելի է, բայց անոր էութիւնը՝ ճանաչելի չէ: «Հայր», «Տէր», «Արարիչ» եւ նոյնիսկ «Աստուած» անուանումները իրականութեան մէջ պատշաճ չեն եւ անոնք իմաստ կրնան ունենալ միայն մարդկային սահմանափակ բանականութեան տեսակէտէն եւ երբեք չեն կրնար անսահման Աստուծոյ մասին վաւերական տեղեկութիւն տալ:

¹¹ «Անծանօթ Աստուած».- Բառակապակցութիւնը յիշուած է Նոր Կտակարանի Գործք Առաքելոցի մէջ (17/23), երբ Պողոս առաքեալ նման յայտարարութիւն կ'ընէ, յոյներուն առջեւ.- ... երբ կը պտտէի եւ աչքէ կ'անցնէի ձեր պաշտամունքի վայրերը, տեսայ բազին մը, որուն վրայ գրուած էր «Անծանօթ Աստուծոյ»: ...

¹² Աստուծոյ եզակիութիւնը.- Յիշատակուած է Հին Կտակարանի նախ Ելից Գիրքին մէջ (20/3-5) ապա Երկրորդ Օրինաց Գիրքին մէջ (5/7-9).- ... «Ինձմէ զատ ուրիշ աստուածներ չունենաս»:- ...

¹³ Աստուծոյ անդրանցականութիւնը.- Յիշատակուած է Նոր Կտակարանի Յովհաննու Աւետարանին մէջ (1/18).- ... «Որեւէ մէկը երբեք զԱստուած չէ տեսած» եւ Պողոս առաքեալի Տիմոթէոսին ուղղեալ առաջին նամակին մէջ (6/16) – ... «Ան, որ անմատչելի լոյսին մէջ կը բնակի, զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է եւ ոչ ոք ալ կրնայ տեսնել»:-

Ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի սատարողները եղան աստուածաբան – փիլիսոփաներ **Կղեմէս (Կիրեղ) Ալեքսանդրացին**¹⁴ (լատ.՝ Clemens), որ եգիպտական Ալեքսանդրիոյ պատրիարքն էր եւ իր աշակերտը, «Ադամանտիոս» անուանեալ **Օրիգենէս Ալեքսանդրացին**¹⁵ (լատ.՝ Origenes): Անոնք միացան Փիլոն Ալեքսանդրացիի «Աստուծոյ անճանաչելիութեան» գաղափարին:

- **Կղեմէս Ալեքսանդրացիի** համաձայն, Աստուծոյ վերագրուող բոլոր արտայայտութիւնները միայն կ'արդարացուին նմանաբանութիւններու (յուն.՝ analogía) իմաստով եւ չեն կրնար որեւէ իրական գիտելիք հաղորդել: Իսկ իսկական խորաթափանցութեամբ մը, կարելի է իմանալ միայն ա՛յն, ինչ որ Աստուած չէ: Այդուհանդերձ, Կղեմէս բոլորովին չէր մերժեր դրական արտայայտութիւնները եւ անոնց կու տար միայն սահմանափակ ու որոշակի արժէք, համեմատելով մարդկային սահմանափակ բանականութեան հետ: Կղեմէս, ճանաչելիութեան իմաստով յստակօրէն կը զանազանէր Հայր Աստուածը, Որդի Աստուծմէն (Յիսուսէն), որ մարդոց համար որոշ չափով աւելի ճանաչելի է ... արդարեւ սա պատճառ կը հանդիսանայ, որ Կղեմէսի մօտ ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգը, որոշ չափով սահմանափակ նկատուի:

- **Օրիգենէս Ալեքսանդրացիի** համաձայն, Աստուծոյ անճանաչելիու-

¹⁴ **Կղեմէս (Կիրեղ) Ալեքսանդրացի** (լատ.՝ Clemens, 150 – 215 թ.)- Յոյն փիլիսոփայ ու աստուածաբան, հեթանոս ընտանիքի զաւակ, շատ կանուխէն ընդունած է Քրիստոնէութիւնը: Ուսանած եւ ուսուցանած է եգիպտական Ալեքսանդրիոյ աստուածաբանական դպրոցին մէջ, եղած է նաեւ այդ դպրոցի տնօրէնը: Պատրիարք Ալեքսանդրիոյ: Ան փորձեց քրիստոնէական աստուածաբանութիւնը եւ յունական փիլիսոփայութիւնը համադրել: Հեղինակ է բազմաթիւ երկերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են: Հայերու կողմէ ընդունուեցան նաեւ իր դաւանաբանական բանաձեւերէն շատերը: Ան կը դասուի յոյն աստուածաբան-փիլիսոփայ Փիլոն Ալեքսանդրացիի աշակերտներու շարքին:

Պէտք չէ շփոթել նոյնանուն յոյն գրող-աստուածաբան **Կիրեղ Ալեքսանդրացիի** (376 – 444 թ.) հետ, որ նոյնպէս Ալեքսանդրիոյ պատրիարք էր:

¹⁵ **Օրիգենէս Ալեքսանդրացի** (լատ.՝ Origenes, 185 – 254 թ.)- Յոյն փիլիսոփայ ու աստուածաբան, որ աշակերտած է վերոյիշեալ **Կղեմէս Ալեքսանդրացիին** եւ եղած՝ Պլատոնականութեան (Platonism) մեծ ջատագովը: Հեղինակ է աստուածաշնչեան մեկնութիւններու բազմաթիւ երկերու, որոնց բովանդակութիւնը, մասամբ, վիճելի էին Կաթոլիկ Եկեղեցւոյ համար: Օրիգենէսի մահէն ետք (մանաւանդ՝ 4-րդ մինչեւ 6-րդ դարերուն), կը շարունակուին իր կարգ մը գաղափարներուն շուրջ յարուցուած վիճաբանութիւնները: Ան կը դասուի յոյն աստուածաբան-փիլիսոփայ Փիլոն Ալեքսանդրացիի աշակերտներու շարքին:

Պէտք չէ շփոթել, «Ադամանտիոս» (Adamantios = ադամանդեայ) անուանեալ այս փիլիսոփայ աստուածաբանը իրեն անուանակալից ու ժամանակակից հեթանոս փիլիսոփայ **Օրիգենէսի** հետ, որ 268 թուականին մահացած Նոր-Պլատոնականութեան հետեւող փիլիսոփայ մըն էր:

թիւնն ու անհասկնալիութիւնը կը բխի անոր մարմին շունենալէն: Մարդկային սահմանափակ բանակութեան պատճառով, Աստուծոյ էութիւնը, մարդոց համար անհասանելի ու անըմբռնելի կը մնայ: Միայն անոր ստեղծագործութիւններէն կարելի է Աստուծոյ գոյութեան մասին տեղեկանալ կամ իմանալ, նոյնիսկ անոր անունները չեն կրնար Աստուծոյ էութիւնը արտայայտել: Իսկ Աստուծոյ ա՛յն զանազան նկարագրութիւնները, որոնք յիշուած են Աստուծաշունչին մէջ, օրինակ որպէս «կրակ» կամ «լոյս» կրնան միայն փոխաբերական մեկնաբանութիւններ ունենալ:

Աւելի ուշ, 4-րդ դարու ընթացքին, Կապադովկիոյ երեք նշանաւոր եկեղեցւոյ հայրերը (Բարսեղ Կեսարացի, Գրիգոր Նիւսացի եւ Գրիգոր Նազիանզացի) եւս ժխտական Աստուածաբանութեան հայեցակարգի մասին նմանօրինակ տեսակէտներ ունեցան:

Ստորեւ, Կապադովկիոյ 3 նշանաւոր եկեղեցւոյ հայրերուն մասին հակիրճ տեղեկութիւններ.-

1. **Մեծն Բարսեղ Կեսարացի**¹⁶ (յուն.՝ Basileios) յոյն նշանաւոր աստուածաբանը շատ յստակօրէն կը զանազանէր Աստուծոյ ստեղծագործութիւններու ճանաչելիութիւնը եւ Աստուծոյ իսկական էութեան անճանաչելիութիւնն ու անհասանելիութիւնը:

2. **Յիշեալ Բարսեղի փոքր եղբայր Գրիգոր Նիւսացին**¹⁷ (յուն.՝ Grégórios), հետեւելով յոյն փիլիսոփայ Պլատոնի, նախ կը զանազանէր նիւթական – զգայահասու աշխարհը, աննիւթական – մտացածին աշխարհէն, ինչպէս

¹⁶ **Բարսեղ Կեսարացի** (յուն.՝ Basileios, 330 – 379 թ.)- Յոյն քրիստոնէայ աստուածաբան ու գրող, յայտնի ճգնաւոր, Կեսարիա քաղաքի արքեպիսկոպոս: Պաշտպան՝ Երրորդութեան հաւատքին ու ընդդիմադիր՝ Արիոսականութեան (Arianism), որ Որդի Աստուծոյն եւ Հոգի Աստուծոյն համագործակցութիւնը չէր նկատուած շարժումը եւ Հոգի Աստուծոյն հետ կը կազմէ *Եկեղեցւոյ հայրերու Կապադովկիոյ* նշանաւոր երկերէն: Նշանաւոր երկերն են.- «*Գիրք հարցողաց – 55 կանոններու մասին*» (*Asceticon I – Regulae fusius tractatae*), «*Վեցօրեայք*» (“Hexameron”), ստեղծագործութեան վեց օրերուն մասին, «*Ճգնակեցութեան հրահանգներ*» (*Moralia & Asketika*), ինչպէս նաեւ բազմաթիւ նամակներու եւ քարոզներու ժողովածուներ: Երկերու մեծ մասը նաեւ թարգմանուած է հայերէնի: Իր մահէն ետք կը ստանայ «Մեծն» տիտղոսը: Որպէս «*Եկեղեցւոյ հայր*», մաս կը կազմէ «*երկոտասան վարդապետք*» շարքին: Սրբադասուած է քրիստոնէական համայն եկեղեցւոյ կողմէ:

¹⁷ **Գրիգոր Նիւսացի** (յուն.՝ Grégórios Nýsses, 335 – 394 թ.)- Յոյն աստուածաբան եւ գրող: Եպիսկոպոս հայաբնակ Նիւսա քաղաքի (այսօր՝ թրքական Նեւշեհիր): Մեծ եղբոր՝ Բարսեղ Կեսարացիի եւ իրենց գործակից Գրիգոր Նազիանզացիի հետ կը կազմէ *Եկեղեցւոյ հայրերու Կապադովկիոյ* նշանաւոր երկերէն: 381 թուականին մասնակցած է Տիեզերական 2-րդ ժողովին (կը կոչուի նաեւ Կոստանդնուպոլսոյ Ա. ժողով), ուր մասնակցած է «Երրորդութիւն» գաղափարի մշակման: Ունի դաւանաբանական, մեկնաբանական, բարոյախրատական երկեր, ինչպէս նաեւ՝ նամակներու եւ քարոզներու հաւաքածոներ: Երկերէն կարելի է մեկ մասը հայերէնի թարգմանուած է: Որպէս «*Եկեղեցւոյ հայր*», մաս կը կազմէ «*երկոտասան վարդապետք*» շարքին:

նաեւ՝ ստեղծուած բազմաթիւ գոյերը ու անստեղծը եւ անստեղծին կու տար աւելի յաւիտենականութիւն (Eternity) ու կատարելութիւն (Perfection), եւ անստեղծ միակ Աստուածը կը խոստափի մարդկային ճանաչելիութենէն եւ մեկնաբանութիւններէն: Այս իմաստով, Գրիգոր Նիւսացի, նաեւ իր «լեզուի տեսութեան» մէջ կը հաստատէր, որ Աստուած, որ անստեղծ է, կարելի չէ բառերով արտայայտել եւ ան կը մնայ անասելի:

3. Բարսեղի ընկեր ու գործակից **Գրիգոր Նազիանզացի**¹⁸ (յուն.՝ Grêgórios) Աստուծոյ ճանաչելիութեան հարցով կը հետեւի յոյն փիլիսոփայ Պլատոնի եւ այդ առնչութեամբ կը հաստատէ մարդկային բանականութեան անբաւարարութիւնը ու սահմանափակութիւնը եւ Աստուծոյ իսկական էութեան բառերով անարտայայտելիութիւնը:

ԿԵՂԾ-ԴԻՈՆԻՍԻՍԻՈՍ ԱՐԻՈՊԱԳԱՅԻ

Հին դարու վերջաւորութեան ժխտական Աստուածաբանութեան ոլորտի մէջ շատ չիշատակելի անուն մը դարձաւ **Կեղծ-Դիոնիսիոս Արիոպագացի** (յուն.՝ Pseudo-Dionysios Ariopagites, 5-րդ դար), որ իր անունը առած է առաջին դարու յոյն դատաւոր Դիոնիսիոս Արիոպագացիէն¹⁹, որ Աթէնքի մէջ Պօղոս առաքեալի քարոզը լսելով քրիստոնէայ կը դառնար:

Կեղծ-Դիոնիսիոս մանրամասն կը բնութագրէ թէ՛ դրական (յուն.՝ katáphasis = հաստատում) եւ թէ՛ ժխտական (յուն.՝ apóphasis = ժխտում) աստուածաբանութիւնները եւ կը քննարկէ անոնց տարբերութիւնները:

Կեղծ-Դիոնիսիոսի համաձայն, Աստուած ստեղծած է մարդը եւ անոր

¹⁸ **Գրիգոր Նազիանզացի** (յուն.՝ Grêgórios ho Nazianzênos, 329 – 390 թ.)- Յոյն աստուածաբան եւ գրող: Որպէս Կոստանդնուպոլսոյ արքեպիսկոպոս, 381-ին մասնակցած է Տիեզերական 2-րդ ժողովին (որ կը կոչուի նաեւ Կոստանդնուպոլսոյ Ա. ժողով), որու ընթացքին մաս կազմած է «Երրորդութիւն» գաղափարի մշակման: Գործակից ու ընկեր Բարսեղ Կեսարացիի եւ անոր եղբոր Գրիգոր Նիւսացիի, որոնց հետ կը կազմէ *Եկեղեցւոյ հայրերու Կապաղովկիոյ* նշանաւոր եռեակը: Հեղինակ է դաւանաբանական ու աստուածաբանական բազմաթիւ երկերու, որոնցմէ շատերը հայերէնի թարգմանուած են: Որպէս «*եկեղեցւոյ հայր*», մաս կը կազմէ «*երկոտասան վարդապետք*» շարքին: Սրբադասուած է քրիստոնէական համայն եկեղեցւոյ կողմէ:

¹⁹ **Դիոնիսիոս Արիոպագացի** (յուն.՝ Dionysios ho Ariopagités, Ա. դար).-

Յոյն դատաւոր, որ առաջին դարուն, Աթէնքի մէջ, Պօղոս առաքեալի քարոզը լսելով քրիստոնէայ կը դառնար եւ կը կարգուէր Աթէնքի եպիսկոպոս: Յիշատակուած է Նոր Կտակարանի «Գործք Առաքելոց»ին մէջ (17/19-34):

Հետագային, 6-րդ դարուն յայտնուած կարգ մը երկեր, որոնք նաեւ հայերէնի թարգմանուած են, սխալմամբ, կը վերագրուին Ա. դարու դատաւոր ապա եպիսկոպոս *Դիոնիսիոս Արիոպագացիին*: Այժմ, այդ երկերուն որպէս հեղինակ կը նկատուի 5-րդ դարուն ապրած Նոր-Պլատոնականութեան (յատկապէս *Պրոկլոսի*) հետեւորդ յոյն փիլիսոփայ մը, որուն կը տրուի (5-րդ դարու) **Կեղծ-Դիոնիսիոս** անունը:

շնորհած է դրական յատկանիշեր, ինչպէս բարին ու իմաստութիւնը: Ուրեմն շատ տրամաբանական է, որ Աստուած ինքն ալ ունենայ այդ յատկանիշերը, իր կատարելութեան մէջ կամ տիրապետէ այդ դրական յատկանիշերուն: Ասոր կողքին, սակայն, Կեղծ-Դիոնիսիոս կ'եզրակացնէ, որ այդ դրական յատկանիշերը, Աստուծոյ անդրանցականութեան բոլոր պահանջները չբաւարարելով, չեն կրնար անոր վերագրուիլ: Քանի որ անոնք, Աստուծոյ էութեան մասին շատ վաւերական յայտարարութիւններ չեն, ուրեմն տրամաբանօրէն, պէտք է հերքուին կամ ժխտուին: Այս իմաստով, Կեղծ-Դիոնիսիոս, բոլոր ժխտումները կը նկարագրէ, որպէս ճշմարիտ, իսկ դրական հաստատումները՝ անպատշաճ ու անտեղի ու կ'եզրակացնէ, որ միայն վերջնական ժխտումներով մարդ կրնայ աստուածային իրականութեան մօտենալ:

Կեղծ-Դիոնիսիոս, որպէս «ճշմարիտ» կ'ընդունի Աստուծոյ մասին դրական արտայայտութիւնները, բայց զանոնք չի վերագրէր Աստուծոյ էութեան, այլ լոկ անոր ներգործութեան:

Կեղծ-Դիոնիսիոսի համաձայն՝

- Դրական Աստուածաբանութիւնը վայրէջք մըն է, որ կը սկսի Աստուծոյ համար ամենայարմարէն, ինչպէս «առաջին», «գերագոյն» եւայլն ... ու դէպի վար իջնելով, կը յանգի ինչ որ Աստուծոյ չի պատշաճիր (ինչպէս նիւթը), սակայն կը կազմէ անոր ստեղծագործութեան մէկ մասը:

- Ժխտական Աստուածաբանութիւնը կը սկսի ամենաստորագասէն, ինչպէս «անկենդան նիւթը», որ Աստուծոյ համար անպատշաճ կը գտնէ ու կը բարձրանայ դէպի վեր, հասնելու համար «բարիին» ու «իմաստութեան», որոնք եւս Աստուծոյ համար անընդունելի կը համարէ: Դէպի ժխտում քայլ առ քայլ ընթացքը, մարդկային հոգիին համար վերելք մը կը նկատուի, երբ մարդ կը հեռանայ իրեն համար ծանօթ մտային շրջապատէն եւ կը մօտենայ Աստուծոյ: Ժխտական աստուածաբանութեան միջոցով, մարդ պարզապէս կը գիտակցի, որ ինք անկարող է գԱստուած ճանչնալ կամ աստուածայինի մասին իմանալ: Մարդ կը գիտակցի, որ իր թէ՛ զգայական ընկալումներու վրայ հիմնուած պատկերացումներու միջոցով եւ թէ՛ անոնցմէ բխած քննախօսական մտային գործընթացներու վրայ հիմնուած գաղափարներու միջոցով, իր նպատակին հասնելու բոլոր ջանքերը ձախողած են: Չախողում մը, որ նախապայման կը նկատուի Աստուծոյ հետ յարաբերութեան մտնելու համար:

ԴՈԿՏ. ՍԱՐԳԻՍ Ա. ՔԷՀԵԱՆԱՆ

Գերմանիա

(Շար. 4)

ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ

ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ՝ ԴՊՐԵՎԱՆՔԸ

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ս. Աթոռէն, Նոր Տարուան բարեմաղթութիւններուն հետ կը հնչեն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին 2024 Տարուան մեկնարկի կոչը եւ անոր ուղեկցող Հայրապետական Պատգամը, որոնք իբրեւ ուղեցոյց կը ծառայեն Կաթողիկոսութեան հովանիին տակ գործող ու անոր հետ հարազատօրէն գործակցող բոլոր կառույցներուն:

Վեհափառ Հայրապետը ներկայ տարին հռչակեց «ՄԱՐԴՈՒԺԻ ՏԱՐԻ» հրամայական մը, որ բոլոր ժամանակներէն աւելի, զգալիօրէն անժամանցելի պահանջք է մեր ազգին, հայրենիքին եւ եկեղեցիին համար: Նորին Սրբութիւնը, նոյն իր պատգամին մէջ (որ ընթերցուեցաւ Կիրակի, 14 Յունուար 2024-ին, Անթիլիասի Մայր Տաճարին մէջ եւ յառաջիկայ Կիրակի պիտի ընթերցուի նաեւ բոլոր թեմերու եկեղեցիներէն ներս), յատուկ կերպով անդրադարձ կատարած է մարդուժ պատրաստող կառույցներուն, որոնց շարքին, իբրեւ երրորդ շարասիւն, կարեւոր եւ արժանի տեղ կը գրաւէ Դպրեվանքը: Այլ խօսքով, Վեհափառ Հայրապետը, Հայ ընտանիքէն եւ եկեղեցիէն ետք, իբրեւ մարդուժի յոյժ կարեւոր կեդրոն կը նկատէ Դպրեվանքը. իրողութիւն մը, որ ինքնին ապացոյց է Դպրեվանքի առաքելութեան խորիմաստ ըմբռնումի արտացոլացման եւ անոր դերին կարեւորութեան մեր կաթողիկոսութեան եւ ամբողջ Սփիւռքի կեանքէն ներս: Պատահական չէ, որ Նորին Սրբութիւնը Դպրեվանքը մարդուժ պատրաստող կառույցներու շարքին հիմնաքարերէն մէկը կը նկատէ: Կ'արժէ անդրադառնալ սոյն կէտին մասին եւ հասկնալ, թէ ինչո՞ւ Հայ ընտանիքին եւ եկեղեցիին կողքին, Դպրեվանքը որոշիչ դեր խաղացող կառույց կը նկատուի:

Այս ծիրէն ներս, այստեղ կ'ուզեմ մէջբերել Արամ Ա. Վեհափառ Հայրապետի Պատգամին մէջ արձանագրուած մարդուժի պատրաստութեան կեդրոնի երրորդ կէտը, որ յատկացուած է Դպրեվանքին. «Մեր Ս. Աթոռի Դպրեվանքին նպատակը կը շարունակէ մնալ հոգեմտաւոր արժէքներով թրծուած եւ ազգին ու եկեղեցւոյ ծառայելու կոչումը ունեցող հոգեւորականներու, ուսուցիչներու ու մտաւորականներու կազմաւորումը: Այս ուղղութեամբ անցնող տասնեակներուն հսկայ աշխատանք է կատարած Դպրեվանքը: Արդարեւ, Դպրեվանքէն անցած եւ Հայաստանի թէ Սփիւռքի մէջ մեր ազգային կեանքի հոգեւոր, կրթական ու մշակութային բնագաւառներէն ներս կարեւոր ներդրում բերող մեծ թիւով անձերու

ներկայությամբ՝ պեճախօս վկայությամբ մըն է Դպրեվանքին վիճակուած եզակի առաքելութեան»^{*} :

Դպրեվանքը աւելի քան 90 տարիներու մարդուժի պատրաստութեան վաստակ ունի: Եթէ ուզենք այս մէկը թուային պատկերացումով մը ներկայացնել 94 տարուան ընթացքին, կարելի է հաստատել թէ Դպրեվանքը ունեցած է աւելի քան 1400 ուսանող, որոնցմէ 139 ուսանողներ կուսակրօն քահանայ ձեռնադրուած են, իսկ այլ յատկանշական թիւ մը՝ ամուսնացեալ քահանայ-մնացեալը՝ աշխարհական գործիչներ, ուսուցիչներ, դպրապետներ եւ կամ մեր ազգին ու եկեղեցւոյ կեանքին զանազան բնագաւառներէն ներս ծառայողներ դարձած են: Իսկ եթէ նկատի ունենանք, որ այս բոլորը, իրենց կարգին աշխատանք տարած են մարդուժի պատրաստութեան գործին մէջ, ինքնին կը տեսնենք նուիրեալներու թիւին քառապատկումը: Պաշտօնական պատկերէն անդին, արդարօրէն պէտք է նշել, թէ նոյնիսկ այն ուսանողները, որոնք տարբեր պատճառներով ստիպուած եղած են չաւարտել Դպրեվանքի ուսումնական կրթական ծրագիրը, Դպրեվանքէն առած իրենց կրթութիւնն ու ոգին տարբեր ձեւերով ընծայաբերած են Սփիւռքեան կամ Հայրենիքի կեանքին:

Ճիշդ է, որ յաճախակի կերպով շեշտուած է Դպրեվանքին ղեկավար պատրաստելու հանգամանքը, եւ կրնայ ըլլալ որ ասիկա շատերու համար շահագանցուած ձգտում նկատուած է. սակայն, եթէ իրապաշտօրէն նկատի ունենանք միայն հոգեւորականներու դերը, արդէն իսկ մեր դիմաց կը պարզուի անոնց օրինակելի դերակատարութեան պատկերը եւ մեր գաղութներէն ներս անոնց գործի լայնածաւալ բնոյթը: Այս երեւոյթը ինքնին կը վկայակոչէ այս նուիրական հաստատութեան ձգտումին եւ առաքելութեան իրագործման փաստացի արդիւնքները. հակառակ անոր որ եղած են պարագաներ, որոնք իրենց թերացումներով եւ կամ Դպրեվանքեան արժէքներու անյարիր ընթացքով պղտորած են անոր իսկական պատկերը, սակայն անոնք չեն յաջողած աղաւաղել դրական ու լիարժէքօրէն գործուն Դպրեվանքեան իրականութիւնը:

Այսօր, Սփիւռքեան մեր գաղութները տարուէ-տարի կ'աճին, անոնց հետ նաեւ կը բազմանան անոնց պահանջներն ու մարտահրաւէրները: Ամէն բանէ առաջ, մեր ժողովուրդի զաւակները, մեր եկեղեցիին կը նային իբրեւ իրենց պահանջները լրացնող եւ մարտահրաւէրներուն պատասխան տուող կառոյց: Ասիկա ինքնաբերաբար Դպրեվանքին հանդէպ ժողովրդային սպասումները կը բազմապատկէ եւ անոր պատասխանատուութիւնը կը ծանրաբեռնէ: Ի մասնաւորի, երբ Վեհափառ Հայրապետը այս տարի իր շեշտը կը դնէ մարդուժի պատրաստութեան վրայ, մատնանշելով Դպրեվանքի առաքելութիւնը այս ծիրէն ներս, այս մօտեցումը մեզ կը մղէ սովորականէն դուրս

^{*} Արամ Ա. Կաթողիկոս, «Մարդուժի Պատրաստութեան Տարի 2024», Անթիլիաս, Լիբանան, 2024, էջ 12:

գալու, մեր կարողութիւններէն վեր եւ անդին մտածելու եւ գիտակցական վերլուծումով եւ անոր յաջորդող աշխատանքի պատրաստակամութեամբ պատասխան տալու այս կարգավիճակի կոչին: Իբրեւ տեսչութիւն, միաբանութիւն, ուսուցչական կազմ, տիկնանց խորհուրդ եւ յարակից մարմիններ, ներկայ հանգրուանին, գործի կը լծուինք յաւելեալ թափով եւ կը մնանք պատենէշի վրայ՝ մեր աշխատանքը ի սպաս դնելով Սփիւռքի հաւաքական կեանքի կարիքներուն:

Ներկայ դրութեամբ, Դպրեվանքը բազմաթիւ կարելիութիւններ կ'ընձեռնէ հայ երիտասարդին: Չափազանցած չեմ ըլլար, եթէ հաստատեմ, որ Դպրեվանքը հրաշք կը գործէ մարդուժի պատրաստութեան մէջ, հակառակ անոր առջեւ ծառայող բոլոր տեսակի տագնապներուն ու դժուարութիւններուն, որոնք ներկայիս կը դիմագրաւենք Լիբանանի եւ Սուրիոյ հայկական գաղութներէն ներս: Տասնեակ պատանիներ եւ երիտասարդներ Դպրեվանք կու գան եւ հոն բոլորովին տարբեր, իւրայատուկ ոգիով եւ գեղեցիկ շնորհքներով տիպար անձեր կը դառնան, որպէսզի իրենց սորվածն ու ամբարածը նուիրեն ժողովուրդին՝ եկեղեցւոյ ճամբով, Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ընծայած ծառայական բոլոր միջոցներով: Բոլոր անոնք, որոնք առիթը ունեցած են մօտէն ծանօթանալու Դպրեվանքի առաքելութեան, իրենց սիրտը ձգած են այս նուիրական հաստատութեան մէջ: Իսկ անոնք, որոնք այս առիթը չեն ունեցած, Դպրեվանքը գրկաբաց կ'ընդունի զիրենք ու իրենց կը հրամայէ իր ոգին ու անզուգական միջնորդութիւնը:

Վեհափառ Հայրապետին պատգամը նաեւ կոչ մըն է մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն, իրենց ճիգերը համախմբելու Դպրեվանքին շուրջ, իւրաքանչիւրը իր ձեռով կամ միջոցներով, ըլլան անոնք դէպի Դպրեվանք աշակերտներու ուղարկումով, նիւթաբարոյական աջակցութեամբ եւ կամ այլազան ներդրումներով: Ի վերջոյ, Դպրեվանքի առաքելութեան մէջ որեւէ տեսակի ներդրում՝ կը ծառայէ ու պիտի ծառայէ Սփիւռքի գաղութներու կեանքին, սկսեալ Լիբանանէն մինչեւ Ամերիկա, եւ ինչու չէ մինչեւ Ծայրագոյն Արեւելք: Եթէ Կաթողիկոսութեան սիրտը՝ Դպրեվանքը առողջ ու կայտառ է, ուրեմն Կաթողիկոսութիւնը կենսունակ ու աշխուժօրէն գործուն է: Եթէ Կաթողիկոսութիւնը կենսունակ եւ աշխուժօրէն գործուն է, ուրեմն Սփիւռքի դաշտերը կ'ոռոգուին քրիստոնէական հաւատքով եւ հայեցի դաստիարակութեամբ: Ահաւասիկ, «Մարդուժի Տարուան» սեմին, Դպրեվանքի առաքելութեան ճանապարհորդակից դառնալու հրաւերը կը բացուի բոլորին առջեւ եւ այս առիթը կը յուշէ բոլորիս, որ Դպրեվանքը արժանի է մեր ժողովուրդի զաւակներու գուրգուրանքին, սիրոյն եւ անսակարկ աջակցութեան:

ՊԱՐՈՅՐ ՎՐԴ. ՇԷՐՆԷՋԵԱՆ
Տեսուչ Դպրեվանոց

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ԱՖՐԱՄ Բ. ՊԱՏՐԻԱՐԵՒՆ
ՄԻՋԵՒ ՀԱՆԴԻՊՈՒՄ՝ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԷՋ**

Հինգշաբթի, 18 Յունուար 2024-ին, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին եւ Ասորի Ուղղափառ եկեղեցւոյ Պետ՝ Ն.Ս. Աֆրամ Բ. Պատրիարքին միջեւ հանդիպում մը կայացաւ Անթիլիասի Մայրավանքին մէջ: Հանդիպումին Պատրիարքի կողքին ներկայ էին Պէյրութի առաջնորդ՝ Դանիէլ Արք. Զուրիէն եւ Պատրիարքի օգնական՝ ժողէֆ Եպս. Պալին. իսկ Նորին Սրբութեան կողքին՝ Մայր Տաճարի լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան եւ «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:



Հանդիպումը առիթ հանդիսացաւ արծարծելու երկու եկեղեցիներու գործակցութեան, շարք մը միջ-եկեղեցական բնոյթ ունեցող հանդիպումներու ու ծրագիրներու եւ ընդհանրապէս Միջին Արեւելքը դիմագրաւող ներկայ տագնապներու առնչուած հարցեր:

Ապա, Պատրիարքն ու ներկաները ճաշի հիւրը եղան Նորին Ս. Օծութեան:

**ՀԵՌԱԶԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹԻՒՆ
ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՔՐԷԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԱՌԱՋԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴԱՏԱԽԱԶ՝
ԴՈԿՏ. ԼՈՒԻ ՄՈՐԵՆՍՕ ՕՔԱՄՓՈՅԻ ՄԻՋԵԻ**

Չորեքշաբթի, 21 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին եւ Միջազգային Քրեական Դատարանի առաջին ընդհանուր դատախազ՝ Դոկտ. Լուի Մորենսօ Օքամփոյի միջեւ հեռաձայնային հաղորդակցութիւն տեղի ունեցաւ: Յայտնեմք, որ Դոկտ. Օքամփո միջազգային համբաւ եւ յարգանք վայելող դատախազ է, որ կը բարձրաձայնէ ազգերու ու ժողովուրդներու բռնաբարուած իրաւունքներու վերահաստատման ու վերատիրացման պահանջատիրութիւնը:

Խօսակցութեան ընթացքին Վեհափառ Հայրապետը եւ Դոկտ. Օքամփոն ընդգծեցին, որ իրաւաքրեական սկզբունքներու եւ միջազգային համապատասխան օրէնքներու հիման վրայ Ազրայէճանի կիրարկած ցեղասպանական քաղաքականութիւնը կանխամտածուած եւ ծրագրաւորուած ցեղասպանութիւն էր՝ ընդդէմ Արցախի ժողովուրդին:

Խօսակիցները նաեւ անդրադարձան Կովկասի եւ Միջին Արեւելքի վերջին իրադարձութիւններու ընթացքին գործադրուած ցեղասպանութեանց եւ ցեղային զտման գործընթացներուն: Շեշտուեցաւ ցեղասպանութիւններու



անպատժելիութեան երեւոյթը, որ պատճառ կը հանդիսանայ նոր ցեղասպանութիւններու գործադրութեան:

Այս առիթով, Վեհափառ Հայրապետը բարձր գնահատեց Դոկտ. Օքամփոյի տարած աշխատանքները եւ յատկապէս Արցախի դէմ Ազրայէճանի իրականացուցած գործողութիւնները ցեղասպանական քաղաքականութիւն նկատող իր աշխատասիրութիւնը, որոնք միջազգային իրաւաբանական մտածողութեան մէջ լայն տեղ գտած են եւ մեկնած են մարդկային իրաւանց սկզբունքներէն:

ՀՈՎՈՒԱՊԵՏԱԿԱՆ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ
ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՐԱԲԷՐՈՎ ՄԵԿՆԵՑԱԲ ԶԱԹԱՐ**

Երեքշաբթի, 9 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս պետության հրավերով եռօրեայ այցելութեամբ մեկնեցաւ Քաթարի մայրաքաղաք՝ Տոհա: Յիշեալ այցելութեան ընթացքին, Նորին Ս. Օծութեան պատուիրակութեան մասկազմեցին Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, Հայկական Երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական Ժողովի համատեանապետ՝ Գրիգոր Մահսերէճեան, Արաբական Միացեալ Էմիրութեանց Ազգ. Երեսփոխանական Ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան, Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի քրիստոնեայ-իսլամ յարաբերութեանց գրասենեակի վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան եւ Քաթարի գաղութէն ներկայացուցիչներ:



Նորին Սրբութիւնը օղակայանին մէջ դիմաւորուեցաւ Քաթարի արտաքին գործոց նախարարութեան պատասխանատուներուն, Առաջնորդ սրբազան հօր, Քաղաքական ժողովի համա-ատենապետին, Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետին, Լիբանանի հիւպատոս՝ Շանթ Վարդանեանին (դեսպանին բացակայութեան պատճառով) եւ ազգայիններու կողմէ:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՔԱԹԱՐԻ ՎԱՐՉԱՊԵՏԻՆ ՀԵՏ

Չորեքշաբթի, 10 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս վարչապետարանին մէջ հանդիպում ունեցաւ Քաթարի վարչապետ՝ Մուհամմէտ Պըն Ապտ Ալ-Ռահման Պըն Ճասէմ Ալ-Սանիի հետ:

Հանդիպումը տեղի ունեցաւ երեք յաջորդական հանգրուաններով: Առաջին հանդիպումը կայացաւ պատուիրակութեան ներկայութեամբ: Հոս, Վեհափառ Հայրապետը անդրադառնալով 12 տարի առաջ Քաթարի նախկին էմիրին հետ ունեցած հանդիպումին, յիշեցուց, որ երեք բառերով բնորոշած էր Քաթարի ընթացքը՝ զարգացում, չափաւորութիւն եւ երկխօսութիւն: «Այսօր ուրախ եմ հաստատելու, որ վերանորոգ կերպով Քաթարը կը շարունակէ իր ընթացքը՝ միջազգային համայնքին մէջ իր կարեւոր դերակատարութեամբ եւ Միջին Արեւելքէն ներս իր վճռորոշ դերով՝ կարգ մը բարդ խնդիրներու գծով, յատկապէս Կազայի դէմ Իսրայէլի պատերազմին ու Լիբանանի նախագահական ընտրութեան գծով», ըսաւ ան:

Նորին Ս. Օծութիւնը խօսեցաւ նաեւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան եւ Սփիւռքի հայ գաղութներուն մասին՝ յատուկ ուշադրութիւն դարձնելով Քաթարի հայ գաղութին: Այս գծով Մեսրոպ սրբազան հայրը անհրաժեշտ տեղեկութիւններ փոխանցեց վարչապետին: Ապա, Նորին Սրբութիւնը վարչապետէն խնդրեց, որ պետութեան կողմէ հողաշերտ տրամադրուի մեր գաղութին՝ եկեղեցույ շինութեան համար: Ան նաեւ անդրադարձաւ միջ-կրօնական երկխօսութեան կարեւորութեան եւ այդ գծով Քաթարի իւրայատուկ դերին:

Վարչապետը նախ մեծ ուրախութեամբ ողջունեց Արամ Ա. Կաթողիկոսին այցելութիւնը, որ կը կատարուէր ընդառաջելով իր իսկ կողմէ յղուած պաշտօնական հրաւերին, եւ իր կարգին յայտնեց, որ Քաթար իր ուղին կը շարունակէ այնպէս ինչպէս տասնամեակ մը առաջ Նորին Սրբութիւնը արտայայտած էր նախկին էմիրին:

Քաթարի Վարչապետը պարզեց, որ հարցերու լուծման գծով իրենց նպատակը միշտ եղած է ըլլալ արդար ու չէզոք: Խօսելով հայ համայնքին մասին՝ ան իր բարձր գնահատանքը յայտնեց եւ ընդգծեց, որ հայերը միշտ հաւատարիմ եղած են իրենց բնակած երկրին ու աշխատած են պահել իրենց մշա-

կոյթը, լեզուն եւ ինքնութիւնը: Ինչ կը վերաբերի հողաշերտին, ան ըսաւ, որ ինք պիտի փորձէ օգտակար հանդիսանալ:

Հանդիպման երկրորդ հանգրուանին, Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էր Լիբանանի խորհրդարանի Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունին: Այս հանդիպումին լայն անդրադարձ կատարուեցաւ Լիբանանի նախագահական ընտրութեան առնչուած աշխատանքներուն, նախաձեռնութիւններուն եւ մտահոգութիւններուն: Վարչապետը շեշտեց շուտափոյթ ընտրութիւն կատարելու հրամայականը՝ միաժամանակ յայտնելով, որ յառաջիկային Լիբանանի նախագահական ընտրութեան հարցով մօտէն զբաղելու կոչուած յանձնախումբը (Ամերիկայի Միացեալ Նահանգներ, Ֆրանսսա, Սէուտական Արաբիա, Եգիպտոս եւ Քաթար), իր նախագահութեամբ, պիտի լծուի աշխատանքի:

Վերջապէս, երրորդ հանգրուանը կայացաւ Նորին Սրբութեան եւ վարչապետին միջեւ. այստեղ Վեհափառ Հայրապետը անդրադարձաւ կարգ մը հարցերու:

ԱՅՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Արամ Ա. Կաթողիկոս կատարեց շարք մը պետական այլ այցելութիւններ, ինչպէս նաեւ հանդիպեցաւ գաղութի զաւակներուն հետ:

Այս գծով յատկանշական են Լիբանանի ու Հայաստանի դեսպանատուներու այցելութիւնները, որոնց ընթացքին անդրադարձ կատարուեցաւ տուեալ երկրին առնչուած հարցերուն, իսկ Նորին Սրբութիւնը իր բարձր գնահատանքը յայտնեց դեսպանատուներուն կատարած աշխատանքներուն:





Նորին Ս. Օծուծիւնը նաեւ ընդառաջեց հրաւերներու, ինչպէս՝ Անգլիոյ մօտ Քաթարի դեսպան՝ Ֆահրաթ Պըն Աթիէի ճաշի հրաւերին եւ Քաթարի քարիւղի նախկին նախարար՝ Ապտալլահ Պըն Աթիէի անձնական հրաւերին:



Բնականաբար գաղութը անմասն չմնաց Նորին Սրբութեան հանդիպումներու ծիրէն: Այս գծով ան հանդիպեցաւ Քաթարի համայնքի Ազգ. Վարչութեան հետ, որմէ ետք, Լիբանանի դեսպանատան մէջ, հանդիպեցաւ համայն-



քի զաւակներուն հետ: Նորին Արքեւթիւնը գնահատեց անոնց ամուր կապուածութիւնը հայ լեզուին, մշակոյթին ու ականդութիւններուն եւ թելադրեց, որ Ս. եւ Անմահ Պատարագին առընթեր, Թեմի Ազգ. Վարչութեան նախաձեռնութեամբ, յաճախակի առիթներով անոնք ձեռնարկներ կազմակերպեն, որպէսզի համայնքի զաւակները առիթ ունենան միասին ըլլալու:



ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՀԱՅՈՑ ԹԵՄԷՆ ՆԵՐՍ

Ինչպէս մեր նախորդ լրատուութիւններով տեղեկացուցած ենք, 2023 տարուան ընթացքին Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հովուապետական այցելութիւններու ձեռնարկեց՝ նպատակ ունենալով մեր ժողովուրդին հետ ըլլալ, գաղութներէն ներս տարուող վարչակազմակերպչական աշխատանքներուն մօտէն իրազեկ դառնալ եւ գաղութներու վերակազմակերպման աշխատանքներու գծով իր թելադրութիւնները փոխանցել:

Առ այդ, 22-30 Յունուար 2024-ին, Նորին Սրբութիւնը եղաւ Արաբական Միացեալ Էմիրութիւններու Հայոց Թեմի Ապու Տապի, Տուպայ եւ Շարժա բնակող իր զաւակներուն հետ: Բնականաբար, թեմական ու համայնքային զանազան մարմիններու ու կառոյցներու կողքին, ան հանդիպումներ ունեցաւ նաեւ պետական բարձրաստիճան պատասխանատուներու եւ միջ-եկեղեցական խորհուրդներու ներկայացուցիչներուն հետ:

Նորին Ս. Օծութիւնը Ապու Տապի ժամանեց Կիրակի, 21 Յունուար 2024-ին, ընկերակցութեամբ Տեղեկատուական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանի եւ Միջ-կրօնական յարաբերութեանց վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանի:



Ապու Տապիրի օգակայանին մէջ Վեհափառ Հայրապետին պաշտօնական դիմաւորութեան ներկայ էին՝ Արաբական Միացեալ Էմիրութիւններու, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, Լիբանանի Հանրապետութեան դեսպան՝ Ֆուատ Տանտան Շհապ, Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Կարէն Գրիգորեան, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեան, Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան, Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Ժիրայր Հապիպեան, ազգային բարերար՝ Արա Խանոյեան եւ այլ ազգայիններ: Ապա, Վեհափառ Հայրապետը իր իջեւանած պանդոկին մէջ հանդիպում մը ունեցաւ դեսպաններուն, Ազգ. Երեսփոխանական ժողովի, Ազգ. Վարչութեան անդամներուն եւ Ապու Տապիրի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ թաղականութեան անդամներուն հետ:

ԾՈՑԻ ՇՐՋԱՆԻ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐ

Ապու Տապի այցելութեան իր առաջին օրը, Երկուշաբթի, 22 Յունուար 2024-ին, Վեհափառ Հայրապետը բանախօսեց Ապու Տապիրի մէջ գումարուող Ծոցի շրջանի եկեղեցիներու խորհուրդի համագումարին ընթացքին:

Համագումարի կեդրոնավայրին մէջ պաշտօնական ընդունելութենէն ետք, Ծոցի եկեղեցիներու խորհուրդի ատենապետ՝ Մակարիոս Արքեպիսկոպոսը ողջունեց Նորին Սրբութեան այցելութիւնը՝ արտայայտուելով միջ-եկեղեցական մարզին մէջ անոր աւելի քան յիսնամեայ ծառայութեան եւ ղեկավարի դերակատարութեան մասին: Ան վստահեցուց, որ Նորին Ս. Օծութեան ներկայութիւնը սոյն համագումարին պիտի ներշնչէ մասնակիցները:



Իր խօսքին մէջ Նորին Սրբութիւնը հինգ կէտերով ամփոփեց միջ-եկեղեցական շարժումին իմաստն ու նպատակը՝ ընդգծելով, որ ան ո՛չ միայն եկեղեցւոյ միութեան ուղղուած շարժում մըն է, այլ նաեւ այդ նպատակը իրագործելու համար եկեղեցիներու փոխադարձ օգնութեան եւ գործակցութեան հրաւեր է: Այս ծիրէն ներս, Նորին Ս. Օծութիւնը կարեւորեց միջ-եկեղեցական շարժումին՝ միջավայրի, ներկայ աշխարհի տագնապներուն ու մարտահրաւէրներուն ուշադրութիւն դարձնելը: Իր խօսքի երկրորդ բաժնով ան կեդրոնացաւ Միջին Արեւելքին եւ ընդգծեց եկեղեցիներու միջեւ գործակցութեան հրամայականը՝ յատկապէս ներկայ տագնապալից ժամանակներուն, ու նշեց նաեւ, որ քրիստոնեայ-իսլամ երկխօսութիւնը տեսական երեւոյթ չէ, այլ գոյութենական իրողութիւն: Վեհափառ Հայրապետի խօսքէն ետք Մակարիոս Արքեպիսկոպոս խորհուրդին անունով յուշանուէր մը յանձնեց Վեհափառ Հայրապետին:

Յայտնենք, որ յիշեալ հանդիպումին Արամ Ա. Կաթողիկոսին կողքին ներկայ էին Առաջնորդ Սրբազան Հայրը, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեանը, Ապու Տապիի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Պալքճեանն ու Տուպայի եւ Հիւս. էմիրութեանց Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Արամ Աւ. Քհնյ. Տէյիրմէնճեանը:

Նոյն օրը, առաւօտուն, Վեհափառ Հայրապետը իր պատուիրակութեան հետ այցելեց Շէյխ Զայէտի մեծ մզկիթը, ուր դիմաւորուեցաւ ընդհ. տնօրէնին կողմէ: Նորին Սրբութիւնը գնահատեց կեդրոնին գործունէութիւնը՝ յայտնելով, որ ինք նախօրոք այցելութիւն տուած էր յիշեալ մզկիթին: Յատուկ կարգադրութեամբ կայացաւ Նորին Ս. Օծութեան եւ իրեն ընկերացող պատուիրակութեան շրջագայումը մզկիթի համալիրէն ներս, ուր մօտէն ծանօթացան կեդրոնին կրօնական-մշակութային առաքելութեան ու գործունէութեան:

Նշենք, որ սոյն պատուիրակութեան մաս կազմեցին Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետն ու Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ու Ազգ. Վարչութեան անդամները:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՊՈՒ ՏԱՊԻԻ ՍՐԲՈՑ ՆԱՀԱՏԱԿԱՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՄԷՋ

Երեքշաբթի, 23 Յունուար 2024-ին, Նորին Սրբութիւնը այցելեց Թեմի Առաջնորդանիստ Սրբոց Նահատակաց եկեղեցի, ուր կանոնական աղօթք կատարեց եւ իր Հայրապետական պատգամը ուղղեց ժողովուրդին:

Վեհափառ Հայրապետը եկեղեցւոյ մուտքին ջերմօրէն դիմաւորուեցաւ Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդին, եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւին, Տուպայի եւ Հիւս. էմիր-



րութեանց Հոգեւոր Հովիւին, Ազգ. Կեդր. Վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետին, Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետին եւ անդամներուն, Ազգ. Իշխանութեան, եկեղեցւոյ թաղականութեան, Ազգ. «Արա Խանոյեան» միօրեայ վարժարանի աշակերտութեան ու հաւատացեալներու կողմէ:

Կանոնական աղօթքի աւարտին, Առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով՝ որդիաբար ողջունեց Վեհափառ Հայրապետին այցելութիւնը: Ան ըսաւ, որ Նորին Սրբութեան այս հովուապետական այցելութիւնը վերանորոգումի առիթ է Թեմին համար՝ երբ մանաւանդ ամէնուրեք կը դիմագրաւենք զանազան դժուարութիւններ ու տագնապներ: Ապա, հրաւիրեց Նորին Ս. Օծութիւնը՝ իր պատգամը ուղղելու ներկաներուն:

Առաջին հերթին, Վեհափառ Հայրապետը ողջունեց Առաջնորդ Սրբազան Հայրը եւ բարձր գնահատեց Թեմէն ներս անոր նուիրեալ ծառայութիւնը: Ան ըսաւ, որ Մեսրոպ Սրբազան Հայրը, անցնող տասը տարիներու ընթացքին, Թեմի կազմակերպչական աշխատանքին լծուեցաւ, միջ-կրօնական ու միջ-եկեղեցական լաւ յարաբերութիւններ մշակեց, օտար համայնքներուն եւ յատկապէս պետական շրջանակներու հետ մեր կապերը ծաւալեց: Այս առիթով Վեհափառ Հայրապետը նաեւ ողջունեց Ա.Մ.Է. պետութիւնը, որ լայն կարելութիւններ ընծայած է մեր համայնքին: Ապա խօսեցաւ քրիստոնէական կեան-



քին մէջ հաւատքի կարեւորութեան մասին ու ըսաւ, որ հաւատքը հրամայական ու առանցքային ներկայութիւն եղած է Քրիստոսի ուսուցումներուն, հրաշքներուն ու քարոզչութեան մէջ: Քրիստոս փոթորիկին մէջ մնացած աշակերտներուն ըսաւ. «Մի՛ վախնաք, միայն հաւատացէ՛ք». «Մանանեխի հատիկի չափ հաւատք ունեցողը կրնայ լեռը շարժել»: Վեհափառ Հայրապետը շեշտեց, որ եկեղեցին հաւատքի համայնք է. հաւատալ կը նշանակէ Աստուծոյ ներկայութիւնը ապրիլ, Անոր ներկայութեամբ մտածել ու գործել, իսկ քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ մեր կեանքը հաւատքով շաղախել ու վերանորոգել՝ դիմագրաւելու կեանքի ամէն տեսակ դժուարութիւնները, ըսաւ Նորին Ս. Օծութիւնը: Իր պատգամի աւարտին, ան հայրական կոչ ուղղեց հաւատացեալներուն, որպէսզի եկեղեցւոյ հաւաքական կեանքին մասնակից դառնալով՝ իրենց հաւատքը հզօրացնեն:

Հուսկ, Ազգ. «Արա Խանոյեան» միօրեայ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ աջահամբոյր:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԻ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆԱՏՈՒՆԵՐԸ

Չորեքշաբթի, 24 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Ապու Տապիի մէջ յաջորդաբար այցելեց Լիբանանի եւ Հայաստանի դեսպանատուները:

Նորին Սրբութիւնը նախ այցելեց Լիբանանի դեսպանատուն, ուր դիմաւորուեցաւ դեսպան՝ Ֆուատ Շհապ Տանտանի եւ դեսպանատան անձնակազմին կողմէ: Դեսպանատան մէջ ներկայ էին Ապու Տապի հաստատուած հայ եւ

լիբանանցի անձնաւորութիւններ: Հանդիպումը առիթ հանդիսացաւ անդրադարձ կատարելու ընդհանրապէս Լիբանանը յուզող ներկայ հարցերուն:

Ողջունելով Վեհափառ Հայրապետին այցելութիւնը, դեսպանը նշեց Լիբանանի հայութեան բերած գործօն մասնակցութիւնը՝ երկրին ծաղկման ու շինութեան, եւ հայութեան կառչածութիւնը՝ Լիբանանի համակեցութեան ու արժէքներուն: Միաժամանակ ան ընդգծեց Նորին Սրբութեան կարեւոր դերը Լիբանանի միասնականութեան պահպանման եւ արտաքին աշխարհին մէջ անոր ներկայութեան ամրապնդման:



Իր կարգին, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ այն իրողութեան, որ Լիբանանը հայ ժողովուրդին համար դարձած է երկրորդ հայրենիք, յատկապէս Յեղասպանութենէն ետք: Վեհափառ Հայրապետը յիշեց Լիբանանի կարեւորութիւնը՝ իբրեւ կրօններու ու մշակոյթներու երկխօսութեան երկիր, նաեւ՝ այլ երկիրներու Լիբանանի նկատմամբ յատուկ սէրն ու յարգանքը եւ սպասումը, որ կարելի փութով ան վերականգնումի ու վերածաղկումի ընթացքին մէջ մտնէ:

Խօսք առաւ նաեւ Առաջնորդ Սրբազան Հայրը, որ, նշելով Ա.Մ.Ն.-ի եւ Լիբանանի դեսպանատան միջեւ գործակցութեան սերտ կապերը, վստահեցուց, որ հայ համայնքը պիտի շարունակէ զօրավիգ կանգնիլ դեսպանատան ծրագիրներուն ու աշխատանքներուն:

Ապա, Վեհափառ Հայրապետը այցելեց Հայաստանի դեսպանատուն եւ ընդունուեցաւ դեսպան Կարէն Գրիգորեանի կողմէ, շրջապատուած դեսպանատան անձնակազմի անդամներով:



Դեսպան Գրիգորեան, ողջունելով Վեհափառ Հայրապետին այցելութիւնը, մաղթեց, որ օրհնաբեր կ'ըլլայ այդ՝ մանաւանդ այս օրերուն, երբ մեր ազգը, ու յատկապէս Հայաստանը, կը դիմագրաւեն լուրջ դժուարութիւններ: Դեսպանը իր վստահութիւնը յայտնեց, որ Նորին Սրբութիւնը իր այցելութիւններու ընթացքին միշտ կ'անդրադառնայ Հայրենիքին դիմագրաւած մարտահրաւէրներուն եւ իր կարելին ի գործ կը դնէ մեր տազնապներու լուծման ճամբաներ ու կարելիութիւններ որոնելու համար:

Նորին Ս. Օծութիւնը իր ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի հայկական հողի վրայ եւ ընդգծեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կատարած աշխատանքները՝ ի խնդիր Հայաստանի անկախութեան հզօրացման, անվտանգութեան ու հողային ամբողջականութեան պահպանման:

Անդրադառնալով ներկայ կացութեան՝ Արամ Ա. Կաթողիկոս յայտնեց, որ Հայաստանը շրջապատուած է լուրջ տազնապներով. Հայաստան-Սփիւռք յարաբերութիւնները փաստօրէն փայլուն ու յուսալից չեն, իսկ ներկայ ճակատագրական ժամանակներուն աւելի քան երբեք հրամայական է մեր ոյժերուն համախմբումը՝ ազգին ու հայրենիքին ընդհանրական շահերուն շուրջ:

Հանդիպման աւարտին յուշանուէրներու փոխանակում տեղի ունեցաւ, որմէ ետք, ի պատիւ Վեհափառ Հայրապետին, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն՝ դեսպանատան պարտէզին մէջ:

ՎԵՀԱՓԱՌԻ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ՆԱԽԱՐԱՐԻՆ

Երեքշաբթի, 23 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս հանդիպում մը ունեցաւ Արաբական Միացեալ Էմիրութեանց Արտաքին Գործոց Նախարար՝ Շէյխ Ապտալլահ Պըն Զայէտ Ալ-Նահեանի հետ: Հանդիպումը կայացաւ նախարարին բնակարանին մէջ, իր կողքին ունենալով պետական նախարարուհի՝ Նուրա Պընթ Մուհամմէտ Ալ-Քաապի:



Մտերմիկ մթնոլորտի մէջ տեղի ունեցած հանդիպումը առիթ մը եղաւ ընդհանուր ակնարկ մը նետելու Միջին Արեւելքը յուզող հարցերուն, կրօններու ու մշակոյթներու երկխօսութեան, Հայ ժողովուրդին ու Հայաստանին դիմագրաւած մարտահրաւէրներուն եւ մասնաւորաբար, Լիբանանի այժմու կացութեան վրայ: Յիշեալ հարցերու գծով, թէ՛ Վեհափառ Հայրապետը եւ թէ՛ նախարարը իրենց տեսակէտները, մտահոգութիւններն ու պատկերացումները փոխանակեցին՝ շեշտելով փոխադարձ հասկացողութեան անհրաժեշտութիւնը:

Հանդիպումը նաեւ առիթ հանդիսացաւ անդրադառնալու Արաբական Միացեալ Էմիրութեանց գլխաւոր քաղաքներուն՝ Ապու Տապիի, Տուպայի ու Շարժայի մէջ կայք հաստատած Հայ համայնքներուն:

Նորին Սրբութիւնը իր ջերմ գնահատանքն ու երախտագիտութիւնը յայտնեց նախարարին հանգուցեալ հօր՝ Նախագահ Զայէտ Պըն Սուլթան Ալ-Նահեանին, որուն հետ Վեհափառ Հայրապետը 1998-ին հանդիպում մը ունեցած

էր, եւ որուն ընթացքին, նախագահը ընդառաջելով Նորին Ս. Օծութեան փափաքին, եկեղեցաշինութեան համար յատուկ հողաշերտ մը յատկացուցած էր: Վեհափառ Հայրապետը նաեւ յիշեց 2014 թուականին նախարարին եղբօր եւ Ա.Մ.Է. ներկայ նախագահին՝ Մուհամմէտ Պըն Զայէտ Ալ-Նահեանին հետ հանդիպումը, որուն ընթացքին Արամ Ա. Կաթողիկոս ուրախութեամբ փոխանցած էր Ապու Տապիի մէջ անոր հօր նուիրած հողին վրայ եկեղեցւոյ, դպրոցի ու Ազգ. Առաջնորդարանի շինութեան իրականացման մասին: Հանդիպումին Վեհափառ Հայրապետը նշեց, որ էմիրութիւններու մէջ կայք հաստատած մեր ժողովուրդի զաւակները իրենց դրական ներդրումը կը բերեն երկրի բարգաւաճման:

Արտաքին Գործոց Նախարարը, իր կարգին, ողջունելով Վեհափառ Հայրապետին անցեալի ու ներկայի այցելութիւնները, ըսաւ, որ հայերը ո՛չ միայն հաւատարիմ են Ա.Մ.Է.-ի սկզբունքներուն եւ իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն անոր տնտեսութեան զարգացման, այլ նաեւ իրենց կրօնական ու մշակութային ինքնութեամբ առաւել կը հարստացնեն այս երկրին բազմամշակոյթ, բազմակրօն ու բազմացեղ ընկերութիւնը:

Յիշեալ հանդիպումին Նորին Ս. Օծութեան կողքին ներկայ էին Մեսրոպ Սրբազան Հայրը, Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէ-րէճեանն ու Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեանը:

ՃԱՇԿԵՐՈՅԹ՝ Ի ՊԱՏԻԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

Հինգշաբթի, 25 Յունուար 2024-ին, Ա.Մ.Է.-ի մօտ Լիբանանի դեսպան՝ Տուատ Շհապ Տանտանի եւ Լիբանանեան համայնքի գործատէրերու խորհուրդի միացեալ կազմակերպութեամբ, ի պատիւ Արամ Ա. Կաթողիկոսին տրուած ճաշկերոյթին ներկայ էին շուրջ 150 անձեր:

Իր բարի գալստեան խօսքին մէջ դեսպան Տանտան Վեհափառ Հայրապետը նկատեց այն անձնաւորութիւնը, որ Լիբանանի դատին, վերածաղկումին ու վերականգնումին ամէնէն ազդու ձայներէն մէկն է միջազգային շրջանակներէն ներս, ինչպէս որ Լիբանանահայութիւնը՝ Լիբանանի ծաղկման ամէնէն կարեւոր ազդակներէն մէկը:

Իր խօսքին մէջ Նորին Սրբութիւնը լայնօրէն անդրադարձաւ Լիբանանի իւրայատկութիւններուն եւ դիմագրաւած տազնապներուն: Խօսելով Լիբանանի առանձնայատկութիւններուն մասին, Նորին Ս. Օծութիւնը շեշտեց երկրի համայնքային դրութիւնը, քրիստոնեայ-իսլամ գոյութենական երկխօսութիւնը, Լիբանանի կամուրջի դերը Արեւելքի ու Արեւմուտքի միջեւ, ինչպէս նաեւ անոր բնական-տնտեսական լայն կարելիութիւնները, որոնք Լիբանանին



տուած են իւրայատուկ նկարագիր ու դերակատարութիւն՝ թէ՛ արաբական աշխարհէն եւ թէ՛ միջազգային համայնքէն ներս: Ան հակիրճ կերպով անդրադառնալէ ետք յիշեալ կէտերուն՝ խօսեցաւ Լիբանանը շրջապատող տագնապներուն ու մարտահրաւէրներուն մասին: Ան ըսաւ, որ ուրիշին ներկայութիւնը երբեմն դրական, սակայն յաճախ բացասական հետեւանքներ ունեցած է Լիբանանի մէջ: Այս գծով, լիբանանցին յատուկ զգուշաւորութիւն ցոյց պէտք է տայ, որպէսզի իր երկիրը ուրիշներուն մրցակցութեան ու հակադրութեան դաշտ չդառնայ: Նորին Սրբութիւնը յիշեց նաեւ օրէնքի բացակայութիւնը եւ թափանցիկութեան ու հաշուետուութեան պակասը: Այս երեւոյթները իրենց քանդիչ հետեւանքները ունեցան Լիբանանէն ներս, յատկապէս վերջին շրջանին տեղի ունեցած դրամատուներու եւ ընկերա-տնտեսական տագնապը:

Իր եզրափակիչ խօսքին մէջ Վեհափառ Հայրապետը ըսաւ, որ Լիբանանը ինքզինք վերականգնելու կարողութիւնը ունի: Հետեւաբար, անհրաժեշտ է, որ շրջանային ու միջազգային ուժերը գործնապէս զօրավիգ կանգնին Լիբանանին, որպէսզի ան կարենայ վերականգնել իր եզակի դերը:

Ի պատիւ Վեհափառ Հայրապետին տրուած ճաշկերոյթին, ներկայ էին Հայաստանի դեսպանը, Տուպայի մէջ Լիբանանի հիւպատոսը, ինչպէս նաեւ հայ ու լիբանանեան համայնքները ներկայացնող անձնաւորութիւններ ու անհատներ:

ՍԻՐՈՅ ՍԵՂԱՆ՝ Ի ՊԱՏԻ ԿՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ

Ուրբաթ, 26 Յունուար 2024-ին, Արաբական Միացեալ Էմիրութեանց համերաշխութեան եւ կրթութեան նախարար՝ Շէյխ Նահեան Պըն Մուպարաբ Ալ-Նահեան ճաշկերոյթ մը սարքեց ի պատիւ Արամ Ա. Կաթողիկոսին: Ճաշկերոյթին ներկայ էին Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեան, Թեմի Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան, Ազգ. Վարչութեան Ատենապետ՝ Ժիրայր Հապիպեան, Ազգ. Իշխանութեան ներկայացուցիչներ, Ազգ. Բարերար՝ Արա Խանոյեան, Թեմի Բարերար՝ Վահէ Թուխմանեան, Կաթողիկոսարանի Տեղեկատուական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանն ու Միջին Արեւելքին միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը: Յատկանշական է յիշել, որ ճաշկերոյթին միացան նաեւ Իրաքի նախկին Նախագահ՝ Պարհամ Սալեհ եւ զանազան երկիրներու դեսպաններ ու դիւանագիտական ներկայացուցիչներ:



Նախարար Նահեան ջերմ սիրով ընդունեց Վեհափառ Հայրապետին այցելութիւնը: Նշենք, որ նախարարը ծանօթ է Վեհափառ Հայրապետին 2016 թուականէն ի վեր: Նորին Սրբութիւնն ու նախարարը միասնաբար բացումը կատարած են Ազգ. Առաջնորդարանին եւ «Խանոյեան» միօրեայ վարժարանին:

Ճաշկերոյթէն ետք, Նորին Ս. Օծովիւնը յիշեց իր եւ նախարարին միջեւ գոյութիւն ունեցող բարեկամութիւնը, անոր զօրակցութիւնը Առաջնորդ Սըր-

բազան Հօր եւ Էմիրութեանց Հայ համայնքին: Ան նաեւ յիշեց իր եւ նախարարին մասնակցութիւնը Աթէնքի մէջ տեղի ունեցած համակեցութեան միջազգային համագումարին, ուր Վեհափառ Հայրապետը իր խօսքին մէջ գնահատած էր նախարար Նահեանի աշխատանքը Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ: Յիշելով այս դէպքը, Վեհափառ Հայրապետը յայտնեց, որ Շէյխ Նահեան նոյն նուիրումով կը շարունակէ իր առաքելութիւնը: Նորին Սրբութիւնը նաեւ շեշտեց, որ Հայ համայնքը Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ միշտ զօրավիգ կանգնած է կրօններու ու մշակոյթներու համակեցութեան:

Աւարտին, Վեհափառ Հայրապետը յուշանուէր մը յանձնեց նախարարին:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ Կ՝ԱՅՅԵԼԷ ԱԶԳ. «ՕՀԱՆՆԷՍԵԱՆ» ՄԻՕՐԵԱՅ ՎԱՐԺԱՐԱՆ

Շաբաթ, 27 Յունուար 2024-ին, Նորին Սրբութիւնը այցելեց Շարժայի Ազգ. «Օհաննէսեան» միօրեայ վարժարան, ուր դիմաւորուեցաւ տնօրէնութեան, հոգաբարձութեան, ուսուցչական կազմին եւ վարժարանի փոքրիկ աշակերտներուն կողմէ: Վեհափառ Հօր կողքին կը գտնուէին Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեան, միաբան հայրեր եւ Թեմի ազգայիններ, ժողովականներ եւ զանազան կառույցներու ներկայացուցիչներ:

Վարժարանի մուտքին, հացի եւ աղի օրհնութենէն ետք, ան ուղղուեցաւ վարժարանի «Փիէռ Քէօսէեան» սրահ, ուր աշակերտները երգերով ու դրօշներով բարի գալուստ մաղթեցին Նորին Սրբութեան: Վարժարանի տնօրէնու-



հիին բարի գալստեան խօսքի արտասանութենէն ետք, տարբեր դասարաններու աշակերտներ հոգեւոր ու ազգային երգեր եւ թատերգական կտոր մը ներկայացուցին:

Սրտի խօսք արտասանեց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան: Ան ուրախութեամբ նշեց, որ սոյն վարժարանին տասնամեակ մը առաջ կատարած իր անդրանիկ այցելութենէն մինչեւ օրս, շնորհիւ գաղութին ժրջան աշխատանքին, ակնառու յառաջընթացք մը կը տեսնէ եւ ի դէպ, աշակերտութեան կոկիկ ներկայացումը ապացոյց մըն է Շարժայի Ազգ. միօրեայ վարժարանին մարդու զարգացման անսակարկ աշխատանքին: Սրբազան Հայրը խօսքի աւարտին բեմ հրաւիրեց Վեհափառ Հայրապետը՝ Հայրապետական պատգամով եզրափակելու յայտագիրը:

Նորին Սրբութիւնը, աշակերտութեան դիմելով, ըսաւ. «Այսօր դուք ձեր ներկայացուցած ոգեշունչ երգերով ու արտասանութիւններով կարելոր պատգամ մը փոխանցեցիք մեզի: Մեր հոգեւոր արժէքներուն ու գանձերուն, Հայ լեզուին ու մշակոյթին պահպանութիւնը մեր բոլորին պարտականութիւնն է, մասնաւորաբար զանազան մարտահրաւէրներով լեցուն ներկայ աշխարհին մէջ»: Ապա, ուշադրութեան առարկան դարձուց ուսուցչական կազմին նուիրեալ աշխատանքը եւ գնահատեց անոնց կամաւոր ծառայութիւնը: Վեհափառ Հայրապետը նաեւ գնահատեց ծնողները՝ ընդգծելով, որ բոլոր գործնական դժուար պայմանները գիտեն շրջանցել, որովհետեւ կը գիտակցին հայկական վարժարանի կրթութեան եւ դաստիարակութեան կարեւորութեան: Վերջապէս, Նորին Ս. Օծութիւնը անդրադարձաւ Առաջնորդ Սրբազան Հօր հետեւողական աշխատանքին, նկատել տալով, որ Առաջնորդին տասնամեայ գործունէութեան ընթացքին ան յատուկ ուշադրութեան առարկայ դարձուցած է հայ դպրոցի ծաղկումը՝ թէ՛ Ապու Տապիրի եւ թէ՛ Շարժայի միօրեայ վարժարաններու գործունէութեան մօտէն հետեւելով եւ մեծապէս նպաստելով անոնց առաքելութեան: Նորին Սրբութիւնը իր խօսքը եզրափակեց՝ նշելով, որ այսօրուան ներկայացումը մեր բոլոր գաղութներուն յիշեցում մըն է, որ Հայ դպրոցին մէջ է, որ հայ մարդու զարգացման պատրաստուի: Հոսկ, ներկաները միասնաբար երգեցին «Կիլիկիա» օրհներգը:

Աւարտին, Նորին Սրբութիւնը, Առաջնորդ Սրբազան Հօր, տնօրէնուհիին եւ իրեն ընկերացող պատուիրակութեան հետ շրջեցաւ դասարանները եւ մօտէն իրազեկ դարձաւ այնտեղ տարուող աշխատանքներուն:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՆԱԽԱԳԱՀԷ ՇԱՐՃԱՅԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՈՅ Ս. ՊԱՏԱՐԱԳԻՆ

Կիրակի, 28 Յունուար 2024-ին, Շարժայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, նախագահութեամբ Արամ Ա. Կաթողիկոսին, մատուցուեցաւ Ս. Պա-

տարագ: Ս. Էւ Անմահ Պատարագը մատուցեց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան: Ս. Պատարագին Վեհափառ Հայրապետին կողքին ներկայ էին Քուէյթի եւ Ծոցի երկիրներու Հայոց Թեմի առաջին Առաջնորդ՝ Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեան, Քուէյթի եւ Շրջակայից Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ՝ Գերպ. Տ. Պետրոս Ծ. Վրդ. Մանուէլեան, Ապու Տապիի Սրբոց Նահատակաց եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Պալըքճեան, Տուպայի եւ հիւս. էմիրութեանց Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Արամ Ա. Քհնյ. Տէյիրմէնճեան, Կաթողիկոսարանի Տեղեկատուական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեանն ու Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բաժանմունքի վարիչ՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեանը: Ս. Պատարագին ներկայ էին նաեւ Ա.Մ.Է.ի մօտ Հայաստանի դեսպան՝ Կարէն Գրիգորեան, Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան անդամները:



Ս. Պատարագի ընթացքին, նախքան Հայրապետական պատգամը, Առաջնորդ Սրբազան Հայրը խօսք առնելով՝ յիշեց 25 տարիներ առաջ Նորին Սրբութեան ձեռամբ այս եկեղեցւոյ օծումը: Ան իր խօսքին մէջ նաեւ վստահեցուց, որ Նորին Ս. Օծութեան հովուապետական օրհնաբեր այցելութիւնը Թեմէն ներս առիթ պիտի ընծայէ վերանորոգ հաւատքով ու առաւել նուիրուածութեամբ լծուելու մեր ազգին ծառայութեան: Ապա, Մեսրոպ Սրբազան Հայրը որդիական երախտագիտութեամբ ողջունեց Վեհափառ Հայրապետը՝ մաղթելով երկա՛ր եւ արդիւնաբեր գահակալութիւն, եղբայրական ջերմ զգացումներով ողջունեց Օշական Սրբազան Հայրը, եւ վերջապէս՝ եկեղեցւոյ մէջ ծառայողները, Թեմի եկեղեցականաց դասն ու Վեհափառ Հայրապետին ընկերացող շքախումբը:



Նորին Սրբութիւնը առաջին հերթին ողջունեց Առաջնորդ Սրբազան Հայրը՝ վեր առնելով անոր առաջնորդական ծառայութեան ընթացքին Թեմին առաւել ծաղկումն ու վերակազմակերպումը, ինչպէս նաեւ՝ այլ համայնքներու եւ պետական բարձրաստիճան պատասխանատուներուն հետ սերտ յարաբերութիւններու մշակումը: Նորին Ս. Օծութիւնը նաեւ ողջունեց Ազգ. Իշխանութիւնը, որ սերտօրէն գործակցելով Առաջնորդ Սրբազան Հօր հետ, լծուած է Թեմին եկեղեցական եւ ազգային կենսունակութիւն տալու աշխատանքին:

Վեհափառ Հայրապետը իր պատգամին բնաբանը ընտրած էր Քրիստոսի «Եթէ մէկը ուզէ ինծի հետեւիլ՝ թող ուրանայ իր անձը, առնէ իր խաչը եւ ետեւէս գայ» (Մտ 16.24) խօսքը, որ երեք կէտերու մէջ ամփոփեց: Առաջին կէտին մէջ ան ըսաւ, որ քրիստոնէութիւնը ուսուցումներու ու աւանդութիւններու ամբողջութիւն մը չէ, այլ Քրիստոսակեդրոն կեանք է եւ Քրիստոս է, որ Իր ներկայութեամբ մեր կեանքին իմաստ կու տայ՝ մեր առջեւ բանալով ճշմարիտ ճամբան եւ ցոյց տալով իրաւ ճշմարտութիւնը: Ան հետեւցուց, որ քրիստոնէայ ըլլալ կը նշանակէ ապրիլ Քրիստոսը մեր կեանքին մէջ:

Երկրորդ կէտին մէջ շեշտեց, որ Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան մասնակից դառնալ եւ ընդգծեց, որ եկեղեցին կը դառնայ սոսկ շէնք, երբ չի շնչաւորուիր մեր մասնակցութեամբ, որովհետեւ եկեղեցւոյ կեանքին մեր մասնակցութեամբ մեր համայնական կեանքը կը վերածուի եկեղեցւոյ: Հետեւաբար, ան թելադրեց մեր քրիստոնէական կեանքը ապրիլ Քրիստոսի խորհրդական մարմինին՝ եկեղեցւոյ կեանքին ու առաքելութեան բերելով մեր մասնակցութիւնը: «Այս եկեղեցին դուք շինեցիք 25 տարիներ առաջ: Այս եկեղեցին Աստուծոյ տունն է, միաժամանակ՝ մեր ազգին տունը: Քրիստոս միշտ կը հրաւիրէ մեր զաւակները, որպէսզի իրենց մասնակցութեամբ իրենց քրիստոնէական կեանքին ինքնութիւն ու նպատակ կարենան տալ», յայտնեց ան:

Նորին Սրբութիւնը իր պատգամի երրորդ կէտը յատկացուց ծառայութեան վրայ: Ան ընդգծեց, որ Քրիստոսի հետեւիլ կը նշանակէ ծառայել մեր նմանին, ազգին ու Հայրենիքին, ինչպէս Քրիստոս ինք կ'ըսէ. «Մարդու Որդին, ինքն ալ, չեկաւ ուրիշներու կողմէ սպասարկութիւն ընդունելու, այլ սպասաւորելու» (Մտ 20.28): Ուստի, ծառայութիւնը ինքնընծայում է: Քրիստոս խաչ բարձրանալով՝ ցոյց տուաւ ծառայութեան ճշմարիտ իմաստը: Արդ, քրիստոնեայ ըլլալ կը նշանակէ ծառայել բարի սամարացիին օրինակով, այսինքն օգնել աղքատին, կարիքաւորին, զրկեալին ու հալածուածին: Այս յանձնառութեամբ մեր եկեղեցին դարեր շարունակ ծառայեց մեր ազգին ու Հայրենիքին: Այսօր եւս, մեր եկեղեցին վերակոչուած է վերաշէշտելու իր ծառայական կոչումը, շէշտեց Վեհափառ Հայրապետը:

Ս. Պատարագէն ետք, Նորին Սրբութեան նախագահութեամբ, ներկաները ուղղուեցան եկեղեցու շրջափակին մէջ զետեղուած Հայոց Այբուբէնը բովանդակող յուշակոթողին մօտ, ուր ան կատարեց յուշակոթողին օրհնութիւնը: Ապա, Ազգ. «Օհաննէսեան» միօրեայ վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ աջահամբոյր:

**ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ՝ ԱՊՈՒ ՏԱՊԻԻ, ՏՈՒՊԱՅԻ
ԵՒ ՇԱՐԺԱՅԻ ԹԵՄԱԿԱՆ ԿԱՌՈՅՑՆԵՐՈՒՆ ՀԵՏ**

Առաջին հանդիպումը կայացաւ Ապու Տապիի մէջ, ներկայութեամբ Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր, Հոգեւոր Դասուն, Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետին եւ անդամներուն, Ազգ. Վարչութեան փոխ ատենապետին եւ անդամներուն, Ազգ. «Արա Խանոյեան» միօրեայ վարժարանի հոգաբարձութեան, տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, Սրբոց Նահատակաց



եկեղեցւոյ թաղականութեան եւ դպրաց դասին ու երիտասարդաց յանձնախումբին:

Բացման խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազան Հայրը: Ան նախ ողջունեց Նորին Սրբութեան ներկայութիւնը Թեմէն ներս եւ ապա շեշտեց, որ Թեմը իր կարելին կը կատարէ թեմական կառոյցներու վերակազմակերպման ու աշխուժացման գծով: Սրբազան Հօր խօսքին յաջորդեց Ազգ. Վարչութեան փոխ ատենապետ՝ Արտօ Համբարձումեանի բարի գալստեան խօսքը: Ան իր կարգին, ներկայացուց ներկայ մարմինները: Ան յայտնեց, որ կառոյցները իրենց առաւելագոյնը կը կատարեն, որպէսզի Թեմը վերածաղկուծի իր ընթացքը շարունակէ:



Վեհափառ Հայրապետը իր հայրական խօսքին մէջ ջերմօրէն գնահատեց Առաջնորդ Սրբազան Հայրը, որ անցնող տասը տարիներու ընթացքին իր ծառայական գործունէութեամբ նոր աւիշ ու կենսունակութիւն տուաւ Թեմին՝ սերտ յարաբերութիւններ մշակելով թէ՛ այլ համայնքներու եւ թէ՛ պետական կառոյցներու հետ եւ մեր ժողովուրդի զաւակները համախմբելով եկեղեցւոյ շուրջ: Ապա, Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնելէ ետք թեմական կառոյցներուն՝ կարեւորութեամբ ընդգծեց, ներկայ աշխարհին պարզած պայմաններուն լոյսին տակ, թեմական կառոյցները վերանորոգելու ու վերակազմակերպելու անհրաժեշտութիւնը: Ան ըսաւ, որ մեր շուրջ պայմանները մնայուն փոփոխութեան մէջ են եւ նոր մտահոգութիւններու ու մարտահրաւէրներու դիմաց կը գտնուինք: Արդ, շենք կրնար անտարբեր մնալ եւ նոյն ձեւով շարունակել մեր համայնական կեանքը: Մեր կառոյցներու վերարժեւորումը եւ անոնց վերակազմակերպումը, նկատի ունենալով մեր շրջապատը, այլեւս դարձած է անյետաձգելի անհրաժեշտութիւն: Նորին Ս. Օծութիւնը այս ծիրէն

ներս յատուկ կարեւորութիւն տուաւ երիտասարդութեան: Ան ըսաւ, որ պէտք է երիտասարդութիւնը եկեղեցւոյ մօտենայ, միաժամանակ՝ եկեղեցին, բարեկարգութեան ճամբով, երիտասարդութեան պէտք է մօտենայ: Այս ուղղութեամբ, ան շարք մը մատնանշումներ կատարեց՝ առաջարկելով գործնական միջոցներ: Իր խօսքէն ետք, Վեհափառ Հայրապետը առիթ տուաւ, որ ներկաները իրենց մտահոգութիւնները փոխանցեն եւ հարցումները ուղղեն յիշեալ կէտերուն շուրջ:

Քանի մը օր ետք, Արամ Ա. Կաթողիկոս նմանօրինակ հանդիպում մը ունեցաւ նաեւ Շարժայի մէջ, մասնակցութեամբ Շարժայի, Տուպայի եւ հիւս. էմիրութեանց թեմական կառույցներուն: Հաւաքին ներկայ էին աւելի քան 70 անձեր:

Դարձեալ բացման խօսքը արտասանեց Թեմի Առաջնորդ Սրբազան Հայրը՝ պարզելով գաղութին իւրայատկութիւններն ու անոնցմէ բխող մարտահրաւէրներն ու առաջադրութիւնները: Խօսք առաւ Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան: Ան եւս բաժնելով Առաջնորդ Սրբազան Հօր տեսակէտները, իր կարգին, շեշտեց եկեղեցւոյ կարեւոր դերը գաղութի վերակազմակերպման աշխատանքին մէջ:

Նորին Ա. Օծութիւնը ողջունելով ներկաները՝ իր գնահատանքը յայտնեց անոնց նուիրումին՝ ըսելով, որ հակառակ գործնական դժուարութիւններուն՝ անոնք իրենց աշխոյժ ու գործօն մասնակցութիւնը կը բերեն թեմական գործունէութեան: Ապա, Վեհափառ Հայրապետը շարք մը մատնանշումներ կատարեց՝ շեշտելով թեմական կառույցներու վերանորոգումը եւ եկեղեցւոյ բարեկարգութեան կարեւորութիւնը: Ան յիշեցուց, թէ եկեղեցւոյ բարեկարգութեան գծով Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգ. Կեդրոնական վարչութեան Կրօնական ժողովը սկսած է որոշ գործնական քայլեր առնել ու հետեւողական աշխատանք կատարել՝ երիտասարդութեան մասնակցութիւնը մեր թեմերու կեանքին մէջ ապահովելու եւ շարք մը այլ հարցեր քննելու համար: Վեհափառ Հայրապետը յատուկ կերպով իր գնահատանքը յայտնեց կրթական կեանքէն ներս կատարուած իրագործումներուն, երբ շուրջ 300 աշակերտներ մասնակից կը դառնան Ազգ. «Օհաննէսեան» միօրեայ վարժարանի ծրագիրներուն: Ան նաեւ շեշտեց Կիրակնօրեայ վարժարանին կարեւոր դերը՝ հոգեմտաւոր կազմաւորման աշխատանքներուն մէջ:

Վեհափառ Հայրապետին խօսքէն ետք, ներկաները գաղութի վերանորոգման ու վերակազմակերպման ուղղութեամբ իրենց հարցումները ուղղեցին եւ մտահոգութիւններն ու առաջարկները պարզեցին Նորին Սրբութեան:

ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՀԻՒՊԱՏՈՍԱՐԱՆ

Երկուշաբթի, 29 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս այցելեց Տուպայի լիբանանեան հիւպատոսարան, ուր դիմաւորուեցաւ հիւպատոս՝ Ասսաֆ Տումաթի եւ հիւպատոսարանի անձնակազմին կողմէ: Հանդիպման ընթացքին Նորին Սրբութեան կողքին ներկայ էին Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ շրջակային Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան, Թեմին մէջ ծառայող հոգեւորականներ, Ս. Աթոռիս Ազգ. Կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեան, Թեմի Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան եւ անդամներ, Ազգ. վարչութեան ատենապետ՝ Ժիրայր Հապիպեան եւ վարչութեան անդամներ: Իսկ հիւպատոսին կողքին ներկայ էին իր անմիջական օգնականները:



Հիւպատոս Տումիթ ողջունեց Վեհափառ Հայրապետին այցելութիւնը՝ գայն նկատելով Լիբանանի զօրակցութեան շօշափելի մէկ արտայայտութիւնը. այցելութիւն մը, որ մեծապէս պիտի նպաստէ Էմիրութիւններու ու Լիբանանի յարաբերութեան առաւել զարգացման: Ան յիշեց, որ շուրջ 500,000 լիբանանցիներ կայք հաստատած են Արաբական Միացեալ Էմիրութեանց մէջ եւ իրենց գործօն մասնակցութիւնը կը բերեն երկրի զարգացման ու կը նպաստեն Լիբանանի ընկերա-տնտեսական կարիքներուն:

Նորին Սրբութիւնը իր ուրախութիւնը յայտնեց, որ կը գտնուի Լիբանանի հիւպատոսարանին մէջ, որ լծուած է պայմաններու բերումով Տուպայ հաստատուած լիբանանցիներու կարիքներուն օգտակար դառնալու աշխատան-

քին: Ան բարձր գնահատեց հիւպատոսարանի գործունէութիւնը: Ապա, տեղի ունեցաւ հիւրասիրութիւն: Հանդիպման աւարտին Նորին Ս. Օծութիւնը մօտէն տեղեակ դարձաւ հիւպատոսարանի զանազան բաժանմունքներու գործունէութեան:

Նոյն օրը, Վեհափառ Հայրապետը իր իջեւանած պանդոկին մէջ յաջորդաբար ընդունեց ազգային բարերարներ եւ թեմական կառոյցներու ատենապետներ:

ԴԱՍԱԽՕՍՈՒԹԻՒՆ՝ «ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅՆԱՅՈՒՄՐ ԵՒ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՐ» ՆԻՒԹԻՆ ՇՈՒՐՋ

Երեքշաբթի, 30 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս Տուպայի մէջ անգլերէն լեզուով դասախօսութիւն մը տուաւ «Համաշխարհայնացումը եւ Հայ երիտասարդը» (The Globalization and the Armenian Youth) նիւթին շուրջ:



Բացման խօսքը կատարեց Ռոզալին Թաշճեան: Իր խօսքին մէջ ան ըսաւ, որ Վեհափառ Հայրապետին առաջարկած նիւթը այժմէական է, որովհետեւ ներկայ աշխարհը բոլորովին տարբեր իրականութիւններով ու տագնապներով կը ներկայանայ Հայ երիտասարդին: Հետեւաբար, հարց դրաւ, թէ ի՞նչ վերաբերում պէտք է ունենայ Հայ երիտասարդը զինք շրջապատող պայմաններուն ու խնդիրներուն նկատմամբ:

Վեհափառ Հայրապետը իր դասախօսութիւնը սկսաւ հաստատելով, թէ վերջին տասնամեակներուն մարդկային պատմութեան մեծագոյն յեղափոխութիւնը համաշխարհայնացումն է: Ճիշդ է, որ համաշխարհայնացումը նոր երեւոյթ չէ, սակայն գիտութեան ու ճարտարագիտութեան աննախընթաց զարգացումը, յատկապէս տեղեկատուական-հաղորդակցական մարզին մէջ, նոր թափ ու ընթացք տուաւ համաշխարհայնացումին: Ապա, Նորին Ս. Օծութիւնը 15 կէտերով ներկայացուց համաշխարհայնացումի յատկանշական երեւները,

ինչպէս նաեւ անոր դրական ու բացասական երեւոյթներն ու հետեւանքները: Ան ըսաւ, որ համաշխարհայնացումը սոսկ տնտեսական մարզէն ներս յայտնուած երեւոյթ մը չէ, այլ էապէս մշակոյթ է, որ կը ներառէ ընկերութեան բոլոր մարզերը եւ ունի իր արժեհամակարգը: Համաշխարհայնացումը հեռաւորները մօտեցուցած է ու միաժամանակ մօտաւորները հեռացուցած է՝ իր տեղեկատուութեամբ ու փոխ յարաբերութեամբ տիրապետուած մշակոյթով: Նորին Սրբութիւնը նաեւ անդրադարձաւ համաշխարհայնացման ստեղծած գերերկրաւոր (Cyber) աշխարհին, որուն մաս կը կազմենք բոլորս, պարտադրաբար: Վեհափառ Հայրապետը մատնանշեց այն բոլոր երեւոյթները, որոնք դրական են, բայց միաժամանակ կրնան բացասական հետեւանքներ ունենալ՝ յատկապէս մարդու ինքնահասկացողութեան ու ինքնութեան եւ բարոյական արժէքներու գծով:

Իր խօսքի երկրորդ բաժնին մէջ Նորին Ս. Օծութիւնը խօսեցաւ համաշխարհայնացումին նկատմամբ երիտասարդութեան մօտեցման մասին: Ան ըսաւ, որ ո՛չ կրնանք համաշխարհայնացումը անտեսել եւ ո՛չ ալ փոխել: Անոր ներկայութիւնը տիրական է մեր կեանքի բոլոր մարզերէն ներս ու բոլոր մակարդակներու վրայ: Սակայն, մեր վերաբերումը պէտք է ըլլայ քննական: Ճիշդ չէ համաշխարհայնացումին ներկայացուցած բոլոր երեւոյթները դիւրին ու անմիջական կերպով որդեգրել: Անհրաժեշտ է, որ Հայ երիտասարդը Հայ արժէքներով շաղախուած արժեչափերով մօտենայ համաշխարհայնացումին՝ ընտրելով այն ինչ որ դրական է Հայու ինքնութեան տեսանկիւնէն դիտուած: Այս հարցին մասին խօսելով՝ Վեհափառ Հայրապետը յիշեց շարք մը օրինակներ մեր գաղութներու կեանքէն առնուած:

Նորին Սրբութեան խօսքէն ետք երիտասարդները արծարծեցին շարք մը մտահոգութիւններ ու հարցեր: Արամ Ա. Կաթողիկոս անոնց տուաւ անհրաժեշտ բացատրութիւններ՝ յիշեցնելով, որ աւագ սերունդը համաշխարհայնացած ժամանակներուն մէջ ապրող երիտասարդներուն հետ պէտք է երկխօսութիւն ունենայ ու լսէ անոնց մտահոգութիւնները, որպէսզի կարելի ըլլայ միասնաբար որոնել այն ուղիներն ու միջոցները, որոնցմով կարելի կը դառնայ մեր երիտասարդութեան կեանքին մէջ Հայու ինքնահասկացողութիւնը ամուր եւ առողջ պահել:

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՅԹ՝
Ի ՊԱՏԻ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ

«ՏՈՒՊԱՅԻ ՄԷՋ ՆՈՐ ԵԿԵՂԵՅԻՈՅ ՇԻՆՈՒԹԵԱՄԲ
ԹԵՄԻ ՎԵՐԱԾԱՂԿՈՒՄԻ ՈՒ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԻ ԸՆԹԱՑՔԸ
ՆՈՐ ԹԱՓ ՊԻՏԻ ՍՏԱՆԱՅ»

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ

Այս հաստատումով Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս իր փակման խօսքին մէջ ողջունեց Տուպայի մէջ ի պատիւ իրեն կազմակերպուած ճաշկերոյթի մասնակիցները: Արդարեւ, շուրջ 400 անձեր մասնակցեցան ճաշկերոյթին, որ դարձաւ Արաբական Միացեալ Էմիրութեանց, Քաթարի եւ Շրջակայից Հայոց Թեմի վերածաղկումի շօշափելի արտայայտութիւններէն մէկը:

Ճաշկերոյթի ընթացքին յաջորդաբար խօսք առին Թեմի Ազգ. Վարչութեան անդամ՝ Քրիսթին Եփրեմեան-Թոսունեան, Ազգ. Երեսփոխանական ժողովի ատենապետ՝ Վարուժան Ներկիզեան, Ազգ. Վարչութեան ատենապետ՝ Ժիրայր Հապիպեան, Ս. Աթոռոյս Ազգ. Կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահսէրէճեան եւ Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Մեսրոպ Եպս. Սարգիսեան: Բոլոր խօսք արտասանողները անդրադարձան Նորին Սրբութեան առաջնորդութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համահայկական առաքելութեան, համահայկական մտածողութեան եւ համախմբում յառաջացնելու աշխատանքին, տակաւ ծաւալող ու վերակազմակերպող Թեմի աշխատանքներուն եւ Հովուապետական այցելութենէն ետք Թեմին դիմագրաւելիք մարտահրաւէրներուն, ինչպէս նաեւ՝ Շարժայի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 25 ամեակին:

Իր պատգամին մէջ, Վեհափառ Հայրապետը իր բարձր գնահատանքը յայտնեց Առաջնորդ Սրբազան Հօր, որ անցնող 10 տարիներու ընթացքին ծառայութեան լծուած է մեր գաղութները գործօն ներկայութիւն դարձնելու շրջանէն ներս, Թեմին եւ այլ համայնքներու ու պետական կառոյցներու հետ իր ունեցած հետեւողական յարաբերութեամբ եւ թեմական կառոյցները նոր ուժականութեամբ օժտելու իր ճիգով: Նորին Ս. Օծութիւնը գոհութեամբ հաստատեց, որ պետական պատասխանատուները իրենց յատուկ գնահատանքը յայտնած են շրջանէն ներս հաստատուած Հայ համայնքին նկատմամբ: Ապա, ան անդրադարձաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ 25 ամեակին: Ան նաեւ իր գնահատանքը յայտնեց բոլոր անոնց (ներկայ, բացակայ թէ ննջեցեալ, հոգեւորական թէ աշխարհական), որոնք կարեւոր ներդրում ունեցած են եկեղեցւոյ շինութեան եւ իրենց ծառայութիւնը մատուցած են մեր ժողովուրդի զաւակներուն: Վեհափառ Հայրապետը ողջունեց Տուպայի մէջ նոր եկեղեցի



ու երիտասարդներու նոր կառույց մը կառուցելու ծրագիրը, որ դարձած է անհրաժեշտութիւն, մանաւանդ վերջին տարիներուն, երբ պայմաններու բերումով քաղաքին մէջ Հայ համայնքի ներկայութիւնը նոր ծաւալ կը ստանայ, յատկապէս երիտասարդներու ներկայութեամբ: Նորին Արքեպիսկոպոս յատուկ կերպով յիշեց գաղութի կեանքէն ներս երիտասարդութիւնը ներառելու հրամայականը: Շարունակելով իր խօսքը՝ Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ անհրաժեշտ է ազդու միջոցներու դիմել, որպէսզի երիտասարդութիւնը ո՛չ թէ սոսկ հետեւողի դիրքին վրայ ըլլայ, այլ առաջնորդողի դերով մասնակից դառնայ մեր համայնքային կեանքին:

Իր պատգամին վերջին բաժնին մէջ Արամ Ա. Կաթողիկոս անդրադարձաւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան: Ան ըսաւ, որ «յաճախ կը շեշտեմ՝ մեր ազգը մէկ ամբողջութիւն է՝ մէկ անցեալով, ներկայով ու ապագայով եւ մէկ հայրենիքով: Հայաստանի հզօրացումը Սփիւռքի հզօրացումն է եւ փոխադարձաբար: Ասիկա Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար լողունգ չէ, այլ՝ մտածողութեան ու ծառայութեան ուղեցոյց: Այս յանձնառութեամբ լծուած ենք մեր թեմերու վերակազմակերպումի աշխատանքին»:

Իր պատգամի աւարտին, Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով Թեմի խնդրանքին, «Կիլիկեան Ասպետ» շքանշանով պարգևատրեց Արա Քէօսէեանը, որ երկար տարիներ թեմական ծառայութիւն ունեցած է եւ նիւթապէս օժանդակած Թեմի ծրագիրներուն: Իսկ «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգևատրեց Մուշեղ Պետրեանը, որ դարձեալ թեմական ծառայութիւն ունեցած է անցնող տարիներու ընթացքին:

Ճաշկերոյթին ներկայ էին Հայաստանի դեսպան՝ Կարէն Գրիգորեան եւ Լիբանանի գլխաւոր հիւպատոս՝ Ասսաֆ Տումաթ:



Յայտնենք, որ Վեհափառ Հայրապետը Տուպայէն մեկնելէ առաջ հանդիպումներ ունեցաւ Թեմի Երեսփոխանական ժողովի եւ Ազգ. Վարչութեան ատենապետներուն հետ եւ քննարկեց Թեմին յառաջիկայ ծրագիրները: Նոյն օրը, Վեհափառ Հայրապետը Ազգ. Կեդրոնական վարչութեան Քաղաքական ժողովի համա-ատենապետ՝ Գրիգոր Մահալաբեանի հետ վերադարձաւ Անթիլիաս: Իսկ յաջորդ օրը, Մեսրոպ Սրբազան Հայրը մեկնեցաւ Քաթար, նորին Ս. Օծութեան կողմէ յատուկ նամակ մը յանձնելու վարչապետ՝ Մուհամմէտ Պըն Ապտ Ալ-Ռահման Պըն Ճասէմ Ալ-Սանիին:



ՏՕՆԱԿԱՆ

Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ՏՕՆԸ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Շաբաթ, 6 Յունուար 2024-ին, Հայ Եկեղեցին նշեց Քրիստոսի Ս. Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօները: Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ս. Ծննդեան Պատարագը մատուցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսը: Վեհափառ Հայրապետին կողքին աւրն-թերակայ եպիսկոպոսներն էին՝ Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան եւ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան: Ս. Պատարագի երգեցողութիւնը կատարեց Կաթողիկոսարանի «Նարեկացի» մանկապատանեկան երգչախումբը, խմբավարութեամբ՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի: Հաւատացեալներու հոծ բազմութեան շարքին ներկայ էին նաեւ պաշտօնական անձնաւորութիւններ եւ զանազան միութիւններու ու կազմակերպութիւններու ներկայացուցիչներ:



Ս. Պատարագի ընթացքին, Շահան Արք. Միւռոնաթափ Աղանին Ս. Երրորդութեան խորանէն «Լոյս ի լուսոյ» հոգեթով շարականին երգեցողութեամբ բերաւ Ս. Խորան, եւ ձեռամբ Նորին Ս. Օծութեան կատարուեցաւ Քրիստոսի մկրտութիւնը խորհրդանշող ջրօրհնէքի արարողութիւնը: Ապա, Նորին Ս. Օծութիւն, ներկայ թէ՛ առցանց Ս. Պատարագին մասնակից մեր ժողովուրդի զաւակներուն փոխանցեց Ս. Ծննդեան Հայրապետական պատգամը:



Ան պատգամի բնաբան ընտրած էր Յայտնութեան գիրքին հաստատումը, թէ՛ «ահաւասիկ ամէն ինչ նոր կը դարձնեմ» (Յյտ 21.5): Այս բառերուն մէջ կարելի է խտացնել Բեթղեհէմի մէջ տեղի ունեցած Աստուածայայտնութեան դէպքը՝ Յիսուս Մանուկի ծնունդով, ըսաւ Նորին Սրբութիւնը: Արդարեւ, պատմութեան մէկ վճռական հանգրուանին, Աստուած աշխարհ կու գար իրենց Ստեղծիչէն հեռացած տիեզերքն ու մարդը վերստեղծելու՝ մարդուն մէջ վերականգնելով Աստուծոյ պատկերն ու տիեզերքը վերստին օժտելով երկնային բարիքներով: Հետեւաբար, Աստուծոյ ծնունդը Բեթղեհէմի մէջ վերածնունդն էր նոր տիեզերքին ու նոր մարդուն, ինչպէս Յայտնութեան գիրքի հեղինակ Յովհաննէս առաքեալը կը բնորոշէ՝ «նոր երկնքի ու երկրի» ծնունդը, շեշտեց Վհնափառ Հայրապետը եւ անդրադառնալով մարդու ստեղծագործութեան՝ ըսաւ, որ Աստուած մարդը ստեղծած է, որպէսզի իր ստեղծագործութեան հոգատարը ու պաշտպանը դառնայ: Այս առաքելութիւնը կատարելու համար, Աստուած մարդը օժտած էր ազատութեամբ ու իշխանութեամբ: Սակայն

մարդը իրեն տրուած ազատութիւնը շահագործած էր ու հեռացած՝ Աստուծո՛մէ: Աստուած իր Միածին Որդւոյն ճամբով Բեթղեհէմ կ'իջնէր իրմէ հեռացած մարդը մօտեցնելու իրեն. ահա թէ ինչո՛ւ Քրիստոս նկատուած է երկրորդ Ադամ: Առաջին Ադամը մեղք, չարիք ու մահ բերած էր աշխարհ, երկրորդ Ադամը փրկութիւն ու վերանորոգ կեանք կը բերէր աշխարհ:

Ապա, Վեհափառ Հայրապետը շեշտեց, թէ Քրիստոս անցեալ չէ, այլ միշտ ներկայ ու նաե՛ւ ապագայ: Քրիստոս ծնաւ, քարոզեց ու հրաշագործեց, խաչուեցաւ ու յարութիւն առաւ եւ խոստացաւ դարձեալ գալ: Քրիստոսի ծնունդով մենք նաեւ կը նշենք վերածնունդը նոր մարդուն ու նոր աշխարհին, միշտ մեր հաւատքի աչքերը ուղղած դէպի Քրիստոսի երկրորդ գալուստը: Առաքեալը իր Յայտնութեան գիրքը կը փակէ հետեւեալ աղաչանքով. «Եկո՛ւ, Տէր Յիսուս»: Այսօր, դարեր առաջ Բեթղեհէմի մէջ պատահած Աստուծոյ յայտնութեան դէպքը շենք տօներ միայն, այլ դէպի Բեթղեհէմ դառնալով՝ կ'ըսենք.-

Եկո՛ւր, Տէր Յիսուս, մեր կեանքը երկնային բարիքներով ու շնորհքներով ծաղկեցուր ու պայծառակերպէ:

Եկո՛ւր, Տէր Յիսուս, մեղքով պատուած մեր կեանքը մաքրէ քու լուսեղէն ներկայութեամբ.

Եկո՛ւր, Տէր Յիսուս, մեր խաւարած կեանքին առջեւ բաց լոյսի ու յոյսի ճամբան.

Եկո՛ւր, Տէր Յիսուս, ատելութեամբ լեցուն մեր կեանքը շաղախէ սիրոյ զօրութեամբ.

Եկո՛ւր, Տէր Յիսուս, հեռացուր մեր կեանքէն երեւելի ու աներեւոյթ չարերը ու չարիքները:

Առանց Յիսուսի ներկայութեան մեր կեանքը պիտի կորսնցնէ իր իմաստն ու ինքնութիւնը, իր խորքն ու ուղղութիւնը: Հետեւաբար, դառնանք Քրիստոսի, որպէս անհատ ու որպէս ազգ, եւ հաւատքի զօրութեամբ ըսենք՝ «Եկո՛ւ, Տէր Յիսուս»:

Ապա, Նորին Ս. Օծութիւնը խօսելով մեր ազգին ու հայրենիքին դիմագրաւած տագնապներուն մասին՝ յիշեց, որ իր Նոր Տարուան պատգամին մէջ կարեւորութեամբ շեշտած էր, թէ մեր ազգը հրամայական կարիքը ունի ահաւոր վտանգներով լեցուն ներկայ կացութենէն դուրս բերող համահայկական նոր ռազմավարութեան ու համահայկական օրակարգի, մասնակցութեամբ Հայաստանի ու Սփիւռքի բոլոր ոյժերուն անխտիր:

Նորին Արքութիւնը նաեւ անդրադարձաւ Լիբանանի ներքին կացութեան՝ շեշտելով Հանրապետութեան նախագահի շուտափոյթ ընտրութեան կարեւորութիւնը եւ ապա նոր կառավարութեան կազմութեամբ ընկերային-տնտեսական տագնապը դիմագրաւելու հրամայականը: Վեհափառ Հայրապետը նաեւ ցաւով անդրադարձաւ Կազայի դէմ Իսրայէլի շղթայազերծած պատերազմին, որ խոտոր կը համեմատի միջազգային օրէնքին: Ան խստօրէն դատապար-

տեց Իսրայելի կողմէ շարունակուող ուժեղացող ռազմական գործողությունները, որոնք պատճառ կը դառնան անհամար զոհերու եւ ահաւոր քանդումներու: Ան շեշտեց, որ միջազգային համայնքը պէտք է զօրակցի պաղեստինցի ժողովուրդին ազգային իրաւունքներուն՝ պաղեստինեան անկախ պետութեան հաստատումով, եզրափակեց իր պատգամը Նորին Ս. Օծութինը:

Ս. Պատարագէն ետք, Արամ Ա. Կաթողիկոս, Վեհարանի դահլիճին մէջ, ընդունեց ժողովուրդին ու պաշտօնական անձնաւորութիւններուն Նոր Տարուան եւ Քրիստոսի Ս. Ծննդեան շնորհաւորութիւնները:

Ս. ԾՆՆԴԵԱՆ ՃՐԱԳԱԼՈՅՑԻ ՊԱՏԱՐԱԳ

Ուրբաթ, 5 Յունուար 2024-ի երեկոյեան, նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, մատուցուեցաւ մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Ս. Ծննդեան ճրագալոյցի Պատարագը:

Ս. Պատարագի աւարտին, Մայր Տաճարի լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան Ս. Խորանէն վար բերաւ Քրիստոսի լոյսը խորհրդանշող մոմը եւ յանձնեց Նորին Արքութեան: Գլխաւորութեամբ Նորին Ս. Օծութեան, միաբան հայրեր եւ հաւատացեալներ միասնաբար «Խորհուրդ մեծ եւ սքանչելի...» հոգեպարար ու հոգեզմայլ Քրիստոսի ծնունդը աւետող շարականը երգեցին: Ապա, հաւատացեալները մօտենալով Նորին Արքութեան՝ ստացան Քրիստոսի լոյսը եւ իրենց հետ տանելով՝ Քրիստոսի Ս. Ծննդեան աւետիսն ու օրհնութիւնը փոխանցեցին իրար:

Ս. Պատարագի աւարտին, շարականի երգեցողութեան ընկերակցութեամբ, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Վեհարան, ուր տեղի ունեցաւ տնօրհնէքի արարողութիւն, ձեռամբ Վեհափառ Հայրապետին եւ մասնակցութեամբ միաբան հայրերուն, դպրեվանքի աշակերտներուն եւ ներկայ հաւատացեալներուն:



ՄՐԲՈՅ ՎԱՐԴԱՆԱՆՅ ԶՕՐԱՎԱՐԱՅ ՏՕՆԸ ՆՇՈՒԵՅԱԲ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Հայոց պատմութեան դարաւոր անցեալը վասն հաւատոյ եւ հայրենեաց մղուած խիզախ օրինակներով լեցուն անցեալ մըն է: Որքան ալ տարիներու թաւալումով հեռանանք հայրենասիրութեան եւ արիութեան թարգման հանդիսացող վաղ անցեալի դէպքերէն, նոյնքան կը զգանք պէտքը մօտենալու անոնց պատգամին՝ կարենալ կերտելու համար արդի մեր պատմութեան նոր յաղթանակները: Այսպէս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի Մայրավանքէն ներս Սրբոց Վարդանանց տօնը կը նշենք ամէն տարի՝ Ս. եւ Անմահ Պատարագի մատուցմամբ եւ Դպրեվանքի սաներուն կազմակերպութեամբ կոկիկ գեղարուեստական յայտագիրով՝ կենդանի պահելու համար վարդանաշունչ սուրբ կտակը:

Արդարեւ, Հինգշաբթի, 8 Փետրուար 2024-ի առաւօտուն, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին նախագահութեամբ, մատուցուեցաւ Ս. Պատարագ՝ ձեռամբ լուսարարապետ՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի, որ յաւուր պատշաճի իր քարոզին մէջ հաւատացեալներուն փոխանցեց Վարդանանց ոգին: Սրբազան Հայրը իր քարոզին մէջ հակիրճ տողերով ներկայացուց այն միջավայրը, ուրկէ ծնած էր Վարդան Մամիկոնեան. ի դէպ, ըլլալով թողը Սահակ Պարթեւ Հայրապետին, որ գիրերու գիւտին իր անսակարկ ներդրումով հայկական ինքնութեան պահպանման ռահվիրաներէն է: Վարդան Մամիկոնեան Աւարայրի ճակատամարտը կը մղէր մեկնելով Հայ եկեղեցւոյ կրօնական եւ մշակութային զարթոնքի սերունդի դաստիարակութենէն: Քարոզիչ Սրբազան Հայրը ընդգծեց, որ Վարդանանց ճակատամարտը Հայոց պատմութեան կարեւորագոյն դասն է, իսկ Հայ եկեղեցին Վարդանանք ու Ղեւոնդեանք հերոսներուն անունները արձանագրեց իր տօնացոյցին մէջ ու զանոնք միացուց մեր եկեղեցական արարողութեանց աղօթասացութիւններուն ու սաղմոսասացութիւններուն: Վերջապէս, Կոմիտաս Արք. ցաւ յայտնեց ի տես այն հայորդիներուն, որոնք հեռու են Վարդանանց ու Ղեւոնդեանց ոգիէն եւ բոլորին պարտքը համարեց զանոնք վերադարձնելու հայկական ակունքներուն:



Յաւարտ Ս. Պատարագին, Հայրապետական թափօրի առաջնորդութեամբ, հաւատացեալները ուղղուեցան Վեհարանի դահլիճ, ուր Դպրեվանքի սաներն ու ներկաները միասնաբար վարդանաշունչ շարք մը երգեր երգեցին: Հուսկ, Արամ Ա. Կաթողիկոս փոխանցեց իր Հայրապետական պատգամը:

Վեհափառ Հայրապետը մեր կեանքէն ներս դիտել տուաւ ազգային խորհրդանիշներու անհրաժեշտութիւնը՝ ընդգծելով, որ անոնք են ազգի մը գոյատեւման երաշխիքը եւ պատմութեան ահաւոր փոթորիկներուն դիմաց յոյս ներշնչողը: «Վա՛յ այն ազգին, որ չունի խորհրդանիշ: Վա՛յ այն ազգին, որ հաւատարիմ չէ իր պապերուն խորհրդանիշներուն», ըսաւ ան՝ զգուշացնելով, որ դժբախտաբար, այսօր Հայ ազգը, հայրենիքի թէ՛ Սփիւռքի մէջ, սկսած է կամաց-կամաց հեռանալ իր պապերուն արիւնով ու աղօթքով կերտուած խորհրդանիշներէն. «Այսօր Հայաստանի եւ Սփիւռքի մէջ, մեր պատմութենէն ժառանգուած խորհրդանիշները՝ կրօնական, բարոյական, մշակութային թէ՛ ազգային, սկսած են բովանդակութիւն եւ իմաստ փոխել՝ այլասերիչ եւ ապազգային մտածումներու ու մօտեցումներու դիմաց: Յաւալի է այս երեւոյթը եւ անընդունելի», յայտնեց Նորին Սրբութիւնը:

Անդրադառնալով Ղեւոնդ Երէց եւ Վարդան Մամիկոնեան ազգային հերոսներուն ու խորհրդանիշներուն՝ Նորին Ս. Օծութիւնը ըսաւ, որ անոնք հատաք-հայրենիք-կրօնք անքակտելի միասնութեան եւ հայրենիքի շահերը ամէն բանէ վեր դասելու ազգային յանձնառութեան ապացոյցներն են, որոնք ո՛չ միայն Ծրդ դարուն կը պատկանին, այլեւ իրենց նահատակութեամբ արժեւորեցին ամբողջ Հայոց պատմութիւնը: Վերջապէս, խօսքը ուղղելով Դպրեվանքի սաներուն՝ Արամ Ա. Կաթողիկոս թելադրեց անոնց հաւատարիմ ըլլալ Վարդանանց ու Ղեւոնդեանց պատգամին՝ մանաւանդ ներկայ օրերուն եւ անոնց յիշատակը կենդանի պահել՝ իրենց կեանքը շաղախելով անոնց հաւատքով ու հայրենասիրութեամբ:

Վարդանանց յիշատակութիւնը իր աւարտին հասաւ «Կիլիկիա» մաղթերգով ու «Պահպանիչ» աղօթքով:



ՏԵԱՌՆԸՆԴԱՌԱՋԻ ՏՕՆԸ ՄԵԾԱՇՈՒՔ ՀԱՆԴԻՍՈՒԹԵԱՄԲ ՆՇՈՒԵՑԱԲ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԷՋ

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Երեքշաբթի, 13 Փետրուար 2024-ի երեկոյեան, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մեծաշուք հանդիսութեամբ եւ հաւատացեալներու հոծ ներկայութեամբ նշուեցաւ մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի տաճար ընծայման՝ Տեառնընդառաջի նախատօնակի արարողութիւնը:

Միաբան հայրերու կողմէ աստուածաշնչական ընթերցումներէ եւ Անդաստանի հոգեգմայլ արարողութենէն ետք, Վեհափառ Հայրապետը իր Հայրապետական պատգամը յղեց հաւատացեալներուն: Ան ընդգծեց Յիսուս Մանուկին տաճար ընծայման իմաստը ներկայ ժամանակներուն մէջ եւ ըսաւ, որ Աւետարանի իւրաքանչիւր նախադասութիւն պատգամ մը ունի փոխանցելիք, ուստի հաւատացեալը պէտք է ո՛չ միայն ծանօթ ըլլայ հոն արձանագրուած դէպքերուն, այլեւ ապրի ու իր կեանքը իմաստաւորէ այդ պատգամներով, որոնք անմիջական առնչուածութիւն ունին մեր կեանքին հետ: Առ այդ, Նորին Սրբութիւնը շեշտեց երկու հիմնական կէտեր՝ աւանդութիւններուն ազգերու ու կրօններու ինքնահասկացողութեան երեւոյթ ըլլալը եւ Աստուծոյ ընծայելու իմաստը:

Նորին Ա. Օծութիւնը յորդորեց որ Հայ ընտանիքները հաւատարիմ մնան դարաւոր մեր աւանդութիւններուն, որովհետեւ անոնք երաշխիք են յարատե-



ւութեան. «Մենք կոչուած ենք մեր հայրերէն ժառանգած մեր ասանդութիւնները պահելու եւ այդ ասանդութիւններով մեր կեանքը թրծելու: Ահաւասիկ, Յիսուս Մանուկին ծնողքը, հաւատարիմ երայական ասանդութեան, տանար տարաւ Մանուկը՝ Աստուծոյ ընծայելու համար»: Աստուծոյ ընծայելու գաղափարը յիշեցում է, որ մեր կեանքը կ'իմաստաւորուի Աստուծոյ ներկայութեամբ, ըսաւ Նորին Սրբութիւնը:

Վերջապէս, Արամ Ա. Կաթողիկոս իր ուրախութիւնը յայտնեց ի տես հաւատացեալներուն, ի մասնաւորի մանուկներուն խուռներամ ներկայութեան եւ նշեց, որ ընտանիքը փոքր եկեղեցի կը համարուի եւ ունի հոգեւոր ու ազգային դաստիարակութիւն ջամբելու ծանր պարտականութիւն, որովհետեւ ապագային եւ ապաքրիստոնէական կենցաղակերպեր սկսած են բազմանալ մեր շուրջը: Նորին Ս. Օծութիւնը իր պատգամը փակեց՝ ըսելով. «Իմ աղօթքս է, որ քիչ ետք, երբ Քրիստոսի լոյսը առնէք եւ տանիք ձեր տուները, Քրիստոսի լոյսով լուսաւորուին ձեր բոլորին մտածումները, գործերը, կեանքի ճամբան եւ կեանքը: Թող Քրիստոս մեր ազգին համար միշտ լոյս դառնայ եւ լոյս մնայ մեզմէ իւրաքանչիւրին եւ մեր ընտանիքներու կեանքին մէջ»:

Հայրապետական պատգամէն ետք, լուսարարապետ Սրբազան Հայր՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանը, Ս. Խորանէն առաւ Քրիստոսի լոյսը եւ փոխանցեց Վեհափառ Հայրապետին, որ իր կարգին բաշխեց հաւատացեալներուն՝ մինչ ծնողներ իրենց զաւակները մօտեցուցին Ս. Խորան եւ միաբան հայրերուն կողմէ Աստուծոյ ընծայաբերելու արարողութիւնը տեղի ունեցաւ՝ Քրիստոսի ծնողքին օրինակով:

Եկեղեցական արարողութեան աւարտին, Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայրավանքի շրջափակ, ուր Նորին Սրբութիւնը Ս. Սեղանէն բերուած ճրագով վառեց Տեառնընդառաջի աւանդական խարոյկը, իսկ դպրեվանեցիները եւ ժողովուրդը միասնաբար երգեցին հոգեւոր ու ազգային երգեր:



ՀԱՅ ԴԱՏ**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՀՐԱԲԵՐՈՎ ԱՊՐԻԼԻՆ ԿԸ
ԿԱՅԱՆԱՅ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ԱԶՐՊԵՅՑԱՆԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՑԱԾ
ՑԵՂԱՍՊԱՆԱԿԱՆ ԶԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ**

«Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ը վերջին երկու շաբթուան ընթացքին յաջորդաբար գումարեց առցանց երկու նիստեր (8-րդ եւ 9-րդ), նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին:

Ի հետեւումն 19-20 Յունուար 2024-ին Անթիլիասի մէջ կայացած «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ի խորհրդակցական հանդիպումներու որոշումներուն, առցանց նիստերուն քննարկութեան Ապրիլ 24-ի նախօրեակին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ եւ Վեհափառ Հայրապետին նախագահութեամբ, գումարելի գիտաժողովին թեման եւ ընդհանուր ուղղութիւնները:

Հայաստանէն, Արցախէն եւ Սփիւռքէն շուրջ 25 պատմագէտներ, իրաւագէտներ եւ քաղաքագէտներ պիտի մասնակցին յիշեալ գիտաժողովին, քննելու համար Ազրպէյճանի իրականացուցած ցեղասպանութեան ուղղութեամբ միջազգային դատական ատեաններու մօտ Ազրպէյճանը պատասխանատուութեան կոչելու ուղիները:

Գիտաժողովին նկատի առնուած են զեկուցումներ, որոնք պիտի արծարծեն Արցախի պատկանելիութեան, հակամարտութեան էութեան, բանակցային գործընթացին, թուրք եւ ազրպէյճանական դաշինքի գործադրած ցեղասպանական շարունակական ցեղասպանութեան, Արցախի դէմ յայտարարուած պատերազմի տարբեր արարներուն, Պաքուի գործադրած ռազմական յանցագործութիւններուն, Արցախի ժողովուրդի հաւաքական վերադարձի, ինքնորոշման իրաւունքի վերարժարման հնարաւորութիւններուն եւ հոգեւոր պատմամշակութային ժառանգութեան պահպանման նպատակով միջազգային կազմակերպութիւններու ամբողջական թղթածրարներու պատրաստութեան վերաբերող հարցեր:

Այս քննարկումները պիտի հունաւորուին այնպէս, որ ծառայեն այսօրուան բարդ համապատկերին վերաբերող գործընթացները վերլուծելու եւ իրաւաքաղաքական առումով հայկական կողմին համար գոյութիւն ունեցող դժուարութիւնները յաղթահարելու ուղղութեամբ որոշ ուղեւիշներ ճշդելու:

Վեհափառ Հայրապետը վերջին երկու նիստերու ընթացքին յատկապէս

շեշտեց կարեւորութիւնը նման դժուարին պայմաններու մէջ մասնագիտական մարդու ճիշդ համախմբելու եւ համատեղ քննարկումներով ճանապարհային քարտէսներու գծման փորձերու անհրաժեշտութիւնը:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԻՐ ՕՐՀՆՈՒԹԻԻՆԸ ԿՈՒ ՏԱՅ «ԱՐՑԱԽԵԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՊԱՅՊԱՆՄԱՆ ԿԵԴՐՈՆ»Ի ԾՐԱԳԻՐԻՆ

Արցախի մշակութային ժառանգութեան պահպանումը եւ փոխանցումը նոր սերունդներուն՝ մեզմէ իւրաքանչիւրին սրբազան առաքելութիւնն է: Նոյն նպատակին համար գոյացած է «Արցախեան Մշակոյթի Պահպանման Կեդրոն» հասարակական կազմակերպութիւնը:

Արդարեւ, Արցախի մէջ թէ՛ Արցախէն դուրս մեր կոչումն է պահել արցախեան հոգեւոր եւ ազգային մշակութային հարուստ ժառանգութիւնը: Ուստի, յիշեալ կեդրոնին կողմէ կազմակերպուած է համազգային դրամահաւաք՝ այս նպատակին համար, որ սկիզբ առաւ 20 Փետրուար 2024-ին եւ արդիւնքները պիտի յայտարարուին 23 Մարտ 2024-ին:

Յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետին, համազգային դրամահաւաքին ողջոյնի խօսք փոխանցեց Կաթողիկոսարանի «Կիլիկիա» մատենադարանի տնօրէն՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան:

Իր խօսքին մէջ, առաջին հերթին, Շահան Արք. ողջունեց Արցախի մշակութային ժառանգութիւնը պահպանելու կոչուած յիշեալ կեդրոնին հաստատման նախաձեռնութիւնը եւ շեշտեց, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միշտ եղած է ու պիտի մնայ Արցախի ու արցախահայութեան կողքին: Անդրադառնալով յատկապէս մշակութային մարզին՝ Սրբազան Հայրը ըսաւ. «Անթիլիասական հրատարակութիւններէն մինչեւ մասնաւոր համագումարներու կազմակերպումը, մեր երիտասարդութիւնն ու մեր ժողովուրդը հաղորդ պահեցինք համահայկական եւ արցախեան արժէքներուն՝ ինքնութեան եւ պատկանելիութեան գիտակցութեան խորացումով»:

Իր խօսքի աւարտին, Շահան Արք. ընդգծեց կարեւորութիւնը «Արցախեան Մշակոյթի Պահպանման Կեդրոն»ին, որովհետեւ մշակոյթը մեր ինքնութիւնը կերտող կարեւորագոյն հիմքերէն է, որուն իւրացման եւ անոր հետ նոյնացման ընթացքով մենք պիտի կարենանք պահել Արցախը՝ Արցախի սահմաններէն անդին, մեր նիւթաբարոյական աջակցութեամբ գործնապէս պիտի նպաստենք Արցախի մշակոյթին վերակենդանացումին եւ վերածաղկումին:

ՊԱՐԳԵԻԱՏՐՈՒՄ

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ «Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՏՈՅ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵԻԱՏՐԵՑ ՎԱՐԴԱՆ ԱԲԵՍԵԱՆՆ ՈՒ ՄԿՐՏԻՉ ՄԻՔԱՅԷԼԵԱՆԸ

Հինգշաբթի, 15 Փետրուար 2024-ի երեկոյեան, «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցւոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.), Արամ Ա. Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով պարգեւատրեց քանդակագործ Վարդան Աւեսեանն ու կիթառահար Մկրտիչ Միքայէլեանը:

Արուեստաբոյր երեկոյեան բացման խօսքը արտասանեց Հ.Ե.Հ.Ո.Մ.ական Կալի Աւագեան, որ ընդգծեց արուեստի ու մշակոյթի կարեւորութիւնը Հայուն ինքնութեան կազմաւորման մէջ եւ վեր առաւ երկու արուեստագէտներուն վաստակն ու գործունէութիւնը, որոնք իրենց ստեղծագործութիւններով եզակի ներդրում ունեցած են եւ ունին Հայ եւ միջազգային կեանքին մէջ:



Առ այդ, կիրարկուեցաւ գեղարուեստական կոկիկ յայտագիր մը, որուն ընթացքին ներկաները վայելեցին Թետեսքովի «Աւագաթմբերի Միջոցով» կտորը՝ Ներսէս Զուլճեանի դաշնամուրի կատարողութեամբ, Համօ Սահեանի «Հայաստան Ասելիս» բանաստեղծութիւնը՝ Հրակ Մամիկոնեանի մեկնաբանութեամբ, Առնօ Պապաճանեանի «Էլեգիա»ն՝ Մարք Կիւկիւլեանի դաշնամուրի կատարողութեամբ, Էւ Խաչատուր Աւետիսեանի «Հովուի Երգը» ու Տիգրան Մանսուրեանի «Կտոր Մը Երկինք» հատուածները՝ Ծաւի ու Սալբի Թորիկեաններու ջութակի ու դաշնամուրի նուագակցութեամբ:

Արուեստագէտներ Վարդան Աւեսեանի Էւ Մկրտիչ Միքայէլեանի հարուստ կենսագրականները ներկայացուցին Թամար Սնապեան-Սուրճեանն ու Դոկտ. Էտի Թորիկեանը:

Ապա, ընթերցուեցան արուեստագէտներուն պարգեւատրման Հայրապետական սրբատառ Կոնդակները՝ Հոգշ. Տ. Օշին Վրդ. Զուլբերթանեանի Էւ Հոգշ. Տ. Գէորգ Գարակէօզեանի կողմէ, որմէ ետք Արամ Ա. Կաթողիկոս Աւեսեանին Էւ Միքայէլեանին կուրծքերը զարդարեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Ս. Մեսրոպ Մաշտոց» շքանշանով՝ առ ի գնահատանք անոնց վաստակին ու ազգային սրբազան առաքելութեան:

Հուակ, Նորին Սրբութիւնը ներկաներուն ուղղեց իր օրհնութեան փակման խօսքը: Ողջունելէ ետք երեկոն կազմակերպող Միութեան անդամները, բանախօսները, գեղարուեստական յայտագիրին մասնակից երիտասարդ արուեստագէտները, շքանշանակիրները, անոնց ընտանեկան պարագաներն ու ներկաները՝ Վեհափառ Հայրապետը լուսարձակի տակ առաւ մշակոյթին ազգի մը լինելիութեան արտայայտութիւն ըլլալը, ի շարս այլ յատկութիւններու, որ կ'ապահովէ ազգին ինքնահասկացողութիւնն ու ինքնաճանաչումը: Ան նշեց, որ մշակոյթը ո՛չ թէ լոկ պահելու ու պահպանելու ենք, այլ մեզի կ'իյնայ զայն զարգացնելու պարտականութիւնն ու պարտաւորութիւնը, որովհետեւ միայն պահելու ու պահպանելու պարագային, ազգը կը դատապարտուի ճահճացումի:

Նորին Ս. Օծութիւնը շարունակելով իր խօսքը ըսաւ, որ արուեստագէտը առաքեալ մըն է իր մարզին մէջ, որ ազգերու միջեւ երկխօսութիւն կը ստեղծէ, երկինքն ու երկիրը իրարու կը բանայ Էւ երկնային արժէքները երկրաւոր մեր կեանքին մէջ կը թարգմանէ: Իր խօսքի աւարտին, Վեհափառ Հայրապետը հակիրճ վկայութիւններ տուաւ երկու արուեստագէտներուն մասին Էւ մաղթեց, որ անոնց արուեստն ու աշխատանքը, իրենց աշխատելաճինն ու կորովին ընդմէջէն, վարակիչ ըլլան մեր ժողովուրդի կեանքին:

ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՉԱՔՄԱՔՃԵԱՆ ԱՐԺԱՆԱՅԱԲ «ԿԻԼԻԿԵԱՆ ԱՍՊԵՏ» ՇՔԱՆՇԱՆԻՆ

Հինգշաբթի, 15 Փետրուար 2024-ին, Գանատայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Բարգէն Արք. Չարեան այցելեց Մոնթրէալի գաղութի ղեկավարներէն՝ Պրն. Ստեփան Չաքմաքճեանին, անձամբ պարգևատրելու զայն՝ Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի «Կիլիկեան Ասպետ» Շքանշանով:

Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ 65-ամեակի տօնակատարութեան ծիրէն ներս, Արամ Ա. Վեհափառ Հայրապետի սրբատառ Կոնդակով, Պրն. Չաքմաքճեան արժանացաւ վերոնշեալ պատիւին:



Առաջնորդ Սրբազան Հօր կ'ընկերակցէին՝ Ս. Յակոբ Առաջնորդանիստ Մայր Եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ՝ Արժ. Տ. Գառնիկ Աւ. Քհնյ. Գոյունեան, նոյն եկեղեցւոյ Ատենապետ՝ Պրն. Սարօ Տէր Պետրոսեան եւ Ազգ. Վարչութեան Ատենադպիր՝ Տիկ. Աննա Պուլկարեան:

Բարգէն Արքեպիսկոպոս մեծապէս գնահատեց Պրն. Չաքմաքճեանի վաստակն ու անձնուէր ծառայութիւնը Մոնթրէալ գաղութին:

ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ
ՄԱՍՆԱԿՑԵՑԱԲ ԿԱԶԱՅԻ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ**

Ուրբաթ, 29 Դեկտեմբեր 2023-ին, Լիբանանի մշակույթի նախարարութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանատան կազմակերպութեամբ տեղի ունեցաւ Կազաչի նուիրուած համագումար մը՝ «Ս. Կոյս Մարիամի արցունքը եւ Կազաչի աղէտը» խորագրով: Այս առիթով, Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ՝ Իպրահիմ Ռայչիսի տիկինը՝ Ճամիլա Ալմ Ալ-Հուտա, որ միաժամանակ Թեհրանի համալսարանի Իսլամական բարոյագիտութեան դասախօս է, Լիբանանի մշակույթի նախարարութեան յատուկ հրաւերով, իր մասնակցութիւնը բերաւ այս համագումարին:

Համագումարի ընթացքին խօսք արտասանեցին լիբանանցի եւ այլ երկիրներէ ժամանած հոգեւորականներ: Ներկաները դատապարտեցին Իսրայէլի կողմէ Կազաչի մէջ գործադրուող ոճիրները եւ շեշտեցին միացեալ կեցուածք որդեգրելու հրամայականը:

Յիշեալ համագումարին, Օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, ներկայ գտնուեցաւ Կաթողիկոսարանի Միջին Արեւելքի միջ-եկեղեցական եւ միջ-կրօնական բաժանմունքի պատասխանատու՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան:



**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉԸ ԿԸ ՀԱՆԴԻՊԻ
ՎԱՏԻԿԱՆԻ ՄԻՋ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ
ՆԱԽԱԳԱՅԻՆ ՀԵՏ**

Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ, Հինգշաբթի, 18 Յունուար 2024-ին, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքսանդրեան Վատիկանի մէջ տեսակցեցաւ Վատիկանի Միջ-եկեղեցական յարաբերութիւններու բաժանմունքի նախագահ՝ Քուրթ Քոխ Կարտինալին հետ եւ քննարկեց միջ-եկեղեցական շարժումին կապուած ընդհանուր հարցեր:

Ապա, խօսակցութիւնը կեդրոնացաւ Վատիկանի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան սերտ յարաբերութիւններուն վրայ, որուն մէջ կարելոր տեղ կը գրաւէ Կաթողիկէ եկեղեցի-Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիք աստուածաբանական երկխօսութիւնը, որուն նախաձեռնութեան մէջ բանալի դերակատարութիւն ունեցած է Նորին Սրբութիւնը:



Նարեկ Արքեպիսկոպոս նաեւ ներկայացուց 2023-ի Դեկտեմբերին Ամերիկայի Միացեալ Նահանգներուն մէջ Նորին Ս. Օծութեան ունեցած միջ-եկեղեցական շրջափումներուն սեղմ պատկերը:

Կարտինալը յիշեց իր Անթիլիաս կատարած զանազան այցելութիւններն ու Վեհափառ Հայրապետին հետ ունեցած հանդիպումները, եւ լուսարձակի տակ բերաւ Նորին Սրբութեան երկար տարիներու միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութիւններու վաստակը:



ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ՆԵՐԿԱՅԱՅՈՒՅԻՉԻՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆԸ ՎԱՏԻԿԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԲԱՐՏՈՒՂԱՐԻՆ

Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ, Երկուշաբթի, 22 Յունուար 2024-ին, Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեքմէզեան Վատիկանի մէջ հանդիպում ունեցաւ Վատիկանի պետական քարտուղար՝ Փիեթրօ Փարոլին Կարտինալին հետ: Յատուկ օրակարգի նիւթ դարձան Լիբանանը դիմագրաւող ներկայ դժուարութիւնները: Այս ծիրէն ներս, Նարեկ Արքեպիսկոպոս Կարտինալին փոխանցեց Վեհափառ Հայրապետին կարգ մը մտահոգութիւններն ու պատկերացումները: Ան նաեւ յայտնեց, որ Լիբանանը դիմագրաւող հարցերուն գծով Նորին Ս. Օծութիւնը Տոհայի մէջ պաշտօնական հանդիպում ունեցած էր Քաթարի վարչապետին հետ:

Կարտինալը մօտէն ճանչնալով Վեհափառ Հայրապետին գործունէութիւնը՝ ջերմօրէն ողջունեց միջ-եկեղեցական ու միջ-կրօնական յարաբերութիւններու, ինչպէս նաեւ Լիբանանի առնչուած դժուարութիւններու բարուք լուծման գծով Նորին Սրբութեան ճիգերը:

**ԿԱԹՈՂԻԿԵ ԵԿԵՂԵՑԻ-ԱՐԵՎԵԼԵԱՆ
ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ
ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԽՕՍՈՒԹԵԱՆ 20-ՐԴ ՀԱՆԴԻՊՈՒՄ**

Երկուշաբթի, 22 Յունուար–Ուրբաթ, 26 Յունուար 2024, Հոռոմի մէջ, Վատիկանի Միջ-եկեղեցական յարաբերութիւններու բաժանմունքին հիւրընկալութեամբ, գումարուեցաւ Կաթողիկէ եկեղեցի-Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիք աստուածաբանական երկխօսութեան 20-րդ ժողովը:

Արամ Ա. Կաթողիկոսի օրհնութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կողմէ այս հանդիպումին մասնակցեցան Գերշ. Տ. Նարեկ Արք. Ալեէ-մէզգեանն ու Գերշ. Տ. Անուշաւան Արք. Դանիէլեանը:

Ժողովին օրակարգը Մարեմաբանութիւնն էր, որուն շուրջ դասախօսութիւններ տրուեցան եւ քննարկումներ կատարուեցան:

Շաբաթ 20 եւ Կիրակի, 21 Յունուարին, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքի անդամները առանձին նիստեր ունեցան եւ իրենց ընտանիքը շահագրգռող միջ-եկեղեցական հարցեր քննարկեցին: Այս ծիրին մէջ, Նարեկ սրբազան հայրը ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան միջ-եկեղեցական ու միջ-կրօնական գործունէութեան գլխաւոր երեսները եւ Անուշաւան սրբազան հայրը Դեկտեմբեր 2023-ին Արամ Ա. Կաթողիկոսի Ամբարիկայի Արեւելեան Հայոց Թեմ շնորհած հովուապետական այցելութեան ընթացքին տեղի ունեցած միջ-եկեղեցական հանդիպումները:



Երեքշաբթի, 23 Յունուարին, ակադեմիական յատուկ հանդիսութեամբ, նշուեցաւ Կաթողիկէ եկեղեցի-Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիք աստուածաբանական երկխօսութեան 20-ամեակը:

Հինգշաբթի, 25 Յունուարին, «Քրիստոնեաներու միութեան աղօթքի շաբաթ»ի աւարտին, Հռոմի «Ս. Պօղոս» Տաճարին մէջ, ժողովականներ աղօթակից դարձան Ն.Ս. Ֆրանսիս Պապին:

Ուրբաթ, 26 Յունուարին, Առաքելական պալատին մէջ, ժողովականներ ընդունուեցան Ն.Ս. Ֆրանսիս Պապին կողմէ, որ իր ուրախութիւնը յայտնեց աստուածաբանական երկխօսութեան հանգրուանային յաջողութեան համար եւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիքի հոգեւոր Պետերուն իր եղբայրական ողջոյնները յղեց:

Կաթողիկէ եկեղեցի-Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու ընտանիք աստուածաբանական երկխօսութեան անդամները որոշեցին յաջորդ տարի վերաքննել 2004-էն ի վեր իրենց կատարած աշխատանքը եւ ապագայ երկխօսութիւնը շարունակել նոր մեթոտաբանութեամբ:

Աստուածաբանական երկխօսութեան աւարտին, Նարեկ սրբազան հայրը հարցազրոյց մը ունեցաւ Ռատիօ Վատիկանի հայկական բաժանմունքին հետ եւ պատասխանեց աստուածաբանական երկխօսութեան, «2024 – Մարդուծի Պատրաստութեան Տարի Հայրապետական Հռչակագիր»ի եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութեան մասին իրեն ուղղուած հարցումներուն:



ԵՐԵՔ ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀՈԳԵՒՈՐԱԿԱՆՆԵՐ ԿԸ ՄԱՍՆԱԿՑԻՆ ՎԱՏԻԿԱՆԻ ԿԱԶՄԱԿԵՐՊԱԾ ԾԱՆՕԹԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐԻՆ

Երկխօսութիւնն ու փոխ յարաբերութիւնը անձերու կամ կառոյցներու միջեւ առիթ են զիրար ճանչնալու ու ծանօթանալու: Անցնող շորս տարիներու ընթացքին, կաթողիկ եկեղեցւոյ նախաձեռնութեամբ, Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդ հոգեւորականներու համար կ'իրականանայ վատիկանի ծանօթացման յատուկ ծրագիր մը:

Արդարեւ, 22 Յունուարէն 2 Փետրուար 2024-ին, յանուն Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան յիշեալ ծրագիրին մասնակցեցան երեք երիտասարդ հոգեւորականներ՝ Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանն ու Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեանը, եւ Միշիկընի «Ս. Սարգիս» եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ Արժ. Տ. Հրանդ Քհնյ. Գէորգեանը (Ա.Մ.Ն. Արեւելեան Թեմ). իսկ Ամենայն Հայոց Կաթողիկոսութեան կողմէ՝ Հոգշ. Տ. Յուսիկ

Աբղ. Սմբատեանը, Արժ. Տ. Մարկոս Քհնյ. Մանկասարեանն ու Արժ. Տ. Արարատ Քհնյ. Պօղոսեանը:

Յայտնենք, որ նոյն օրերուն տեղի կ'ունենար Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու եւ Կաթողիկ եկեղեցւոյ միջեւ աստուածաբանական երկխօսութեան 20-րդ հանդիպումը, որուն կարգ մը նիստերուն ներկայ գտնուեցան նաեւ Արեւելեան Ուղղափառ եկեղեցիներու երիտասարդ հոգեւորականները եւ ականատես եղան, թէ ի՞նչ ձեւով տեղի կ'ունենան եկեղեցիներու միջեւ երկխօսութիւններն ու հանդիպումները:

Երիտասարդ հոգեւորականներու օրակարգին գլխաւոր նպատակն էր այցելել եւ ծանօթանալ Վատիկանի եկեղեցիներուն, վանքերուն, համալսարաններուն եւ մատենադարաններուն, որոնց մասին մանրամասն տեղեկութիւններով հանդէս կու գային տուեալ կառոյցին պատասխանատու մարմինները: Այս այցելութեանց օրակարգին մէջ կարեւոր տեղ գրաւեց Նորին Սրբութիւն Ֆրանսիս Պապին հետ հանդիպումը: Պապը իր արտասանած խօսքին մէջ շեշտեց եկեղեցիներու միութեան անհրաժեշտութիւնը եւ իրարու միջեւ փոխ հասկացողութեան եւ փոխ յարաբերութեան հրամայականը:

Յիշենք, որ Կիրակի, 28 Յունուար 2024-ին, Իտալիոյ «Ս. Վլաս» եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Ս. եւ Անմահ Պատարագ, որուն մասնակցեցան միաբան եւ քահանայ հայրեր: Այս առիթով օրուան քարոզախօսութիւնը կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիտասարդ միաբան՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան, բնաբան ունենալով «Փոխանակ կորստական ուտելիքը փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը որ յաւիտենական կեանքի մէջ կը մնայ» (Յհ 6.27) Քրիստոսի խօսքը:



ՄԻՋ-ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԳՈՒԹԵԱՆ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԸ ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ ՄՕՏ

Հինգշաբթի, 22 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս իր պատկերացումը փոխանցեց իրեն այցելած միջ-քրիստոնէական գործակցութիւն ստեղծելու կոչուած համախմբումին: Այս վերջինը եկած էր ունենալու Նորին Սրբութեան տեսակէտը քրիստոնեայ համայնքներու միջեւ զանազան մարզերէն ներս միացեալ աշխատանքի նախաձեռնելու գծով: Հիւրերը նախ ներկայացուցին ցարդ կատարած իրենց աշխատանքին արդիւնքը՝ կրթական, ընկերային, երիտասարդական, երկրագործական ու տեղեկատուական մարզերէն ներս:

Լսելէ ետք ներկաներուն կատարուած աշխատանքը եւ իմանալէ ետք անոնց մօտեցումները, Նորին Սրբութիւնը շեշտեց հրամայական անհրաժեշտութիւնը ներքին գործակցութեան ճամբով քրիստոնէական միութիւնը ամրապնդելու: Ան ըսաւ, թէ միութիւնը տեսութիւն չէ, այլ կեանքի իրականութիւն է, որ ինքզինք պէտք է արտայայտէ գործնական միջոցներով: Ընդհանուր գիծերով անդրադառնալէ ետք եկեղեցւոյ միութեան եւ այս ուղղութեամբ կատարուած նախաձեռնութիւններուն, Վեհափառ Հայրապետը ողջունեց Միջին Արեւելքէն ներս քրիստոնէական միութիւնը գործնապէս թարգմանելու կարեւորութիւնն ու կարելիութիւնը: Ան այս ուղղութեամբ կարգ մը շօշափելի պարագաներ պարզեց՝ յիշելով յատկապէս երիտասարդական բնագաւառէն ներս միջ-քրիստոնէական գործակցութիւնը ամրապնդելու անհրաժեշտութիւնը: Այս առիթով Նորին Ս. Օծութիւնը պատասխանեց իրեն ուղղուած հարցումներուն եւ յայտնեց, որ մեր եկեղեցին ու եկեղեցւոյ առնչուած կառույցները պատրաստ են միջ-քրիստոնէական գործակցութեան, որ պէտք է դառնայ հիմքը քրիստոնեայ-իսլամ գործակցութեան:



ՀԱՐՑԱԶՐՈՅՑ

ՄԵԾԻ ՏԱՆԸ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՍՏԱՆԱՅ ՆՈՐ ԾԱԲԱԼ ՈՒ ՇԵՇՏԱԴՈՐՈՒՄ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս անցնող ամիսներու ընթացքին յաջորդաբար Հովուապետական այցելութիւններ կատարեց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հետեւեալ թեմերը՝ Յունաստան, Կիպրոս, Գանատա, Հիւս. Ամերիկայի Արեւելեան, Քուէյթի, Քաթարի եւ Արաբական Միացեալ Էմիրութիւններ եւ հանդիպումներ ունեցաւ թեմական ու համայնքային ղեկավարներու, ինչպէս նաեւ պետական բարձրաստիճան պատասխանատուներու հետ: Դարձեալ անցնող ամիսներուն, Նորին Արքեպիսկոպոսի անունով ղեկավարուող Կաթողիկոսարանը դիմեց շարք մը նախաձեռնութիւններու, նպատակ ունենալով Արցախի մեր ժողովուրդի իրաւունքներուն վերականգնումը, Հայաստանի ամբողջականութեան ու անվտանգութեան պահպանումը եւ Սփիւռքի վերակազմակերպումը: Վեհափառ Հայրապետին գլխաւորութեամբ նոյն գործընթացը պիտի շարունակէ յառաջիկայ ամիսներուն:

Այս հանգրուանին CILICIA TV-ն դիմեց Վեհափառ Հայրապետին, որ ցարդ իր հանդիպումներուն ու նախաձեռնութիւններուն գծով ամփոփ կերպով անհրաժեշտ տեղեկութիւնները փոխանցէ մեր ժողովուրդին.-

1) Վեհափառ Տէր, սկսինք Արցախէն. ի՞նչ մօտեցում ունէին օտար պետութիւններ Արցախի գծով: Կրնա՞ք անոնց տեսակէտներուն իւրայատկութիւնները պարզել:

1) Օտար պետութիւններու բարձրաստիճան պատասխանատուներուն հետ Մեր ունեցած բոլոր հանդիպումներուն, բնականաբար արժարժեցիմք Արցախի հարցը: Նախ ուզեցիմք ունենալ անոնց տեսակէտները եւ ապա պարզեցիմք Մեր մտահոգութիւններն ու սպասումները: Այս գծով, անհրաժեշտ է յստակ տարբերութիւն մը դնել Արցախի բռնագրաւումէն առաջ եւ անկէ ետք Մեր ունեցած հանդիպումներուն միջեւ: Ինչ կը վերաբերի Արցախի անկումէն առաջ մեր հանդիպումներուն (Գանատայի վարչապետ, Կիպրոսի նախագահ, Յունաստանի վարչապետ եւ Մալթայի վարչապետներու՝ զանազան ղեկավարներու հետ), կարեւորութեամբ ընդգծեցիմք Արցախի ժողովուրդին իրաւունքները պաշտպանելու հրամայականը՝ միջազգային օրէնքին համաձայն, եւ նոյնիսկ մատնանշեցիմք Արցախին ինքնորոշման իրա-

տունֆի եւ Ազրայէջնանի հողային ամբողջականութեան – որոնք որպէս սկզբունքներ մաս կը կազմեն միջազգային օրէնքին – մինչեւ գոյակցութիւն ստեղծելու կարելիութիւնները: Մեր խօսակիցները ընդգծելով հանդերձ Ազրայէջնանի հողային ամբողջականութիւնը պահելու կարեւորութիւնը՝ շեշտեցին Արցախի ժողովուրդին իրաւունքները պահպանելու անհրաժեշտութիւնը, անկախ այն իրողութենէն, որ Ազրայէջնան հետեւողական աշխատանք կը կատարէր միջազգային համայնքին ներս՝ իր տեսակէտները ամրապնդելու իմաստով: Արցախի բռնագրաւումէն ետք Մեր ունեցած հանդիպումներուն, որոնք ներառեցին նաեւ միջ-եկեղեցական կառոյցներ, հետեւեալ կէտերը շեշտեցին.- Արցախի ժողովուրդին վերադարձի իրաւունքը, արցախահայութեան իրաւունքներու վերահաստատումը՝ միջազգային երաշխատրութեամբ, կրօնա-մշակութային կառոյցներու անվթար պահպանումը, գերիներու ու ձերբակալուած պետական պատասխանատուներու ազատ արձակումը եւ Հայաստան հաստատուած արցախցի գաղթականներու մարդասիրական օժանդակութիւնը: Յիշեալ կէտերուն շուրջ ընդհանրապէս հասկացողութիւն կար օտար պետութիւններու պատասխանատուներուն մօտ: Արցախի հարցը Կիլիկիոյ Կաթողիկոսութեան համար չէ փակուած: Արցախը մեր ազգային պահանջատիրութեան օրակարգին վրայ կարեւոր տեղ կը գրաւէ:

2) Վեհափառ Տէր, Լիբանանը ու յատկապէս նախագահական ընտրութիւնները կարեւոր տեղ գրաւեցին Ձեր ունեցած հանդիպումներուն: Ի՞նչ է օտար պետութիւններուն դիրքորոշումը Լիբանանեան հարցերուն նկատմամբ:

2) Վերջին շրջանին, Լիբանան կը դիմագրաւէ երկու տագնապներ՝ ընկերատնտեսական եւ նախագահական ընտրութիւն: Ինչպէս Լիբանանի մէջ Մեր ունեցած հանդիպումներուն (վարչապետ, նախարարներ, երեսփոխաններ, հոգեւոր պետեր, դեսպաններ), այնպէս ալ օտար պետութիւններու բարձրաստիճան պատասխանատուներուն հետ Մեր հանդիպումներու ընթացքին անդրադարձ կատարուեցաւ Լիբանանէն ներս ստեղծուած ընկերատնտեսական տագնապին: Փաստօրէն ժողովուրդը զոհը դարձաւ յաշորդական կառավարութիւններու սխալ որոշումներուն: Նաեւ այս է օտար պատասխանատուներուն տեսակէտը: Մեր մօտեցումը եղաւ ընկերատնտեսական կեանքի անյապաղ վերականգնումը՝ նոր նախագահի ընտրութեամբ ու նոր կառավարութեան կազմութեամբ: Յայտնենք, որ այս ծիրէն ներս օտար պետութիւններ, յատկապէս արաբական երկիրներ, World Bank-ի եւ I.M.F.-ի պատրաստ են վստահութեան, համարատուութեան ու թափանցիկութեան հաստատումով օժանդակելու Լիբանանին:

Ինչ կը վերաբերի նախագահական ընտրութեան, անցնող տարուան ընթացքին այս ուղղութեամբ լուսարձակներէ հեռու յաճախակի հանդիպումներ տեղի ունեցան Պֆլեքէի ու Անթիլիասի մէջ՝ մարոնիք եկեղեցւոյ հոգեւոր պետ՝ Ռայի Պատրիարքին առաջարկով: Զանազան կուսակցութիւններու պատասխանատուներ ու նախագահական թեկնածուներ այցելեցին Անթիլիասի Մայրավանք: Նա-

խագահական ընտրության հետ ուղղակի եւ անուղղակի աղերս ունեցող պետութիւններու ներկայացուցիչներ եւս այցելեցին Անթիլիաս: Այս բոլորի կողմին, կարեւորութեամբ կ'ուզենք յիշեցնել, որ ընդառաջելով Քաթարի վարչապետ՝ Շէյխ Մոհամմէտ Պըն Ապտ Ալ-Ռահման Պըն Ճասէմ Ալ-Սանիի հրաւերին, երկօրեայ այցելութեամբ մեկնեցանք Տոհա, Մեզի հետ ունենալով կիբանանի Հայկական Երեսփոխանական Պլոֆի ներկայացուցիչ՝ Տիար Յակոբ Բագրատունին: Վարչապետը կը նախագահէ կիբանանի նախագահական ընտրութեամբ մօտէն զբաղող հինգ երկիրներու (Ֆրանսա, Սէուտական Արաբիա, Քաթար, Եգիպտոս, Միացեալ Նահանգներ) խմբակի հանդիպումներուն: Իմացանք վարչապետին տեսակէտը եւ մեր կարգին պարզեցինք մեր մտահոգութիւնները: Ապու Տապիի մեր համայնքին տուած Հովուապետական այցելութեան ծիրէն ներս, հանդիպում ունեցանք Արաբական Միացեալ Էմիրութիւններու Արտաքին գործոց նախարար՝ Շէյխ Ապտալլա Պըն Զայէտ Ալ-Նահեանի հետ, որ եղբայրն է երկրի նախագահին: Բոլորին տեսակէտները կարելի է ամփոփել հետեւեալ կէտերուն շուրջ.- Նախագահական ընտրութիւնը անյետաձգելի հրամայական է. անհրաժեշտ է ընտրել այնպիսի անձ մը, որ ո՛չ միայն ծանօթ է երկրի ներքին եւ արտաքին հարցերուն, այլ նաեւ փորձառութիւնը ու պատրաստակամութիւնը ունի կողմերու միջեւ գործակցութիւն ստեղծելու, միշտ ամուր պահելով կիբանանի ամբողջականութիւնը, գերիշխանութիւնն ու միութիւնը: Գոհունակութեամբ կ'ուզենք յայտնել, որ բոլոր Մեր խօսակիցները, կիբանանէն ներս թէ դուրս, յատուկ համարում ու վստահութիւն ունին կիբանանի Հայ համայնքին ու յատկապէս Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նկատմամբ, եւ կը սպասեն, որ մեր ունեցած կապերով եւ հարցերու անաչառ ու հաւասարակշռուած մօտեցումով կարենանք կարեւոր դեր կատարել նախագահական ընտրութեան առնչուած աշխատանքներու մէջ:

3) Վեհափառ Տէր, Ձեր այցելած երկիրներուն մէջ հաստատուած Հայ համայնքներուն նկատմամբ կ'արժէ իմանալ պետական պատասխանատուներուն մօտեցումը:

3) Ինչպէս քիչ առաջ յայտնեցինք, Մեր այցելած երկիրներուն եւ Մեզի այցելութիւն տուած օտար երկիրներու դեսպաններուն մօտ խոր յարգանք ու վստահութիւն տեսանք իրենց երկիրներուն մէջ հաստատուած Հայ համայնքներուն, ինչպէս նաեւ մեր Ս. Աթոռին նկատմամբ: Ներկայ ժամանակներուն, երբ Միջին Արեւելքը հսկայ վտանգներու դիմաց կը գտնուի, երբ կարգ մը երկիրներու դերակատարութիւնը սկսած է դառնալ առանցքային, անոնց բարձրաստիճան պատասխանատուներուն հետ Մեր հանդիպումները պերճախօս վկայութիւն են Մեր անձէն անդին՝ մեր Ս. Աթոռին ու Հայ համայնքներուն նկատմամբ իրենց ունեցած բարձր համարումին: Օրինակ, Արաբական Միացեալ Էմիրութեանց Արտաքին գործոց նախարարը ըսաւ, թէ իր երկրէն ներս Հայ համայնքը, անկախ երկրին տնտեսական զարգացման բերած իր կարեւոր նպաստէն, կրօնական, մշակութային ու ազգային

իր ինֆնուրեամբ իւրայատուկ արժէք մըն է երկրին համար: Արդարեւ, Հայ համայնքները իրենց հաւատարմութեամբ ու աշխատասիրութեամբ նուանած են այն յարգանքը, գոր այսօր կը տեսնենք այդ երկիրներու ժողովուրդներուն ու պատասխանատուներուն մօտ: Մեր թելադրութիւնն է, որ նոյն ոգիով մեր համայնքները շարունակեն իրենց մասնակցութիւնը բերել իրենց ապրած երկիրներու առաւել յառաջդիմութեան նպաստող աշխատանքներուն:

4) Վեհափառ Տէր, վերջին երեք տարիներու Ձեր հոշակագրերը առնչուած էին Սփիւռքի վերակազմակերպման: Ի՞նչ ընթացքի մէջ են այս ուղղութեամբ կատարուող աշխատանքները:

4) Վերջին երեք տարիներուն՝ 2022, 2023 եւ 2024, Հայրապետական Մեր հոշակագրերուն սեւեռակէտը Սփիւռքի վերակազմակերպումն էր: Այս ծրագրին ու անոր առնչուած գործընթացին նկատմամբ տարբեր մօտեցումներ որդեգրեցինք, ինչպէս նաեւ տարբեր շեշտաւորումներ կատարեցինք հոշակագրերուն մէջ, նկատի ունենալով մեր գաղութներուն իւրայատկութիւնները եւ անոնց պարզած ներկայ վիճակը: Առաւելագոյն չափով փորձեցինք ըլլալ իրապաշտ ու գործնական: Մեր թեմերուն տուած Հովուապետական այցելութիւններուն Մեր օրակարգին հիմնական հարցը Սփիւռքի վերակազմակերպումն էր: Այս մասին լայնօրէն խօսեցանք եւ պարզեցինք Մեր մտահոգութիւններն ու սպասումները, միաժամանակ լսեցինք գաղութներուն մտահոգութիւններն ու տեսակէտները: Սփիւռքի վերակազմակերպումը այլեւս դարձած է անյետաձգելի: Սփիւռքը չի կրնար շարունակել այնպէս, ինչպէս որ է: Փաստօրէն, Սփիւռքը ինֆնամաշումի ու գունաթափումի մէջ է. պատճառները այլազան են ու բազմազան. նոյնպէս նաեւ հետեւանքները՝ խառն ամուսնութիւններէն սկսեալ մինչեւ Հայ լեզուի նահանջ, մարդուժի պակասէն սկսեալ մինչեւ կառոյցներու գործունէութեան նօսրացում: Անհրաժեշտ է այս բոլոր հարցերը իրատես մօտեցումով քննել ու համապատասխան որոշումներ կայացնել եւ ներկայ պայմաններու լոյսին տակ մեր գաղութները վերակազմակերպելու ու վերանորոգելու գործընթացներ ճշդել: Սա դիրքին գործընթաց մը չէ, սակայն զայն սկսիլը անյետաձգելի անհրաժեշտութիւն է: Այս հարցերու մասին երեք հոշակագրերուն մէջ անդրադարձած ենք եւ բնականաբար պիտի շարունակենք մեր աշխատանքները՝ իւրաքանչիւր թեմին ու գաղութին յիշեցնելով վերակազմակերպումի հիմնական կարիքը: Յայտնենք, որ յառաջիկայ Մարտի կէսերուն Մայրավանքէն ներս յաջորդաբար Ազգ. Կեդրոնական վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովներու լիակատար նիստեր պիտի գումարուին, ինչպէս նաեւ՝ Թեմակալ Առաջնորդներու ու Ազգ. Վարչութեանց ներկայացուցիչներու հետ հանդիպումներ տեղի պիտի ունենան (Մարտ 11-16): Յիշեալ հանդիպումներու օրակարգերուն գլխաւոր նիւթը պիտի ըլլայ Սփիւռքի վերակազմակերպումը: Այս առիթով կ'ուզենք դարձեալ յիշեցնել, որ Սփիւռքի վերակազմակերպումը Մենք կը տեսնենք մէկ ազգի ու մէկ Հայրենիքի ամբողջութեան ծիրէն ներս: Հետեւաբար, Սփիւռքի հզօրացումը

Հայաստանի հզօրացումն է, եւ փոխադարձաբար: Այս եղած է մեր Ս. Աթոռին եւ անձնապէս Մեր մօտեցումն ու համոզումը, եւ համասփիտեան մտածողութեան մշակումը դիտած ենք համահայկական մտածողութեան մշակման ծիրէն ներս, ինչպէս նաեւ մեր ազգին ու Հայրենիքին գործող ոյժերու եւ կառոյցներու համախմբումը համահայկական օրակարգի մը շուրջ, նկատած ենք ու միշտ կը նկատենք հրամայական:

5) *Վեհափառ Տէր, ողջունելի է Ձեր նախաձեռնութեամբ հաստատուած «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ը: Կրնայի՞ք այս մասին անհրաժեշտ տեղեկութիւններ տալ մեր ընթերցողներուն:*

5) «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ը կը նկատենք օգտաշատ նախաձեռնութիւն մը, յատկապէս նկատի ունենալով Հայաստանը, Արցախն ու Սփիւռքը դիմագրատող ներկայ լուրջ տագնապները: Այս ուղղութեամբ ունեցանք առցանց եօթը հանդիպումներ, որոնց ընթացքին քննարկեցինք մեր ազգի զանազան տագնապներուն ու մարտահրաւիրներուն առնչուած դէպքեր, կացութիւններ ու վտանգներ՝ անաշտ, իրատես ու համապարփակ մօտեցումով: Ապա, շուրջ երեք շաբաթ առաջ, Անթիլիասի Մայրավանքէն ներս ունեցանք Հարթակին առաջին հանդիպումը: Անոր մաս կը կազմեն 12 մտատրականներ, փորձագէտներ, դասախօսներ ու իրաւագէտներ՝ Հայաստանէն, Արցախէն, Իրանէն, Զուիցերիայէն, Ֆրանսայէն, Ամերիկայի Միացեալ Նահանգներէն, Հարաւային Ամերիկայէն եւ Լիբանանէն: Հարթակին նպատակն է քննել ու վերլուծել, միշտ իրապաշտ ու համապարփակ մօտեցումով, Հայաստանի, Արցախի ու շրջանի աշխարհաբանական պայմաններուն ու հոլովոյթին, ինչպէս նաեւ Ազրայէջանի, Թուրքիոյ, Իրանի եւ Արեւմուտքի հետ Հայաստանի յարաբերութեան հետ աղերս ունեցող խնդիրներ: Վերլուծական աշխատանքներէ անդին, Հարթակը նաեւ պիտի փորձէ որոշ գործնական քայլերու դիմել՝ թէ՛ համագումարներու կազմակերպումով եւ թէ՛ հրատարակութիւններով: Այս ուղղութեամբ կ'արժէ կարգաւ Անթիլիասի Մայրավանքէն ներս Հարթակին հանդիպումէն ետք կատարուած յայտարարութիւնը:

6) *Վեհափառ Տէր, ուրախութեամբ իմացանք Ֆանարի հայկական աւանին մէջ «Խորէն Ա. Կեդրոն»ի շուտափոյթ բացումին մասին: Ի՞նչ է նպատակը յիշեալ կեդրոնին:*

6) Ֆանարի հայաւանին կից գտնուող նախկին Գարակէօզեան վարժարանի (ապա հանամիրեան գոլէն) շէնքը վերադասատրումի ու վերանորոգութեան ենթարկեցինք եւ զայն անուանեցինք «*Խորէն Ա. Կեդրոն*»՝ երջանկայիշատակ Խորէն Ա. Կաթողիկոսին անունով: Յայտնենք, որ Խորէն Ա. Վեհափառը Ֆանարի եւ յիշեալ վարժարանի շինութեան մէջ նախաձեռնողը եղած էր: Արդէն իսկ «*Խորէն Ա. Կեդրոն*» փոխադրուած են Հայ Եկեղեցոյ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.), «Շնորհալի» եւ «Նարեկացի» երգչախումբերու գրասեն-

եակները, ինչպես նաև Կաթողիկոսարանի հայագիտական ու մանկավարժական կեդրոնները: Կեդրոնը պիտի ունենայ մատենադարան եւ այլ բաժանմունքներ: Նաև պիտի ունենայ իր տնօրէնն ու պաշտօնէութիւնը: Անոր բացումը պիտի կատարուի Հինգշաբթի, 14 Մարտ 2024-ին, երբ Մայրավանքէն ներս տեղի ունենան Ազգ. Կեդրոնական վարչութեան լիակատար նիստերը: Արդարեւ, յիշեալ կեդրոնի հաստատումով ո՛չ միայն արժանի յարգանք կ'ընծայենք երջնկյ. Խորէն Ա. Վեհափառ Հայրապետի յիշատակին, այլ նաև լայն կարելիութիւններ կը ստեղծենք Կաթողիկոսութեան հետզհետէ աճող ու ծաւալող առաքելութեան առնչուած բազմակողմանի ծրագիրներուն ու աշխատանքներուն: Մեր Ս. Աթոռին ձեռք ձգած իրագործումներուն փարոզութիւնը կատարելու նիգէն միշտ հեռու ենք մնացած: Գործը կը ճառագայթէ. կարիքը շունի գովասանքի: Կ'ուզենք սակայն յիշեցնել, որ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան առաքելութիւնը, բոլոր մարզերէն ներս ու բոլոր մակարդակներու վրայ, հետզհետէ կը ստանայ նոր ծաւալ ու շեշտատրում: Արդ, մենք կոչուած ենք մեր առաքելութեան նոր թափ տալու՝ ընդառաջ ներկայ պայմաններուն, մարտահրաւէրներուն եւ մեր ժողովուրդի սպասումներուն:

Վեհափառ Տէր, Cilicia TV-ն իր ջերմ շնորհակալութիւնը կը յայտնէ Ձեզի, որ հակառակ Ձեր բազմազբաղ ժամանակացոյցին, վերոնշեալ տեղեկութիւնները փոխանցեցիք Cilicia TV-ի հետեւողներուն:



ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎ

**ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ
«ԿԻԼԻԿԻԱ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՀԱՐԹԱԿ»-ԻՆ ԽՈՐՀՐԴԱԺՈՂՈՎԸ՝
«ՀԱՅԿԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ԵՒ ՏԱՐԱԾԱՂՋՐՋԱՆԱՅԻՆ
ՎԵՐՋԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆՆԵՐԸ» ԽՈՐԱԳՐՈՎ**

Նախագահությամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Ուրբաթ, 19 և Շաբաթ, 20 Յունուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ գումարուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան «Կիլիկիա Վերլուծական Հարթակ»ի «Հայկական աշխարհը եւ տարածաշրջանային վերջին իրադարձութիւնները» խորագրով խորհրդաժողովը:

Հարթակին մաս կը կազմեն՝ Հայաստանէն՝ փրոֆ. Աշոտ Մելքոնեան, փրոֆ. Ռուբէն Սաֆրաստեան, դոկտ. Արմէն Մարուքեան, Արցախէն՝ դոկտ. Վահրամ Բալայեան, Միացեալ Նահանգներէն՝ դոկտ. Հրայր Պալեան, հարաւային Ամերիկայէն՝ դոկտ. Խաչիկ Տէր Ղուկասեան, Ֆրանսայէն՝ Տիգրան Եկաւեան, Զուիցերիայէն՝ դոկտ. Վիգէն Զթըրեան, Լիբանանէն՝ դոկտ. Նորա Պայրազտարեան եւ Շահան Գանտահարեան: Խորհրդակցութիւններուն քարտուղարութիւնը ստանձնած է Ահարոն Շիրտըմեան: Աւելցնենք, որ հարթակը արդէն մինչ խորհրդաժողովը ունեցած էր առցանց եօթը նիստեր:

Խորհրդաժողովը քննարկեց Ազրպէյճանի պատմութեան նենգափոխումները դիմակայելու, Արցախի ժողովուրդի հաւաքական վերադարձի եւ անվտանգութեան երաշխաւորման իրաւական ուղիները որոնելու, տարածաշրջ-



ջանային քաղաքական իրադարձություններու առնչությունները նախատեսելու, ռազմագերիներու եւ առեւանգուած ռազմաքաղաքական ղեկավարութեան ազատ արձակման աշխատանքներու մասին ուղղություններ ճշդելու եւ Արցախի հոգեւոր ու մշակութային ժառանգութեան պահպանման համար միջազգային ատեաններու յանձնառությունը ապահովելու առաջադրանքները: Խորհրդաժողովը արձանագրեց.-

1) Միջազգային իրաւունքի մասնագէտներ եւ ցեղասպանագէտներ Արցախի հայաթափումը որակեցին ցեղասպանություն:

2) Ինչպէս 20-րդ դարու Մեծ եղեռնը, Արցախի հայաթափումը տեղի ունեցաւ ի լուր անտարբեր մնացած միջազգային հանրութեան, ներառեալ Հայաստանի գործընկեր Ռուսիոյ:

3) Արցախի հարցը փակուած չէ. կարելի չէ լուր մնալ ոճիրին, անոր ուրացման եւ շարունակման վտանգին դէմ յանդիման:

4) Արցախի հարցով յանձնառությունը յանձնառություն է Հայաստանի հողային ամբողջականութեան, անկախութեան եւ ապահովութեան:

5) Դէմ յանդիման ազգային գոյութենական սպառնալիքին, Հայրենի հայությունն ու Սփիւռքը պարտին վերջ տալ ներքին պառակտումներուն, ոյժերու ջլատման եւ կրաւորականացման, համախմբուիլ ի խնդիր սպառնալիքի միասնական դիմակայման:

6) Նպատակաուղղուած աշխատանքներ ծրագրել դէպի հզօր Հայաստան եւ հզօր Սփիւռք՝ իբրեւ մէկ ամբողջութեան վերակայացում:

Խորհրդաժողովը գործնական աշխատանքներու առումով որոշեց.-

ա) 24 Ապրիլ 2024-ի նախօրեակին, Հայաստանի, Արցախի, Սփիւռքի եւ ոչ-հայ մասնագէտներու մասնակցութեամբ, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հովանաւորութեամբ, հրաւիրել Արցախի դէմ իրագործուած ցեղասպանություն եւ միջազգային դատական ատեաններու մօտ Ազրպէյճանը պատասխանատուութեան կանչելու ուղիներուն նուիրուած միջազգային գիտաժողովի: Բ) Հրատարակութեան ձեռնարկել «Կիլիկիա վերլուծական Հարթակ»ի 19-20 Յունուար 2024-ի խորհրդաժողովի նիստերու ժողովածուն: Գ) «Արցախի նկատմամբ Ազրպէյճանի կողմէ 2016-2023-ին կատարուած յանցագործությունները եւ անոնց հետեւանքները» հետազօտական ծրագրի շրջանակներուն մէջ համակողմանի վերլուծութեան ենթարկել յիշեալ ժամանակահատուածի ընթացքին Արցախի դէմ Ազրպէյճանի իրագործած յանցագործությունները՝ նախանշելով անոնց դատապարտման եւ հետեւանքներու վերացման հնարաւոր մեթոտներն ու գործիքակազմերը: Դ) Պատրաստել Արցախի բռնազրաւուած տարածքներուն մէջ մշակութային ցեղասպանութեան ենթարկուած եւ անոր սպառնալիքին տակ գտնուող հոգեւոր-մշակութային ժառանգութեան արժէքներու ցանկը: Ե) Արամ Ա. Կաթողիկոսին եւ Եկեղեցիներու Համաշխարհային Խորհուրդի ճամբով կոչ ընել, որպէսզի անյապաղ ազատ արձակուին ռազմաքաղաքական առեւանգուած ղեկավարությունն ու ապօրինաբար պահուող ռազմագերիները:

ԴՊՐԵՎԱՆՔ

ՀՈԳԵՄՏԱԲՈՐ ԿԵԱՆՔԸ ԴՊՐԵՎԱՆՔԷՆ ՆԵՐՍ

ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դպրեվանքի արտադասարանային ծրագիրներուն ծիրէն ներս, Ուրբաթ, 19 Յունուար 2024-ի երեկոյեան, Դպրեվանքի Ուսանողական խորհուրդը կազմակերպած էր դասախօսութիւն-զրոյց մը՝ «Արհեստագիտական բանականութիւնը եւ անոր դերը մարդկային կեանքին մէջ» նիւթով, դասախօս ունենալով Կաթողիկոսարանի լատեսողական բաժանմունքի աշխատակիցներէն՝ Արամ Սոմունճեանը:

Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի ընծայարանի սաներէն՝ Յակոբ Կիս.Սրկ. Սրապոնեան: Այնուհետեւ դասախօսը ներկայացուց արհեստական բանականութեան յառաջացուցած տարբեր երեւոյթներն ու նորարարութիւնները եւ խօսեցաւ անոր դրական ու ժխտական դերակատարութիւններուն մասին:

Եզրափակիչ խօսքով հանդէս եկաւ Տեսուչ հայր սուրբ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեանը: Ան ընդգծեց, որ որքան ալ արհեստական բանականութիւն-



նր յառաջդիմէ, ան պիտի չկարենայ փոխարինել մարդը, որովհետեւ մարդը անփոխարինելիօրէն իր մէջ կը կրէ աստուածային պատկերն ու նմանութիւնը:

Աւարտին, ան փոքր յուշանուէրով մը շնորհակալութիւն յայտնեց ու պատուեց օրուան դասախօսը:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՐՑՈՒՄ

Ուրբաթ, 26 Յունուար 2024-ի երեկոյեան, Դպրեվանքի տեսչութեան տնօրինումով եւ Ուսանողական խորհուրդի կազմակերպութեամբ, «Բրաբիոն Տումանեան» հանդիսասարահէն ներս տեղի ունեցաւ Դպրեվանքի ականգութիւններուն մաս կազմող Զարգացման Մրցումը:

Դպրեվանքիները բաժնուեցան երեք խումբի՝ հետեւեալ անուններով՝ «Ուրարտու», «Վարդանանց» եւ «Գարեգին Նժդեհ»: Մրցումի հարցումները կը վերաբերէին աստուածաշնչական, ծիսական, մարզական, պատմական, գրական, երաժշտական, կենդանական եւ բուսական մարզերու գիտելիքներու վրայ: Իւրաքանչիւր դպրեվանքի իր մասնակցութիւնը բերաւ հարցումներուն պատասխանելով եւ իր խումբին համար նիշ ապահովելով: Խաղի ու մրցոյթի միջնորդտէն անդին, դպրեվանքիները տեղեկութիւններ ամբարեցին եւ նոր ու հաճելի գիտելիքներով հարստացած երեկոյ մը ունեցան:

Մրցումի ավարտին, յաղթանակի դրօշը պարզեց «Վարդանանց» խումբը:

ՅՈՒՇ ԵՐԵԿՈՅ՝ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ ԵՐԶԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐՈՒՆ

Ուրբաթ, 2 Փետրուար 2024-ի երեկոյեան, Դպրեվանքի տեսչական կազմին տնօրինութեամբ եւ Ուսանողական խորհուրդին կազմակերպութեամբ, «Բրաբիոն Տումանեան» հանդիսասարահէն յատուկ ձեռնարկով նշուեցաւ Ս. Աթոռոյս երջանկայիշատակ հայրապետներուն յիշատակը:

Այս առիթով, Դպրեվանք բարձրացան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երէց միաբաններէն խումբ մը, որոնք ներկայացուցին Կաթողիկոսութեան Անթիլիասի մէջ հաստատումէն ետք ծառայած ու վախճանած հայրապետներուն կեանքն ու գործունէութիւնը:

Գերպ. Տ. Ստեփանոս Մ. Վրդ. Փաշայեան արտասանեց բացման խօսքը, որուն ընթացքին անդրադարձաւ Կիլիկիոյ Աթոռին առաքելութեան եւ հայրապետներուն ունեցած ներդրումներուն: Ապա, հերթաբար բեմ բարձրացան միաբան հայրերը, որոնք մանրամասնօրէն ներկայացուցին իւրաքանչիւր Հայրապետի կեանքն եւ տարած գործունէութիւնը:

Այսպէս՝ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան ներկայացուց Սահակ Բ. Խապայեան Կաթողիկոսը, Գերշ. Տ. Վարուժան Արք. Հերկելեան՝ Բաբգէն Ա. Կիւլէսերեան Աթոռակից Կաթողիկոսը, Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան՝ Պետ-

րոս Ա. Սարաճեան Կաթողիկոսը, Գերպ. Տ. Շնորհք Ծ. Վրդ. Աշրգեան՝ Գարեգին Ա. Յովսէփեան Կաթողիկոսը, Գերշ. Տ. Օշական Արք. Զօլոյեան՝ Զարեհ Ա. Փայասլեան Կաթողիկոսը, Գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան՝ Խորէն Ա. Բարոյեան Կաթողիկոսը եւ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեան՝ Գարեգին Բ. Սարգիսեան Կաթողիկոսը:

Աւարտին, Տեսուչ Հայր սուրբը արտասանեց իր սրտի խօսքը: Առաջին հերթին, Դպրեվանեցիներուն անունով շնորհակալութիւն յայտնեց միաբան հայրերուն ու ըսաւ. «Այսօր, մեր պարտքն ու պարտականութիւնն է Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան ճամբով շարունակել մեր հոգելոյս հայրապետներուն գործը՝ ի փառս Աստուծոյ եւ ի պանծացումն Հայ եկեղեցւոյ»: Աւարտին, միաբան հայրերուն եւ դպրեվանեցիներուն կողմէ երջանկայիշատակ հայրապետներուն անսակարկ ծառայութիւնը յարգուեցաւ «Կիլիկիա» մաղթերգով:

«ՀՈԳԵՒՈՐ ՄՏԱՄՓՈՓՄԱՆ ՕՐ»

Դպրեվանքի ընտանիքը, քաղցր աւանդութեամբ մը, Մեծ Պահքի առաջին օրը կոչած է «Հոգեւոր մտամփոփման օր», որուն ընթացքին դպրեվանեցիները մասնակից կը դառնան Հայ Առաքելական Եկեղեցւոյ եօթը ժամերգութիւններուն, ներկայ կը գտնուին օրուան թեմային առնչուող դասախօսութիւններու եւ կ'ունենան խոկումի եւ ներամփոփման պահեր:

Այս տարի, Երկուշաբթի, 12 Փետրուար 2024-ին, սոյն աւանդութեան համաձայն տեղի ունեցաւ «Հոգեւոր մտամփոփման օր»ը:

Օրուան առաջին խորհրդածութիւնը կատարեց Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան՝ Ս. Պատարագին հոգեւոր երեսը» նիւթով: Հայր սուրբը Պատարագի իւրաքանչիւր բաժինը կապեց Քրիստոսի կեանքին վերջին ժամերու պատահարներուն եւ համապատասխան վերլուծում կատարեց: Հայր սուրբը նաեւ անդրադարձաւ Ս. Պատարագի կարեւորութեան եւ անոր նպատակին:

Արեւագալի ժամերգութենէն ետք, տեղի ունեցաւ երկրորդ դասախօսութիւնը, որուն բացման խօսքը արտասանեց Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեանը եւ ներկայացուց դասախօսին կենսագրականը: Այս բաժինին դասախօսն էր Հայկազեան համալսարանի Նախագահ՝ Վերպ. Դոկտ. Փօլ Հայտոսթեան, որ իբր նիւթ ընտրած էր «Քրիստոսի հետ մտերմութիւնը»: Վերապատուելի Հայտոսթեան շեշտեց, որ նախքան Քրիստոսի հետ մտերմանալն ու Անոր մասին խօսիլը, կարեւոր է, որ Քրիստոսի հետ խօսինք եւ սերտենք Աստուածաշունչ մատեանը: Աւարտին, Տեսուչ Հայր սուրբը իր շնորհակալութիւնը յայտնեց դասախօսին եւ փոքր յուշանուէրով մը պատուեց զինք:

Երեկոյեան ժամերգութեան ավարտին, կատարուեցաւ երրորդ դասախօսութիւնը: Բացման խօսքով հանդէս եկաւ Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան, որ ամփոփ կերպով ներկայացուց դասախօսին կենսագրականը: Այս դասախօսութիւնը ներկայացուց Պալամանտ Համալսարանի աստուածաբանական հիմնարկի Տնօրէն՝ Հայր Ժագ Խալիլը, որ իբր նիւթ ընտրած էր «Վանականութեան հոգեւոր խորհուրդը»: Իր խօսքին մէջ դասախօսը ներկայացուց վանականութեան եւ հոգեւորականութեան իմաստը եւ անոնց խորքային հասկացողութիւնը: Այնուհետեւ, Տեսուչ Հայր սուրբը, իր երախտագիտութիւնը յայտնեց դասախօսին եւ յուշանուէր մը փոխանցեց անոր: Օրուան ընթացքին, Դպրեվանքեցիներ իրենց սիրտի խորքէն աղօթքներ բարձրացուցին առ Աստուած եւ խնդրեցին Աստուծմէ սէր, միութիւն, խաղաղութիւն եւ առողջութիւն համայն աշխարհին համար:

ԾԽԱՅԻՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՈՒՆ ՄԷՋ՝ ՀՍԿՈՒՄԻ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆ ՄԱՍՆԱԿԻՑ

Մեծ պահոց քառասնօրեայ ժամանակահատուածի ընթացքին, գեղեցիկ ավանդութիւն դարձած է Դպրեվանքի սաներուն մասնակցութիւնը ծխային եկեղեցիներու հոգեպարար արարողութիւններուն:

Առ այդ, Ուրբաթ, 16 եւ 23 Փետրուարի երեկոներուն, սաները հսկումի արարողութիւն կատարեցին Նոր Սիսի «Ս. Սարգիս» եւ Ճիւնիի «Ս. Յարութիւն» եկեղեցիներուն մէջ:

Դպրեվանքեցիներուն կողմէ կատարուած շարականներու երգեցողութեան ու արտասանուած աղօթքներուն երկիւղածութեամբ մասնակից դարձան ներկայ հաւատացեալները:

Ս. Սարգիս եկեղեցւոյ մէջ արտասանած իր խօսքին մէջ Դպրեվանքի Տեսուչ՝ Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան տեսչութեան անունով նախ շնորհակալութիւն յայտնեց Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Շահէ Արք. Փանոսեանին, ծխատէր քահանայ հօր՝ Արժ. Տ. Ներսէս Քհնյ. Պասիլեանին, Թաղական խորհուրդին եւ Տիկնանց միութեան, Դպրեվանքի նկատմամբ իրենց տածած սիրոյն, յարգանքին ու հոգածութեան համար ու ապա անդրադարձաւ Դպրեվանքի առաքելութեան: Այս առիթով ան կոչ ուղղեց ներկաներուն, որ իրենց զաւակները ուղղեն դէպի այս հոգեմտաւոր դարբնոցը:

Օրուան խորհրդածութիւնը կատարեց Դպրեվանքի հսկիչներէն՝ Հոգշ. Տ. Գէորգ Վրդ. Գարակէօզեան՝ բնաբան ունենալով Եսայի մարգարէին խօսքը, որ կ'ըսէ «Ազնուաբարոյ մարդը ազնիւ բաներ կը խորհի ու ազնիւ բաներու վրայ հաստատ կը մնայ»: Հոգշ. Հայր սուրբը իր խօսքին մէջ կարեւորութեամբ շեշտեց քրիստոնէական կեանքի վսեմագոյն արժանիքներով առաջնորդուելու անհրաժեշտութիւնը եւ հրաւիրեց հաւատացեալները հաստատ մնալու մեր Արարչին պարգեւած ազնիւ արժէքներուն:

Հսկումի արարողութենէն ետք Դպրեվանքի տեսչութիւնն ու դպրեվանեցիները հիւրը դարձան եկեղեցւոյ Տիկնանց միութեան կողմէ պատրաստուած սիրոյ սեղանին:

Իսկ Ճիւնիի «Ս. Յարութիւն» եկեղեցւոյ մէջ արտասանած իր խօսքին մէջ Հայր Պարոյր դարձեալ երախտագիտութիւն յայտնեց Թեմի Առաջնորդ Սրբազան Հօր, ինչպէս նաեւ ծխատէր քահանայ հօր՝ Արժ. Տ. Սարգիս Ա. Քհնյ. Սարգիսեանին, Թաղական խորհուրդին եւ Տիկնանց միութեան: Հոն եւս ամփոփելով Դպրեվանքի առաքելութիւնը, ան հրաւիրեց ծնողները իրենց զաւակները Դպրեվանքին վստահելու:

«Ս. Յարութիւն» եկեղեցւոյ մէջ խորհրդածութիւնը կատարեց Դպրեվանքի նորագոյն հունձքի շրջանաւարտներէն՝ Բրշ. Նշան Սրկ. Անտրեան՝ բնաբան ունենալով Ս. Մեսրոպ Մաշտոցի գրած ապաշխարութեան շարականներէն, հետեւեալ խօսքը.՝ «Մեղքերով վիրաւորուած, քու առջեւ ծունկի կու գամ Փրկիչ, մի՛ անտեսեր զիս, այլ ողորմէ՛»: Տիրացուն իր խօսքին մէջ կարեւորութեամբ շեշտեց Քրիստոսի դառնալու գաղափարը, որովհետեւ Աստուած գթած եւ երկայնամիտ է:

Հսկումի արարողութենէն ետք, Դպրեվանքի տեսչութիւնն ու դպրեվանեցիները հիւրը դարձան եկեղեցւոյ Տիկնանց միութեան կողմէ պատրաստուած սիրոյ սեղանին:

ՁԵՌՆԱՐԿ՝ «ՀԱՒԱՏՔԻ ՈՒՍՈՒՅՈՒՄԸ» ԽՈՐԱԳՐՈՎ՝ ՍԱԺԷՍ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԷՆ ՆԵՐՍ

Երեքշաբթի, 20 Փետրուար 2024-ի առաւօտեան, Միջին Արեւելքի աստուածաբանական կեդրոններու եւ դպրեվանքերու միութեան (A.T.I.M.E.) կազմակերպութեամբ՝ Սաժէս համալսարանին մէջ տեղի ունեցաւ «Հաւատքի ուսուցումը» խորագրեալ ձեռնարկ մը, որուն իրենց մասնակցութիւնը բերին Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ընծայարանի սաները:

Ձեռնարկին ներկայ էին Լիբանանի կրօնական տարբեր համայնքներու հոգեւոր առաջնորդներ եւ համայնքները ներկայացնող համալսարանական աշակերտներ:

Այս հանդիպումին նպատակն էր տարբեր նիւթերու քննարկման ընդմէջէն երկխօսութիւն ստեղծել համալսարանականներուն միջեւ:

Օրուան ընթացքին ներկայացուցեցան երկու դասախօսութիւններ. առաջին նիւթն էր՝ «Աւետարանի վաւերագրութիւնը», որուն փոխանցումը կատարեցին Հայր Ժագ Խալիլն ու Արժ. Միշէլ Սագըրը, իսկ երկրորդը՝ «Քրիստոսի բնութիւնը», որ ներկայացուցեցաւ՝ Ռոժէ Եպս. Ախրասի եւ Փրոֆ. Մարթըն Աքքատի կողմէ:

Յայտագրի աւարտին, իւրաքանչիւր համայնք ներկայացուց իր աւանդական շարականներէն քաղուածքներ:

ՔՐԻՍՏՈՆԷԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

**ՀՈԳԵՒՈՐ ԼՍԱՐԱՆ՝ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ
«Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԲՈՐԻՉ» ՄԱՅՐ ՏԱՃԱՐԷՆ ՆԵՐՍ**

Բարձր հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 20 տարիներէ ի վեր, ամէն երեքշաբթի, առաւօտեան ժամը 10:00-11:00, Կաթողիկոսարանի «Ս. Գրիգոր Լուսավորիչ» Մայր Տաճարէն ներս կը կատարէ Հոգեւոր Լսարան, ուր Միաբան Հայրերու կողմէ սաղմոսասացութեամբ, շարականի ուսուցումներով, աղօթքներով ու մանաւանդ կրօնական խորհրդածութիւններով, մեր ժողովուրդի զաւակներուն կը ջամբուին հոգեւոր մատակարարում:

Առ այդ, Յունուար եւ Փետրուար ամիսներու ընթացքին, կատարուած են հետեւեալ հոգեւոր խորհրդածութիւնները.-

ա) 9 Յունուար 2024-ին, Բրշ. Նշան Սրկ. Անտրեան խօսեցաւ «Նոր Տարի՛ նոր սկիզբ» նիւթին մասին:

բ) 16 Յունուար 2024-ին, Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան խօսեցաւ «Վերջին ժամանակներուն յայտնուելիք մոլորութիւնները» նիւթին մասին:

գ) 23 Յունուար 2024-ին, Բրշ. Հրակ Սրկ. Գրտանեան խօսեցաւ «Հոգեւոր պատրաստութիւն՝ սուրբերուն հարթած ճանապարհէն» նիւթին մասին:

դ) 30 Յունուար 2024-ին, Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան խօսեցաւ «Շնորհակալութեան առաքինութիւնը» նիւթին մասին:

ե) 6 Փետրուար 2024-ին, Գերպ. Տ. Հրանդ Ծ. Վրդ. Թահանեան խօսեցաւ «Ղեւոնդեանք եւ Վարդանանք» նիւթին մասին:

զ) 13 Փետրուար 2024-ին, Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան խօսեցաւ «Ճմարտութիւնը ատեանին մէջ» նիւթին մասին:

է) 20 Փետրուար 2024-ին, Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Լօշխաճեան խօսեցաւ «Առաջին մեղքը եւ անոր պատճառը» նիւթին մասին:

ը) 27 Փետրուար 2024-ին, Գերպ. Տ. Անանիա Ծ. Վրդ. Գուճանեան խօսեցաւ «Ապրիլ այնպէս՝ ինչպէս Աստուծոյ հաճելի է» նիւթին մասին:

ՀՈԳԵՍՏԱԴՈՐ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ «ՀԱՒԱՏՔ ԵՒ ԿԵԱՆՔ» ՅԱՅՏԱԳՐԻ ԸՆԴՄԵՉԵՆ

Բարձր հովանավորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքը աւելի քան 3 տարիներէ ի վեր, համագործակցութեամբ Լիբանանի «Վանայ Ձայն» ռատիոկայանին, ժողովուրդին կը մատուցէ հոգեւոր, բարոյախօսական եւ դաստիարակչական յայտագիր մը՝ «Հաւատք եւ Կեանք» խորագրով, որ տեղի կ'ունենայ ամէն Հինգշաբթի, երեկոյեան ժամը 7:00-8:00, ուղիղ սփռումով:

Յունուար եւ Փետրուար ամիսներու ընթացքին, Միաբան Հայրերու կողմէ կատարուեցան հետեւեալ խորհրդածութիւնները.-

ա) 4 Յունուար 2024-ին, Հոգշ. Տ. Արմէն Աբղ. Գալաճեան խօսեցաւ «Ճրագալոյցը Հայ եկեղեցւոյ կեանքէն ներս» նիւթին մասին:

բ) 11 Յունուար 2024-ին, Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան խօսեցաւ «Ճշմարտութիւնը՝ ազատարար» նիւթին մասին:

գ) 18 Յունուար 2024-ին, Արժ. Տ. Ղեւոնդ Քհնյ. Լօշխաճեան խօսեցաւ «Ի՞նչ կ'ըսէ Աստուածաշունչը երազներու մասին» նիւթին մասին:

դ) 25 Յունուար 2024-ին, Հոգշ. Տ. Պարոյր Վրդ. Շէրնէզեան խօսեցաւ «Ս. Հաղորդութիւն եւ Հոգեհանգիստ» նիւթին մասին:

ե) 1 Փետրուար 2024-ին, Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան խօսեցաւ «Հայ եկեղեցական երգին ծագումն ու զարգացումը» նիւթին մասին:

զ) 8 Փետրուար 2024-ին, Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան խօսեցաւ «Ս. Վարդանանց տօնն ու տօնակատարութիւնը եւ հայորդիներուն փոխանցուած դարաւոր պատգամը» նիւթին մասին:

է) 15 Փետրուար 2024-ին, Բրշ. Նշան Սրկ. Անտրեան խօսեցաւ «Տեառնընդառաջի իմաստն ու նշանակութիւնը» նիւթին մասին:

ը) 22 Փետրուար 2024-ին, Արժ. Տ. Միքայէլ Քհնյ. Տէմիրճեան խօսեցաւ «Խոստովանանք եւ զղշում» նիւթին մասին:

թ) 29 Փետրուար 2024-ին, Արժ. Տ. Խորէն Քհնյ. Մելքոնեան խօսեցաւ «Եկեղեցին եւ երիտասարդը» նիւթին մասին:

ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐ՝ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՄԷՋ

Լիբանանի Հայ Գաղութի կեանքէն ներս գործող հոգեւոր, ընկերային, մշակութային եւ բարեսիրական հաստատութիւններ, զանազան ծրագիրներ եւ ձեռնարկներ իրագործեցին եւ համագործակցութեամբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Քրիստոնէական Դաստիարակութեան Բաժանմունքին, Միաբան Հայրեր հիւրընկալեցին:

Միաբան Հայրերը յիշեալ ձեռնարկներու ընդմէջէն, եկեղեցւոյ առաքելութիւնը տարին ժողովուրդին մէջ, իրենց ներկայութեամբ եղան ժողովուրդին

հետ եւ իբրեւ Հայ Եկեղեցւոյ նուիրեալ սպասաւորներ՝ իրենց ծառայութիւնը մատուցին ժողովուրդին:

Այս առիթով, Յունուար եւ Փետրուար ամիսներու ընթացքին, անոնք պատգամներով, քարոզախօսութեամբ ու դասախօսութիւններով իրենց մասնակցութիւնը բերին վերոյիշեալ ձեռնարկներուն:-

ա) Ուրբաթ, 5 Յունուար 2024-ի առաւօտեան ժամը 9:30-ին, կազմակերպութեամբ «Վանայ Ձայն» ռատիոկայանին տեղի ունեցաւ «Բարեւ» յայտագիրը: Օրուան հոգեւոր պատգամը փոխանցեց՝ Հոգշ. Տ. Եսայի Աբղ. Էօրտէքեան, նիւթ ունենալով՝ «Ս. Ծննդեան Խորհուրդի մասին» խորագիրը:

բ) Կիրակի, 7 Յունուար 2024-ի երեկոյեան ժամը 4:30-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան, նիւթ ունենալով՝ «Նոր Տարին՝ կեանքի նոր հանգրուան» խորագիրը:

գ) Կիրակի, 4 Փետրուար 2024-ի երեկոյեան ժամը 4:30-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան, նիւթ ունենալով՝ «Ղեւոնդեանք եւ Վարդանանք» խորագիրը:

դ) Զորեքշաբթի, 7 Փետրուար 2024-ի առաւօտեան ժամը 10:30-ին, «Մեւլանաթոն եւ Հայկ Արսլանեան» Ճեմարանի Դ. Դասարանի աշակերտները ձեռնարկեցին Մեծ Պահոց Քառասնօրեայ նախասեմին լսելու հոգեւոր դասախօսութիւն մը: Դասախօսութիւնը կատարեց Հոգշ. Տ. Վիգէն Վրդ. Տալգլըճեան, նիւթ ունենալով՝ «Բուն Բարեկենդան, Տեսնունդառաջ եւ Ս. Զատիկ» խորագիրը:

ե) Շաբաթ, 10 Փետրուար 2024-ի երեկոյեան ժամը 5:00-ին, Հ.Մ.Ը.Մ.ի Պէյրութի մասնաճիւղի «Զարեհեան» երէց եւ «Մեղրի» պարմանուհի փաղանգներու նախապատրաստական կարգը, Էշրէֆիէի «Ազատամարտ» ակումբին մէջ ձեռնարկեց դասախօսական շարք մը: Ձեռնարկի ընթացքին դասախօսեց Հոգշ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիրիւմեան, նիւթ ունենալով՝ «Հայ Եկեղեցւոյ Եօթը խորհուրդները» խորագիրը:

զ) Կիրակի, 18 Փետրուար 2024-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Յովակիմ Վրդ. Բանճարճեան, նիւթ ունենալով՝ «Արտաքսման Կիրակի» խորագիրը:

է) Կիրակի, 25 Փետրուար 2024-ին, կազմակերպութեամբ Հայ Եկեղեցասէր Հոգեւոր Միութեան («Նանէճեան» Աղօթարան), տեղւոյն Աղօթարանէն ներս տեղի ունեցաւ Հոգեւոր Լսարան: Օրուան խորհրդածութիւնը կատարեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան, նիւթ ունենալով՝ «Անառակի Կիրակի - Երէց Անառակը» խորագիրը:

«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲ

**«ՇՆՈՐՀԱԼԻ» ԵՐԳՉԱԽՈՒՄԲԸ ՀԱՄԵՐԳՈՎ
ՆՇԵՑ ԻՐ ՀԻՄՆԱԴՐՈՒԹԵԱՆ 50 ԱՄԵԱԿԸ**

Բարձր հովանաւորութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կաթողիկոսարանի «Շնորհալի» երգչախումբը, իր հիմնադրութեան 50 ամեակին առիթով, յոբելինական եզակի համերգ մը տուաւ արուեստասէր ու երաժշտասէր հանրութեան, Շաբաթ, 17 Փետրուար 2024-ի երեկոյեան, «Էմիլ Լահուտ» սրահին մէջ, Տրպաշէ, Լիբանան: Յոբելինական համերգը տեղի ունեցաւ Հոգւ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեանի ղեկավարութեամբ եւ դաշնամուրի վրայ Համբիկ Մարտիրոսեանի նուագակցութեամբ: Համերգը նախատեսուած էր կայացնել անցեալ տարի, սակայն Արցախի ցաւալի կացութեան հետեւանքով յետաձգուած էր:

Հոգելոյս Տ. Զարեհ Արք. Ազնաւորեանի դաշնաւորումով «Տէրունական Աղօթք»-ի գեղեցիկ կատարողութեամբ ընթացք առաւ երգչախումբի 50 ամեակին նուիրուած համերգը:

Բացման խօսքով հանդէս եկաւ խմբավար Հայր սուրբը: Ան ըսաւ, որ ամեակները հանգրուանի մը աւարտը ըլլալու կողքին՝ նոր սկիզբ ու կենսունա-



կուլթիւն պարզեւող առիթներ են: Այսօրուան յոբելինական համերգը յետադարձ ակնարկով կը գնահատէ «Շնորհալի» երգչախումբին անցեալի առաքելութիւնը՝ աւելի փայլուն ապագայի մը տեսլականով: Հոգշ. Հայր սուրբը դիտել տուաւ, որ այս տարեդարձը կ'իրականանայ շնորհիւ երկար տարիներու վրայ տարածուած երգչախումբի բազմահարիւր անդամներու կամաւոր ու նուիրեալ ծառայութեան ու մանաւանդ՝ հաւատքին: Ան աւելցուց, որ երգչախումբին ճամբով ա'լ աւելի կապուածութիւն մը ստեղծուած է ժողովուրդին ու Հայ եկեղեցւոյ եւ անոր ներկայացուցած արժէքներուն միջեւ: Խմբավարը իր խօսքը աւարտեց պատիւ ու երախտագիտութիւն արտայայտելով բոլոր ծառայածներուն ու ծառայողներուն եւ որդիական շնորհակալութիւն յայտնեց Արամ Ա. Կաթողիկոսին՝ մնայուն աջակցութեան ու հոգածութեան համար: «Թող Աստուծոյ շունչը, Ս. Ներսէս Շնորհալիի ոգիով ու հաւատարմութեամբ, միշտ արձագանգէ բոլորիս մէջ եւ լուսաւորէ մեր միտքերն ու հոգիները» աղօթաբոյր այս բառերով Հայր սուրբը եզրափակեց իր խօսքը:

Քաղցր յիշատակներով լի հին օրերու լուսանկարներու շարանը եւ «Շնորհալի» երգչախումբին անցեալի ղեկավարներու մշակումներու ու յօրինումներու կատարումը բեմին վրայ՝ ներկաները ապրեցուցին անցեալի ու ներկայի ներդաշնակումը, հին օրերու քաղցրութիւնը եւ ապագային նկատմամբ վառ յոյսերն ու տեսլականները: Լսեցինք Գէորգ Գանտահարեանի ձօնուած «Երգ Հաւատարմութեան»ը՝ Ռոբերտ Ամիրխանեանի յօրինումով եւ Սարգիս Կիրակոսեանի գրիչով: Հոգեզմայլ այս կտորին մեներգողները եղան Քրիսթին Անտէքեանն ու Ղազար Քէօշկէրեանը: Յատուկ խորհրդաւորութեամբ մեր հոգիները լեցուեցան Զարեհ Եպս. Ազնաւորեանի մշակած «Տէր Ողորմեա»ով, «Ժմաստութիւն»ով, «Սուրբ Խօսք Տէր»ով, «Փառք Քեզի»ով՝ Մարո Սարգիսեանի մեներգութեամբ, «Աստուծոյ Զաւակներ»ով եւ «Յայգանուագ»ով: Ունկնդրեցինք Զաւէն Վրդ. Նաճարեանի մշակումով «Ճարածեալ»ը ու վայելեցինք Կոմիտաս Արք. Օհանեանի մշակած «Բաց Մեզ Տէր»ը՝ Կարօ Քէլէշեանի չքնաղ ձայնով: Վաղինակ Վրդ. Մելոյեանի բառերու ու Թորգոմ Վրդ. Տօնոյեանի երաժշտական ստեղծագործութեամբ երգուեցան «Տուր Ինձի Տէր»ը եւ «Մսուրածին Թագաւոր»ը, ինչպէս նաեւ՝ Թորգոմ վարդապետին կիսասարկաւագութեան օրերուն մշակած «Երանելի Սուրբ Առաքեալք»ը՝ Ղ. Քէօշկէրեանի մեներգութեամբ: Երգուեցաւ նաեւ «Ապրիլ Կրկին» Հայոց Յեղասպանութեան զոհերուն նուիրուած երգը՝ Զաքար Քէլիշեանի երաժշտութեամբ եւ Վարդան Թաշճեանի բառերով: Մեղրիկ Եպս. Բարիքեանի գործերէն ճաշակեցինք «Աղօթք Ամանորի»ն՝ Վարդգէս Ղազարեանի տպաւորիչ մենակատարութեամբ, «Յայտնութիւն 12.10-12»ն եւ սոփրանօ Շողիկ Թորոսեանի սքանչելի մենակատարութեամբ ներկայացուցած՝ «Փառք Քեզ Աստուած»ը, որ կարծես ամբողջ սրահը պատեց «Շնորհալի» երգչախումբի յիսնամեայ առաքելութեան ծառայողներու ոգեղէն ներկայութեամբ՝ Աստուծոյ փառք տալու յուզիչ երգին ճամբով:

Երեկոն աւարտին հասաւ Նորին Ս. Օծութեան հայրական պատգամով: Ան ըսաւ. «50 տարիներու իրագործուած առաքելութեան մը դիմաց ենք: Առաքելութիւն մը կ'իրագործուի հաւաքական աշխատանքով, անմնացորդ նուիրումով ու գիտակից յանձնառութեամբ: Ինչ որ տեսաք եւ լսեցիք երգչախումբին ճամբով, բառին հարազատ հասկացողութեամբ առաքելութիւն էր: 50 տարիներու առաքելութիւնը կատարուեցաւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան նախաձեռնութեամբ եւ հովանաւորութեամբ»: Նորին Սրբութիւնը ընդգրծեց, որ առաքելութիւն մը կ'իրագործուի առաքեալներով, իսկ այս գիշեր ո՛չ միայն տօնախմբութեան գիշեր է, այլ նաեւ յարգանքի երեկոյ է՝ հանդէպ բոլոր անոնց, որոնք այս առաքելութիւնը 50 տարիներու վրայ տարածուած իրագործեցին. առաջին հերթին, հարկ է յիշել երջանկայիշատակ գոյգ Վեհափառ Հայրապետները՝ Խորէն Ա. Կաթողիկոսը, որ հիմնադիրը եղաւ «Շնորհալի» երգչախումբին եւ Գարեգին Բ. Կաթողիկոսը, որ իր հայրական օրհնութեամբ իր բարոյական զօրակցութիւնը տուաւ երգչախումբին: Այս երեկոյ պէտք է յիշել նաեւ այն բոլոր խմբավարները, որոնք, որեւէ ակնկալութենէ հեռու, իրենց կարելին կատարեցին, որպէսզի երգչախումբը շարունակէ իր առաքելութիւնը», նշեց ան ու յիշեց նաեւ երգչախումբի հին ու նոր բոլոր անդամները, նուագողները եւ այս աշխատանքին նուիրուած բոլոր կամաւորները: Վեհափառ Հայրապետը աւելցուց, որ երգչախումբի մը որակը, արուեստի աշխարհէն ներս, իր իրագործումներուն մէջ կ'արտացոլայ, սակայն «Շնորհալի» երգչախումբին պարագային հարկ է նկատի առնել նաեւ անոր տարած առաքելութիւնը՝ մշակոյթի ու եկեղեցւոյ կեանքին մէջ, եւ այս մէկը մեր արժէքներուն նկատմամբ հաւատարմութիւն կը ցուցաբերէ. մենք պէտք է այդ մէկը տօնախմբենք նաեւ այսօր, ընդգծեց ան:

Խօսելով լիբանանահայ գաղութին հայկական մշակոյթի ունեցած ներդրումին, բնականաբար ի մասնաւորի «Շնորհալի» երգչախումբին ճամբով, Նորին Ս. Օծութիւնը նկատել տուաւ, որ գաղութը կենսական կարիքը ունի վերակազմակերպումի եւ առաւել քան երբեք, անցեալի նման, կոշուած է ըլլալու սիրտն ու ողնասիւնը Սփիւռքի հայութեան: Այս առումով Վեհափառ Հայրապետը կոչ ուղղեց, որ այս հաստատումը շմնայ լողունգի սահմաններու մէջ, այլ վերածուի մարտահրաւէրի: Վերջապէս, ան իր հայրական գնահատանքը յայտնեց ղեկավար Հայր սուրբին ու անդամներուն եւ բոլոր անոնց, որոնք իրենց նուիրումով մասնակցութիւն բերած են ու կը բերեն «Շնորհալի» երգչախումբի գործունէութեան: Ան մաղթեց, որ այս 50-ամեակը առիթ ըլլայ նայելու դէպի ապագայ ու վերանորոգելու աշխատանքի կորովն ու տեսլականը:

Համերգը եզրափակուեցաւ «Կիլիկիա» քայլերգի միաձայն երգեցողութեամբ:

Հ.Ե.Հ.Ո.Մ.

ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ՀԱՆԴԻՊՈՒՄ-ԶՐՈՅՑ ՈՒՆԵՑԱԲ ՈՒՍԱՆՈՂ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՒ ՀԵՏ

Հայ Եկեղեցույ Համալսարանական Ուսանողներու Միութեան (Հ.Ե.Հ.Ո.Մ.) 60-ամեակի նուիրուած ձեռնարկներու ծիրին մէջ, օրհնութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Շաբաթ, 17 Փետրուար 2024-ին, «Կիլիկիա» թանգարանի սրահին մէջ տեղի ունեցաւ համագումարներու շարքին երրորդն ու վերջինը՝ «Հայրենիքն ու Հայրենասիրութիւնը» խորագրով: Հ.Ե.Հ.Ո.Մ.ի կազմակերպութեամբ սոյն համագումարներու շարքի հովանաւորն է «Գալուստ Կիւպէնկեան» Հիմնարկութեան Հայկական Համայնքներու Բաժանմունքը: Համագումարին մասնակցեցան լիբանանահայ վարժարաններու, երիտասարդական եւ ուսանողական միութիւններու ներկայացուցիչներ:

Հ.Ե.Հ.Ո.Մ.ի անունով բացման խօսքով հանդէս եկաւ Կալի Աւագեան: Ան դիտել տուաւ, որ միութեան 60-ամեակին առնչուած այս երրորդ համագումարը տեղի պիտի ունենար աւելի շուտ, սակայն Արցախի աղէտին հետեւանքով, Հ.Ե.Հ.Ո.Մ.ը նպատակայարմար գտած էր համագումարը յետաձգել: Առ այդ, Կ. Աւագեան անդրադարձաւ Արցախի իրավիճակին եւ մէջբերելով Արցախի գծով Վեհափառ Հայրապետին թելադրութիւնները՝ քաջալերեց երիտասարդները գօտեպնդուելու Հայ ոգիով եւ նոր թափով շարունակելու մեր ծառայու-



թիւնը՝ հայրենիքի փրկութեան: Ան աւելցուց, որ երիտասարդութիւնը կը հզօրացնէ ազգ մը, իսկ յուսահատութիւնն ու լացը փրկութիւն չեն ապահովեր: Վերջապէս, ան հրաւիրեց Արամ Ա. Կաթողիկոսը իր մտածումները, յորդորները, ցուցմունքներն ու թելադրութիւնները բաժնելու երիտասարդներուն հետ՝ «Ազգ, Հայրենիք, Եկեղեցի» նիւթին շուրջ:

Նորին Սրբութիւնը, առաջին հերթին, ուրախութիւն յայտնեց երիտասարդներով շրջապատուած ըլլալուն համար՝ հաստատելով, որ այդպիսով աւելի կը պայծառանայ ապագայատեսիլ իր յոյսը, որովհետեւ երիտասարդութիւնը հոմանիշ է կենսունակութեան: Ան շեշտելով երիտասարդերէց սերունդներու երկխօսութեան կարեւորութիւնը՝ ընդգծեց, որ թէեւ դժուար է ոմանց համար ուրիշը լսելը, սակայն անհրաժեշտ է այդ, որովհետեւ երկու կողմերը իրարմէ սորվելիք ունին միշտ: Օրինակները քաղելով Յիսուս Քրիստոսի կեանքէն՝ ան ըսաւ, որ Աստուած «վեր» չմնաց,



այլ իջաւ մարդոց մօտ, ծառայի կերպարանք ստանալով՝ մօտեցաւ մարդուն. ուստի, Նորին Սրբութիւնը յորդորեց Աւետարանի օրինակները փոխադրել մեր կեանքին մէջ եւ փորձել նոյնանալ մեր ժողովուրդի բոլոր զաւակներուն:

Խորանալով նիւթին, Վեհափառ Հայրապետը նշեց, որ անկարելի է հեռու մնալ ներկայ դարու փոփոխութիւններէն եւ պատեր հիւսել մեր շուրջը, սակայն պէտք չէ փոփոխութիւնները ընդունիլ մեր ինքնութեան հաշուոյն: Այս միտքէն մեկնելով՝ ան սահմանեց ազգասիրութիւն, հայրենասիրութիւն եւ եկեղեցասիրութիւն եզրերը ու մանրամասնեց այս երեքին իրարու սերտ առնչուածութիւնը: Նորին Ս. Օծութիւնը դիտել տուաւ, որ ազգ մը կրնայ պատմութեան ընթացքին կամաց-կամաց կորսուիլ, եթէ հայրենիք չունենայ, սակայն հայրենիքը հողը չէ միայն, այլ նաեւ մշակոյթի եւ արժէքներու մէկ ամբողջութիւն է: Եթէ չըլլան արժէք եւ մշակոյթ, հողը լոկ հող կը մնայ:

Խօսելով եկեղեցասիրութեան կամ կրօնասիրութեան մասին, ան լուսարձակի տակ առաւ պատմութեան ընթացքին տարբեր ազգերու մօտ կրօնքին կարեւորութիւնը եւ անդրադառնալով հայութեանս՝ նկատել տուաւ, որ ներկայիս ջանք կը թափուի կրօնքը հեռացնելու մեր ազգային կեանքէն: «Մեր պատմութեան մէջ քրիստոնէութիւնը հայացաւ եւ հայութիւնը քրիստոնէացաւ», ընդգծեց Նորին Սրբութիւնը՝ հաստատելով, որ անքակտելի նոյնացում ու միացում մը կայ մեր ազգ-հայրենիք-կրօնքին, այս պարագային՝ եկեղեցւոյ միջեւ: Այս երեքին արժէքները իրարմէ տարբեր չեն: Հայաստանի մէջ զա-



նոնք իրարմէ բաժնելու փորձերը անընդունելի եւ արուեստական են: Վեհափառ Հայրապետը նշեց, որ Հայոց պատմութիւնը եկեղեցւոյ պատմութիւնն է, նոյնպէս ալ եկեղեցւոյ պատմութիւնը՝ Հայոց պատմութիւնը, իսկ երկուքը միասին քաղաքական մեր մտածողութեան պատմութիւնն են. բաժանման գիծեր կարելի չէ դնել:

Եզրափակելով իր խօսքը՝ Արամ Ա. Կաթողիկոս յատկապէս շեշտեց, որ «ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը իրարմէ անջատելը, փաստօրէն, տգիտութիւն է եւ աւելին. ազգային հերետիկոսութիւն»: Անոնք մէկ ամբողջութիւն են. մէկ էութեան, ինքնութեան, ինքնաճանաչման տարբեր տարածքներ են, սակայն իրարու հետ սերտօրէն ու անքակտելիօրէն առնչուած:

Նիստի աւարտին երիտասարդները առիթ ունեցան իրենց հարցումները ուղղելու Նորին Սրբութեան եւ արտայայտուելու Արցախի ու արցախահայութեան իրավիճակին, Սփիւռքի մէջ հայերէնի գործածութեան, ուսանողական կեանքի ներկայ մարտահրաւէրներուն, եկեղեցական ու ազգային գործունէութիւն ծաւալելու եւ այլ նիւթերու մասին:

Երկրորդ նիստին նիւթն էր հայրենասիրութիւն եւ ազգասիրութիւն: Այս կլոր սեղանին զրուցակիցներն էին՝ Դոկտ. Շաղիկ Խիւտավերտեան, Վահրամ Էմմիեան եւ Սրբուկ Ճենանեան՝ զրուցավար ունենալով Հ.Յ.Ը.Ո.Մ.-ական Սէրուժ Խանճիհանեանը:

Համագումարը իր աւարտին հասաւ հաւաքական աշխատանոցով մը՝ Դոկտ. Քրիսթին Արզումանեան-Ղազարեանի ղեկավարութեամբ:

ՄԱՀԱԳՐՈՒԹԻՒՆ

**ՎԵՐՁԻՆ ՀՐԱԺԵՇՏ
Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄԱՆՃԻԿԵԱՆԻ**

Նախագահութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Հինգշաբթի, 22 Փետրուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուեցաւ Ս. Եւ Անմահ Պատարագ եւ կատարուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան երիցագոյն միաբաններէն՝ Հոգելոյս Տ. Եղիշէ Ծ. Վրդ. Մանճիկեանի վերջին օծման եւ թաղման կարգի արարողութիւնները: Միաբան հայրերու եւ Դպրեվանքի սաներու հոգեթով շարականներու երգակցութեամբ եւ լուսարարապետ Սրբազան Հօր՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեանի ձեռամբ, Հայ եկեղեցւոյ սրբալոյս Միւռնոնը վերջին անգամ ըլլալով դրոշմուցաւ վախճանեալ Հայր սուրբի ճակատին ու ձեռքերուն: Վերջին օծման արարողութենէն ետք, Վեհափառ Հայրապետն ու միաբան հայրերը վախճանեալ Հայր սուրբին Միւռնոնաօժ ճակատն ու ձեռքը համբուրելով՝ մատուցեցին իրենց յարգանքի վերջին տուրքը:



Ապա, դամբանական խօսեցաւ լուսարարապետ Սրբազան Հայրը: Անոր խօսքին առանցքը դարձան Պօղոս առաքեալի բառերը. «Ես եկեղեցիին ծառայ եղայ՝ իբրեւ Աստուծոյ կողմէ տրուած պարտականութիւն, որպէսզի իր ամբողջութեանը մէջ ձեզի քարոզեմ Աստուծոյ խօսքը» (Կղ 1.25): 1963 թուականէն, որպէս հոգեւոր զինուորը Քրիստոսի, Հայ եկեղեցւոյ եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան, Նղիշէ Մ. Վրդ. ծառայեց աւելի քան կէս դար եւ տեւաբար քարոզեց Քրիստոսի խօսքը մեր ժողովուրդի զաւակներուն, ըսաւ քարոզիչ Սրբազան Հայրը:



Ներկայացնելէ ետք լուսահոգի Հայր սուրբին կենսագրական գիծերը եւ ունեցած եկեղեցական ու ազգային աւելի քան կէս դարեայ գործունէութիւնը՝ Սրբազան Հայրը յուզումով յիշեց իր եւ Հայր սուրբին Դպրեվանք ընդունելութեան համար քննութեան դիմելու առաջին օրը, երբ Հայր սուրբը երգեց «Նոր Լուսաբացին Արեւին Առաջ» երգը: Սրբազան Հայրը ընդգծեց, որ վախճանեալ Հայր սուրբը «մեր Ս. Աթոռին նուիրեալ միաբաններէն մէկն էր եւ կը մնայ նուիրեալ իր յիշատակը: Ան այս Կաթողիկոսութեան որպէս հոգեւոր զինուորը, հազիւ կուսակրօն քահանայ ձեռնադրուած՝ առաքելութեան ղրկուեցաւ Հայ ժողովուրդի ծառայութեան եւ սիրով գնաց, ուր որ ղրկուեցաւ եւ ծառայեց նուիրումով: Նղիշէ Հայր սուրբին ծառայութիւնը ի նպաստ Հայ եկեղեցիին եւ կը կոչեմ նուիրեալ ծառայութիւն: Ան սիրով եւ նուիրումով լուռ ու մունջ ծառայեց՝ ի պայծառութիւն Հայ եկեղեցւոյ եւ ի վկայութիւն Աստուածաշունչի քարոզութեան»:

Վերջապէս, Կոմիտաս Արք. յանուն Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, Կի-

լիկեան Ուխտի Միաբանութեան եւ անձնապէս խորազգաց ցաւակցութիւն ու վշտակցութիւն յայտնեց լուսահոգի Հայր Եղիշէի ընտանիքին եւ աղօթեց, որ Աստուած Հայր սուրբին հոգին արժանի ընէ երկինքի արքայութեան, ինչպէս նաեւ Վեհափառ Հայրապետին ու միաբանակից եղբայրներուն մաղթեց Քրիստոսի Յարութեան շունչով նպատակասլաց ծառայութիւն:

Ս. Պատարագի աւարտին, միաբան հայրերը իրենց հոգեւոր եղբօր դագաղը ուսամբարձ առաջնորդեցին «Զարեհեան» յուշարձան-դամբարան, ուր Նորին Սրբութեան հանդիսապետութեամբ տեղի ունեցաւ Գերեզմանի Կարգը, ինչպէս նաեւ՝ հողի օրհնութիւնն ու գերեզմանի կնքման արարողութիւնը:

Եկեղեցական արարողութիւնները իրենց աւարտին հասան «Կիլիկիա» օրհներգի երգեցողութեամբ:

Աւարտին, Արամ Ա. Կաթողիկոս Վեհարանի դահլիճին մէջ ընդունեց ցաւակցութիւններ:

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ԳԻԾԵՐ
Տ. ԵՂԻՇԷ Ծ. ՎՐԴ. ՄԱՆՃԻԿԵԱՆ

Ծնած է 1942 թուականին, Քէսապի Դատարան գիւղը (Սուրիա): Աւագանի անունով՝ Արա: Փոքր տարիքին ծնողքին հետ Պուրճ Համուտ (Լիբանան) փոխադրուելով՝ նախնական կրթութիւնը ստացած է Սրբոց Քառասնից Մանկանց Ազգ. Վարժարանին մէջ: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանք ընդունուած է 1956-ին: Աւարտելով Դպրեվանքի ժառանգաւորացի քառամեայ շրջանը՝ Սարկաւազ ձեռնադրուած է 1960-ին՝ ձեռամբ Լիբանանի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Խորէն Արք. Բարոյեանի:



Ապա, երեք տարի հետեւելով Ընծայարանի դասընթացքներուն՝ կուսակրօն քահանայ ձեռնադրուած է 26 Մայիս 1963-ին՝ ձեռամբ Հիւս. Ամերիկայի Առաջնորդ՝ Տ. Հրանդ Արք. Խաչատուրեանի եւ վերակոչուած՝ Տ. Եղիշէ ԱԲԵՂԱՅ: 1963-1965 ստանձնած է Կաթողիկոսարանի մատենադարանի տեսչութիւնը, միանգամայն Դպրեվանքէն ներս դասաւանդելով գրաբար ու հայերէն, իսկ «Մարտիկեան» Վարժարանէն ներս՝ ֆրանսերէն եւ թուաբանութիւն: 1965-ին գործուղուած է Նոր Զուղա (Իրան), որպէս դասախօս Սպահանի պետական համալսարանի հայագիտական ամպիոնին: Նոյն տարիներուն, ան նաեւ դասաւանդած է Նոր Զուղայի Ազգ. վարժարաններուն մէջ՝ հայերէն,

գրաբար, գրականություն, Հայոց պատմություն եւ կրօնագիտություն: Իր մասնակցությունը բերած է Նոր Զուղայի Առաջնորդ՝ Տ. Գարեգին Արք. Սարգիսեանի կողմէ կազմակերպուած ուսուցիչներու վերաորակավորման գիշերային դասընթացքներուն: 1967-ին հիմնած ու կազմակերպած է Սպահանի պետական համալսարանի Հայ Ուսանողական Միությունը: 1974-1976 Միացեալ Նահանգներու «Քոլումպիա» համալսարանէն ներս հետեւած է Միջին Արեւելեան Լեզուներ եւ Մշակոյթներ ճիւղին:

1976-1977 թուականներուն եղած է Լոս Անճելոսի Ս. Խաչ եկեղեցւոյ Հոգեւոր Հովիւ, ուր նաեւ դասաւանդած է Մոնթէպելլոյի «Մեսրոպեան» Վարժարանէն ներս՝ կրօնք եւ հայ մշակոյթի պատմություն նիւթերը: 1977-1980 ստանձնած է Էնսինոյի (Լոս Անճելոս) Ս. Նահատակաց եկեղեցւոյ հովուությունը, ուր հաստատած է Ս. Գիրքի եւ կրօնական գիտելիքներու սերտողություն Էնսինոյի երիտասարդութեան համար: 1980-1983 նշանակուած է Ֆրէզնոյի Հոգեւոր Հովիւ՝ միաժամանակ դասաւանդելով Ֆրէզնոյի համալսարանի հայագիտական բաժանմունքին մէջ:

1983-1997 Գարեգին Բ. Կաթողիկոսին տնօրինութեամբ նշանակուած է Կաթողիկոսական Փոխանորդ Կիպրոսի Հայոց Թեմին, ուր հաստատած է շաբաթօրեայ հերթական գիշերային դասախօսություններու լսարան: Իր օրերուն իրագործուած է Ազգ. Առաջնորդարանի շրջափակին մէջ Ապրիլեան Յուշարձանի կառուցումը: 1997-2000 նշանակուած է Հոգեւոր Հովիւ Վանգուվրի (Գանատա) Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ: 2000-2003 ստանձնած է հովուությունը Հիւս. Ամերիկայի Արեւելեան Հայոց Թեմի Նորթ Անտովրի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ:

2004-2007 Անթիլիասի Դպրեվանքէն ներս դասաւանդած է գրաբար եւ հայ մատենագրություն: 2006-2009 տարիներուն ստանձնած է «Կիլիկիա» թանգարանի եւ «Թոչնոց Բոյն»ի տեսուչի պաշտօնները: 2010-2011 նշանակուած է Ատրպատականի Հայոց Թեմի Կաթողիկոսական Փոխանորդ: Հայր Սուրբին գրական վաստակին կը պատկանին հետեւեալ հատորները.- ա) Յովհաննէս Օձնեցի - վարդապետական աւարտաճառ բ) Դուք Ի՞նչ Կը Մտածէք - գրոյց երիտասարդութեան հետ գ) Ս. Սահակ Պարթեւ - համառօտ ակնարկ մը երիտասարդութեան հետ դ) Անթառամ Շողեր - աղօթագիրք հայերէն եւ անգլերէն ե) Գրասեղանիս Թուղթերէն գ) Ամօթին Հայկականը - հրատարակուած՝ Ե. Տիգրան գրչանունով եւ է) Ոգեղէն Ճոպանուղի:

ԼՈՒՐԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԷՆ**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
ՖՐԱՆՍԱՅԻ ԴԵՍՊԱՆԸ**

Հինգշաբթի, 4 Յունուար 2024-ի առաւօտեան, Անթիլիասի իր գրասենեակին մէջ, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Լիբանանի մօտ Ֆրանսայի նորանշանակ դեսպան՝ Հերվէ Մակրոն:

Հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու Լիբանանի նախագահական ընտրութեան, Իսրայէլի կողմէ Կաթայի դէմ շղթայազերծուած պատերազմին եւ ընդհանրապէս Միջին Արեւելքի ու յատկապէս Լիբանանի մէջ Ֆրանսայի դերակատարութեան առնչուած հարցեր, որոնց շուրջ տեղի ունեցաւ տեսակետներու փոխանակում:

Նկատի ունենալով, որ դեսպան Մակրո ծնած է Թուրքիա եւ իր ծննդավայրին մէջ նախապէս նշանակուած է Դեսպան, հանդիպման ընթացքին նաեւ անդրադարձ կատարուեցաւ հայթորք յարաբերութեան, Ֆրանսայի ու հայ ժողովուրդներու պատմական յարաբերութեան, ինչպէս նաեւ Ֆրանսայի զօրակցութեան՝ Հայաստանի, Արցախի ու ընդհանրապէս ազգային պահանջատիրութեան գծով:

**ԼԻԲԱՆԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ
ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔԻՆ ՄԵՋ**

Ուրբաթ, 5 Յունուար 2024-ին, Լիբանանի վարչապետ՝ Նէժիպ Միքաթի այցելեց Արամ Ա. Կաթողիկոսին եւ հանդիպում ունեցաւ Նորին Սրբութեան հետ:

Բնականաբար, հանդիպման ընթացքին արծարծուեցան Լիբանանի

հետ անմիջական կապ ունեցող հարցեր եւ յատկապէս Կաթայի պատերազմին հետեւանքներն ու Լիբանանի նախագահական ընտրութիւնը:

Վարչապետ Միքաթի կարեւորութեամբ շեշտեց Լիբանանի հայութեան դրական դերակատարութիւնը՝ երկիրը դիմագրաւող տագնապներուն ու մարտահրաւերներուն լուծման գծով եւ իր պատրաստակամութիւնը յայտնեց որեւէ ծրագրի պարագային օգտակար ըլլալու Լիբանանի հայութեան:

**ՈԱՅԻ ՊԱՏՐԻԱՐԸԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՂ
ՊԱՏՈՒՐԱԿՈՒԹԻՒՆ ՄԸ
ԱՅՅԵԼԵՑ ՎԵՅԱԹԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Կիրակի, 7 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց Ռայի Պատրիարքը ներկայացնող պատուիրակութիւն մը, որուն մաս կը կազմէին Պատրիարքական փոխանորդ Փօլ Արք. Սայյահը, Պատրիարքարանի երիտասարդաց բաժանմունքի պատասխանատու Ճորճ Վրդ. Եարան եւ Պատրիարքարանի տնօրէն՝ Ուալիտ Ղայյատը:

Ս. Ծննդեան շնորհատրանքին առիթեր, քննարկուեցան Լիբանանի նախագահական ընտրութեան առնչուած հարցեր: Այս գծով, պատուիրակութիւնը Նորին Սրբութեան փոխանցեց Ռայի Պատրիարքին տեսակետներն ու մտահոգութիւնները: Նորին Սրբութիւնը, իր կարգին, շեշտեց կարելի փութով ընտրութիւն կատարելու հրամայականը, նկատի ունենալով երկրէն ներս ընկերա-տնտեսական հետզհետէ խորա-

ցող տազնապան ու Միջին Արեւելքի մէջ տեղի ունեցող մտահոգիչ զարգացումները:

Հանդիպման ընթացքին նաեւ անդրադարձ կատարուեցաւ Վատիկանի կողմէ նոյն սեռի պատկանող զոյգերուն ամուսնութեան գծով վերջերս առնուած որոշումին: Նկատի ունենալով հարցին զգայուն բնոյթը, Նորին Ս. Օծուօթինը առաջարկեց, որ աւելի խոր կերպով քննուի հարցը թէ՛ իւրաքանչիւր եկեղեցւոյ կողմէ եւ թէ միջ-եկեղեցական խորհրդակցութեանց ծիրէն ներս:

**ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀՈՉԱԿԱԳԻՐԻ
ԸՆԹԵՐՅՈՒՄ ԱՆԹԻԼԻԱՍԻ
ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻՆ ՄԷՋ**

Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Վեհափառ Հայրապետը, 2003 թուականէն սկսեալ իւրաքանչիւր տարին կը ձօնէ մեր համահայկական կեանքին հետ անմիջական աղերս ունեցող երեւոյթի մը, դէպքի մը, դէմքի մը կամ յոբելեանի մը: 2024 տարին Նորին Սրբութիւնը Հայրապետական յատուկ գիրով հոչակեց «ՄԱՐԴՈՒԺԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԵԱՆ ՏԱՐԻ»: Իւրաքանչիւր տարուան Հայրապետական հոչակագիրը յատուկ հանդիսաւորութեամբ կ'ընթերցուի մեր բոլոր եկեղեցիներուն մէջ, որպէսզի մեր ժողովուրդի զաւակներուն ուշադրութիւնը կեդրոնանալու հրաւիրուի տուեալ թեմային, եւ Վեհափառ Հայրապետին թելադրութիւններով ու ցուցմունքներով վառենք մեր եկեղեցական ու ազգային վարչակազմակերպչական կեանքը:

Արդարեւ, Կիրակի, 14 Յունուար 2024-ին, նախագահութեամբ Վեհափառ Հայրապետին, Անթիլիասի Մայրավանքի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ մատուցուած Ս. եւ Աննահ Պատարագի ընթացքին Կաթողիկոս

սարանի «Կիլիկիա» մատենադարանի տեսուչ Գերշ. Տ. Շահան Արք. Սարգիսեան հատուածներ ընթերցեց Նորին Ս. Օծուօթեան «Մարդուծի Պատրաստութեան» տարուան նուիրուած Հայրապետական յատուկ հոչակագրէն (Հայրապետական Հոչակագիրը ընթերցել էջ 10-21):

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՊԱՊԱԿԱՆ ՆՈՒՐԱԿԸ**

Երկուշաբթի, 15 Յունուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոս ընդունեց այցելութիւնը Լիբանանի մօտ Պապական նուիրակ Փաուլօ Պորճիա եպիսկոպոսի: Վերջինս Ֆրանսիա Պապին եւ Վատիկանի միջ-եկեղեցական բաժանմունքի նախագահ Կարտինալ Քոխին կողմէ երկու նամակներ յանձնեց Վեհափառ Հայրապետին:

Նորին Ս. Օծուօթեան եւ Պապական նուիրակին միջեւ կայացած հանդիպումը առիթ հանդիսացաւ տեսակետներ փոխանակելու Լիբանանի կացութեան եւ յատկապէս նախագահական ընտրութեան առնչուած վերջին զարգացումներուն մասին:

**ԱՐԱՍ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԲԱԹՄՐԻ ԴԵՍՊԱՆՆԵՐԸ**

Ուրբաթ, 19 Յունուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքի իր գրասենեակին մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին յաջորդաբար այցելեցին Լիբանանի մօտ Հայաստանի Հանրապետութեան դեսպան՝ Վահագն Աթաբէկեանն ու Քաթարի մօտ Լիբանանի Հանրապետութեան դեսպանուհի՝ Ֆարրահ Պըրրին:

Դեսպան Աթաբէկեանի հետ կայացած հանդիպման խօսակցութեան առանցքը դարձան Հայրենիքը դիմագ-

բառով մարտահրավերները, Հայաստան-Մփիւռք յարաբերություններն ու ընդհանրապես տարածաշրջանը յուզող հարցերը:

Նորին Սրբությունն ու դեսպանուհի Պըրրի անդրադարձան Վեհափառ Հայրապետին Քաթար կատարած այցելության եւ վարչապետին հետ ունեցած հանդիպման: Հանդիպման ներկայ էր Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի:

**Ս. ԱՅՈՒՅՍ ՀԱՆԳՈՒՅԵԱԼ
ՀԱՅՐԱՊԵՏՆԵՐՈՒ ԵՒ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐՈՒ
ՀՈԳԵՂՈՒԹՅԱՆ՝ ԱՆՊՈՒՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ**

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան աւանդութեան համաձայն, ամէն տարի Փետրուար ամսու առաջին Կիրակին, հանդիսապետութեամբ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, տեղի կ'ունենայ հոգեհանգստեան կարգ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Հայրապետական դարաւոր ու պատմական Ս. Աթոռին հայրապետներուն եւ միաբան հայրերուն հոգիներու խաղաղութեան համար:

Արդարեւ, Կիրակի, 4 Փետրուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ մատուցուած Ս. եւ Անմահ Պատարագէն եռք, միաբան հայրերէ, դպրեւանեցիներէ եւ հաւատացեալներէ կազմուած Հայրապետական թափօրը ուղղուեցաւ Մայր Տաճարին կից գրտնըտղ «Ձարեհեան» միաբանական յուշարձան-դամբարանը, ուր Նորին Ս. Օծութեան նախագահութեամբ, յատուկ հանդիսաւորութեամբ, կատարուեցաւ հոգեհանգստեան կարգ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան հայրապետներուն եւ միաբան հայրերուն հոգիներու խաղաղութեան համար:

Թող Ամենակալ Տէրը իր ողորմածութեամբ ու զթառատութեամբ ընդունի

նի մեր հայրապետներուն ու միաբան հայրերուն հոգիները եւ երկնային անթառամ պսակին արժանացնէ զանոնք:

**ՎԵՅՎՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ
ԸՆԴՈՒՆԵՑ ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ
ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ԴԵՍՊԱՆՈՒՅԻՆ**

Երեքշաբթի, 6 Փետրուար 2024-ին, Անթիլիասի Մայրավանքին մէջ, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի մօտ Յունաստանի նորանշանակ դեսպանուհի Տեսփինա Քուրուլուփուլուն:

Նորին Սրբությունը ընդհանուր գծերով ներկայացուց Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան կառոյցն ու առաքելութիւնը եւ անդրադարձաւ Լիբանանի ներկայ կացութեան ու յատկապէս տնտեսական տագնապին եւ նախագահական ընտրութեան առնչուած աշխատանքներուն: Ան նաեւ խօսեցաւ անցեալ տարի Յունաստանի Հայոց Թեմին շնորհած իր հովուապետական այցելութեան եւ վարչապետին ու յոյն եկեղեցւոյ հոգեւոր պետին հետ ունեցած հանդիպումներուն մասին:

Դեսպանուհին, իր կարգին, Նորին Ս. Օծութեան յայտնեց Յունաստանի կառավարութեան վարած ներկայ քաղաքականութիւնը՝ ընդհանրապէս Միջին Արեւելքը ու յատկապէս Լիբանանը յուզող հարցերուն գծով:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ԵՐԵՍՓՈՒՆԱՆ ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻՆ
ԵՒ ԻՇԽԱՆ ՍԱՂԱԹԷԼԵԱՆԸ**

Հինգշաբթի, 8 Փետրուար 2024-ի երեկոյեան, Արամ Ա. Կաթողիկոս իր գրասենեակին մէջ ընդունեց Լիբանանի Հայկական Երեսփոխանական Պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունին եւ Հայ Յեղափոխական Դաշնակ-

ցութեան Հայաստանի Գերագոյն Մարմնի ներկայացուցիչ՝ Իշխան Մաղաթէլեանը:

Հանդիպման ընթացքին առաւելաբար քննարկուեցան Հայաստանի ներքին կացութեան առնչուած խնդիրներ ու մտահոգութիւններ եւ շեշտուեցաւ երկրին ամբողջականութիւնը ու անվտանգութիւնը պահպանելու հրամայականը: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ Հայաստան-Սփիւռք յարաբերութեան առաւել ծաւալման կարելիութիւններուն, յատկապէս մեր ազգին ու հայրենիքին ժամանակակից պատմութեան ներկայ ճակատագրական հանգրուանին:

**ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՑ
Յ.Յ.Դ.Ի ԼԻԲԱՆԱՆԻ ԿԵՂՐ. ԿՈՄԻՏԵԻ
ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆԸ**

Ուրբաթ, 16 Փետրուար 2024-ին, Հայ Յեղափոխական Դաշնակցութեան (Հ.Յ.Դ.) Լիբանանի Կեղր. Կոմիտէն այցելեց Վեհափառ Հայրապետին:

Հանդիպման ընթացքին ընդհանրապէս քննարկուեցան Լիբանանը եւ լիբանանահայութիւնը յուզող հարցեր: Կեղր. Կոմիտէն իր շնորհակալութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, Լիբանանի դիմագրուած ներկայ ընկերատընտեսական դժուար պայմաններուն Վեհափառ Հայրապետին Լիբանանի հայութեան նկատմամբ ցուցաբերած հայրական հոգածութեան եւ գործնական զօրակցութեան համար:

Նորին Սրբութիւնը ողջունելով Լիբանանի Հայ համայնքէն ներս վերջին շրջանին տեղի ունեցող դրական նախաձեռնութիւնները՝ կարեւորութեամբ շեշտեց մեր ժողովուրդը մեր համայնքի կառոյցներուն շուրջ համախմբելու եւ համայնքին կազմակերպչական նոր թափ տալու հրամայական անհրաժեշտութիւնը:

**ՆՈՐԻՆ Ա. ՕԾՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՍԵՆ ԺՈՂԵՖ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՅՆ ՈՒ ՕԹԵԼ ՏԻՕ
ՀԻՄՆԱԴԱՆՈՅԻ ՏՆՕՐԵԼԸ**

Երկուշաբթի, 19 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Լիբանանի կարեւորագոյն համալսարաններէն՝ Սեն Ճոզէֆ համալսարանի տնօրէն՝ Փրոֆ. Հայր Սելիմ Տաքքաշն ու Օթել Տիօ հիւանդանոցի տնօրէն՝ Նասիպ Նասերը:

Հանդիպումին ներկայ էին Ազունիէի Ազգ. Բուժարանի խնամակալութեան ատենապետ՝ Յակոբ Լատոյեան, Կաթողիկոսարանի դիւանապետ՝ Հոգ. Տ. Տաճատ Վրդ. Աշրգեանն ու բժիշկ Համբիկ Քուրիէն:

Աշխատանքային հանդիպման նպատակն էր գործակցութիւն մը ստեղծել յիշեալ ազգային բուժարանին եւ հիւանդանոցին, այլեւ Կաթողիկոսարան-համալսարան-հիւանդանոցին միջեւ:

Այս առաջին հանդիպումէն ետք, որոշուեցաւ հանդիպումները շարունակել աւելի գործնական հարցեր քննարկելու համար:

**ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ԱՅՑԵԼԵՑ
ԵՐԿՐԱԳՈՐԾՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ
ԸՆԴՅԱՆՈՒՐ ՏՆՕՐԵԼԸ**

Չորեքշաբթի, 21 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Լիբանանի Երկրագործութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն՝ Լուի Լահիուտ: Հանդիպումին ներկայ էր Լիբանանի խորհրդարանի Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ՝ Յակոբ Բագրատունի:

Հանդիպման ընթացքին քննարկուեցան նախարարութեան եւ Այնճարի ու հայահոծ այլ շրջաններու միջեւ երկ-

բազործական ու արտադրողական մարզերին ներս նախարարության հետ գործակցություն ստեղծելու կարելիությունները:

Ընդհանուր քննարկումներէ ետք, յարմար նկատուեցաւ, որ մասնագէտներէ բաղկացած յանձնախումբի մը ճամբով աւելի լայն քննարկումներ տեղի ունենան:

**ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ ԸՆԴՈՒՄԵՑ
ՃԻՆԻՇԵԱՆ ՅԻՇԱՍԱԿԻ ՁԵՆՆԱՐԿԻ
ԼԻԲԱՆԱՆԻ, ՍՈՒՐԻՈՅ ԵՒ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՏՆՕՐԵՆՆԵՐԸ**

Չորեքշաբթի, 21 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Ճինիշեան յիշատակի ձեռնարկի Լիբանանի, Սուրիոյ եւ Հայաստանի տնօրէնները, գլխաւորութեամբ ձեռնարկի Նիւ Եորքի (Ա.Մ.Ն.) գործադիր տնօրէն Էլիզա Մինասեանի:

Այցելուները Վեհափառ Հայրապետին պարզեցին իրենց գործունէութիւնը, միաժամանակ՝ դիմագրաւած մտահոգութիւնները:

Նորին Ս. Օծութիւնը իր գնահատանքը յայտնեց ի տես յիշեալ երկիրներուն մէջ Ճինիշեան ձեռնարկին կատարած գործունէութեան: Ան իր օրհնութիւնը տուաւ տնօրէններուն եւ իրենց օգնականներուն, միաժամանակ շեշտելով մեր ժողովուրդի կարիքներուն առաւելագոյն չափով օգտակար ըլլալու անհրաժեշտութիւնը: Ան նաեւ թելադրեց, որ պատասխանատուները նկատի ունենան իրենց շրջաններու մեր ժողովուրդի զաւակներուն կարիքներու առաջնահերթութիւնը, ըստ այնմ համապատասխան մօտեցումներ ճշդ դէն եւ միշտ ուշադիր ըլլան հաւասարակշռութիւն պահելու՝ անհատներու եւ հաւաքականութեան ուղղուած օժանդակութիւններուն գծով:

**ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՄԵՑ
ԲԱԹԱՐԻ ԴԵՍՊԱՆԸ**

Չորեքշաբթի, 21 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետը հանդիպում ունեցաւ Լիբանանի մօտ Քաթարի դեսպան՝ Շէյխ Սաուտ Պըն Ապտ Ալ-Ռահման Ալ-Սանիին հետ:

Հանդիպումին, առաջին հերթին, անդրադարձ կատարուեցաւ շուրջ ամիս մը առաջ Քաթարի վարչապետ Մուհամմէտ Պըն Ապտ Ալ-Ռահման Պըն Ճասէմ Ալ-Սանիի հրաւերին ընդառաջելով՝ Նորին Սրբութեան Քաթար այցելութեան եւ յատկապէս վարչապետին հետ քննարկուած նիւթերուն: Ինչպէս ծանօթ է, Քաթարը առանցքային դերակատարութիւն ունի թէ՛ Լիբանանի նախագահական ընտրութեան եւ թէ՛ Կազայի պատերազմին լուծման ճիգերուն մէջ:

Նորին Սրբութիւնը յատկապէս Լիբանանի առնչուած հարցերու գծով իր տեսակէտները պարզեց՝ շեշտելով շուտափոյթ նախագահական ընտրութիւն կատարելու կարեւորութիւնը. միաժամանակ ան իր գնահատանքը յայտնեց Քաթարի Հայ համայնքին նկատմամբ պետութեան ցուցաբերած բարեացակամ վերաբերումին:

Դեսպանը իր կարգին, նախագահական ընտրութեան գծով կատարուող խորհրդակցութիւններու մասին տեղեակ պահեց Վեհափառ Հայրապետը:

Հանդիպման աւարտին, Նորին Ս. Օծութիւնը նամակ մը յանձնեց դեսպանին՝ ուղղուած Քաթարի վարչապետին:

**ՏԵՄԱՏԻ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ ԻՐԵՆՑ
ՅԱՂԹԱՆԱԿԻ ԲԱԺԱԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՆ
ՎԵՅԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Ուրբաթ, 23 Փետրուար 2024-ի երեկոյեան, Արամ Ա. Վեհափառ Հայրա-

պետին այցելեցին Soroban Education Mental Arithmetic System-ի (SEMAS) Պուրճ Համուտի խումբ մը փոքրիկներ, որոնք եկած էին ստանալու Վեհափառ Հայրապետին օրհնութիւնը եւ ներկայացնելու Լիբանանի ախոյեանութեան վերջերս ձեռք բերած իրենց յաղթանակի բաժակը: Յայտնենք, թէ SEMAS-ը ուսումնական կեդրոն մըն է՝ վաւերացուած Լիբանանի պետութեան կողմէ, որ 5-15 տարեկան փոքրիկներուն ու պատանիներուն կը սորվեցնէ ճափոնական մեթոտներով թուաբանական հաշուարկումներ կատարել: Այս մեթոտը կը զարգացնէ փոքրիկներուն մտային եւ թուաբանական կարողութիւնները՝ միայն օգտագործելով իրենց մատները: Ճափոնական ուսումնառութեան մեթոտը առաջին անգամ Լիբանան բերած եւ կիրարկած է Քէնտիրճեան ընտանիքը:

Խօսք առնելով կեդրոնի տնօրէնուհի՝ Սեւան Քէնտիրճեան-Շերպէճեան՝ իր որդիական երախտագիտութիւնը յայտնեց Նորին Սրբութեան, որ հակառակ Նորին Ս. Օծութեան բազմազբաղ ժամանակացոյցին, պատեհ առիթ ըստեղծեց ըլլալու փոքրիկներուն հետ եւ անոնց շահած մրցանքին՝ ուրախակից: Տնօրէնուհին անհրաժեշտ տեղեկութիւններ եւ բացատրութիւններ տուաւ Արամ Ա. Կաթողիկոսին SEMAS-ի մասին՝ միաժամանակ նշելով, թէ կեդրոնը, զանազան երկիրներու մէջ, մասնակցած է միջազգային տարբեր մրցումներու՝ ձեռք ձգելով պատուաբեր արդիւնքներ եւ ախոյեանութիւններ, որոնցմէ է վերջին շրջանին Լիբանանի 5-րդ ազգային մրցաշարքին առաջին դիրքի գրաւումը: Ապա, գործնական օրհնակներով, Վեհափառ Հայրապետը ու փոքրիկները միասնաբար որոշ փորձարկութիւններ կատարեցին:

Ի տես յիշեալ կեդրոնին տարած

կարեւոր աշխատանքին, Արամ Ա. Կաթողիկոս գնահատեց Քէնտիրճեան ընտանիքը, որ ստանձնած է նման նախաձեռնութիւն մը եւ ներմուծած մեր համայնքի կրթական կեանքին եւ կը միտի մեր ժողովուրդի զաւակներուն ուսումնառութեան ունակութիւնները առաւել եւս զարգացնել: Խօսքը ուղղելով աշակերտներու ծնողներուն՝ Նորին Ս. Օծութիւնը շեշտեց ուսման հրամայականը՝ համաշխարհայնացման մարտահրաւերներու լոյսին տակ եւ կարեւորեց յատկապէս Հայ դպրոցին եւ ընդհանրապէս ուսումնառութեան կեդրոններուն եզակի ու իւրայատուկ կարեւորութիւնը Հայու կերտման ու Հայու կազմաւորման աշխատանքներուն մէջ: Այս առիթով Վեհափառ Հայրապետը իր գնահատանքը յայտնեց SEMAS կեդրոնի տնօրէնութեան եւ ուսուցչական կազմին, ինչպէս նաեւ աշակերտներու ծնողներուն, որոնք հաւատարմով Հայ դպրոցի դերակատարութեան ու առաքելութեան՝ իրենց զաւակները եւ անոնց ուսումնառութիւնը յանձնած ու վստահած են Հայ դպրոցին:

Յայտնենք, որ յիշեալ կեդրոնը Լիբանանի տարածքին ունի չորս մասնաճիւղեր՝ հաստատուած Պուրճ Համուտի, Զալքայի, Այնճարի ու Զահլէի մէջ եւ աշակերտութեան ընդհանուր թիւը շուրջ 200 է:

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹԵԱՆ ԱՅՅԵԼԵՑ ՎԱՏԻԿԱՆԻ ՍՕՏ ԼԻԲԱՆԱՆԻ ԴԵՍՊԱՆԸ

Երկուշաբթի, 26 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեց Վատիկանի մօտ Լիբանանի Հանրապետութեան դեսպան՝ Դոկտ. Ֆարիտ Ալ-Խազէնը:

Դեսպանը Վեհափառ Հայրապետին զեկուցեց Վատիկանի մէջ Լիբա-

նանի տագնապին շուրջ ընթացող հանդիպումներուն ու քննարկումներուն մասին, յատկապէս նախագահական ընտրութեան ու երկիրը դիմագրաւող տնտեսական ու ընկերային հարցերու, ինչպէս նաեւ Կազայի պատերազմին գծով:

Ապա, ընդհանուր արժեւորումի ենթարկուեցաւ Լիբանանի ներքին կացութիւնը եւ քրիստոնեայ համայնքներուն միջեւ գործակցութիւնը աւելի ամրապնդելու անհրաժեշտութիւնը:

**ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԸ ԸՆԴՈՒՆԵՑ
ՊԵՅՐՈՒԹԻ ԵՎ ԿԱՅՆՈՒԹԻՒՆ
ՈՒ ԲԱՐՍԵՍԻՆ**

Հինգշաբթի, 29 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Կաթողիկոսին այցելեցին Պէյրութի նահանգապետ՝ Մարուան Ապպուտ եւ Պէյրութի քաղաքապետ՝ Ապտալա Տարուիշ, ընկերակցութեամբ քաղաքապետարանի խորհուրդի Հայ համայնքի անդամներէն՝ Արամ Մալեանի:

Ողջունելով նահանգապետին ու քաղաքապետին այցելութիւնը Անթիլիասի Մայրավանք՝ Նորին Սրբութիւնը իր գնահատանքը յայտնեց քաղաքապետարանին տարած աշխատանքներուն ու ձեռնարկած ծրագիրներուն, հակառակ երկրէն ներս տիրող ընկերատնտեսական տագնապին: Վեհափառ Հայրապետը յիշեցուց Հայ համայնքին աշխոյժ ներկայութիւնը Պէյրութի մէջ, ուր կը գտնուի նաեւ Ս. Նշան Մայր եկեղեցին եւ Ազգ. Առաջնորդարանը: Նահանգապետն ու քաղաքապետը յարգանքով անդրադարձան Հայ համայնքի բեղուն աշխատանքին՝ Պէյրութի վերականգման, միաժամանակ ակնկալելով աւելին:

Այցելութիւնը առիթ հանդիսացաւ անդրադառնալու մայրաքաղաք Պէյրութի հետ աղերս ունեցող յառաջիկայ ծրագիրներուն:

**Լ.Օ.Խ.Ի ԵՐԶԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ
ԱՅՑԵԼԵՑ ՎԵՅԱՓՈՒ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ**

Երեքշաբթի, 27 Փետրուար 2024-ին, Արամ Ա. Վեհափառ Հայրապետին այցելեցին Լիբանանահայ Օգնութեան Խաչի (Լ.Օ.Խ.) շրջանային վարչութիւնը եւ «Արաքսի Պուլղորճեան» ընկերաբժշկական կեդրոնի տնօրէնը՝ ստանալու Նորին Սրբութեան օրհնութիւնը:

Այս առիթով, վարչութեան անդամները Նորին Ս. Օծութիւնը իրագել դարձուցին իրենց կատարած աշխատանքներուն եւ յառաջիկայի ծրագիրներուն մասին:

Վեհափառ Հայրապետը, իր կարգին, գնահատեց Լ.Օ.Խ.ին տարած նուիրական գործունէութիւնը եւ շէշտեց, յատկապէս ներկայ տագնապալի ժամանակաշրջանին մէջ, ընկերային ծառայութեան զարկ տալու հրամայականը: Ան ընդգծեց, որ ոչ թէ ծառայութիւնը եկեղեցոյ առաքելութեան մաս կը կազմէ, այլ եկեղեցոյ առաքելութիւնն իսկ է: Հետեւաբար, իբրեւ լիբանանահայ համայնք, եկեղեցի-կազմակերպութիւններ-միութիւններ կոչուած են միասնաբար ընկերային ծառայութեան ծրագիրներ մշակելու, զանոնք համադրելու, իրարու հետ գործակցելու եւ մեր ժողովուրդի զաւակներուն ամէն տեսակ կարիքներուն հասնելու: Արդարեւ, Նորին Ս. Օծութիւնը անգամ մը եւս գնահատեց Լ.Օ.Խ.ի մեծ ընտանիքին ժրջան աշխատանքը եւ ծառայական նորանոր նուաճումներով լի գործունէութիւն մաղթեց:

ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ՔԱՐՈՋ Ս. ԱԹՈՌՈՅՍ ՄԻԱԲԱՆՆԵՐՈՒՆ ԿՈՂՄԷ

ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, 1 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: Գ. ՕՐ ՊԱՀՈՑ ԾՆՆԴԵԱՆ: ԿԱՂԱՆԴ ԵՒ ՏԱՐԵ-
ՄՈՒՏ 2024 ՆԱՀԱՆՋ ԹՈՒԻՆ ՔՐԻՍՏՈՍԻ (ԸՍՏ ՆՈՐ ՏՈՄԱՐԻ):

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:*

ՈՒՐԲԱԹ, 5 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: ՃՐԱԳԱԼՈՅՑ Ս. ԾՆՆԴԵԱՆ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏ-
ՆՈՒԹԵԱՆ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց՝ Հոգշ. Տ. Եզրաս Աբղ. Թէնէքէճեան:*

ՇԱԲԱԹ, 6 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: ՏՕՆ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԾՆՆԴԵԱՆ
ՏԵԱՌՆ ՄԵՐՈՅ ՅԻՍՈՒՄԻ ՔՐԻՍՏՈՍԻ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց եւ իր Հայրապետական պատգամը փոխանցեց՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կա-
թողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ:*

ԿԻՐԱԿԻ, 7 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: Բ. ՕՐ ՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ: ՅԻՇԱՏԱԿ ՄԵՆԵԼՈՅ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Աւետիք Վրդ. Տէր Կարապետեան:*

ԿԻՐԱԿԻ, 14 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: Ա. ԶԿՆԻ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹԵԱՆ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց՝ Հոգշ. Տ. Սարգիս Վրդ. Աբրահամեան: Յընթացս Ս. եւ Անմահ Պատարա-
գին, Գերշ. Տ. Շահան Աբղ. Սարգիսեան ընթերցեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա.
Վեհափառ Հայրապետին 2024 թուականը «Մարդուժի Պատրաստութեան
Տարի» հռչակող Հայրապետական Հռչակագիրը:*

ԿԻՐԱԿԻ, 21 ՅՈՒՆՈՒԱՐ 2024: ԲԱՐԵԿԵՆԴԱՆ ԱՌԱՋԱԻՈՐԱՅ ՊԱՀՈՑ:

*Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարա-
գեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէճեան:*

ԿԻՐԱԿԻ, 28 ՅՈՒՆՈՒՄՐ 2024:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Զաւէն Վրդ. Նաճարեան:

ԿԻՐԱԿԻ, 4 ՓԵՏՐՈՒՄՐ 2024:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Առաքել Աբղ. Գատէհճեան:

ՀԻՆԳՇԱՌԹԻ, 8 ՓԵՏՐՈՒՄՐ 2024: ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ԶՕՐԱՎԱՐԱՑՆ ՄԵՐՈՑ, ՀԱԶԱՐ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՑ ՎԿԱՅԻՑՆ, ՈՐՔ ԿԱՏԱՐԵՑԱՆ Ի ՄԵԾԻ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Գերշ. Տ. Կոմիտաս Արք. Օհանեան:

ԿԻՐԱԿԻ, 11 ՓԵՏՐՈՒՄՐ 2024: Ա. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԲՈՒՆ ԲԱՐԵԿԵՆԴԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց եւ քարոզեց՝ Հոգշ. Տ. Ազատ Աբղ. Ֆիլիքեան:

ԿԻՐԱԿԻ, 18 ՓԵՏՐՈՒՄՐ 2024: Է. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Բ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՐՏԱՔՍՄԱՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Փառէն Ծ. Վրդ. Վարդանեան եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Վաղինակ Ծ. Վրդ. Մելոյեան:

ԿԻՐԱԿԻ, 25 ՓԵՏՐՈՒՄՐ 2024: ԺԴ. ՕՐ ՄԵԾԻ ՊԱՀՈՑ: Գ. ՔԱՌԱՍՆՈՐԴԱՑ: ԱՆԱՌԱԿԻՆ:

Կաթողիկոսարանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Տաճարին մէջ պատարագեց՝ Գերպ. Տ. Անդրանիկ Վրդ. Քիւրիւմեան եւ քարոզեց՝ Գերպ. Տ. Ստեփանոս Ծ. Վրդ. Փաշայեան:

Տպարան
Կաթողիկոսութեան Զայոց
Մեծի Տանն Կիլիկիոյ
Անթիլիաս - Լիբանան